

✓

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՏԻ ԼԺԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՑԱՐԵԼԱԳՈՐԺՄԱՆ
ԳԻՑԸ-ՄԱՆԿԱԺԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԾՆՆԴՑԱՆ 135-ԱՄՅԱԿԻ ԱՌԹՎ

371(47.925)(092 ԱԲՈՎՅԱՆ)

14-96

ՄՏՈՒԳՎԱԾ Ե 1981 Ք.

Խ. ԱՐՈՎՅԱՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺ

0964

Կազմեց՝ Ս. ԽՈՒԴՈՑԱՆ



ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1941

A $\frac{\pi}{12102}$

Գրադ. համար՝
Վ. ԱՍՏՎԱԾԱՏՐԵԱՆ
X. АБОВЯН — ПЕДАГОГ

Научно-педагогический институт
усовершенствования учителей
Ереван, 1941 г.

ՎՃ 7307 Տիրաժ 1000, Գրադեր 456,
Տպ. 14 մամուլ, Մեկ մամ. 36.000 նիշ,
Ստորագրված է տպագրության 20 VII 41 թ.
Յրեան, Հաղպետհրատի տպարան, Հենինի 65



Խ. ԱՐՈՎԵԱՆ



ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Խաչատուր Աբովյանը համդիսացել է ո՛չ միայն մեր մաքրակամության ու աշխարհաբար գրական լեզվի, այլև հայ մաքրամեկավարության հիմնադիրը: Սակայն Աբովյանի աշխարհայացքի այդ կողմը հարկ եղած հատուկ ուսումնասիրության և լուսաբանման չի ենթարկվել մինչև հիմա:

Բացի այդ, Աբովյանի մանկավարժական ասույթները ցրված են մեր համարյա բոլոր երկերում, որպիսի հանգամանքը մեր մասսայական ուսուցչության համար դժվարացնում է մեծ լուսավորչի մանկավարժական հայացքների ուսումնասիրության գործը:

Վերոհիշյալ երկու հանգամանքն էլ մկատի ունենալով, կազմել ենք մերկա ժողովածուն, որը մասամբ միայն կարող է լրացնել եղած բացը:

Այս ժողովածուի մեջ տեղավորված են մաև այնպիսի նյութեր, որոնք որոշ ծանոթություն են տալիս Աբովյանի մանկավարժական գործունեության մասին:

Խ. Աբովյանի մանկավարժական գործունեության և մանկավարժական հայացքների մասին գրում տրված է հատուկ առաջաբան:

Ամերածեշտ ենք գտնում ընդգծել, որ Աբովյանի մանկավարժական բոլոր ասույթները, ինչպես մաև մեր մանկավարժական գործունեությանը վերաբերվող բոլոր նյութերն այս ժողովածվում տեղավորելու մտքից հեռու ենք եղել: Այստեղ տեղավորված է միայն եղած նյութերի մի մասը, ըստ ամենայնի ավելի բնութագրականները:

Նյութերն ընտրված են Աբովյանի հետևյալ գրվածքներից. «Վերք Հայաստանի» և «Տաղարկություն մանկանց» (Ընտիր երկեր, առաջին հատոր, 1939 թ.), «Նախաշավիղ» (Հրատարակ. 1940 թ. ընկ. Ռ. Զարյանի առաջաբանով և ծանոթագրություններով),

«Պատմություն Տիգրանի» (Ընտիր երկեր, 2-րդ հատոր, 1940 թ.),
ինչպես նաև «Դիվան Խաչատուր Աբովյանի» գրքից, որը կազմել
և ծանոթագրել է Ս. Շահազիզը:

Նյութերի դասավորման մեջ չի պահպանվել ժամանակագրա-
կան կարգը, այլ մկատի է ունեցվել շոշափված հարցերի մոտավոր
հաջորդականությունը:

Ժողովածուն կազմված է մասսայական ուսուցչության
համար:

Կ Ա Զ Մ Ո Ղ



Խ. ԱՌՈՎՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵ- ՌԻԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

I. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԻԹՅՈՒՆԸ

Պարսկական բռնապետութեան ճիրաններում դեռ հեծում էր հայ ժողովուրդը, երբ նրա ապագա մեծ լուսավորիչն աշխարհ եկավ և այդ պայմաններում բոլորեց իր կյանքի 22 տարին։

Բոլոր կողմերով անհրապույր էր ու տանջալի հայ ժողովրդի կյանքը։ Պարսիկները ոչնչացնում էին հայերին, հափշտակում էին նրանց ունեցվածքը, խորտակում էին նրանց գյուղերն ու տները, առևանգում էին նրանց կանանց ու աղջիկներին, և այս բոլոր վայրագությունների դեմ ոչ ոք չէր կարող դուրս գալ, իսկ եթե առանձին մարդիկ կամ խմբեր հանդգնեին այդ խիզախել, նրանց սպառնում էր զազանային հալածանքն ու մահը։

Այս մի կողմից. իսկ մյուս կողմից՝ սև վեղարավորների ոհմակն էր կողոպտում ժողովրդին և կաշկանդում նրան խավարի ճանկերում։

Ժողովուրդը գտնվում էր խավարի ու տգիտության մեջ և իր ուսերին էր կրում կողոպտիչների ծանր լուծը։ Հայ շինականին քայքայում էին տնտեսապես, ապտակում էին բարոյապես, ոչնչացնում էին ֆիզիկապես։ Նա չորս կողմից կաշկանդված էր ամուր շղթաներով։

Այս բոլորը չէր կարող վրիպել հայրենասեր երիտասարդի — Խաչատուր Աբովյանի սրտեն աչքերից։

Նա տեսնում էր ժողովրդի իրավագուրկ վիճակը, այն խավարը, որը թանձրացել էր դարերի ընթացքում՝ մարդկային միտքը բռնադատելու, կյանքը հարատև խոշտանգման ենթարկելու համար։ Նա տեսնում էր իր սիրած ժողովրդի մանուկների ողբալի ու ցավատանջ վիճակը, նա տեսնում է այն դաբրուրելի ապագան, որ կանգնած է մանուկների կյանքի շեմքին և որ նրանց ծնողների ներկան է։ Եվ բոլորովին պատահական չէր, որ նա իր ժողովրդի հետ միասին, անհուն ցնծությամբ էր ողջունում ռուսական զորքերի հաղթա-

կան մուտքը Հայաստան: Հայ ժողովուրդը ռուս մեծ ժողովրդի մեջ էր տեսնում իր փրկարարին:

Հայաստանի անցումը ռուս տիրապետության, անշուշտ, պրոգրեսիվ քայլ էր: Այս բանը գիտակցում էր նաև Արուսյանը: Ռուսական տիրապետության տակ անցնելն անհրաժեշտ էր, թեկուզ հայերի ֆիզիկական գոյությունը պահպանելու համար: Դրա հետ միաժամանակ, Հայաստանի անցումը ռուսական տիրապետության՝ Արուսյանը համարում էր ժամանակավոր երեւոյթ, մի ճանապարհ, որի միջոցով հայերը, պահպանելով իրենց գոյությունը՝ հետագայում կկարողանային քաղաքական ինքնուրույնությունն ձեռք բերել:

Ռուսական տիրապետության շնորհիվ Հայերը փրկվեցին ֆիզիկական ոչնչացումից, բայց նրանք շարունակում էին մնալ իրավազուրկ վիճակում, տգիտության ու խավարի մեջ: Ծարակա՛ն տիրապետության պայմաններում հոգեվորականությունն ավելի շատ հնարավորություններ ստացավ իր դիրքն ամրապնդելու:

Նկեղեցու ազդեցությունն ավելի ուժեղացնելու նպատակով՝ հոգևորականությունն անեղ ունոց էր բարձրացրել եվրոպական ռեվոլյուցիաների և լուսավորության դեմ: Մարգիլության պրոգրեսիսի մեջ հոգևորականները տեսնում էին աշխարհի կործանումը: Այդ պատճառով էլ, որքան կարելի է ամուր էին կողպում իրենց արևմտյան դարպասները, որպեսզի լուսավորության և ոչ մի շողք ներս չթափանցի հայերի մեջ:

Հակառակ այդ բոլորի՝ Արուսյանը տանջվում էր իր ժողովրդի ցավերով. նրան իրական օգնություն ցույց տալու համար ուղիներ էր փնտռում և գտնվում էր զեզերումների մեջ:

Դեռևս այդ ժամանակից Արուսյանը նկատում էր, որ իր ժողովուրդն իրավազուրկ է ու խեղճ, որովհետև նա գտնվում է խավարի ու տգիտության մեջ, անկիրթ է և անուսում: Ուրեմն հենց այդ ուղղությամբ պետք է օգնության հասնել, կրթել ու լուսավորել նրան:

Գալով այս համոզմանը՝ Արուսյանն իրեն ամբողջովին նվիրում է ժողովրդի լուսավորության, երեխաների կրթության ու գաստիարակության պատվավոր գործին:

«Աչքիս առաջ բերելով սյգպիտի կենդանի եղանակով իմ հայրենիքի խղճուկ վիճակը,—ասում է նա,— առաջին երգումը,

որ ես տվել եմ մեր սուրբ հայրերի սեղանի առաջ, դառն արեւոյնքները, որ ես թափել եմ նրանց գերեզմանների վրա, ի խորոց սրտի հառաչանքները, որ ես նվիրել եմ նրանց աճյուններին, եղել են այն, որ զրանք լինեն իմ պահապան հրեշտակները և բաց անեն իմ առաջ հօգուտ նրանց որք թողած մանուկներին դո՛ւմբուլ ուղին (Դիման, էջ 214)։

Սակայն չպետք է լինել այնպիսի լուսավորիչ ինչպես մարդկանց ուղեղը մթադնող տղետ ու անմիտ բարեգայքն էին։ Ինչպես Մ. Նալբանդյանն է ասում.— «Նոցա լույսը խավարից շատ վատ է»։

«Առանց նախապես լուսավորվելու, այսպես էր խոսում իմ մեջ ներքին ձայնը, անկարելի պիտի լինի ինձ պիտանի լինել մի որևէ գործի»,—գրել է Արուստան իր խնդրագրերից մեկում (նույն անգր)։

Արուստանը, հակառակ շրջապատի տգիտության և բազմադան արդելքներին՝ կանգ չի առնում ոչ մի խոչընդոտի առաջ՝ կրթություն ձեռք բերելու համար։ Ունակութիւն անելով եկեղեցու դոգմաները և չվախենալով նրա պատառոտող ժանիքներից՝ Արուստանը գնում է Դորպատ, եվրոպական կուլտուրայի օջախներից մեկում կրթվելու։

Դորպատում գինվելով դիտությամբ ու կուլտուրայով, թոթափելով իր վրայից ասիականության վերջին ֆեսետոգները, տոգորված իր ժողովրդի լուսավորության վեհ դադափարներով ու ջերմ ցանկությամբ՝ Արուստանը ձգտում է օր առաջ գալ իր հայրենիքը, համոզված լինելով, որ սա գրկաբաց կընդունի իր պանդուխտ դավակին։ Սակայն որքան մեծ է լինում նրա հուսահատությունը ինչպիսի խոր վերք է բացվում հայրենիքի սիրով տոգորված նրա սրտում, երբ հասնում է էջմիածին։ Նա գալիս է դպրոցներ բաց անելու, ուսուցիչներ պատրաստելու և երեխաներին կրթելու ու դաստիարակելու ջերմ ցանկությամբ, սակայն երբ նա մտնում է էջմիածնի վանքի խավար կամարների տակ, այնտեղի մոայլադեմ ընակիչներն անբուժելիորեն ծակոտեցին նրա սիրտը։ Այն ժամանակ նա գլխի ընկավ, որ իր ցանկությունները քաղցր երազանք էին միայն։ Արուստանն ուղում էր էջմիածնում մի դպրոց բանալ ուսուցիչներ պատրաստելու համար։ Այդ նպատակով նա գնում է

էջմիածին, կաթողիկոս Հովնանեան Կարբեցու մօտ, տանելով իր հետ օտար զավանությունների նախարարի հանձնարարական նամակը: Երբ նա ներկայանում է կաթողիկոսին, վերջինս հարձակվում է նրա վրա, ասելով. «Հրամանով զան ի վերայ իմ, վտարանդեալդ ի հաւատոյ, դու լավ խմորել կարես զմիտս անմեղաց, այլ կրթել զնոսա, չէ՛ քո գործ»^{*}: Արուսյանին համարում էին «հայրենատյաց», «աբյուռնազանց», «ազգամոռաց» և «կրօնադրուծ», — և նրա վրա նայում էին որպէս բողոքական-լուծերադավանի:

Արուսյանը հուսահատ վերադառնում է Թիֆլիս: Այնտեղ նա ապրում է վանքի խցիկներից մեկում, մի քանի աշակերտներ հավաքելով իր մօտ՝ պարապում է նրանց հետ՝ ուսուցիչներ պատրաստելու համար: Բայց նրա այդ ձեռնարկումը շուտով խափանվում է, դարձյալ հողմորականների չարամտության հետևանքով:

Թրիխսիում չգտնելով մեկին, որին կարողանար պատմել իր ցավերը, Արուսյանն իր անտանելի վիճակի մասին գրում է Դորպատ՝ Ստեփաննոս Նազարյանին, վերջինիցս ստանալով սրտապնդող և հուսադրող նամակներ:

1837 թ. մարտի 20-ին Ս. Նազարյանը գրում է Արուսյանին. «Թանկագին հայրենակից և բնկեր.

Քո փետրվարի 10-ի գրությունն այս ամսի 4-ին ստացել եմ. դրանից ես պարզ իմացա, թե գրությունդ ինչպես է: Թող սիրտդ չկոտրվի, այլ համբերությամբ և վճռականությամբ պնդանա, մինչև որ քո անաջ ավելի լավ ապագա բացվի: Ավելի վսեմ բան չկա, ոչ մի տեղ մարդս այնքան մեծ չի երևում, ինչպես գերակշռող ուժի դեմ պատերազմելիս և, ըստ երևույթին, անխուսափելի ճակատագրի դեմ մաքառելիս՝ մի արդար գործի մեջ՝ իր արժանավորությունը ցույց տալու համար: Արդեն վաղուց ես այդ բոլորը կանխատեսել եմ և համարյա թե ձեռքերով շոշափել, ինչ որ դու այժմ հայոց զալրոցի գործերից պատմում ես: Ես դժբախտաբար Նույնպես եղել եմ մի քանի տարիներ բնության այդ զարմանալի արտաբանների մեջ և ստիպված եմ եղել նրանց խաղերին մասնակ-

^{*} «Դիվան», էջ 80.

ցելու: Հազար շնորհակալություն արարչին և բարեգործ ընկեր-
ներին, որ ես մի կերպ զրանց փշացնող հոսանքից ազատվելով՝
բախտ ունեցա հոգեպես հանգստանալու կրթված մարդկանց շըր-
ջանում, թեև իմ ճակատագրի բազմաթիվ փոփոխություններից
հետո (Երիվանա, էջ 256):

Անցնում են սակայն ամիսներ, բայց զարձյալ Արուսյանի
վիճակը չի փոփոխվում: Նորից ու նորից է նա իր սիրտը բաց անում
հեռու գտնվող իր մտերիմ ընկերոջ առաջ ու նորից ստանում
հուսադրող նամակներ:

Նույն թվի օգոստոսի 28-ին Ս. Նազարյանը՝ զբաղվում է Արուս-
յանին. թեև քո սրտի ցավը կոպիտ մարդկանց մեջ պարզ պատ-
կերացնում եմ. Դորպատը, սիրելիս, քեզ շատ է գուրգուրել, գու-
պիտի այժմ մի ճակատագրի ենթարկվես, որն իհարկե, նախան-
ձելի չէ: Ժամանակի ամեն ինչ փոփոխող մեծ կարողությունը,
հուսով եմ, որ քո զանգատներին էլ վերջ կտա:

(Երիվանա, էջ 258):

Սակայն բժամանակի ամեն ինչ փոփոխող մեծ կարողու-
թյունը Արուսյանի զանգատներին երբեք վերջ չտվեց: Խավարտուն
մարդկանց սահմանափակ ոգին խորթ էր Արուսյանի համար: Նա
չէր կարող հրաժարվել իր վեհ գաղափարներից և ծուռի դալ
տղետների առաջ: Այսպես էլ եղավ: Արուսյանը երբեք չզավաճանեց
իր փայփայած իղեալներին, նա անխոնջ կերպով տարավ իր
պայքարը նրանց իրականացման համար, չնայած՝ ընդհանուր ունե-
ցին և կատաղի զիմադրությանն ու հալածանքներին:

Թիֆլիսում մեկ ու կես տարի կիսաքաղց ու անգործ թափա-
ռելուց հետո, նա ճարահատված մտնում է այնտեղի արքունական
գալրոցը՝ ուսուցչի և տեսչի պաշտոնով:

Այդ 1837 թ. դեկտեմբերի 12-ին էր: Ահա թե ինչ է զբաղ-
այդ մասին ինքը. «Մտիպեալ ի չքաւորութենէ՝ մտի ի պաշտոն
արքունական, զորն ոչ երբէք կամէի» (Երիվանա, էջ 61):

Արուսյանի անհուն վշտերը ցավում են ծիր ու կայտառ մա-
նուկների շրջապատում: Նա մեծ եռանդով լծվում է երեխաների
կրթության ու դաստիարակության գործին: Սակայն զավառական
գալրոցում սահմանված կարգ ու կանոնը և վերելից եղած
հսկողությունը նրան թույլ չեն տալիս ազատ գործել և կիրա-

ռել այն սկզբունքները, որ նա ունեւր կրթության և դաստիարակության վերաբերյալ:

Այդ պատճառով, զավառական դպրոցին դուզընթաց, Արուսյանըն իր տանը կազմակերպում է մասնավոր դպրոց-պանսիոնատ, Ծնողները մեծ հաճույքով էին Արուսյանի պանսիոնատն ուղարկում իրենց երեխաներին:

Պանսիոնատի գոյությունն սկզբում անհայտ էր վերադասօրդաններին, ուստի և ազատ էր նրանց հաճախակի քամահաճ կամ ստանդարտ բնույթի կարգադրություններից և հսկողությունից:

Սակայն որոշ ժամանակ անց, Անդրկովկասյան դպրոցների դիրեկցիան տեղեկանում է պանսիոնատի գոյության մասին:

Սկսվում են նոր հալածանքներ Արուսյանի դեմ: Նրան մեղադրում են կառավարության օրենքներին հակառակ դադարի դպրոց պահելու մեջ: Արուսյանն ստիպված է լինում որոշ ժամանակով փակել այդ դպրոցը, սակայն ամբողջովին ձեռք քաշել նրանից, որ նա սիրած մանկան պես ջերմացնում էր իր ծոցում, անհնարին էր Շուտով նրան հաջողվում է թուլատվություն ստանալ: Դպրոցը նորից սկսում է գործել: Բայց Արուսյանի դեմ ուղղված հալածանքը չի դադարում: Նա մեղադրվում է սահմանված քանակից ավելի աշակերտներ պահելու մեջ:

Ինչպես զավառական դպրոցում, նույնպես և պանսիոնատում Արուսյանը դասավանդել է ոչ թե մեկ, այլ մի շարք առարկաներ. ռուսաց լեզու, գերմաներեն, ֆրանսերեն, աշխարհագրություն և պատմություն:

Մանկավարժական աշխատանքը կլանել էր Արուսյանին, եթե այդ ժամանակ Արուսյանին կտրեին երեխաներից, դպրոցից, ուսուցչական աշխատանքից, նրա կյանքը անիմատ կդառնար, որովհետև նա կոչված էր այդ գործի համար: Իր մի նամակում Արուսյանը գրում է «...Ինձ արդեն աշխարհիս երեսին ոչ մի բան չի կարող հրապուրել, բայց միակ այդ զբաղմունքը, որ ամփոփում է իր մեջ իմ բարոյական կյանքը, պահպանում է և իմ ֆիզիկական կարողությունը, որի ոչնչացմամբ կյանքն ինձ համար կյանք չի լինիլ, այլ ծանր բեռ»:

Նա ձգտում է իր աշակերտներից ուղարկել Դորպատ, Մոսկվա և այլ նման վայրեր, որ ուսուցիչ դառնան:

* Դիվան, էջ 216:

Ի՞նչ վերահիշյալ նամակում նշելով, որ երկար ժամանակ իր պանսիոնատի աշակերտներին պահել է ձրիաբար, որպիսի հանգամանքը վշտացրել է և նրանց ծնողներին, որոնցից ոմանք իրենց ցանկությամբ սակավ դրամական օգնություն են ցույց տվել թիրեացի դավալենների սննդի և իմ մյուս աշխատակիցներին պահելու համար, Արոմյանը չափազանց հուզված բացականչում է. «Ինչո՞ւ, մհ, ինչո՞ւ բախտը զրկել է ինձ կարողությունից, որ ես ի վիճակի լինեի պահել և դաստիարակել իմ սեփական միջոցներով ոչ թե քսան, այլ 100 և ավելի մանուկներ ամենաչքավոր դասից, որ սերմանեի նրանց հոգու մեջ մարդկային պարտականությունները,—կրկնում եմ ես հաճախ զառն հառաչանքով» (Դիվան, էջ 215—216)։

Այնուհետև, բողոքելով երեխաներից իրեն կտրելու փորձ անող չարանենդ մարդկանց դեմ՝ նա դեպի երեխաներն ունեցած իր սիրտ մասին ապում է. «Միայն, դուցե, դաժաղը կարող լինի խեղդել այդ զգացմունքները»։

Պանսիոնատում տիրում էր ատանձին կենդանություն և եզուների դասավանդումը տարվում էր մանկավարժության նորագույն մեթոդներով։ Կրոնական ձանձրալի աղոթքների և հաստատփոր գրքերի փոխարեն, երեխաներին տրվում էին ռեալ դիտելիքներ բնություն և կյանքի մասին։ Աշակերտները կարգում էին նվրտական հոշակավոր գրողներ՝ Գյոթեի ու Շիլլերի գրվածքները։ Ինչպե՞ս աշակերտների ուսման գործը հեշտացնելու նպատակով, Արոմյանը կազմում է դասագրքեր, ինչպես օրինակ՝ «Նախաշավիղ»-ը, «Ռուս տեսական և գործնական քերականություն հայերեն լեզվով» և այլն։

Գավառական դպրոցում Արոմյանի դաստիարակության տակ էին դառնում ոչ միայն հայ, այլև վրացի ու ադրբեջանցի երեխաներ, նա բոլորին հավասարապես սիրում էր։

Արոմյանն իր աշակերտների հետ կապված էր բոլոր նյարդերով. նա չէր խնայում իր ուժերն ու հնարավորությունները նրանց համար։

Այդ մասին վկայում է գերմանական ճանապարհորդ Վագները, որը հաճախ այցելել է Արոմյանի պանսիոնատը ու ճանապարհորդել է նրա հետ։

Վազները գրում է. «Աս դպրոցը շատ անգամ դացի ու հայ աղոց առաջադիմությանը վրա շատ դաբմացաւ։ Տաս-տասնու-չորս տարվան տղաք աղեկ կկարգան ու կգրեն հայերեն, վրացերեն, թաթարերեն, ռուսերեն, գերմաներեն, գաղիներեն։ Սառազիմ շատ դաբմացաւ. գերմաներեն աղեկ շեշտելով կխոսեն ու վարպետին իմ առջև գրել տված բաներն տեսա, որ գերմաներեն լեզվին կազմության աղեկ տեղյակ էին։ Իմ առջև Գյոթեին ու Շիլլերին գործերը կարդացին։ Ամեն անգամ աս դպրոցը դալուս ու աս կայտառ տղաքը տեսնելուս՝ մեծ ուրախություն կզգայի, մանավանդ իրենց բարեկամական ու ընտանեկան վարմունքը, քաղաքավարությունն ու վարժությունը զիս շատ կուրախացներ։ Իրենց վարպետին վրա շատ սեր ունին, որովհետեւ, թե՛ կրթության ու գիտության մեջ հառաջացնելու և թե՛ իրենց հանգստությունը հոգալու շատ փուլթ կտանիւ»^{*}

Սակայն ավելի կենդանի վկա է ինքը Աբովյանը։

Երբ տխուր մտքերի ծովում մոլորված Աբովյանը երեք օր բացակայում է քաղաքից, ինչպես ինքն է ասում. «Էլի իմ, իմ ազիզ, իմ սիրելի աշակերտներն էին ընկել հտեկցա՝ որ բալքի մեկ բան էլա իմանան, և այնուհետեւ «Մեկ առաժուտ փանջարումը նստած՝ էլի մտքիս հետ էի ընկել, որ նրանք առաջովս անցկացան։ Որ շտեաս նրանց, հոգիս տեղահան էլավ։ Իմ ու նրանց էն օրվան իրար տեսնիլը՝ ձվ կարա պատմիլ, ով սիրտ ունի, ինքը կիմանա։ Բալքի թե՛ գերեզմանումը էս ձեր սերը մտքիցս գնա՝ այ իմ սիրելի, իմ ազիզ բարեկամք. թե՛ չէ, որքան էս կապուտ երկինքը գլխիս ա, շուռչա բերնումս, ձեզ, ձեզ սուրբ պետք է համարիմ ինձ համար, ձեր արեւն մեռնիմ»^{**}

Ուրիշ էլ թնշ է հարկավոր, այսօրան պարզ, ջերմ ու սրտառու խոսքերը բացատրելու համար։

Սակայն Աբովյանը գործում էր դաժան պայմաններում։ Գանի գնում, ուժեղանում էր հալածանքը նրա դեմ։ Նրան հալածում էին հոգևորականությունը, Անդրկովկասյան դպրոցների գլխիցիան, ցարական չինովնիկությունը և սխուրստիկական դպրոցի սեակցիոն ուսուցչությունը։

* «Լույս», 1897թ. Գ I Ն. Տ. Կարապետյանի լն. Ա. Կոզլածից։

** Երեւեր, 1 հատար, 1939 թ., էջ 8.

Փոխարքային ուղղված մի գրության մեջ Արուսյանի մասին գրում են, որ նա ի վիճակի չէ ղեկավարելու դպրոցը և այն պատշաճ բարձրության վրա դնել:

Արուսյանն ակադեմիկ Ֆրենսին գրած իր նամակներից մեկում զգվանքով է խոսում Անդրկովկասյան դպրոցների տեսուչ՝ Դեմենտիևի մասին: Ինչպես ասում է Արուսյանը. «Սա ինձ բավականաչափ վիավորանքներ է պատճառել, որ բնականաբար, մեր հարս-բերության մեջ կարող էին տեղի ունենալ: Մեր բոլոր աշակերտները նրա ձեռքի տակ պիտի տանջվեն, բայց գլխավորապես՝ հայերը և ես ատանձնապես»:

«Ես բնավ չեմ կարող սրա խորժանքը տանել»^{*}

Այդ հալածանքն ավելի ցայտուն է դառնում Արուսյանի կազմած դասագրքերի հրատարակման նկատմամբ:

Արուսյանը ցանկանում է լույս աշխարհ դուրս բերել իր կազմած դասագրքերը, բայց նրա առաջ խոչընդոտներ են ծառանում. Լուսավորության մինիստրութունը հայտնում է, որ միջոցներ չկան Արուսյանի կազմած դասագրքերի տպագրության համար: Իսկ Թիֆլիսի դիմնադիայի մանկավարժական խորհուրդն Արուսյանի «Նախաշավիղ»-ը քննարկելով հանում է իր չոր դատաւճիռը: Մանկավարժական խորհրդի արձանագրության մեջ ասված է. «...Ամբողջ գրքի մեջ թույլ են տրված, բացի օտար լեզուներից առնված անտեղի ռամկական բոռերը, նաև բազմաթիվ անվայելուչ ասացվածքներ: Այս պատճառով մանկավարժական խորհուրդն, ի նկատի ունենալով Արուսյանի ձեռագրի արժանավորության և օգտի մասին Արարատյանցի արած նկատողությունները, եզրակացրեց, որ այդ գիրքն Անդրկովկասյան արքունական ուսումնարաններում գործածելու համար պիտանի չէ, նախ այն պատճառով, որ ռամկական լեզուն, որով նա գրված էր, մինչև հիմա էլ քերականական ոչինչ որոշ կանոններ չունի. երկրորդ, որ գրվածքը տրաս մասծողությանց պտուղ է և երրորդ՝ որ նրա մեջ բազմաթիվ սխալներ կան մաքրության և ճշտության մասին՝ թե լեզվի և թե ճաշակի»^{**}

^{*} «Դիվան», էջ 118:

^{**} «Նախաշավիղ» 1940 թ. ընկ. Բ. Զաբյանի ծանոթագրությունները, էջ LVII:

Այսպիսով, որովհետև Շնախաշավիղա-ը գրված էր աշխարհաբար լեզվով, իսկ դա ռուսականն էր լեզու էր, որովհետև Շնախաշավիղա-ը հիմնադրատակ խորտակում էր տառանդաններով զրահանաչություն սովորեցնելու փառած սխառեմը և մտցնում էր դրահանաչության ուսուցման նորագույն՝ հնչական մեթոդը, որովհետև, Շնախաշավիղա-ը բարոյական խրատներով բաց էր անում ռուսական երեխաների աչքերը և զայրացած էր խոսում դարարար լեզվի ու սխոլաստիկական դպրոցի դեմ, որովհետև շանվայելուչ ասացվածքներով կաշում էր շարքազան հայրերին ու հարվածում էր մանկավարժության մեջ կաստայացած մտքի ներկայացուցիչներին, ուստի վերջիններին կողմից լույս աշխարհ դուրս գալու անցագիր չստացավ:

Չայրացած այս ամբողջից, Արուսյանը անդրկովկասյան դպրոցների դիրեկտորին ուղղված իր անթվակիր (հավանական է 1843-ին) մի զրույթյան մեջ նշել է, որ Թիֆլիսի դպրոցում իր կատարած ուսումնական ջանասեր և կրքոտ աշխատանքների դիմաց մի շնորհակալություն ստանալու փոխարեն, հաճախակի նկատողություններ է ստանում, ուստի հրաժարվում է իր պաշտոնից, այդ օրվանից իրեն համարում է ազատ և խնդրում է կարգադրություն անել գործերը հանձնելու մասին:

Հասկանալու համար Արուսյանի այս աստիճանի զայրացած լինելու հանգամանքը, հարկավոր է թեկուզ մտքով փոխադրվել այն միջավայրը, որտեղ գործում էր նա, տեսնել այն մարդկանց՝ ցարական չինովնիկներին, սև ֆարաշավոր դահիճներին, մարդկային մտքի բռնադատումը սրբագործող այն շինտելիզնատներին, որոնց դեմ քաջարար մաքառում էր մեծ լուսավորիչը:

Տարօրինակ չէ, որ նա այդ շնորհակալությունը չստացավ ընդհուպ մինչև իր ողբերգական անհայտացումը:

Շնորհակալության փոխարեն 1843 թվի հուլիսի 19-ին Արուսյանին ազատեցին Թիֆլիսի գավառային դպրոցից և ուղարկեցին ավելի խավար տեղ, որպեսզի նրան այնտեղ այնպես թաղեն, որ նրա հետքը անգամ չտեսնեն ոչ տվյալ ժամանակի և ոչ էլ գալիք սերունդները:

Արուսյանը տեղափոխվեց Երեվան գավառական դպրոցի տեսչի պաշտոնով:

Արոմյանի համար ցանկալի էր հեռանալ չինոֆիլներէ զգլիկ միջավայրից, սակայն շատ ծանր էր հեռանալ իր սիրած աշակերտներէրից, որոնց հետ կապել էր նա իր կյանքը, որոնց մեջ էր նա ահա՛նում իր բախտավորութիւնն ու երջանկութիւնը:

Ծանր էր բաժանման բողբն: Այն հուլիսը, որ Արոմյանը կապել էր Թիֆլիսի իր աշակերտների հետ, իրականացնելն անհնարին էր դառնում: Սրտի խորին կսկիծով է նա թողնում նրանց, թողնում իր փայփայած պանսիոնատը:

Պերճ Պոռչանն իր նամակներից մեկում գրել է.

Շնորհ [Արոմյանի] քաղցր վարմունքի և ջերմ ազգասիրութեան համար խոսում են Թիֆլիսում ունեցած յուր մասնավոր դպրոցի աշակերտները, մի (հայազեա) վրացի գնդապետ Բաղրաձե շատ քաղցր հիշողութիւններ է պահել Արոմյանին աշակերտած մասնակից. նրա ասութեամբ՝ աշակերտներ չեն եղել իրենք, այլ սիրելի դասիկներ, լավ օրերին ճաշերից հետո միշտ առնում է եղել դաշտ զրոստնքի. Բաղրաձեն չի մոռանում այն գրկախառնութիւնը, որ ունեցել են թուր աշակերտներն իրենց սիրելի ուսուցչի հետ՝ Թիֆլիսից Երեւան պաշտոնով հրաժեշտ տալու օրը, թուր աշակերտները մի քանի վերստ ուղի են գրել Արոմյանին:*


Այդ զգայուն սիրտը և սիրված ուսուցիչն արցունքն աչքերին, խորին զգացմունքով գրկախառնվում է իր աշակերտներին, իր արցունքներով թրջում նրանց այտերն ու վերջին հրաժեշտը տալիս:

Նույնիսկ Երեւանում, երբ արդեն նոր աշակերտներ ուներ, որոնց նա սիրում էր նույնքան ջերմորեն, Արոմյանը չի կարողանում մոռանալ Թիֆլիսի իր աշակերտներին: Դրա փայլուն ապացույցը կարող է ծառայել իր նախկին աշակերտներից մեկին ուղղված Արոմյանի մի բանաստեղծութիւնը, որից ջերմ սիրտ զգացմունքներ են ծորում:

Ահա այդ ոտանավորը.

«Առ պատմական իմ բարեկամ և աշակերտ հոգեսուն
շնորհազարդ պատանի Յգոր Ակիմյան ի 1844-ի 28 ապրիլի

* «Լուսա», 1897 թ. Գ. I Ն. 8. Կարապետյանի «Ճաշատուր Արոմյան» հոդվածից:



Հողէ իմ մարմին, թէ չէ քեզ նման,
 Քո հողի տայ նմա շունչ կենդանութեան,
 Յանխիղճ օրհասէն զրկիմ արդ՝ ի քէն,
 Շունչ և դօրութիւն վերանան յինէն:
 Առանց քեզ իմ կեանք տարտարոս դժնդակ,
 Ինձ բոլոր աշխարհ դժոխք կենսափակ,
 Որքան հեռանամ, այնքան դօրանայ
 Բուռն քարշողական դօրություն նորաձ^{*}

Երեվանում ևս Արտվյանի համար մի առանձին արև չծագեց, այլ նրան պատեց ավելի սարսափելի խավարը: Նրան հալածողները թիֆե ավելի շատացավ:

1845 թվին Ներսես Կաթողիկոսին Արտվյանը գրել է, որ իր պաշտոնակիցների նախանձի, չարակամության հետևանքով թողեց հեռացավ Թիֆլիսից Երևան գ...ուր այժմ եմ ես վշտանդեալ հսգւով ի վերջին յուսահատութեան, ոչ վասն անձին ապրուստի կամ փառաց, զորս ունիմ տեառն ողորմութեամբ, այլ վասն այնորիկ, զի աւուրք իմ անցանեն ընդ վայր, զօրութիւն իմ սպառի օր ըստ օրէ, միտք իմ դլանայ, ցանկութիւնք իմ մեռանին: տեսանեմ զտարարազդ վիճակ հայրենեաց եւ չունիմ հնար եւ միջոց օգնել նմա իւրք, որ էր առաջին և վերջին նպատակ կենաց իմոց՝^{**}

Թե որքան է հուսահատությունը պատել Արտվյանին, երևում է վերոհիշյալ տողերից:

Ընդունելով Երեվանի զաւթական դպրոցը՝ Արտվյանն առաջին հերթին ծանոթանում է այդ դպրոցի ուսուցիչներին. այդ հիասթափություն է առաջացնում նրա մեջ, Նա աշխատում է ազատվել այդ ուսուցիչներից, սակայն իդուր, նրան լսող չի լինում: Այսպիսով, հենց սկզբից, ուսուցիչները և Արտվյանը զստնում են իրար խնայանների: Արտվյանի ցանկությունն էր այդ դպրոցը դարձնել Անդրկովկասի մեջ լավագույնը, բայց ժամ հետ և թնչպես:

Այնուամենայնիվ նա սկսում է իր գործը: Նորից ու նորից նա իր հանգիստը և երջանկությունը զստնում է երեխաների շրջապատում: Նրանց համար չի խնայում իր ուժերը, իր զխտությունը:

^{*} Եւսմա, Ն. Տ. Կաթողեայանի վերոհիշյալ հոգւածից

^{**} Եղիվան, էջ 61

Այդ դպրոցում Արուսյանը դասավանդել է ուսաց լեզու, պատմութիւն և թվարանութիւն: Նա լայն բացատրական աշխատած է տանում ժողովրդի մեջ կրթութիւն նշանակութիւն մասին և պահանջում է, որ իրենց երեխաներին դպրոց ուղարկեն: Նա սարսափելի ջղայնանում էր, երբ տեսնում էր ծնողներին կողմից անտարբեր վերաբերմունք գեպի իրենց երեխաների կրթութիւն գործը:

Արուսյանն Անդրկովկասյան դպրոցների գերեկցիային գրած մի շարք գրութիւններում բողոքում է, որ իր դպրոցում սովորող աղբրեջանական երեխաների թիվը շատ քիչ է, և խնդրում է միջոցներ ձեռք առնել: Նա ինքը համոզում էր աղբրեջանական ծնողներին երեխաներին դպրոց ուղարկելու, պահանջում էր փակել մահմեդական մասնավոր դպրոցները և երեխաներին ուղարկել պետական դպրոց:

Արուսյանը հաճախակի այցելում էր իր աշակերտների տները՝ ծանոթանալու նրանց կյանքի պայմաններին և ծնողների հետ, վերջիններիս անհրաժեշտ ցուցմունքներ տալու իրենց երեխաների ուսման գործը կազմակերպելու մասին: Նա ոչ մի տարբերութիւն չէր դնում հայ և այլազգի երեխաների մեջ և առանց խտրութիւն այցելում էր բոլորի տները:

Նա հաճախ իր աշակերտների հետ էքսկուրսիաներ էր կազմակերպում քաղաքից դուրս, հետաքրքիր տեղերը գիտելու, տանում էր Զանգվի տաճար, այգիները և այլն: Նա լող էր սովորեցնում նրանց: Էքսկուրսիայի ընթացքում պատահած բույսերի ու կենդանիների, հետաքրքիր երևույթների մասին անհրաժեշտ բացատրութիւններ էր տալիս և պատմելու, որ երեխաները յուրաքանչյուրը մեկական հաս այդ բույսերից իրենց հետ վերցնեն, դպրոցի բակում տընկելու համար: Դպրոցի բակում աշակերտների յուրաքանչյուր խումբ ուներ իր առանձին մարզը, որը աշակերտները սեփական ուժերով ջրում և խնամում էին:

Սակայն մտաիկ էքսկուրսիաներից բացի, նա կազմակերպում էր նաև հեռավոր էքսկուրսիաներ պատմական հուշարձաններն ուսումնասիրելու համար: Ահա թե ինչ է պատմում նրա աշակերտներից մեկը գեպի Գեղարդ էքսկուրսիա զնալու մասին:

«Զնայած մեծ բազմութեան, այնուամենայնիվ բոլորի ծախան ինքն էր հոգում: Խմբի մեջ բացի հայերից մտան և երկու պարսիկ աշակերտներ (Շափիրեկ Հասանազա Սուլթանով): Ծանապարհին շատ ուրախ էինք, ձի էինք քշում: Քշելու ժամանակ Արուստան աշակերտից առաջ չէր անցնում, հաղթութիւնը միշտ աշակերտի կողմն էր թողնում: Երեկոյան դեմհասանք Դեղարդ: Դեռ վաղը չհասած կողքին ընկան քարն մի դալգալըդ կար, մտանք այնտեղ, ձիանքը կապեցինք, ապա հրամայեց իսկույն կրակ անել: Աշակերտներն իրենց խանչալներով փայտեր կոտորեցին և մի քանի բազում անգին խարույկ պատրաստեցին: Եղանակը մի քիչ ցուրտ լինելով պատվիրել էր բոլորին տաք հագնվել և կրակից չհեռանալ: Մի քիչ հանդատանալուց հետո, ըստ հին սովորութեան, սկսեցինք կրակով խաղալ: Արուստան աշակերտներին հրում էր դեպի կրակը, իսկ մենք էլ երբեմն իրեն կրակի մեջ էինք ձգում և ներողութիւն չանդրում: Սակայն բոլորովին չէր նեղանում ասելով: «Խաղի ժամանակ մարդ կրակն էլ կընկնի, վայր էլ կընկնի—խաղանք, ոչինչ»: Ընթրիքից հետո պահեցինք քնելու, այդ ժամանակ էլ Արուստանը զանազան պատմութիւններ արավ...»:

Այս փաստը շատ բնութագրական է՝ Արուստանին որպէս մարդու և մանկավարժի ճանաչելու համար:

Երեկոներն Արուստանի աշակերտները հավաքվում էին դպրոց կամ նրա տանը՝ իրենց ուսուցչի զրավիչ հեքյաթները և պատմվածքները լսելու:

Արուստանը դեպի երեխաներն ունեցած իր սերն ու հոգատարութիւնը զուգակցել է մանկավարժորեն անհրաժեշտ խստութեան և պահանջկոտութեան հետ: Նա չէր կարողանում տանել, երբ որեւէ աշակերտ դպրոց էր գալիս դասերը չպատրաստած, զասարանում իրեն անվայելուչ էր պահում, խանգարում էր դպրոցի ռեժիմը, կամ չէր լսում ուսուցչի բացատրութիւնները:

Այնքան էր նա տարված իր դործով, որ նրա վրա ազդում էին ամենաչնչին անկարգութիւնները: Նա հուզվում էր և բարկանում:

Արուստան արգելել էր իր աշակերտներին իրեն չվարժապետ, կամ չվարժապետ անվանել, այլ «պ. Արուստան», իսկ ինքն աշակերտներին կանչում էր անունով, և ոչ թէ ազգանունով:

Ձմեռվա արձակուրդներին նա հավաքում էր աշակերտներին, հետաքրքիր պատմություններ էր անում, խաղեր կազմակերպում, նրանց մրդեր բաժանում և այլ միջոցներով ուրախացնում, որ արձակուրդների ընթացքում փողոցներում չթափառեն, անկարգություններ չանեն:

Արտվյանի աշակերտները եղել են այն ժամանակ Երևանում գոյություն ունեցող հոգևոր դպրոցի աշակերտների նախանձի առարկան՝ Արտվյանի նման ուսուցիչ ունենալու համար: Հոգևոր դպրոցի աշակերտները տեսնում էին, թե ինչպես է վարվում Արտվյանն իր աշակերտների հետ, մինչդեռ իրենք օրական մի քանի անգամ ֆայախկայով ծեծ էին ուտում իրենց անզուլթ դաստիարակների ձեռքով և ամբողջ շաբաթներ հիվանդ պառկում:

Արտվյանը չէր բավականանում միայն այն բանով, որ աշակերտներն ավարտեն իր դպրոցը: Նա դթառառ հոր պես մտածում էր նրանց հետագա կրթության մասին: Չէ՞ որ Արտվյանի նպատակն էր հայ ժողովրդի լուսավորիչների թիվը բազմացնել: Երևանի զավառական դպրոցի արխիվում և իր անձնական թղթերում պահպանված են մի շարք դրություններ և պատճեններ որոնցով Արտվյանը խնդրել է Անդրկովկասյան դպրոցների գլխավորային ու մասնավոր մարդկանց օժանդակությունը իր աշակերտներին եվրոպական և ուստական բարձրագույն դպրոցներ ուղարկելու համար:

Երբ Ներսես Աշտարակցին նոր էր ընտրվել կաթողիկոս և Բեսարաբիայից էջմիածին էր գալիս, Արտվյանը հավաքում է իր աշակերտներին ու զնում է նրան գիմավորելու: Կաթողիկոսը տեսնելով աշակերտների մեծ շնորհքը, խոստանում է նրանցից 10 հոգու ուղարկել Եվրոպա՝ բարձրագույն կրթություն ձեռք բերելու: Արտվյանը ոգևորված սկսում է օր ու գիշեր պարապել իր աշակերտների հետ, սովորեցնելով գերմաներեն, ֆրանսերեն և այլ գիտելիքներ, որպեսզի նրանք կարողանան ընդունվել եվրոպական դպրոցները:

Կարճ ժամանակամիջոցում նրա աշակերտները սովորում են գերմաներեն ազատ կարգալ, գրել և նույնիսկ խոսել:

Որոշ ժամանակից հետո Արտվյանը զնում է էջմիածին և կաթողիկոսին հիշեցնում նրա խոստումը: Վերջինս ասում է, որ մի քիչ էլ պետք է սպասել: Արտվյանն ավելի ոգևորված շարունա-

կում է իր աշխատանքներն աշակերտների հետ: Սակայն որքան հուսահատվում է նա, երբ նորից կաթողիկոսին գիմնիւս կոսիլա պատասխան է ստանում թե՛ «Օրհնած, թե՛ անհանգիստ մարդ ես, քեզ մի բան տեսցին այլևս ձեռք չես վերցնելու: Արովյանը զայրացած վերադառնում է Նրեզան: Նրա աշակերտները սրտատրոփ սպասում էին իրենց ուսուցչի ավետարեր խոսքերին: Սակայն երբ տեսան Արովյանի մոտյլ ու զուռնաոված գեմքը, հասկացան, որ ամեն ինչ տապալված է: «Ռուսերեն, ռուսերեն, երեխայք, սեփական ուժերով պետք է հարթեք Ձեր մանապարհը,— ասում է Արովյանն աշակերտներին: Եվ այդ օրից դադարեցնում է գերմաներեն պարապելը ու սկսում է զարկ տալ ռուսերենին: Այդ զեպքը չափազանց ծանր ազդեցություն ունեցավ Արովյանի վրա:

Սակայն Արովյանը չզազարեց իր աշակերտների հետադառնման մասին մտածելուց: Ավելին, նա չկարվեց իր այն աշակերտներից, որոնք արդեն սովորում էին հեռավոր տեղերում: Նամակներ էր գրում նրանց, հորդորում որ լավ սովորեն, չքավորներին խոստանում էր նյութական օգնություն ցույց տալ, այս կամ այն տեղ նրանց օգտին միջնորդություններ էր հարուցում և այլն:

Դեպի իր աշակերտներն ունեցած անհուն սիրտ և հայրական հոգատարության արտահայտություն պետք է համարել, արդեն իրենից հեռացած և ուրիշ տեղում սովորող իր նախկին աշակերտներից երկուսին զբված հետևյալ տողերը. «Ամենաքաղցըր արարիչը թող այն ժամանակ տա ինձ փակել աչքերս, երբ տեսնեմ ձեզ իմ գրկում զարգարված ուսումնով, զարգացած բարերարոյությամբ, պսակված փառքով և պատվով և իմ Վարդանը, որ այն ժամանակ, գուցե, որբացած լինի, թող ձեզանով լինի աշխարհիս բոլոր փառքերից, բայց ոչ բարձրյալի խնամքից, զրկված հոր արժանաժառանգ որդի, բարձրյալի, որ օրհնում է: զորացնում է ձեզ՝ իմ որդիներիդ, իմ ուրախության և ձեր բարետոհմ ազգի և տան պալծառության համար»:

Այդ նույն նամակում, գիմնելով այդ երկու աշակերտներից մեկին, նա շարունակում է. «Երեք շաբաթ է, որ ամեն փոստի այրվելով սպասում եմ թի ինչպես վերջացավ քո վիճակը, իմ անգին բարե-

կամ. եթե և կնյազի սիրտը չզթաց քո նախնյաց վեհության և քո ներկա սրբության, ես քեզ կըկին բարեկամ և հայր, որդյակ, այլևս իդուր մի աշխատիր, իդուր չկորցնես քո ժամանակը և լեզուդ. ես ցամաք հացով կապրեմ, և դու կ'ընտա Տփիսխում փառքով և պատվով, ինչպես ես ամենամ քո մենակ մնացած մօր դառն արցունքները, իմս դեռ չեմ հիշում»։*

Այսպես էր Արուսյանը որպես մարդ և որպես մանկավարժ։ Բայց միայն իր զպրոցծով չէր, որ հետաքրքրվում էր Արուսյանը։ Նա մտահոգված էր նաև ուրիշ զպրոցների վիճակով։ Այդ ժամանակ Նրևանի հոգևոր զպրոցի տեսուչ էր՝ այդ պաշտոնի, ինչպես և ուսուցչության համար ոչ մի իրավունք չունեցող՝ Արարատակին։ Արուսյանը մի քանի անգամ բողոքում է մինչև որ նրան հաջողվում է Արարատակուն ազատել տալ այդ պաշտոնից։

Արուսյանն այցելում էր նաև գյուղական զպրոցները, ուսումնասիրում, օգնություն ցույց տալիս։

Այսպիսի մի այցելության մասին շատ գեղեցիկ կերպով նկարագրել է Պերճ Պոստյանն իր «Գյուղական վարժապետներ» հոգվածաշարքում։

Արուսյանի մանկավարժական գործունեությունը լի է ուսանելի շատ կողմերով. այդ գործունեությունը եղել է չափազանց բեղմնավոր, չափազանց հարուստ և բազմակողմանի։ Արուսյանը կատարել է ամեն ինչ իրեն հանձնված երեխաների կրթություն և դաստիարակություն համար։

Արուսյանը մանկավարժ էր բառիս ամենալայն և ամենախոր իմաստով։ Ժամանակակից հայ իրականության պայմաններում նա միակն էր կրթության գործում, անփոխարինելի էր դաստիարակության մեջ։ Նա սիրող և սիրված մանկավարժ էր, իր ամբողջ էությունը կապված երեխաների հետ։ Նա մեր մեծ Պետաղոցցին է։

Եթե զրվելու լինի Հայաստանի մանկավարժության պատմությունը, ինչ խոսք, որ ամենապատվավոր տեղն Արուսյանին է պատկանելու, իսկ ՍՍՌՄ-ի մանկավարժության պատմության մեջ պատվավոր տեղերից մեկը։

Իր նամակներից մեկում նա գրում է. «Ապրել և մեռնել

* «Գիվան», էջ 81—82

հայրենիքի համար — ահա խնդիրը, որ իրրե նպատակ, ես բնորեն
եմ ինձ համար իմ մանկության օրերիցն։*

Եվ իրողը, նա ապրեց ու մեռավ իր հայրենիքի համար, նրա
մանուկների համար, անելով այն ամբողջը, ինչ հնարավոր էր և
նույնիսկ անհնարին։

II. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

ՄԱՐՈՎՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ, ՈՐՊԵՍ ՆՐԱ՝
ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ԲԱՆԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ

Արույանն իր ժողովրդի կրած հալածանքները, տանջանքները
և աղքատիկ կյանքը համարում էր ազիտություն, խավարա-
մբուռության և լուսավորության զուրկ լինելու հետևանք։ Իր
հոշակավոր շփերը Հայաստանի՝ զնայում նա ասում է. «... Ախր
մեր ազգը, որ խեղճ ա մնացել, թրի, կրակի եսիր, բոլորի պատ-
ճառն էս ան՝ որ մեզ մեկ ասող չի ըլում՝ թե մենք մի կնք, մեր
հավատն ի՞նչ ա, ի՞նչի համար ենք էկել աշխար. քոս զալիս ենք,
քոս զնում։»^{*} Նույն երկում, մի այլ տեղ, ասված է. «Վա՛յ է՛ն
ազգին՝ որ բնական օրենքը կթողա անբնականին կըհետևի, որ
էնպես խրատ տվող չի ունենալ, որ նրան հոգի տա, և ոչ հոգին
էլ հանի Յարար. որ լավ կարգացող էր էլել, երկեքանց ջուկ,
ժողովրդին ջուկ գիշեր ցերեկ՝ խրատ էր տվել, կարգացրել, լուսա-
վորել էր, հիմիկ մեր ազգն է՞ս հալին կըլեր, էստեղ կընդներ։»^{***}

Այսպիսով, ազգի թշվառության պատճառն Արույանը դրու-
նում է նրա չլուսավորված լինելու մեջ։ Ազգը չգիտե, թե ո՞րն է
ուղիղ ճանապարհը, ինչպես կարելի է ազատվել «թրի, կրակի
եսիր» լինելուց, նա թողած բնականը, անբնականին է հետևում,
այսինքն՝ փոխանակ լուսավորության ուղին բռնելու, հրաշքնե-

* «Դիվան», էջ 213։

** «Երկեր», 1 հատ. 1930 թ., էջ 35։

*** «Երկեր», 1 հատ., 1930 թ., էջ 109։

բին ու սնտախաշտությանն է գերի դարձել, իրեն դեպի խավարը քաշ տվողներին է հետևում և այլն:

Լուսավորութուն,— ահա այն ճիշտ ուղին, որին հետևելով հայ ժողովուրդը կարող է ազատվել բռնություններից, դրկանքներից ու ազգատուությունից: Ժողովրդի փրկությունը, Արուստանի կարծիքով, նրա լուսավորության մեջ է:

Այդ գործին էլ նվիրաբերեց նա իր կյանքը:

Սակայն Արուստանին քաջ հայտնի էր, որ մի ծագկով դարուն չի դա, այդ պատճառով էլ նա ղիմում էր բոլոր նրանց, ովքեր կարող էին դործել հոգևա ազդի լուսավորության, ընդգծելով, որ շվայտ ու ղեխ կյանք վարելը մի գործ չէ, որ ազդի զավակներին կրթելը, ազդին լուսավորելը՝ ամենազնաառնի, ամենավեհ և պատվավոր բանն է և ամեն կարող անձնավորության սրբազան պարտքը:

Այդ մասին նա ասում է.

«Խալիսի մեղը չի, որ ճամփից դուս են եկել, իրար մոռացել, մեզ նման կարգացողի ոտները պետք է ծառիցը կապած, ամօռի ոտված պահած: Ախր թե շատ առնողիցը շատ կպահանջեն, բառ դատաստանի օրը թիչ ջուղար կտան ինձ նման զրի սեն ու սպիտակն իմացողները որ էլ ուրիշ բան չենք ֆիքր անում, հենց ուզում ենք՝ լավ ուտենք, լավ խմենք, քյահլան ձիու վրա նրստինք չալ չալ մանեթները ջերրներումս չխշկաղցնելով, ձեռներիս ղողղողալով, խաղացնելով ման դանք, քեֆ ու մարաքյա անենք»:

Արուստանը պայքարել է այն մարդկանց դեմ, որոնց կարծիքով հայ ժողովուրդը լուսավորվել չի ուզում, կրթված մարդկանց չի սիրում և այլն:

«Շատ մարդ է դանդառ անում, թե մեր խալիսը զիբը կարդալ, ուսումն չի սիրում. ախր թիչ պես սիրի մարդ, որ զօրությունը չի հասկանում»*, ասում է Արուստանն իր «Պարապ վախտի խաղալիք» գրքի առաջաբանում:

Իր «Վերքում» նա շարունակում է այդ միտքը հետևյալ բաներով. «Հայոց ազդի ջանին ղուբբան՝ մեկ նրա երեխին ուսում տեւը, նրա էն լուսաթաթախ հոգին կրթիլ, կրթիլ եմ ասում, թուղթ խաղալ, ֆրանցուզերեն խոսիլ, անգլիլ բերան անիլ, գլխիցը դուս-

* «Պարապ վախտի խաղալիք» գրքի առաջաբանից.

տալ չեմ ասում, ու շարական, փոխ, յա շիւտիլով ուտիլ սովորեց-
նիլ, որ մեզ էս տեղն ա քցել, տեսնիմ՝ թե ջան կտա քեզ, թե չէ՞ն՝

Նախքան իրազեկ, կամ ժողովրդի կողմից սիրվելու մասին մտա-
ծելը, պետք է մտածել խավարում խարխալող ժողովրդին լուսա-
վարելու մասին, որ նա կարողանա ջոկել իր խերն ու շառը, մա-
նաչել իր բարեկամն ու թշնամին և պայքարել իր ազատության
համար:

Ժողովրդի լուսավորության իրազործման ամենազլխավոր
միջոցը Արուսյանը տեսնում է կրթության և դաստիարակության
կազմակերպման մեջ:

Իրեն նպատակը համարելով հայ ժողովրդի լուսավորումը,
Արուսյանն իր մանկավարժական և այլ բնույթի երկերում ման-
րամասնորեն կանգ է առնում կրթության և դաստիարակության
կազմակերպման անհրաժեշտության, նրանց նպատակի և իրա-
զործման միջոցների վրա:

Արուսյանի մտնկավարժական հայացքները հանդիսանում են
նրա ընդհանուր լուսավորչական ծրագրի հետևանք և զարգացել
են այդ բազայի վրա, կազմելով վերջինիս հետ մի ամբողջութուն,
և մի ինքնուրույն, հետևողական մտնկավարժական սխառն:

Արուսյանը մեծ է առաջին հերթին հենց նրանով, որ հայ
իրականության մեջ առաջին անգամ նա դրեց ժողովրդի լուսա-
վորության հարցն այնքան բազմակողմանիորեն և այնքան խորը:
Արուսյանը մահու և կենաց պայքար հայտարարեց դարավոր խա-
վարին և սնոտի ապաշտությանը, համարելով այն իր ժողովրդի
ազատագրչության ամենազլխավոր պատճառներից մեկը, նա
մաքառեց բոլոր այն սև ուժերի դեմ, որոնք ժողովրդին դեպի տղի-
տության անդունդն էին առաջնորդում, նա դրեց ժողովրդին
լուսավորելու հարցն ամբողջ սրությամբ և իր կյանքը նվիրա-
բերեց այդ մեծ պայքարին: Պայքարելով խավարամտության սև
ուժերի դեմ, Արուսյանը նրանց զինաթափ արեց, խլելով նրանց
ձեռքից դրարարի ժանդոտած սուրը, լալով ժողովրդի ձեռքը նոր՝
հուժկու զենք — աշխարհաբար զրական լեզուն: Եկեղեցական ա-
նձապառ ու անհասկանալի գրքերի փոխարեն, Արուսյանն իր ժող-
վրդին նվիրեց անմահ Վեբը Հայաստանիս-ն, որտեղ ժողովրդի

* Վեբը Հայաստանիս, (Երկեր, I հատոր, 1939 թ, էջ 75).

հարազատ լեզվով, նրա սրտին մոտիկ՝ կյանքի խոսք ասավ: Նրա Ե՛կեբք-ը ինչպես մի ամպրոպ փայլատակեց Հայաստանի խավար երկնաեկամարում, որպես ազդանշան երջանիկ զավիթի:

Սակայն որպես իր մեծ ծրագրի իրագործման ավելի մասնա-
յական միջոց, նա ընտրեց դպրոցը:

Մերկացնելով ժամանակակից կրթության և դաստիարակու-
թյան փոսած ու սխալաստիկական բնույթը, Արուսյանը պայքարել է նոր տիպի կրթության և դաստիարակության, նոր զպրոցի համար, առնել սրանց կազմակերպման ընդարձակ ծրագիր: Արու-
սյանն ինքն այդպիսի նոր, եվրոպական տիպի դպրոցի հիմքը դը-
րեց իր պրակտիկ մանկավարժական գործունեության ընթացքում:
Նա իր մանկավարժական երկերում և առանձին նամակներում
սխառեմատիկորեն շարադրել է այն հիմնական սկզբունքներն ու
միջոցները, որոնց հիման վրա պետք է կազմակերպվի և տարվի
նոր՝ եվրոպական տիպի կրթությունն ու դաստիարակությունը հայ
ժողովրդի մեջ:

Արուսյանի աշխարհայացքի ձևավորումն սկսվել էր դեռ պա-
տանեկական հասակից, սկզբում էջմիածնում Անտոն եպիսկոպոսի
բարերար ազդեցությամբ, ապա Թիֆլիսում Ներսիսյան զպրոցի
անվանի տեսուչ, Արուսյանի սիրելի ուսուցիչ Ալամզարյանի մի-
ջոցով: Սակայն նրա աշխարհայացքը վերջնականապես ձևավոր-
վեց ու կազմակերպվեց Դորսկայան կենսաբար մթնոլորտում,
պրոֆ. Պարրոտի և ուրշների ղեկավարությամբ եվրոպական կուլ-
տուրային և առաջավոր մտքի զարգացմանը հաղորդակից լինելու
միջոցով:

Բայց Արուսյանի աշխարհայացքի զարգացումը դրանով կանգ
չառավ, այն շարունակվեց Անդրկովկասում՝ խավարամուլթյան
գեմ և ժողովրդի լուսավորության համար պայքարելիս, ընդգրկե-
լով Արուսյանի ողջ կյանքը:

✓ Իր պրակտիկ մանկավարժական գործունեության ընթացքում
և մանկավարժական գրվածքներում պայքարելով երեխաների (ինչ-
պես և ժողովրդի) մեջ բուն դրած սնոտիազաշտության, միստիցիզ-
մի գեմ, տարերայնորեն զարգացնելով նրանց մեջ մատերիալիստա-
կան աշխարհայացք բնության և նրա երեույթների նկատմամբ,
դրանով իսկ ծանր հարված հասցնելով կրոնի ու եկեղեցու հիմքե-

բին՝ Արուսյանն այնուամենայնիվ չի հրաժարվում կրոնից ու եկեղեցուց, չի ժխտում զրանք: Մենք այդ չենք էլ կարող պահանջել Արուսյանից: Ժամանակը և պայմաններն այդպես էին թելադրում նրան:

Մի բան պարզ է, որ Արուսյանի իդեալները, նրա ինչպես ընդհանուր, նույնպես և մանկավարժական հայացքները առգործած են ամենախոր դեմոկրատիզմով: Նրանց մեջ ամբողջապես ժողովրդական շահն է արտահայտված: Արուսյանի մոտ հանդես եկած հակասությունները մազաչափ անգամ չեն նսեմացնում նրա դերը, Արուսյանը զրանով չի դադարում հայ ժողովրդի ախտանք լինելուց:

ԱՐՈՎՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ ԵՎ ԱՍՈՒՅԹՆԵՐԸ

Արուսյանը թողել է բավականին մանկավարժական երկեր և զանազան զրվածքներում ցրված ասույթներ:

Համալիտերային մանկավարժության պատմության մեջ հասու կենտ են պատահում զուտ մանկավարժական բնույթի գեղարվեստական զրվածքներ: Այդպիսին է Խաչատուր Արուսյանի «Գաղմություն Տիգրանի» մանկավարժական վեպը, որը վերջերս լույս տեսավ: Այդ վեպը զժրախոտորար, անհայտ պատճառներով կիսատ է թողել Արուսյանը:

Մյուս մանկավարժական զրվածքը՝ Արուսյանի «Նախաշավիղ կրթության ի պէտս նորավարժից» այբբենարան-ընթերցարանն է, իր երկու վարիաններով, որոնք շատ չնչին նմանություն ունեն իրար հետ: Դրանցից առաջինը սպաղորվել է Արուսյանի կենդանության օրոք, բայց լույս չի տեսել, այրվել է կամ ոչնչացվել, իսկ մյուսը հրատարակվել է 1862 թ. Թիֆլիսում: Այժմ այդ վարիաններից առաջինը մենք ունենք մեր ձեռքի տակ, որի միակ օրինակը հայտնաբերվել է Ղազարոս Աղայանի արխիվում և հիմա զանվում է Դրական Թանգարանում: Այդ վարիանը 1940 թ. հրատարակվել է ընկ. Ռ. Զարյանի առաջարանով ու ծանոթություններով: «Նախաշավիղ»-ի մյուս վարիանը (1862 թ. հրատարակվածը) դեռևս չի ունեցել իր սովետական հրատարակությունը:

Թե որքան արժեքավոր են այդ զրբերը, մենք կաշխատենք բացատրել Արուսյանի մանկավարժական հայացքները շարադրելու:

Մանկավարժական տեսակետից խոշոր արժեք է ներկայացնում նաև Արուսյանի «Պարապ վախտի խաղալիքը», որի մեջ կան չափազանց հետաքրքրական խրատական ու բարոյախոսական առակներ:

Արուսյանը կազմել է նաև «Ռուս տեսական և գործնական քերականութիւն հայերեն լեզվով ըստ Տապալիւ. գիրքը, նպատակ ունենալով հեշտացնել հայ. երեխաների համար ուսուսաց լեզվի ուսումնասիրութիւնը:

Կանգ չառնելով մյուս գրվածքների վրա, այնուամենայնիւ չենք կարող չնշել լեզվի և կրթության հարցերին նվիրված այն արժեքավոր առույթները, որոնք ցրված են «Վերք Հայաստանի» անվանի վեպի զանազան էջերում, կազմելով մի ամբողջական ծրագիր:

Պերճ Պոռչյանը խոսելով Արուսյանի «Նախաշավիղ»-ի առաջաբանի մասին ընդգծում է, որ եթե այդ առաջաբանը տպագրվեր «այն ժամանակ Խաչատուր Արուսյանը կհամարվեր մեղանում և առաջին մանկավարժը:

Սակայն երբ այժմ արդեն կան և՛ «Նախաշավիղ»-ի երկու վա-րիանտները, և նրանց առաջաբանը, և՛ «Պատմութիւն Տիգրանի» վեպը, և՛ մյուս մանկավարժական գրվածքները, Արուսյանն իրա-վամբ պետք է համարվի մեր առաջին մեծ մանկավարժը, հայ նոր մանկավարժության հիմնադիրը:

Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործով զբաղվող ամեն մեկն Արուսյանի մանկավարժական երկերը կկարգա-նույնալիս ըսվականությամբ, ինչպես Ռուսոյի «Էմիլը», Պե-տալոցցու «Էփեմարզ և Գեորգի»:

ԿՐԹՈՒՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՅԱՆ ՀԻՄՔԸ

Արուսյանն իր երկերում և առանձին առույթներում զարգա-ցրել է մանկավարժական մի ամբողջ սխառեմ, որում շոշափված են կրթության և դաստիարակության վերաբերյալ զրեթե բոլոր հիմնական հարցերը:

Ազգը լուսավորելու համար ամենից առաջ հարկավոր են կրթված և լուսավորված մարդիկ: Ահա այդպիսի մարդկանց

պատրաստման պահանջն է առաջադրում Արուսյանը, ինքն ևս գործնականորեն ձեռնամուխ լինելով այդ աշխատանքին: Հարկավոր են ուսուցիչներ, որոնք եվրոպական կուլտուրայով, գիտությամբ զինված՝ դնան ժողովրդի մեջ՝ նրան և նրա գավակներին լուսավորելու:

Արուսյանը խարաղանում է այնպիսի բուսուցիչներին, որոնք, ինչպես ինքն է առում, քախտեմատիկ կրթություն չունեն, ուստի և ուսուցման մեթոդ էլ չունեն, որոնք երեխաներին հրամցնում են իրենց բացառաժան գանգի ծնունդը՝ չլսված և անըմբռնելի խոսքերով:

Ստեփաննոս Նազարյանին ուղղված իր նամակներից մեկում նա գրում է «...Այստեղ մինչև իսկ համարակները նշանակվում են կրոնադիտության և դժբախտ հայոց լեզվի դաստառով՝ ստանալով տարին 200 մանեթ արծաթ, որոնք չեն տալիս աշակերտներին, դոնե այնքան ուսում, որ արժենար հարյուր կոպեկ»:

Ահա երեխային շերթոգն գյուղական քահանայի նկարագրությունը:

Գրի սեն ու սպիտակը հո՛ւ էսպես տեղը տերտերներն էլ բռանց էին ջոկում, ավետարանը կարդալիս՝ հազար անգամ յա շեշմակը (գյոզլուկը) դղում, յա տիրացվի, մղղղու վրա բարկանում, յա դրակալը գոշներին քաշում. յա գլուխ, երես դրքի միջումը կորցնում, մեկ պստիկ մոմ էլ ձեռներն տռնում, յա մոնթի գլխին խփում, որ մոմը դուզ քոնիս Շատ անգամ էլ որդիանց որդի մեկ փիս անմարս, դժարատամ, գլուխ կտրոց բառ էլ որ չէր ռաստ դալիս, հենց դիտես՝ թե սատանի թամբը կորավ, շատ կռանալուցը, մոմը մոտ բռնելուցը, յա գիրքն էր էրվում, յա նրա միբուքը: Ամա էսպես բառեր վարավուրդ էին արել, մատանալիս՝ կամ գլխովն էին պտտում, կամ մեկ գիրն առում, մյուսը կուլ տալիս, յա թէ չէ՝ ՍԲ սուրբ ես — կարդալու տեղ՝ սոխ կամ սխտոր առում, ՍՂ սաղմոս ասելու տեղ՝ դարախ, ու ժամօրհնոդն էլ յա չոռ էր առում, յա չէ՛ լսււմ: Մեկ գիր պակաս ժամանակին հո՛ւ աստված հեռու տանի. ժամ ու ժողովուրդ, տերտեր, տիրացու իրար գլխով էին դիպչում. ամեն բերնից էնպես մեկ խոսք էր դուս դալիս, որ դուռնի փոխանակ՝ դափ էին ածում, մի տեղ ցխավելը՝ յա քը-

* «Գիվան», էջ 80:

չօցը կարգացողի ձեռք տալիս, տպոյին օրհնում, կազմողին զովում,
ու գեղջանգեջ պրծնելիս՝ ասածուն էնքան իրանց հոգու համար
չնորհակալություն չանում, որքան զրքից, ավետարանից աղատ-
վելու խաթերա՞

Այսպիսի շուտուցիչներն չէ, որ ցանկանում էր Արովյանը՝
նա ցանկանում է կրթված, լուսավորված, երեսայի հոգին հաս-
կացող, դասավանդման նորադույն մեթոդներն իմացող ուսուցիչ:
Այդպիսի իդեալական ուսուցիչի տիպարն է Կարապետ Վահա-
նյանը, որի դեմքը հաջողությամբ կերտել է Արովյանն իր Շատ-
մություն Տիրարնիս վեպում: Ծանոթ լինելով Արովյանի ուսուց-
չական դործունեությանը և կարգալով Կարապետ Վահանյանի
մասին նրա դրածները՝, մենք անմիջապես պատկերացնում ենք
իրեն՝ Արովյանին: Մեզ թվում է Արովյանն իրեն է ի նկատի
ունեցել Կարապետ Վահանյանի մանկավարժական և մարդկային
գեմքը կերտելիս:

Արովյանը պահանջում է դպրոցներ բանալ և 7—14 տարե-
կան բոլոր երեխաների համար կրթությանը հայտարարել պար-
տադիր, սահմանել պետական ուժեղ հակողություն, որ ոչ մի ծնող
մինչև սահմանված հասակն իրավունք չունենա իր երեխային
դպրոցից հանել:

Երեխաների կրթության համար հարկավոր են նաև դատա-
գրքեր՝ կազմված նորադույն սկզբունքներով և հասկանալի լեզվով:
Մինչև հիմա երեխաների ձեռն են տվել աստվածաբանական հա-
տափոր զրքեր, որոնց և՛ իմաստը, և՛ լեզուն խորթ ու անհասկա-
նալի է եղել նրանց համար:

Արովյանն ամենախիստ քննադատության է ենթարկել կըր-
թության և դաստիարակության սխալաստիկական ձևը և անողոր
պայքար մղել նրա դեմ:

Նա պահանջում էր կրոնական զրքերի, աստվածաշնչի փո-
խարեն, երեխաների ձեռքը տալ ժողովրդի կյանքն ու շահերն
տրտահալող զրքեր, տալ Շիլլեր, Գյոթե, ինչպես որ ինքն
կատարում էր իր մասնավոր դպրոցում:

Այդ գեռ բաժական չէ: Ոչ միայն բովանդակությամբ, այլև
իրենց լեզվով այդ զրքերը խորթ ու անհասկանալի են մո-

* Երկեր, I հատոր, էջ 17.

դողմրդի համար, և Արուսյանն իր սուր նիզակն ուղղում է դրա դեմ:

Որքան ուղղում է թող լավ կազբեր լինեն, որակյալ ուսուցիչներ, շատ զպրոցներ: Ոչինչ չի ստացվի, եթե դասավանդման կամ դրժային լեզուն անջատված մնա ժողովրդական լեզվից: Գրքարար լեզուն, որը թագավորում է գրքերում և դասավանդման մեջ, անհասկանալի է, խորթ, ուրեմն և մեռած է ժողովրդի համար և Ո՞ւմ հայտնի չէ,— գրում է Արուսյանն իր «Նախաշավիղ»-ի առաջարանում,— թե որքան զրարար լեզուն խորթացել է սովորարար զործածականից և որքան տարիներ են պետք նրա կանոնները ճանաչելու համար: Մինչ այդ ժամանակ խեղճ մանուկները պիտի տանջվեն, վարժարանը նրանց կթվա տանջարան, ուսումը տանջանք և սոսկալի պատիժ: Եվ այս բոլորի պատճառը լեզվի խրթին լինելն է:»

Լեզուն, ահա այն հիմնական միջոցը, որը պետք է վճռի ժողովրդի լուսավորության ընթացը: Կամ զրարար լեզուն, որը անհասկանալի և օտար է ժողովրդին, ու այն ժամանակ և ոչ մի խոսք նրա լուսավորության մասին, կամ զրարարից հրաժարվելը և աշխարհարար լեզուն գրական լեզու դարձնել, ահա խնդիրը: Արուսյանը նախընտրում է վերջինը:

Սակայն Արուսյանը սոսկ պատռիվ բողոքող չէր, որ ընդգծեր ախուր իրականության գոյությունը, և լռեր: Ո՛չ, նա միաժամանակ ամենաակտիվ մաքառողն էր զրարարի դեմ, աշխարհարարի համար:

Հանուն իր ժողովրդի և նրա մանուկների ջերմ սիրո, նա սկսում է լեզուների մասին իր ունեցած հայացքները գործնականի վերաձեռնվայելաբարելով և անհաղթահարելի դժվարություններ հաղթահարելով:

Այդ գործնական պայքարի ապացույցներն Արուսյանի անմահ երկերն են, որոնք գրված են ժողովրդի լեզվով:

Իր այդ գործունեությանը Արուսյանը դուրս բերեց զրավոր խոսքը մուսյլ վանքերի դաժան խցերից և մատչելի դարձրեց իր ժողովրդին: Աշխարհարարի հաղթանակը, որի հաստատունն հիմքը դրեց անմահ Արուսյանը, ապահովեց հայ ժողովրդի կուլտուրայի, արվեստի, գիտության և կրթության գործի հետագա արագ զարգա-

» Նշեն տեղ, էջ LXXXII, (Թարգմանված զրարարից):

ցումը: Միայն հենց այս հանդամանքը բավական է, որ Արոսյանի անունը անմահ մնա հայ ժողովրդի սրտում:

Այսպիսով, կրթության գործի՝ զարգացման և հաջողության համար Արոսյանը պահանջում է երեք հիմնական բան.

ա) իրենց մասնագիտությունը սիրող, եռանդով աշխատող, կրթված հմուտ ուսուցիչներ, բ) դպրոցների լայն ցանց՝ պարտադիր ուսուցման կիրառմամբ և գ) ամենահիմնականը՝ մանուկներին հասկանալի աշխարհաբար զբաղան լեզու:

Այս երեք հիմնական մոմենտներն ընդունելով որպես հիմք՝ Արոսյանը զարգացնում է իր մանկավարժական հայացքները կրթ-թույթյան և դաստիարակության բովանդակության ու միջոցների մասին:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Երեխայի սկզբնական դաստիարակությունը տարվում է ընտանիքում, գլխավորապես ծնողների և առանձնապես մոր կողմից:

Արոսյանը շատ խոշոր նշանակություն է տալիս ընտանեկան դաստիարակության, որի շարունակությունն է կազմում դպրոցականը:

Եինչ պատկեր ունի մեծավմասամբ այն պատանին, — ասում է Արոսյանն իր հաշվետու ճառերից մեկում, — չեմ ասում մանուկը, որ բերում են ծնողները Ձեզ մոտ ուսման համար — աղտոտ, հաճախ ապականված և պատառոտված, արտաքուստ վայրենի, ներքուստ վատ վերաբերմունքի և վարքի տեր, մտավորապես անզարգացած, սրտով հաղարավոր հոռի տպավորություններ ներշնչած, արդեն չափահաս, բայց միանգամայն անընդունակ մտավոր պարապմունքի. նա ուսել է իր հարազատ լեզուն և այլ ֆիզիկական գործողություններ, համարյա թե ընադդմամբ, միայն չարություններ և աղմկալից կյանքն է մինչև այդ ժամանակ եղել նրա տարը և պարապմունքը, և հանկարծ, ինչ հակադրություն. մտնելով դպրոց, նա՞ տեսնում և լսում է ամեն ինչ, որ խորթ ու անհամապատասխան է իր հասկացողության, և կյանքի եղանակին:*

Արոսյանի կարծիքով ամենափոքր հասակից, երբ երեխան

* «Դիվան», էջ 156:

որոնք մեծ մասամբ վերցված են իրական կյանքից և բարոյական խոշոր դաստիարակչական նշանակութիւն ունեն։

Տիգրանենց ընտանիքը մարդկային ապագա այն ընթիւն է, որը պետք է ավելի ու ավելի ծավալվի, և ասպարեզից դուրս մղի խաւարի ու սնտուխաղաղութեան մեջ խաբիւսփող, նահապետական հին կենցաղում տապակվող ընտանիքներին։ Տիգրանը և Աննան այդ իդեալական ընտանիքի ներկայացուցիչներն են, որոնք պետք է ապագայում հաղթանակեն՝ վերջ գնելով կնոջ ստրկական վիճակին ընտանիքում և նրա հետամնացութեանն ու տղիտութեանը։ Աննայի և նրանց զուստը Եղիսարեթի օրինակը ցույց է տալիս, թե ինչպիսի առաջադիմական հայացքներ ուներ Արոյանը կնոջ մասին։ Բոլոր հարցերում Աննան հանդես է գալիս իր ամուսնու՝ Տիգրանի հետ միասնաբար և հավասար իրավունքներով ու գործունեութեամբ։ Թե ընտանեկան և թե դպրոցական դաստիարակութեան մեջ Եղիսարեթի դաստիարակութեան եղանակը զրեթե ոչնչով չի դանազանվում իր եղբոր և իրենց բարեկամի որդու՝ Ստեփանի կրթութիւնից և դաստիարակութիւնից։ Նրանք սովորում են միասին։

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Երեխայի դաստիարակութիւնն ընտանիքով չի վերջանում։ Որոշ տարիքում երեխաների դաստիարակութեան հարցերն ավելի բարդանում և ընդարձակվում են։ Բացի այդ, առաջ է գալիս կրթութեան հրամայական պահանջը, որը պետք է տարվի կազմակերպված ու սխտեմատիկ կերպով։ Այս խնդիրների իրագործումն ընտանիքի շրջանակներից դուրս է գալիս։ Ընտանիքը ոչ մի անգամ ի վիճակի չէ զբաղվել և՛ տնտեսական բազմապիսի հարցերով, և՛ այս խնդրի ամբողջական իրագործմամբ։ Ահա այստեղ, Արոյանն առաջ է քաշում կազմակերպված կրթութեան և դաստիարակութեան խնդիրը, որը պետք է իրականանա դպրոցի միջոցով և այլ պարտականութիւններից ազատված ու հատկապես այդ գործով զբաղվող անձանց, այսինքն՝ ուսուցիչների ղեկավարութեամբ։

Դպրոցական դաստիարակության շրջանում իհարկե չի վերանում ծնողների պարտականությունն իրենց երեխաների դաստիարակության նկատմամբ: Ընտանիքը շարունակում է իր դաստիարակչական աշխատանքները, հանդիսանալով դպրոցի օգնականը: Դպրոցը և ընտանիքը գործում են համերաշխ կերպով, միացյալ ուժերով:

Այնուամենայնիվ պետք է ընդգծել, որ եթե մինչև 8—9 տարեկան հասակն ընտանեկան դաստիարակությունը համարյա միակն է, ապա հետագայում հիմնականը դառնում է դպրոցական դաստիարակությունը:

Եվ ահա Տիգրանի ու Աննայի կողքին մենք տեսնում ենք հմուտ դաստիարակ Կարապետ Վահանյանին: Ծանոթանալով Վահանյանի հետ, իմանալով նրա գիտելիքների պետքականությունը և մանկավարժական հմուտությունը, Տիգրանն իր երեխաների կրթության և դաստիարակության գործը հանձնում է նրան:

Սակայն հարց է առաջանում, թե ինչ՞ու Արովյանը Կարապետ Վահանյանին հանձնում է միայն 2—3 երեխա: Մի՞թե նա ժխտում էր դպրոցը, մի՞թե նա կողմնակից էր այսպես կոչված տնային մասնավոր դպրոցներին: Այդ հարցին պետք է բացասական պատասխան տալ: Արովյանը չէր բացասում դպրոցը: Ավելին, նա դպրոցի շերտ պաշտպանն էր, բայց ոչ իր ժամանակվա դպրոցի, որտեղ կրթության և դաստիարակության գործը զլխի վայր էր դրված: Արովյանի նպատակն էր ցույց տալ կրթության և դաստիարակության այն դրական եղանակը, որը պետք է իրականացվեր ընտանիքի և դպրոցի միասնական ու ներդաշնակ աշխատանքով: Որպեսզի այդ հնարավոր լինի, պետք է ընտանիքները կանգնած լինեն զարգացման այն աստիճանի վրա, որի վրա գտնվում էր Տիգրանի ընտանիքը, հարկավոր էր, որ դպրոցում դասավանդող ուսուցիչներն այնքան զարգացած լինեին, որպիսին Կարապետ Վահանյանն էր, այնպիսի, դրական գիտելիքներ և մանկավարժական ձիրք ունենան, ինչպես նա ուներ:

Ընտանիքի և դպրոցի դաստիարակչական եղանակների նման ներդաշնակությունն այն ժամանակ մաստայական կերպով հանդես գալ չէր կարող: Ահա թե ինչու Արովյանը վերցնում է ավելի փոքր շրջանակ, ցույց տալու համար, թե առհասարակ ինչպես պետք է կազմակերպել դաստիարակության գործը տանը և դպրոցում:

Ուսուցիչ Վահանյանի մոտ կրթական և դաստիարակչական աշխատանքները հանգես են գալիս զարմանալի միասնությամբ՝ այնպես որ երբեք հնարավոր չի որոշել, թե որտեղ է սկսում մեկը և վերջանում մյուսը։ Երկու դեպքում էլ երեխան զարգանում է ամբողջ թափով, բոլոր կողմերով։ Եվ երբեք մի կողմը չի զարգանում ի հաշիվ մյուսի։

Արուսյանը պահանջում է բազմակողմանի զարգացում։ Բազմական չէ, որ մարդ ուժեղ լինի միայն մի բանում։ Կյանքը պահանջում է նաև այլ բան։ Միակողմանի զարգացում ունեցող մարդը պայմանների փոփոխության դեպքում անպետք դուրս կգա։ Եթա-մություն Տիգրանիչ վեպում Արուսյանը բազմաթիվ կենդանի օրի-նակներ է բերում իր այս մաքերը հաստատելու համար։

Ահա ձեզ Ավետիքի օրինակը։ Նա ֆիզիկապես ուժեղ է, զարգացած, հիսնալի լող տալ դիտել։ Դրա շնորհիվ նա կարողանում է ջրում խեղդվող աղջկան փրկել, մինչդեռ գետի ափին կանգնածնե-րը ողորմ էին աղջկա կորուստը, սակայն անգոր էին փրկել նրան։ Այս օրինակով Արուսյանն ընդգծում է ֆիզիկական դաստիարակու-թյան անհրաժեշտությունը։

Սակայն Ավետիքն ուժեղ լինելով ֆիզիկապես՝ թույլ է մտավոր զարգացմամբ, հետաձուլ է և նախապաշարված։ Այդում ճաշկերույթ է, որին մասնակցում են ուսուցիչ Կարապե-տը, նրա աշակերտները և Ավետիքը։ Կարապետը լուր է ստա-նում, թե մայրը գտնվում է մահամերձ վիճակում, և շտապում է տուն։ Կարապետի աշակերտները և Ավետիքը մնում են միայնակ։ Եվ ահա գետի կատաղած ալիքներից չվախեցող Ավետիքն սկսում է երեխաներին պատմել զանազան չարքերի, հրաշքների ու սար-սափ տարածող բաների մասին։ Նա ինքը վախենում է և վախեց-նում է երեխաներին։ Նրանք տուն են վերադառնում, սարսա-փելով չորս կողմը շլավող ձայներից։ Երեխաները սենյակ են մտնում, նրանց աչքերին մեռելներ ու սատանաներ են երևում։ Հետո միայն, Տիգրանի և Կարապետի կողմից գործադրված համառ աշխատանքի շնորհիվ, հաջողվում է երեխաների միջից դուրս հանել Ավետիքի սերմանած նախապաշարմունքը։ Ավետիքը կրթու-թյուն չունեւ, նա մնացել էր նախապաշարմունքների գերի։

Մի ուրիշ օրինակ։—

Աշակերտներին հարկավոր է լող տալ սովորեցնել։ Սակայն

նրանց ուսուցիչ Կարապետը իր մտավոր և բարոյական բարձր հատկանիշների կողքին ունի մի թուլութիւն՝ նա լող տալ չգիտի: Գիտակցելով դրա անհրաժեշտութիւնը՝ Կարապետը սկզբում ինքը Ալիտիքի օգնութեամբ սովորում է լող տալ և ապա սովորեցնում է իր աշակերտներին:

Ուսուցիչ Կարապետն իր աշակերտների մէջ զարգացնում է բոլոր ընդունակութիւնները և՛ մտավոր, և՛ բարոյական, և՛ ֆիզիկական:

Արուսեանն իր երկերում, մի շարք զեկուցումներում, աշակերտներին զրաժ նամակներում և այլ թղթերում բազմիցս ընդգծել է բազմակողմանի զարգացման անհրաժեշտութիւնը:

Զի կարելի ասել, որ Արուսեանը բազմակողմանի զարգացման կողմերից մեկին տվել է առավելութիւն մյուսների հանդեպ: Ո՛չ, Արուսեանը ցանկացել է հարմոնիկ զարգացում ունեցող մարդ: Եթե մեկը բարձր մտավոր զարգացում ունի, սակայն դուրկ է բարոյական հասկացողութիւններից և հատկանիշներից, կամ ընդհակառակն, ծալա նա հարմոնիկ կերպով զարգացած մարդ չէ: Ելնելով սրանից, ճիշտ կլինե՞ր ասել, թե Արուսեանը հավասարապես մեծ նշանակութիւն է տվել դաստիարակութեան բոլոր կողմերին:

ՄՏԱՎՈՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն նշեցինք՝ Խ. Արուսեանը մտավոր կրթութիւնը համարել է մարդու բազմակողմանի զարգացման անհրաժեշտ պայմաններից մեկը: Կրթութեան միջոցով նա ցանկանում էր զարգացնել մանուկների միտքը, զատողութիւնը, հիշողութիւնը, երևակայութիւնը, ընդունակութիւնները, պայմաններ ստեղծել նրանց ինքնուրույն գործունեութեան համար:

Ինչպիսի կրթութեան էր կողմնակից Արուսեանը: Ինչպես ասել ենք, նա ժխտում էր սխոլաստիկական ուսուցումը, երբ մանուկներին արվում էին կյանքից կտրված, ֆորմալ գիտելիքներ մեխանիկորեն բերանացի անել տալու միջոցով: Նա պահանջում էր ռեալ կրթութիւն, իրական գիտելիքներ:

Ահա թե ինչ է ասում նա իր Շնախաշաւիղ-ի առաջարկում: ԵՈՐՔԱՆ հարմար և իմաստալից դպրոց է բնութայնը, որը մեզ շրջապատում է՝ մարդու գործողութիւնները, որ ամեն բոլոր

մեր կողքին տեսնում ենք. սովորական առարկաները, որ շրջապատում են մեզ, Բնական մարդու համար էլ ինչ ուրիշ լավ ուսում կարելի է ցանկանալ, քան թե իմանալ բոլոր իրերի անունները, ձևերը, գույներ, հատկությունը, նպատակը, բաղադրությունը և ազդեցությունը, ճանաչել և դատել այն ամենը, ինչ լսում և տեսնում ենք:*

Այսպես ուրեմն, բնությունն իր բոլոր երևույթներով, մարդկանց գործունեությունը և մեզ շրջապատող բազմապիսի առարկաները—ահա թե ինչը պետք է կազմի ուսման բովանդակությունը: Ճանաչելով բնության երևույթները, մարդն ազատագրվում է նրանց ենթարկվելու նախապաշարունակներից և միաժամանակ սովորում է օգտագործել բնությունն իր կարիքների համար: Իմանալով մարդկանց փոխհարաբերությունները և նրանց իմաստը մարդ կարողանում է որոշել իր տեղը, դիրքը և պարտականությունները հասարակության մեջ: Վերջապես բազմակողմանի ուսումնասիրելով իրեն շրջապատող առարկաները՝ մարդը հասկանում է նրանց նշանակությունը և օգտակարությունը, սովորում է նրանցից օգտվելու եղանակի:

Զպետք է կարծել, թե Արտյանը ուսմանն առաջադրում էր ինչ որ նեղ խնդիրներ՝ սահմանափակելով այն զուտ անձնական օգտակարության հարցերով: Ո՛չ, Արտյանը պայքարում էր վերացական ուսուցման դեմ, որ ամբողջովին կտրված է կյանքից: Նա պահանջում էր այնպիսի ուսուցում, որ նպաստեր մարդկանց տեղափոխական և իրական դրություն բարելավմանը, նպաստեր ժողովրդի դարգացմանը:

Ի՞նչպիսի գիտությունների պետք է դասավանդել. այս հարցի ամենալավ պատասխանը տրված է Վատմություն Տիգրանի՝ Վեպում:

Ծանոթանալով ուսուցիչ կարապետի հետ, Տիգրանը նրան հարց է տալիս. «Ո՞ր գիտությունն ես ավելի սովորել: Կարապետը պատասխանում է. «Բնաբանությունը, առավել բուսոց պատմությունը, երկրիս, ու ինչ որ աչքդ տեսնում ա, նրանց պատմությունը, աշխարհիս պատմությունը ու հայի, ոսի, թուրքի լեզուն»:

Ահա այն գիտությունները, որոնք մտել են Արտյանի դասավանդման ծրագրի մեջ:

* Շնախալվիդ, Ժանոթագրություն: էջ LXXXII, (Թարգմ. զրաբալից):

կարապետն իր աշակերտներին հետ անցել է հենց այդ առարկաները:

Արուսյանն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել մայրենի լեզվի դասավանդման վրա: Նրա շնորհալի դերը ջախջախիչ հարված է հասցրել լեզվի նախնական ուսուցման փտած ու անպետք սխտեմին, առաջադրելով միանգամայն նոր ձև գրաճանաչության ուսուցման համար:

Շնորհալի դերը ուժ աղ մատին մենք կարողում ենք հետևյալը.

«Ենդրեմի փառս աստծոյ՝ ի բաց թողուլ զյիմար անուանակոչութիւն տառից. այր, բին, գիմ, ըթ, և այլն. զամենայն տառս պարտ է ըստ բնական հնչմանն արտասանել, վասն որոյ եթէ բառդ մարդ ըստ արդի սովորութեան վանկեացուք, ապա պարտ է ընթեռնուլ մեծայրբեղա՝ և ոչ մարդ որպէս ասեմք: Իսկ բառդ երեխայութիւն՝ հչրէնչխայրչիվոհիւնթոխիհիւնն-ու. ձրպես կարն երեխայն այս անգղին երկարութիւն ի միտս պահել. և բառդ երեխայութիւն գեռ չէ՝ այնքան բազմավանկ, վասն որոյ հեշտագոյն քան զամենայն է, զձայնաւոր տառն այնպես ասել, որպէս կան. զորօրինակ, ա. ե. է. ը. ի. ո. օ. ու. իւ. եա. եօ: Իսկ զբազմայնսն՝ ըր, զը, զը, զը, թը, ժը...»^{*} և այլն:

Այլ կերպ ասած, Արուսյանն առաջադրել է գրաճանաչության ուսուցման հնչական մեթոդը, որպես ավելի բնական ձև:

Առաջ պետք է սովորեցնել տառերը՝ ըստ իրենց բնական հնչման, հետո վանկերը և ապա բառերը, որից հետո տալ փոքրիկ գրավոր աշխատանքներ և հետաքրքիր նյութերի ընթերցանություն:

Արուսյանը խորհուրդ է տալիս լեզվի ուսուցման ժամանակ գիմել որոշ խորամանկ միջոցների. օրինակ՝ ուսուցիչը զըռւմ է մի բառ. գիտակցաբար կատարում է տառասխալ, ցույց տալով, որ մոռացել է այդ տառը, իսկ աշակերտներն ուղղում են նրան, գրելով ճիշտը. «Թե ձրքան զվարճանան և խնդան նոքա ոչ կարեմ պատմել և առեալ զմին ինքեանք զրեն ծիծաղելով»^{**} — ասում է Արուսյանը: Այսպիսով ուսուցիչը կարողանում է ստուգել, թե որքանով են աշակերտները յուրացրել անցածը ու միաժամանակ գրավում է աշակերտների ուշադրությունը, նրանց մեջ առաջացնելով հետաքրքրություն:

^{*} «Շնորհալի դ»՝ 1940 թ., էջ 11:

^{**} «Նույն տեղում», էջ 14:

Արտվյանի կարծիքով ընթերցանության նյութին զուգընթաց պետք է երեխաներին ծանոթացնել լեզվի հիմնական կանոններին և նրա բաղադրիչ մասերին, բառանց ցույց տալու, որ նրանք ֆերականություն են սովորում:

Տառաճանաչութունն անցնելուց և կարգալ սովորեցնելուց հետո պետք է աշակերտներին հանձնարարել կարդալու շվեմ գրվածքներ, ինչպես՝ Մահն Արելի, Տելեմակ և այլն, և այնքան հաճախ պետք է երեխաներին կարգալ տալ, մինչև որ նրանք իրենք կարողանան նրանց օրինակով հեղինակել և շարադրել^{*} առում է Արտվյանը շեխաշափիղզ-ի առաջարկում:

Նույն տեղում այսպես է եղրափակում Արտվյանն իր տեսակետը լեզվի ուսուցման մասին:

«Այսպես են կրթվել հույների և հռոմեացիների ատենարանները, բանաստեղծները, հեռադերերը, որովհետև ոչ այնքան տեսականորեն որքան գործնականորեն սովորեցին իրենց լեզուն: Այսպես օրինակ, շատերը դիմապատկերում հաճախ մի տարի դրելով ավելի լավ են սովորում իրենց մտքերը հայտնել, քան թե զըզրոցներում տասը տարի քերականության և ճարտասանության կանոններն արածելով^{**}»

Արտվյանը մեծ համակրանքով է խոսում ուսաց լեզվի մասին, որի վրա նա նայում էր որպես պետական լեզվի և հետամնաց ազգութուններին ուսական կուլտուրային հաղորդակից անելու լավագույն միջոցի:

Իր՝ «Ռուս—հայերեն տեսական և գործնական քերականության» նախաբանը Արտվյանն սկսել է հետևյալ բառերով.

„Цель изучения какого нибудь языка состоит не в том, что бы приобрести себе тем только временную пользу в общежитии, а более образовать ум и чувства наши чтением различных творений на оном, и подружиться с духом того народа, которого языку мы учимся.

И какой из Восточных, или из Западных языков может в этом отношении споспешествовать нашей нации более всех, как не Русский, которого польза и качества заставили и образованных народов нашего времени заниматься

* Նախաշափիղզ ծանոթագրություն, էջ, LXXXIV

** Նախաշափիղզ, 1940 թ., ծանոթագրութ. XXIV—XXV.

им, тем более Армян, которые видят всю необходимость изучения его и чувствуют пользу, которую они могут извлекать из него как в отношении Государственной службы так, и в общежитии".⁹

Այսպիսով, Արտվյանը ուսուսաց լեզվի մեջ է տեսնում այն ուժը, որի միջոցով հայ ժողովուրդը պետք է զարգացնեն իր միաբեր և զգացմունքները ուսուս ժողովրդի ստեղծագործությանը հաղորդակից լինելով: Ավելին, ուսուս մեծ ժողովրդի հետ մերձենալու, նրա հետ բարեկամութուն հաստատելու ամենահզոր միջոցը հայերի համար Արտվյանը համարում է այդ մեծ ժողովրդի փառահեղ լեզուն, որի ուսուսնասիրության հարցը բազմիցս այնքան ջերմությամբ նա պաշտպանել է իր գրվածքներում և զրուցյուններում: Նա ինքը դասավանդել է ուսուսաց լեզու:

Որպեսզի հայ մանուկները շուտ կարողանան տիրապետել ուսուսաց լեզվին, Արտվյանը կազմել է ռուս տեսական և գործնական քերականութուն ուսուսերեն և հայերեն լեզուներով ըստ Տապալի, որտեղ առաջարկում է հայերեն և ուսուսերեն լեզուներն անցնել համեմատական դասավանդման եղանակով, այսինքն՝ ցույց տալով երկու լեզուների ընդհանուր հատկանիշները և միատեսակ կանոնները:

Պետք է ասել՝ որ Արտվյանի առաջադրած մեթոդներն ամրագրվին նոր հիմունքներով են կառուցում հայոց և ուսուսաց լեզուների դասավանդման գործը: Խիստ քննադատելով ուսուցիչների անզրազեա լինելը ուսուսերենից, Արտվյանը պահանջել է ռուսերեն լեզուն հիմնավորապես իմացող ուսուցիչներ նշանակել:¹⁰

Մյուս առարկաների դասավանդման մեջ ևս Արտվյանը գործնական եղանակն է գործադրում:

Ուսուցիչ կարապետը կենդանաբանության կամ բուսաբանության ուսուցումը տանում է գործնական եղանակով: Սկզբից ուսուսնասիրում են այնպիսի կենդանիներ, թռչուններ կամ սողուններ, որոնք կան տվյալ տեղերում և երեխաները տեսել են: Բուսաբանություն անցնելիս նախօրոք գնում են դաշտ, հավաքում են բույսերի զանազան տեսակներ, բերում են դասարան և սկսում

⁹ Հետազոտիչ, Ժամոթագրություն, էջ LXXXIV.

¹⁰ Երկուն, էջ 183:

ուսումնասիրել նրանց տեսակները, հատկանիշները, նշանակութ-
յունը և այլն, և այլն:

Իրենց շրջապատի կենդանիների, բույսերի ուսումնասիրու-
թյունը վերջացնելուց հետո, աշակերտները աշխարհագրության
միջոցով ծանոթանում են ուրիշ երկրների բույսերի և կենդանիների
տեսակների և կյանքի մանրամասնություններին:

Աշխարհագրության միջոցով նրանք ծանոթանում են այլ
երկրների ժողովուրդներին, նրանց կյանքին, կենցաղին, կուլտու-
րային, զբաղմունքի տեսակներին, աշխարհագրական ռելիեֆին, նշա-
նավոր քաղաքներին և այլն:

Թվարանությունն անցնում են գործնական հաշվումների և
իրերի օգտագործման միջոցով:

Պետք է ասել, որ Արովյանը խոշոր տեղ է տվել գիտողական
ուսուցմանը և էքսկուրսիաներին: Ավելի ճիշտ կլինի ասել, որ
Արովյանի մոտ ուսուցումը մեծ մասամբ հիմնված է դիտողակա-
նության վրա, որովհետև այն, ինչ տեսնում է երեխան, նրա մա-
սին ավելի հեշտ, ավելի ճիշտ և ավելի մնայուն զապախար է կազ-
մում:

Արովյանն ուսուցման գործում մեծ նշանակություն է տվել
կրկնօւրյուններին: Նա ժխտել է ուսումնական նյութն առանց
հասկանալու, անգիտակցաբար կատարվող մեխանիկական կրկ-
նությունները և բերանացի անելը: Նրա կարծիքով աշակերտը
պետք է ըմբռնի, հասկանա նյութը և կրկնությունների միջոցով
միայն ամրացնի իր հիշողության մեջ:

Ինչպես արդեն ասացինք, Արովյանն էքսկուրսիաները հա-
մարել է ուսուցման պրոցեսի անբաժան, զլխավոր մի մասը: Պայ-
քարելով սոսկ խոսքի ու վերացական ուսուցման դեմ, Արովյանն
իր աշակերտներին հաճախակի էքսկուրսիաներ էր տանում, որպես-
զի աշակերտներն ավելի շատ բնության մեջ լինեն, տեսնեն նրա
հրաշալիքները, գեղեցկությունը, հմայքը, որից հետո անհամեմատ
հեշտ է նրանց բացատրել և հասկացնել բնության երևույթները:

Արովյանից առաջ, ինչպես և Արովյանի ժամանակ, մի ամ-
բողջ անշրպեա գոյություն ունեւր ուսուցման մեթոդների և երեխայի
մտավոր զարգացման ու կարողությունների միջև: Երեխան ճնշված
էր: Ոչ ոք հաշվի չէր առնում նրա ֆիզիկական և մտավոր զարգաց-
ման աստիճանը: Ուսուցման բովանդակությունն ու զաստվանդ-

ման մեթոդները և երեխայի զարգացումը գտնվում էին հակադիր բևեռներում:

Նվ ահա Աբովյանն այստեղ ևս հանդես է գալիս իր նորագույն, առաջադիմական պահանջներով: Նա դնում է ուսման մեջ երեխայի ստրկացմանը վերջ տալու հարցը: Չի կարելի հաշվի չառնել երեխայի զարգացումը, նրա հնարավորությունները: Ավելին, նա պահանջում է, որ ամբողջ ուսուցումը կառուցվի երեխայի բնական վիճակին համապատասխան: Այն նյութը, որը վեր է երեխայի ըմբռնողության աստիճանից, չպետք է դասավանդվի:

Ուսուցման մեջ պետք է պահպանել աստիճանականություն և հաջորդականություն՝ համապատասխան երեխայի մտավոր և ֆիզիկական զարգացման: Սկզբում պետք է անցնել ավելի հասարակ, ավելի պարզ, ավելի մատչելի բաներ և հետո աստիճանաբար անցնել ավելի դժվարին հարցերի: Նախօրոք պետք է անցնել ավելի մոտիկ և ավելի ծանոթ նյութերի մասին, այնուհետև գնալ դեպի ավելի հեռավորը և անծանոթը:

Եթառմություն Տիգրանի՝ վկայում Աբովյանը հենց այդպես էլ անում է: Ուսուցիչ Կարապետի աշակերտներն սկզբում ուսումնասիրում են իրենց շրջապատի բույսերն ու կենդանիները, հետո միայն այլ երկրներինը:

Շատերին կթվա, որ այս դիդակտիկական պահանջները ոչ մի նորություն չեն պարունակում իրենց մեջ և Աբովյանի արժանիքները չեն կազմում: Այդպես մտածողներն անշուշտ սխալվում են: Ծիշա է, այդ սկզբունքները զեռ շատ վաղուց ասված են եղել չեխ խոշոր մանկավարժ Կոմենսկու կողմից, այդ սկզբունքները զարգացրել են եվրոպական այլ մանկավարժներ: Սակայն Աբովյանի մեծ արժանիքը հենց այն է, որ նա այդ սկզբունքները մտցրեց այն ժամանակվա հայ խավար իրականության մեջ, հաջողությամբ վերամշակեց և կիրառեց մանկավարժական իր անձնական պրակտիկայում:

Իվերջո պետք է նշել, որ Աբովյանն ուսուցիչներից չէր պահանջում կուրորեն ընդունել իր առաջարկած մեթոդներն ու սկզբունքները, այլ խորհուրդ էր տալիս ստուգել նրանց ճշտությունն ու օգտավետությունն անձնական փորձով:

Ընդհանրապես Աբովյանը մեծ նշանակություն է տվել անձնական փորձին: Ենթաաշակիղձ-ի առաջարկում ընդգծելով, որ

«Փորձը ամեն բանում անաշառ դատավոր է», նա ասում է. «Եմ ասածներին համոզվելու համար բարեխիղճ դաստիարակը երեխային սովորեցնելուց առաջ թող կարգա ինչ որ պատմություն կամ ուսանավոր, կամ սովորական գրքերից՝ այսինքն՝ Ժամագրքից սաղմոսից, կտակարամից և այլ մի հարգևոր բան, կամ բացառ-րի խոսքի մասերը և քերականության կանոնները՝ նախ—հին սովո-րական ձևով, ապա այն ձևով, ինչպես այստեղ է ավանդված. այն ժամանակ փորձից կիմացվի, թե ո՞ր գիրքը երեխան ավելի սիրով կուզենա ունենալ իր համար»։*

Սրությամբ դնելով ուսուցման մեջ երեխայի տարիքա-յին և հոգեբանական առանձնահատկությունների հաշվառման կարևորության հարցը, Արովյանը նույն առաջաբանում գրել է. «Որքան ծանր և զզվելի պիտի երևա նորուսույցին այն գիրքը, որի մեռած տառերը ոչնչով չեն զրազեցնում նրա միտքն ու երե-վակայությունը ու ոչնչով չեն բաց անում և լուսավորում նրա հոգին։ Սրբ հարյուրամյա մի ալևոր չլուծած և անըմբռնելի խոս-քերով նրան առաջադրի իր ցամաքած զանգի ծնունդը, նրա փափուկ սիրտը ոչ մի դուրեկան սնունդ չի դոնի, և նա այնպիսի զզվանքով այդ գրքին կնայի, ինչպես երեխաները սովորաբար կնային խոտա-բարո մի ծերունու, որը բարկության զավազանը ձեռքը վերց-նելով ուզում է նրանց զրկել անմեղ խաղերից։ Որքան բախտավոր կհամարեն նրանք իրենց, եթե այդպիսի բռնությունից ազատ-վեն։ Եթե նույնիսկ նրանց ծնողն էլ լիներ, նրանք ավելի կու-զենային մահը, քան այդպիսի խոտաբարո փիլիսոփայի կերպա-բանքը։

Այս ազդեցությունն ունի նաև ամեն տեսակի ուսում, եթե այն համապատասխան չի երեխայի բնական ձգտումներին։ «Ամեն մի գիր ծակող փշի նման կվիրավորեր նրանց մատաղ հոգին»** (ընդգծումներն իմն են—Ս.Թ)։

Առանձնապես ուշադրավ է նախավերջին պարբերությունը, որտեղ ասված է. «Այս ազդեցությունն ունի նաև ամեն տեսակի ուսում, եթե այն համապատասխան չի երեխաների բնական ձգտումներին»։ Այստեղից դժվար չէ հասկանալ Արովյանի պա-հանջը, որ յուրաքանչյուր ուսում պետք է ելնի երեխայի բնական

* «Նախաշավիղ», 1940 թ., Ժանոթագրութ., էջ LXXXIII:

** Նույն տեղը, էջ LXXXI:

զարգացումից և համապատասխանի նրա կարողութիւններին ու պահանջներին:

Ուսումը պետք է զարգացնի երեխայի հոգեբանական կարողութիւնները՝ հիշողութիւնը, դատողութիւնը, ուշադրութիւնը հետաքրքրութիւնը և այլն:

Ամփոփելով, պետք է ասել, որ Արուստանը երեխաների մտավոր կրթութեան և ուսուցման հարցերը զրել է ամբողջովին նոր ձևով, հակառակ իր ժամանակ տիրող քարացած սխառմաների: Հայ մանկավարժութեան մեջ առաջին անգամ Արուստան է խիզախորեն առաջ քաշել նորագոյն սկզբունքներով ուսուցման կազմակերպման հարցերը, և՛ այդպիսով նմանապահ հարթել հետնորդների համար:

Արուստանի առաջադրած սկզբունքների պաշտպանութիւնը և զարգացումը լայն թափ ստացավ 60-ական թվականներին Նալբանդյանի և Նազարյանի, իսկ հետագայում Պոսլյանի, Աղայանի և ուրիշների մոտ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մտավոր կրթութեան հետ անխզելիորեն կապված է նաև բարոյական դաստիարակութիւնը:

Արուստանի նպատակն է բարոյական դաստիարակութեան միջոցով վերացնել երեխաների միջից հասարակական չարիքների պատճառ հանդիսացող բացասական կողմերը, ձևավորել նրանց բնավորութիւնը զարգացնելով նրանց մեջ հասարակականորեն օգտավետ, դրական հատկանիշներ:

Բարոյական դաստիարակութեան միջոցով Արուստանը լայն պայքար է ծավալում տգիտութեան, սնոտիապաշտութեան, ծուլութեան, խարերայութեան, զոգութեան, ուրիշի աշխատանքով ապրելու և այլ հակահասարակական երևույթների դեմ: Դրանց հակառակ նա պահանջում է երեխաների մեջ զարգացնել՝ մարդասիրութիւն, աշխատասիրութիւն, ազատասիրութիւն, արիւթիւն, վեհանձնութիւն, համեստութիւն և այլ դրական հատկանիշներ:

Ամենահետաքրքիրն այն է, թե ի՞նչ մեթոդներով ու ձևերով է Արուստան առաջ տանում բարոյական դաստիարակութեան դործը: Այստեղ ևս նա բնդհարման մեջ է մտնում դաստիարակութեան սխոլաստիկական, եկեղեցական փտած սխառմի հետ: Մար-

դուռն ստորացնող վերացական ու անիմաստ բարոյական քարոզ-
ների փոխարեն, Արոփյանը երեխաների մեջ դարգացնում է հա-
սարակականորեն օգտավետ, մարդու արժանիքները զննատող
բարոյական հասկացողություններ, կեցնդամի օրինակների ու
պատմվածքների միջոցով:

Ենախաշավիղա-ի երկու վարիանտներում, Վատմություն Տի-
գրանիւ վեպում, Վարապ վախտի խաղալիքա-ում և մյուս զբաղմու-
թիւններում բազմաթիւ խրատական և բարոյախոսական հետաքրքի-
րելու թեր են ղեռնարկած, որոնք մինչև հիմա էլ կարգացվում են
մեծ հետաքրքրությամբ:

Մի բան հատկապես անհրաժեշտ է ընդգծել, որը սերտ կեր-
պով կապված է Արոփյանի ղեպի ժողովուրդը և առանձնապես
ղեպի նրա ցածր խավերն ունեցած սիրո հետ: Այդ այն է, որ
Արոփյանն իր բարոյախոսական նյութերում միշտ հակված է ղեպի
աշխատավոր մարդիկ, ղեպի աղքատները, խեղճերը, իրավազուրկ
անձինք, նա երեխաներին սովորեցնում է լինել աղքատասեր, օգ-
նել, օժանդակել նրանց բոլոր միջոցներով: Ահա մի օրինակ.

Եւակովըն ուշիմ և բարի և երեխայն՝ տեսավ մեկ աղքատի
տղա ցիւռնիւն ընկած: Միտը ցավեց. իսկույն մոտացավ, նրան
բարձրացրեց, շորերը սրեց և իրանց տունը տարավ, — պատ-
մում է Արոփյանն իր Ենախաշավիղաում*:

Ուսուցիչ Կարապետն իր աշակերտներէ հետ զնում է այգի:
Ճանապարհին տեսնում են մի աղքատ կնոջ իր շորս երե-
խաների հետ միասին: Աշակերտներն աղղված իրենց ուսուցիչի
նախորդ օրն արած պատմությունից, ցանկություն են հայտնում
իրենց մոտ եղած բալը այդ աղքատ կնոջը տալու: Ուսուցիչը
խրախուսում է այդ ցանկությունը, ասելով. Վտեփան՝ ջան, էս
բալը վերցրու տնիւ էն խեղճ կնոջը տուր ու ասան, էս բալը մեկ
մարդ քեզ ուղարկեցի**:

Վատմություն Տիգրանիւ վեպում Արոփյանը մի ճորտի տի-
րոջ բերանով ասում է. Ենա էլ էնպես մարդ ա, ինչպես ես ինչ
անի ինքը, որ ճորտ ա ծնվել: Նրա հերը, որ ազնիւ ըլեր, ու իմը
ճորտ, կարելի է ես ըլի նրա ռահաթը,***

* Ենախաշավիղա էջ, 29—30:

** Երկեր, II հատոր, 1940 թ., էջ 232:

*** Նույն, տեղը էջ, 278:

Հաջորդ գլխում, այս անգամ արդեն Տիգրանի բերանով Արտյանը շարունակում է.

Ենթար ըլի, թե ճորտ, աղքատ ըլի, թե դարիբ, պակասություն ունենա՝ քո ըլի, կամ քաչալ, կամ չոլախ, ինչ ըլի, ըլի, ասեց պարոն Տիգրանը, ով նրանց մեկ պակաս խոսք ասի, իմացիր, որ նրանում ոչ մարդություն կա, ոչ հոգի, ոչ հավատք։*

Սրտացավություն դեպի աղքատ, չքավոր մարդիկ, հոգատարություն դեպի հիվանդները, դեպի ընկածները, օգնություն ներանց՝ իր ուժերից վեր չափերով,— անա թե ինչն է զարդարում մեծ լուսավորիչին, մեծ հումանիտին:

Այդ գծերն ուսուցչից փոխանցվում են աշակերտներին: Բարոյական դաստիարակության միջոցով Արտյանը կոփում էր ժողովրդի վերքերը բուժող մի ամրակուռ սերունդ:

Հատկանշական է, որ Արտյանի կրթության և դաստիարակության սխառնը թեպետ իր նպատակը չի դնում կրոնի վերացումը, սակայն զգալիորեն թուլացնում է նրա հիմքերը, երեխաների մեջ զարգացնում մատերիալիստական աշխարհայացք բնության մասին, և վանում նրանց միջից անոտիապաշտության տարրերը և նախապաշարմունքը:

Արտյանը միտին կրթել է տարբեր դավանության երեխաներ և նրանց մեջ փոխադարձ սեր և հարգանք զարգացրել:

Արտյանը տեսնում է սովորական մարդիկ, որոնք ծնվել են միատեղ ապրելու համար, սակայն բաժանվել են թշնամի խմբերի իրենց դավանության պատճառով:

Եթուրքի աղչիկը՝ պատմվածքում զիմելով մեռած աղջկան, նա ասում է.

Ե՞նթադուլություն հոգուդ՝ հանգուցյալ մարմին, այ իմ պատկերակից հոգածին: Հավատներս մեկ չի, սիրտներս հո մեկ ա, մեր ժամը չէ՝ իր դալիս՝ մեկ երկնքի տակի, մեկ երկրի երեսի էիք հո ինձ հետ կենում, ման դալիս. լեզուդ իմը չէ՛ր, պատկերդ, հոգիդ հո իմիցն էր: Տերտեր չի քեզ թաղում, մուլեն էլ հո ադոթք անում, չի հայհոյում: Խաչ, ավետարան չկա վրեղ, միևնույն հողի տակը չիս մտնում, ուր որ ես էլ պտի մտնեմ: Խուճկ ու մոմ չեն վառում, չեն ծխում, մկամ անք չի, որ վրեղ լալիս ա, սիրտ չի, որ

* Երկեր, II հատոր, 1940 թ., էջ 282.

քեզ համար էրվում ա՛յ Բաս ևս քանի որ պես պիտի քեզ նայիմ, որ քրիստոնյա եմ, ու աչքս չխփեմա՛:

Արովյանը, համամարդկային սիրո, զգացմուքի և կարեկցության երգիչ է: Նա հաշվի չի առնում մարդկանց կրոնական պատկանելիությունը:

Պատմություն Տիգրանի Վեպում աշակերտների հետ կրոն չեն անցնում, նրանց ձեռքը չի տրվում սաղմոս կամ ավետարան:

Այսպիսով, սխալված չենք լինի, եթե ասենք, որ Արովյանն անկրոն դաստիարակության կողմնակից էր:

Այս խնդիրների հետ սերտ կապվում է նաև Արովյանի ինտերնացիոնալիզմը:

Արովյանը նացիոնալիստ չի եղել, ինչպես ցանկացել են ապացուցել ոմանք:

Միթե նացիոնալիզմի արտահայտություն է՝ այն հմայքը, որ նա արտահայտել է դեպի դերմանացիները, այն ջերմ սերը և ձգտումը, որ նա տածել է դեպի ռուս մեծ ժողովուրդը. այն հոգատարությունը, որ նա ցուցաբերել է ադրբեջանական և վրացի երեխաների նկատմամբ, այն փաստաթղթերը, որոնցով նա պահանջել է դասավանդման մեջ մտցնել վրացերեն և ադրբեջաներեն լեզուները, այն այցելությունները, որ նա կատարել է իր աշակերտների տները՝ առանց նրանց ազգային պատկանելիությունն ի նկատի ունենալու, այն սրտառու խոսքերը, որոնցով նա գիմում է թուրքի աղջկան. և վերջապես ինչ են ասում Վերք Հայաստանի-ի ներքոհյալ բաները. «Նրեմուս բնիկ քուրճերը, որ հայի հետ մեկտեղ մեծացել՝ ախար պես էին վարվում, Սարգարին, Հաւամ-խամին անիծելով, քճելով, զգրաշլի վրա ատամները դրն-տացնելով՝ քիչ-քիչ քաշվեցին ու դեմը գնում էին, դեմը ասում. «Տե՛ր աստված, ե՛րբ էլի, որ քո ողորմության դուռը բացվի ու մեմք էս անիծած զգրաշլի ձեռքից մեկ օր ազատվեմք: Չունքի սրամք երու ըլիով՝ չեին ուզում, մեկ օր էլա, մրանց ծառայեմ ու շատ անգամ հայերի հետ միացել, քիչ էին մրանց, ամա քրի զոռով եկել, էլ ետ երկիրը՝ զավթել էին» (ընդգծումը մերն է Մ. Խ.):

Այս բոլոր փաստերը խոսում են Արովյանի ինտերնացիոնալիզմի մասին, այն մասին, որ նա պայքարելով իր հայրենիքն ըս-

* Երկեր, հատոր II, 1940 թ., էջ 249:

տըրկացնող օտարերկրյա հափշտակիչների դեմ՝ ձգտում էր, որ իր ժողովուրդն ապրի ազատ և անկախ, սակայն նա դեմ էր նաև այլ ժողովուրդների ստրկացմանը:

Նա ցանկանում էր, որ բոլոր ժողովուրդները լինեն ազատ անկախ և գտնվեն փոխադարձ բարեկամության մեջ:

Արուսյանի ղեկավարած զայրոցները և՛ Թիֆլիսում, և՛ Երեվանում ներկայացրել են մի իսկական ինտերնացիոնալ ընտանիք: Եթառուժյուն Տիգրանի՝ վեպում նկարագրված է այսպիսի դեպք: Տիգրանենց տանը հայտնվում է մի փախստական, որը զգվել է իր դաժան տիրոջից և որոշել այլևս չվերադառնալ նրա մոտ: Տիգրանը ցավակցում է նրան, կարգադրում է կերակրել և հանգիստ տեղ տալ քնելու: Հետևյալ առավոտ ուսուցչի՝ Կարապետն իր աշակերտների հետ գնում է այդ խեղճ փախստականին տեսու-թյան: Երեխաները հյուրասիրում են նրան և իրենց ուսուցչի հետ վերադառնում են Տիգրանի մոտ: Տիգրանը հարցնում է՝ Եկեցեք ինձ, աչքի լույս, ի՞նչ անիմ էս մարդի հետ: Ղորդ ա, դարձիր ա, մեր բարեկամ չի, ճանանչ չի, ազգական չի, հայ էլ չի, օտար ազգ էս:

Է՛հ մարդ, խանորդի ա՞, — խոսքն առավ պարոն Կարապետը:

Ե՛ս էլ եղ կուզեի տալ, պատասխանեց պարոն Տիգրանը: Էն էլ նեղության մեջը, ոչ թե մենակ մարդ: Էսպիսին չի պետք է դուռը ետ անիլ: Նա մեր տունն ա ապավինել, եկել, սվ ըլի իմ չազգ էլ որ ըլի, մրա դարդիմ պետք է հասնիմ, էդ իմ պարքն է: Ես էլ որ մեկ դարձիր տեղ քնկնի, լեզու չգիտենայի, մարդ չճանանչեի, ձեռիս էլ փող չըլեր, մեկ մարդի տուն որ մտնեի, ի՞նչ կուզեի, որ նա ինձ աներ, Վարդան ջան, դու ասա՞, — դիմում է նա իր որդուն:

Ե՛Որ քեզ տիրություն աներ, տեղ տար, դարդիդ հասներ, որ նեղություն չթաշիքի սիրելի հայր՝ — պատասխանում է Վարդանը:

Այս եղանակով Արուսյանը երեխաներին սովորեցնում է հոգատար լինել, օգնել կարիք ունեցող ամեն մարդու, ինչ աղդից էլ լինի նա:

Արուսյանի մոտ մտքդ հասկացողությունը բարձր է ամեն ինչից:

* Երկեր, II հատոր, 1940 թ. էջ 283—284.

Նա բոլոր թշվառ մարդկանց կողմն է, անկախ նրանց ազգային պատկանելիությունից և հավատից: Ընդհակառակն՝ նա բոլոր կողոպտիչների, ճնշողների, հափշտակողների, բռնություն գործադրողների ռեժիմ հակառակորդն է:

Այս բոլորը Արուսյանի ինտերնացիոնալիստական հայացքների վառ արտահայտություններն են: Իր այս հայացքներով էլ Արուսյանը դաստիարակել է երեխաներին:

Վերջապես հիշե՛ք այն եռանդուն ջանքերի մասին, որ Արուսյանը գործադրել է թուրք երեխաներին մոլլաների ձեռքից խլելու և իր մոտ ուսման վերցնելու ուղղությամբ:

Զպե՛տք է մոռացություն տալ և այն հարգանքն ու մտերմությունը, որ գոյություն են ունեցել Արուսյանի և աղբրեջանական հայտնի դրող՝ Միրզա Ֆաթալի Ախունդովի, իսկ հետո, հասկապես Վրյանջայի իմաստունի՝ Միրզա Շաֆու միջև:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻՍՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մարդու բաղմակողմանի զարգացման հարցի կապակցությամբ մենք մասամբ խոսեցինք ֆիզիկական դաստիարակության մասին: Այսանդ քիչ բան է մնում ասելու:

Ֆիզիկական դաստիարակությունն Արուսյանի մոտ կազմում է ընդհանուր դաստիարակության անքակտելի մի մասը:

Մարդկանց ֆիզիկական առողջությունն անհրաժեշտ է նախ և առաջ իրենց և հետո՝ նաև ուրիշների համար: Միայն առողջ մարդն է ի վիճակի կատարելու բաղմապիսի ֆիզիկական ու մտավոր աշխատանք և դիմանալու կյանքի փոփոխական պայմաններին: Իսկ այդ առողջությունն ապահովվում է ֆիզիկական դաստիարակության միջոցով:

Ֆիզիկական դաստիարակության միջոցներն ու ձևերը հանդամանորեն շարադրված են Վատմություն Տիգրանի՝ վեպում:

Դիվանբեկի ֆիզիկական առողջությունը և ուժը պետք են դալիս. հրգեհր հանդցնելիս և Տիգրանենց տունը սարսափելի վտանդից ազատելիս: Ավետիքի ուժը և լավ լող տալը պետք է դալիս գետն ընկած խեղդվող աղջկան ազատելու համար և այլն:

Արուսյանն առաջադրել է ֆիզիկական դաստիարակության մի ամբողջ սխեմա: Կոշտ տեղ քնելը, ոտքով հաճախակի ճանապար-

հորդելը, ցուրտ և շոգ եղանակներին հեռավոր տեղեր զնալը, ֆիզիկական աշխատանք կատարելը, լող տալը, ստամոքսը չճանրարեռնելը, իրեն զանազան զրկանքների ենթարկելը, շարժուն խաղերը և այլն, Արուսյանը համարել է ֆիզիկական դաստիարակության լավագույն միջոցներ:

Տիգրանի երեխաները տեսնելով դիվանբեկի ֆիզիկական ուժը և առողջությունը, դիմում են իրենց հորը՝ իրենց համար դարձանի դոշակ պատրաստել տալու համար, որ իրենց մարմինը ամրապնդեն:

Ցուրտ եղանակին, երբ ձյունն ու բուքն էր փչում, Տիգրանն իր երեխաների հետ ոտքով ճանապարհ է զնում, սովորեցնելով նրանց, որ թով ուզում աջանը դալիմ, պինդ ըլի պետք է էսպես դառը հովին էլ դիմանա:

Ուսուցիչ Կարապետը լող տալ է սովորեցնում իր աշակերտներին և հաճախակի տանում լողանալու:

Հետաքրքիր է Պ. Պոռյանի հիշողությունները՝ Արուսյանի կողմից Աշտարակի զպրոցն այցելելու մասին: Մյուս նորությունների հետ միասին, որ Արուսյանը 1—2 օրում մացնում է այդ զպրոցը, նա հավաքում է երեխաներին, տանում է Գասախ գետը, լողանում նրանց հետ: ԵՏեսուչ ազան մի ուրիշ նորություն ևս սահմանեց. նա զարմացավ, երբ մեզանից լսեց որ զրկված ենք լողանալուց:

Նա ինքը նույն երեկոյան պահուն մեզ տարավ գետը, շնվազ դյու կոչված լճի մեջ լողացրեց, ինքն էլ մեզ հետ լողացավ: Հիանալի լողորդ է եղած ազան, բայց մենք էլ իրանից պակաս չէինք լողում: (Պ. Պոռյան շնորհակցներ):

Մենքի նկատմամբ Արուսյանը խորհուրդ է տալիս, նախ՝ երբեք չճանրարեռնել ստամոքսը, ապա երբեմն գիտակցաբար հրաժարվել այս կամ այն սիրած ճաշը, միջին ուտելուց, որպեսզի ավելի ճաշը կամ միջին չլինելու դեպքում՝ առանձին պահանջ չզգացվի:

Երեխաների ժամանցը կազմակերպելու, ինչպես նաև ֆիզիկական դաստիարակության նպատակով՝ Արուսյանի կարծիքով պետք է կազմակերպել զանազան շարժուն խաղեր: Նա ինքն իր պրակտիկայում հիանալի դորժադրել է այս պահանջը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ.

Արտվյանը շատագուցիկ է ոչ միայն մտավոր, այլև ֆիզիկական աշխատանքը: Նա խորագանել է պարագ մարզկանց, ծուլերին և ուրիշի աշխատանքով անբողոքներին: Մարդու կյանքի իմաստը նա տեսել է աշխատանքի մեջ, Ով չի աշխատում, նա չպետք է ուտի, այս միտքը շատ հստակ արտահայտել է Արտվյանը:

«Պատմություն Տիգրանի» վեպում փոքրիկ Հովհաննեսի բերանով, Արտվյանն ասում է.

«Պատիկ երեխան թե որ շատ խաղա,
Կամ դուռիս կկոտրի, կամ ոտը կկաղա,
Որ նստինք, ասինք աղա եմ, սղա,
Մեր հացն ձվ կտանի շաղացն ու կաղա:
Տանձը ինքն իրան բերանդ չի ընկնի,
Որ տակին նստիս, տեղիցդ չես շարժի:
Ո՛վ դայրաթ չանի, կմնա սոված,
Վերջ ժամանակին՝ դռնեղուս ընկած»^{*}

Ժողովրդից փոխ առնված այս չափածո տողերը, ցույց են տալիս Արտվյանի վերաբերմունքը զեպի աշխատանքը:

Ուրիշի աշխատանքով չապրելու միտքը Արտվյանը հիանալի կերպով ցույց է տվել իր վեպի մի այլ տեղում:

Ուսուցիչ Կարապետի աշակերտներից երկուսը՝ Վարդանը և Եղիսարեթն ունեն իրենց հողամասը, որտեղ աշխատում են նրանք:

Մի օր նրանք և Ստեփանը գնում են այդի Վարդանն ու Եղիսարեթը մտնում են իրենց մարդերը և քաղում լավ-լավ կանաչիներին:

Ստեփանը հիացած՝ նույնպես ցանկանում է քաղել: Վերցնում է դանակը և վաղ տալիս զեպի մարդերը: Բայց հանկարծ կանգ է առնում... Նա մտածում է, որ չինքը հող չունի, որտեղմնց պիտի քաղել: Ուրիշի բանին էլ ձեռք տալը, զիտեր որ մեղք առնա հետ է դառնում և լաց լինում: Ստեփանի տխրության պատճառն իմանալուց հետո, նրան էլ է հող հատկացվում, անձամբ մշակելու:

^{*} Երկեր, II հատոր, 1940 թ., էջ 258.

Ուսուցիչ Կարապետը ճանապարհին հանդիպելով մի աղքատ էնոջ, խոսում է նրա հետ, ծանոթանում նրա գծրախտությանը իսկ հեռանալիս՝ ասում է. «Մնաս բարով, սիրելի մայրիկ, աստված որդիքդ քեզ բաշխի։ Աշխատիր, որ նրանք բան անեն, էն ժամանակը նեղություն չեն քաշիլ»։*

Աշխատանք—ահա յուրաքանչյուր մարդու սրբազան պարտքը։ Արովյանը երեխաներին փոքր հասակից սովորեցնում է աշխատանքի։

Երեվանի գավառական դպրոցում, որտեղ Արովյանը տեսուչ էր, աշակերտների յուրաքանչյուր խումբ ուներ իր մարդը մշակելու համար։

Ծանկանալով դպրոցի շրջակայքում մի պարտեզ գցել, Արովյանը 1844 թվին մի գրություն է գրել Անդրկովկասյան դպրոցների տեսչությանը, թուլյովություն՝ խնդրելով։ Այդ գրության վերջում ասված է. «Պարտք եմ համարում սրան ավելացնել և այն, որ այդպիսի ձեռնարկությունն այսպիսի տաք և այսքան արգավանդ երկրում կունենա շատ բարեբար հետևանք և՛ նպատանեկության առողջությունը տեղիս խորշակալից մահաբեր կլիմայի աղդեցությունից պահպանելու տեսակետից, և՛ երեխաներին նրանց մանկական հասակից զեղեցիկ ու ամեն կոշման համար այնքան շահեկան զբաղմունքի ընտելացնելու տեսակետից, այսինքն՝ պարտիզպանության և ընդհանրապես գյուղատնտեսության» (Դիվան, էջ 132)։

Աշխատանքային դաստիարակության գաղափարը կարմիր թելի պես անցնում է «Պատմություն Տիգրանի» վեպի սկզբից մինչև վերջը։

Հետաքրքրական է, որ Արովյանը չի խոսել քաղաքային կյանքի հետ կապված աշխատանքի մասին, արհեստագործության մասին և այլն, չնայած նա առանձնապես չի էլ բացասում այն։ Նրա մանկավարժական վեպի գլխավոր գեմքերից մեկը՝ Տիգրանը վաճառական է։ Այս ցույց է տալիս, որ Արովյանը վատ կարծիք չուներ վաճառականության մասին։

Սակայն առաձին թափով ու ջանասիրությամբ նա մեծուրել է գյուղատնտեսական աշխատանքը, հողագործությունը և անասնապահությունը։

* Երկեր, II հատոր, 1940 թ., էջ 232։

«Պատմութիւն Տիգրանի» վեպում երեխաները վարժվում են դուռնապանական աշխատանքներին, մշակում են իրենց հատկացված հողամասը։ Նրանց օժանդակում և անհրաժեշտ ցուցմունքներ է տալիս ուսուցիչ Կարապետը։

Սակայն դաշտային աշխատանքներից բացի՝ երեխաները մասնակցում են նաև տնային աշխատանքներին։ Ծղիսարեթը սովորում է զուլպա դործել, տունը կահավորել, երեխա խնամել։ Վարդանը նույնպես մասնակցում է տունը կահավորելուն, իրերը կարգի գցելուն և կատարում է հոր հանձնարարութիւնները (մարդ կանչել, նամակ տանել փոստը և այլն)։

Արուսյանը դուռնապանական աշխատանքներին մասնակից է դարձնում թե աղաներին և թե աղջիկներին։

Այսպիսով, աշխատանքային դաստիարակութիւնն Արուսյանի մոտ ոչ թե էպիդոդիկ մի երևույթ է, այլ հարատև, սիստեմատիկ բնույթ է կրում։ Աշխատանքային դաստիարակութիւնը մտնում է Արուսյանի մանկավարժական սիստեմի մեջ, որպես նրա օրգանական մի մասը։

ԳԻՍՅԻՊԼԻՆԱ

Արուսյանը խիստ կարեւոր նշանակութիւն է տվել կարգապահութեանը, որն անհրաժեշտ է ամեն տեղ թե տանը, թե դրսում և թե կրթութեան ու դաստիարակութեան մեջ։

Ուսուցման գործը տապալված է եթե աշակերտների կողմից անհրաժեշտ կարգապահութիւն չկա։

«Դասի ժամանակն էլ աշակերտը պետք է լավ վարավորդ անի, ինչ որ վարժապետն ուսում ա՛ծ թե ոչ, մարդ կմնա տգետ, անուսումն, բոի, թեկուզ որ վարժապետը հազար լավ բան էլ տաք*»,—սովորեցնում է Արուսյանը։

Արուսյանն ինքն իր մանկավարժական պրակտիկայում կարգապահութեան հարցերում շատ խստապահանջ է եղել։ Սակայն նա վճռականապես բողոքել է և դեմ է եղել ծեծի դատան սիստեմին։ Արուսյանը մերժել է ծեծը, համարելով այն դաստիարակութեան կեղծ և անընդունելի մեթոդ։ Ավելին, նա կոչի է բերում իր աշխատակիցների հետ, որոնք ծեծել են երեխաներին։

Մի անգամ, երբ Արուսյանը բացակայում է դպրոցից, ուսու-

*Նրկեր, II հատոր, 1940 թ., էջ 249.

ցիշ՝ Իվանովը սարսափելի պատժում է մի աշակերտի, որն ասել էր թե դասը չգիտե, որովհետեւ լավ չի հասկացել Իվանովը սկզբում նրան չորեքցնում է, հետո ծեծում է քանոնի 16 հարվածով, Իսկ երբ երեխան համարձակվում է հարցնել, թե որն է իր հանցանքը, ուսուցչին ավելի է զազազում, նրան դուրս է վռնդում դասարանից և, վերցնելով մի կապ դալար ճիպտաներ, բոլոր աշակերտներին ներկայությամբ զազանարար ծեծում է այդ երեխային։

Վերադառնալով էջմիածնից՝ Արուսյանը հանդամանորեն ծանոթանում է դեպքին և կանչել է տալիս ուսուցչին ու բոլոր աշակերտներին առաջ զգուշացնում է, որ ժայլաւ չհամարձակվի այդպիսի միջոցների դիմելը։

Այդ պատճառով մեծ աղմուկ է առաջանում Արուսյանի և այդ ուսուցչի միջև։ Այդ ուսուցչիը թողնում է դասարանները և համատրեն դպրոց չի մտնում, մինչև Արուսյանը ներողություն չխնդրի նրանից։ Իսկ Արուսյանն իր համոզմունքների տերն էր, նա ներողություն չէր կարող խնդրել։ Այդ մասին Արուսյանը հատուկ բողոք է ուղղել Անդրեկովկասյան դպրոցների տեսչին։

Ծեծն այն ժամանակ սովորական էր։

Արուսյանը չէր կարող առանց իր դեմ հակառակորդների նոր բանակ ստեղծելու հայտարարել, որ ծեծն իր դպրոցում վերացնում է։ Սակայն նա դիմում է մի այլ միջոցի. առաջարկում է, որ առանց իր դիտության և իր կարգադրության ոչ մի ուսուցիչ և ոչ մի ծառայող իրավունք չունենա որեւէ աշակերտի ծեծել։

«Պատմություն Տիգրանի» վեպում մենք ոչ մի տեղ չենք հանդիպում ծեծի դեպքի, ոչ ծնողների և ոչ էլ ուսուցչի կողմից։

Դիվանբեգի ու Տիգրանի խոսակցության ժամանակ, Եղիսաբեթը անչափ ուրախությունից շատ բարձր է խոսում և խանդաբում մյուսներին։ Մայրը կանչում է նրան առանձին և հասկացնում, որ պետք է չափավոր լինել, բարձր խոսակցությամբ չխանդարել մյուսներին։ Աղջիկը լսում է մորը, բայց ուրախությունը կուրացրել էր նրան։ Վազելով դուրս է գնում և բաղիվում դեպի սենյակ եկող ծառայողին, որի ձեռքի մատուցարանը վայր է ընկնում ու միջի ուտելիքը թափվում է, ափսոսեանքն ու բաժակները շարվում են։

«Աննան թնշ արեց — հարցնում է Արուսյանը, — Եղիսաբեթին

ձեռնաց, կամ սխալ խփմաց, դարավային բեարեւոյ արեւոյ՝ Քաղցրի, ոչ էս, ոչ էն՝ Եւս²։ Նա հանդիստ և ամենալուրջ տոնով հանդիմանում է իր ազնկան, որի վրա մօր խոսքերն ազդում են ամենածանր կերպով։ Եղիսարեթը երկար ժամանակ չի մոռանում իր արարքը և մօր հանդիմանութիւնը։ Նա չի հանգստանում մինչև իր ունեցած դրամով ղնուի է ջարդոված ամանեղներ և հատուցում պատճառած վնասը ստանալով իր մօրից դրամոր քաջալերանք։

Երբեմն, երբ աշակերտները դասին անուշադիր են լինում, ուսուցիչ Կարապետը ձեռի կտպիտ միջոցին դիմելու փոխարեն լուրջ հանդիմանում է նրանց և զործնականորեն ցույց տալիս նրանց անուշադրութեան հետևանքը։ Դաս է հարցնում, իսկ նրանք չգիտեն։ Ուսուցիչը ցույց է տալիս իր վշտացած լինելը։ Այդ ազդում է աշակերտների վրա, որովհետև նրանք սիրում են իրենց ուսուցչին և ոչ մի կերպ չեն ցանկանում նրան վշտացրած լինել։

Արովյանն իր սկզբունքները կիրառում էր ոչ միայն իր ղեկավարութեանը հանձնարած ղարոցում այլև հնարավորութեան սահմանում նաև մյուս ղարոցներում։

Աշտարակի ղարոցում եղած ժամանակ Արովյանն ղգում է, որ աշակերտները խիստ ճնշված են և վախվածելով են մօտենում իրեն։ Անմիջապես հասկանում է, թե ինչպիսի դադան է այդ անմեղ երեխաների բուսուցիչը։

Ահա թե ինչ է պատմում Գ. Պոռչյանն իր շէնչիկներն-ում. «Մանկական պարզամտութեամբ հայտնած խոստովանութիւնս՝ ձեռի մասին, տեղի տվեց արքունի ղարոցի տեսչին երկար հարցախնդիր լինել ուսուցչից ձեռի վերաբերմամբ։

Շապուհը չթաքցրեց, պարծանքով հայտնեց, որ ինքն անողորմաբար պատժելով, հասել է ցանկալի արդյունքին։

— Երեխայք, դառնում է աղա տեսուչը ղեպի մանուկները, եթե ես խնդրեմ վարժապետից, որ այսուհետև ձեզ չձեռի, խոստանա՞մ եք, որ միշտ դասերդ լավ պատրաստեք։

— Խոստանում ենք, ղոչնցիք միաձայն։

— Դեհ, ուրեմն, միամիտ կացեք, որ այսուհետև ձեռ վերանում է ձեր միջից։

Կամեցավ ուսուցիչն ապացուցանել ձեռի անհրաժեշտութիւնը, բայց ղուր աշխատութիւն էր։

* Երկեր, II հատոր, էջ 212—213.

Արտվյանի սարսափն այնքան աւժեղ էր ազդել խալֆա Շապուհի վրա, որ նա այնուհետեւ չէր համարձակվում իր աշակերտներին ծեծել:

«Ախ, Բնչ անեմ... ատամները կրճտեցնում էր հաճախ խալֆան, երբ անկարգություն էինք անում, կամ դասերս չէինք իմանում, արեւը վատ տեղն ա մայր մտել, Թե չէ ես դիտեի ինչ անել» — պատմում է նույն տեղում Պոռչյանն իր ուսուցչի մասին:

Մարմնական տանջանքների, ճիպոտների ու ֆալսիկայի դիտցիվլինային Արտվյանը հակադրում է մանկավարժական ներդրած ման սկզբունքը, գիտակցական կարգապահության հարցը: Աշակերտներին պետք է համոզել և հասկացնել իր արարքի բացասական լինելը. մանկավարժական ներդրած ման ուժով ստիպել նրան ուղղելու իրեն: Մրանում է Արտվյանը տեսել ուսուցչի մանկավարժական վարպետությունը:

Ինչպես արդեն ասացինք, Արտվյանը ընդունում էր կարգապահական որոշ միջոցների գործադրությունը:

Թիֆլիսի իր մասնավոր պանսիոնատի կապակցությամբ զբերված զեկուցագրերից մեկում նա նշել է, որ ինքը գործադրում է պատժի հետեյալ միջոցները՝ հանդիմանություն և նկատողություն, առանց մարմնական պատիժների:

Աշակերտներին կարգապահական տույժերի ենթարկելիս Արտվյանը դիֆերենցյալ մոտեցում է ունեցել, հաշվի առնելով երեխայի զանցանքի չափը և ընույթը, երեխայի ընամփոթությունը, նրա առողջությունը և այլն: Բնավորությամբ ավելի թույլ կամ շատ շուտ հուզվող երեխաների նկատմամբ նա սահմանափակվել է գլխավորապես ընկերական հանդիմանություններով ու խորհուրդներ տալով:

Բոլոր կողմերով անկարգապահ երեխաների նկատմամբ կիրառվել են պատժի ավելի խիստ միջոցներ, ընդհուպ մինչև զբոսայգից հեռացնելը:

Արտվյանը բավականին պահանջկոտ է եղել դպրոց հաճախելու հարցում: Մոտոներն իրենց երեխաներին հաճախ հանել են դպրոցից, կամ ուղարկել են այս կամ այն աշխատանքը կատարելու, պատճառ դառնալով իրենց երեխաների դպրոցի պարապմունքներից ուշանալուն կամ առհասարակ չգալուն: Վերադաս օրգաններին զբաժմի շարք գրություններում Արտվյանը պահանջել է միջոցներ ձեռք առնել աշակերտների հաճախումները կարգավորելու, իսկ ծնողներ-

րին սպառնացել է, որ հակառակ դեպքում երեխաներն ամբողջովին կհեռացվեն զպրոցից:

Արովյանը պահանջել է, որ տույժի կամ պատժի միջոցներ դործադրելիս՝ պահպանվի խիստ չափավորութուն և արգար մոտեցում:

Տույժի և պատժի միջոցների դործադրության հետ միասին, Արովյանը լայն կերպով կիրառել է նաև խրախուսանքի մեթոդը, այն համարելով դաստիարակության լավագույն միջոցներից մեկը:

Բոլոր կողմերով օրինակելի աշակերտները մյուս բոլոր աշակերտների կամ ծնողների ներկայությամբ արժանացել են հրապարակական խրախուսանքի, գովասանության, պարգևատրվել են զրքերով և այլն:

ՈՒՍՈՒՑՁԻ ԵՎ ԾՆՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԸ

Կրթության և դաստիարակության իր սխտեմում Արովյանը առանձնահատուկ նշանակութուն է տվել մեծերի, հատկապես ուսուցչի և ծնողների անձնական օրինակին:

Երեխան իր բարոյական սնունդը պետք է ստանա առաջին հերթին իրեն դաստիարակողների վարք ու բարքը դիտելով և նրանց ընդօրինակելով:

Ծնողները պետք է լինեն կրթված, զարգացած և պարտաճանաչ իրենց ընտանեկան ու հասարակական պարտականությունների կատարման մեջ:

«Պատմութուն Տիգրանի» վեպում հիանալի տրված է ծնողների օրինակելիութունը: Տիգրանը և Աննան իրենց անձնական օրինակով քայլ առ քայլ սովորեցնում են երեխաներին: Նրանք համբարալի են իրար հետ, գործում են մտածված, բոլոր, առանձնապես իրենց երեխաների դաստիարակության հարցերում, ազնիվ են, ճշմարտախոս, վճռական, պահանջկոտ, հոգատար, հարգալից և այլն:

Ծնողների այդ հատկանիշները փոխանցվում են իրենց երեխաներին:

Արովյանն ընտանեկան դաստիարակության մեջ վճռական տեղը հատկացնում է երեխայի մորը, որի բացակայության դեպքում

խափանվում է երեխայի ճիշտ դաստիարակության գործը, Ուրեմն, այդ գործում ամենակարևորը մեր անձնական օրինակն է:

Այնքի խիստ պահանջներ են ներկայացվում ուսուցչին: Արդյանք ցանկացել է, որ ուսուցիչը լինի նախ և առաջ կրթված և լայն զարգացման տեր մարդ, սիրի իր գործը, սիրի երեխաներին: Նա ասում է, որ ուսուցիչը պետք է այնպիսին լինի, որ երեխաները նրան սիրեն ու հարգեն իրենց հոր պես:

Ամենագլխավորն այն է, որ ուսուցչի ամեն մի խոստումը գործ դառնա, յուրաքանչյուր խոսքի կատարումն առաջին հերթին պարտադիր լինի իր համար:

Ուսուցիչը պետք է սխտեմատիկորեն կատարելագործվի, լրացնելով իր թերի կողմերը և ձեռք բերի չիմացածը:

Այդպիսի հատկանիշներով է օժտված ուսուցիչ Կարապետ վահանյանը, որին, ինչպես արդեն ասել ենք, Արդյանն առաջագրել է որպես իդեալ:

Արդյանի ժամանակ հայ իրականության մեջ, իրենից՝ Արդյանից բացի, չկար հայտնի ոչ մեկը, որ օժտված լիներ ուսուցչին անհրաժեշտ բոլոր այդ բարձր հատկություններով:

Բարձր զնահատելով ուսուցչի կոչումը, Արդյանը նշում է, որ հթե նա հանձն է առել պատանեկության դաստիարակության գործը, ապա շնա պետք է վերաստեղծե, փոխե նրան, հթե միայն ցանկանում է, որ իր աշխատանքը բաղձալի արդյունք ունենա: Անհողզող հսկողություն, հսկողություն՝ իր խնամքին հանձնված պատանիների բարոյականության վրա, արթուն հետևողություն նրա ամեն մի քայլին, ամեն մի արարքին, հմտություն ու անմուռն հողացողություն իր պարտականությունները կատարելու գործում, դաստիարակչության սեր, համբերություն և հայրական ներդաժնություն պետք է ֆեմացնեն նրա հոգին, կենդանացնեն նրա գործողությունները, հթե նա միտք ունի շահավետությամբ և արժանավորությամբ կատարել իր բարձր նպատակը (Դիվան, էջ 155):

Ահա թե ինչպես պետք է լինի ուսուցիչն ըստ Արդյանի:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԾԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՈՎՅԱՆԻ ՎՐԱ

Եվրոպական մանկավարժության առաջավոր միտքն իր ուժեղ գրոշմն է դրել Արդյանի մանկավարժական գաղափարների վրա: Զոն Լոկկ, Ժան-ժակ Ռուսսո և Հենրիխ Պեստալոցցի,— ահա այն

խաշորագուշն մանկավարժները, որոնցից հիմնականում իր մանկավարժական սնունդն է ստացել Արտվանը:

Արտվանը կրել է նրանց ազդեցութիւնը: Սակայն նկատելի է և այն տարբերութիւնը, որ զոյութիւն ունի Արտվանի և նրանց միջև: Արտվանը կարողացել է հաջողութեամբ համադրել եվրոպական մանկավարժութեան առաջավոր մտքեցը՝ մեկնաբանել յուրահասուէ ձևով, մտցնելով իր սեփական տեսակետները:

Արտվանի մանկավարժական հայացքների վրա առանձնապես, զգալի ազդեցութիւն է ունեցել Ռուսոյի և Պեստալոցցու դեմոկրատիզմը: Ռուսոյին հետևելով՝ Արտվանը լուրջ պայքար է ծավալել սխոլաստիկական ուսուցման, մանուկների միտքը բռնադատելու սարսափելի ռեժիմի դեմ:

Շուտ հարցերում զարգացնելով Ռուսոյի հայացքները՝ Արտվանը հաճախ հակադրվում է նրան: Նա լիովին համամիտ է Ռուսոյին և Պեստալոցցուն աշխատանքային և ֆիզիկական դաստիարակութեան, երեխայի զգայարանների և հոգեկան կարողութիւնների զարգացման ու մի շարք այլ հարցերում: Ռուսոյի պես ջերմ պաշտպանելով մանկական իրավունքը, պահանջելով, որ դաստիարակութեան մեջ հաշվի առնվեն երեխայի անհատական առանձնահատկութիւնները, նրանց տարիքային և հոգեբանական զարգացումը, — Արտվանը, հակառակ Ռուսոյի, այն կարծիքին չէ, որ երեխան մինչև 12 տարեկան հասակն ապրում է իր ներքին կյանքով, որ նրա համար օտար է ամեն մի բարոյական և մտավոր հասկացողութիւն, ուստի և այդ շրջանում չպետք է տալ որևէ բարոյական կամ մտավոր կրթութիւն: Հակառակ դրան Արտվանը երեխաներին փոքր հասակից հագողում է բարոյական հասկացողութիւններ, իսկ նրանց մտավոր սխտեմատիկ ուսուցման գործը կազմակերպում է 7—8 տարեկանից:

Ընդունելով Ռուսոյի տեսակետը, որ ժամանակակից միջավայրը փչացնում է երեխաներին, այնուամենայնիվ Ռուսոյի պես Արտվանն իր աշակերտներին չի հեռացնում մարդկանցից: Արտվանը ձգտում է իր աշակերտներին ցույց տալ մարդկային հասարակութեան արատները և բացատրել նրանց վնասակարութիւնը: Այդ միջոցով Արտվանը երեխաների մեջ զարգացնում է զոյութիւն ունեցող հասարակական շարիքների դեմ պայքարելու անհրաժեշտութիւնը:

Հակառակ Լոկկի և Ռուսսոյի՝ Արովյանն անհատական դաս-
տիարակության կողմնակից չէ, նա չի ժխտում դպրոցը և հատուկ
ձևով կազմադրւած ուսուցումը:

Ընդունելով Լոկկի և Ռուսսոյի տեսակետը ընտանեկան դաս-
տիարակության անհրաժեշտության մասին, Արովյանը չի բավակա-
նանում դրանով. որոշ տարիքից նա երեխաներին հանձնում է
ավելի կրթւած և զարգացած մարդու՝ ուսուցչին: Ռուսսոյին հա-
կառակ՝ Արովյանը չափազանց մեծ նշանակութիւն է տալիս
ուսուցչին և սխտեմատիկորեն շարադրում է բարոյական և մտավոր
այն հատկութիւնները, որոնցով պետք է օժտւած լինի ուսուցիչը:

Կողմնակից լինելով Ռուսսոյին ցրիմալիներով դաստիարա-
կելու հարցում և իր անձնական գործունեությամբ տալով դաստիա-
րակի լավագույն օրինակը, Արովյանը չի բացասում նաև խոսքի,
խրատների գերն ու նշանակութիւնը: Հաճախ սիրւած անձնա-
վորության հանդիմանութիւնը ավելի ապավորիչ և ազդեցիկ է
լինում, քան իազմաթիւ օրինակները: Ինչ խոսք, որ Արովյանի
մոտ օրինակներով դաստիարակելն այնուամենայնիւ հիմնականն է:

Դեպի երկսան եղած բարբառոսութիւնների նկատմամբ ցույց
տալով նույնպիսի զզվանք ու ատելութիւն, ինչպես Ռուսսոն,
նույնպիսի կրքոտությամբ պայքարելով նման երևույթների դեմ,
ինչպես պայքարել է Ռուսսոն, Արովյանը սակայն, հեռանում է
վերջինից, նրա շարական հետեւանքների դիտելով ինչայի՜ հարցում:
Բաժակները կոտրելու համար Աննան Եղիսարեթին չի ծեծում,
ինքնասիրութիւնը չի վիրավորում, սակայն լռությամբ էլ չի անց-
նում: Նա լուրջ կերպով հանդիմանում է աղջկան, որի վրա խիստ
ազդեցութիւն են թողնում մոր խոսքերը: Իսկ երբ աղջիկն իր
ունեցած գումարով գնում է բաժակները, մորից ստանում է քա-
ջալերող նամակ:

Ռուսսոյի նման մեծ նշանակութիւն տալով դիտողական ուսուց-
մանը, էքսկուրսիաներին և առհասարակ բնությանը և շրջապատի
առարկաներին խոր կերպով ծանոթացնելուն, Արովյանը չի թերա-
զնահատում խոսքի ուժը, չի բացասում գիրքը, չի ժխտում երեխայի
ընթերցանության կարևորութիւնը: Ընդհակառակն՝ ուսումը
բնության հետ կապելու իր անհուն ձգտման հետ մեկտեղ, Արով-
յանը երեխաներին առաջադրել է ընթերցանության հետաքրքիր
նյութեր, կազմել է նրանց համար դասագրքեր և այլն:

Ընդունելով Ռուսսոյի տեսակետը երեխայի ինքնուրույնութեան և ինքնագործունեութեան մասին, երեխային հատկացնելով իր բնականակութունները հայտնաբերելու լայն ասպարեզ, Արոյանն այնուամենայնիվ չի զիմադրելու ուսուցչին, ինչպես այդ անուամբ Ռուսսոն Արոյանի մոտ ուսուցիչը սխտեմատիկորեն հետևում է երեխաներին, օժանդակում ու սովորեցնում է նրանց, ղեկավարում է նրանց ուսման ու զաստիարակութեան ողջ պրոցեսը:

Ռուսսոն բացասում է երկսեռ համատեղ կրթությունը և դաստիարակությունը Ավելին. նա թերազնահատում է կնոջ սխտեմատիկ զաստիարակութեան և առանձնապես կրթութեան նշանակությունը: Ռուսսոյի այդ տեսակետը բխում է կնոջ նկատմամբ նրա ունեցած սահմանափակ և սխալ հայացքներից: Այս հարցում ևս Արոյանը ավելի առաջադեմ է Ռուսսոյից: Արոյանը կնոջն համարում է բնատնիքի հավասարազոր ղեկավար և նույն իրավունքներով օժտված քաղաքացի: Եղիսարեթը Վարդանի և Ստեփանի հետ միատեղ նույն ուսուցչի մոտ կրթվում է և դաստիարակվում, առանց որևէ բանում հետ մնալու նրանցից:

Արոյանը շատ բան է վերցրել Ռուսսոյից, բայց և շատ բանում էլ մերժել է նրան, հակադրելով իրենը: Արոյանը Ռուսսոյից վերցրել է զրականք, անհրաժեշտը, մերժելով նրա մանկավարժական սխտեմի անընդունելի կողմերը:

Ռուսսոյի և Արոյանի մանկավարժական հայացքների տարբերությունները պետք է բացատրել նրանց միջև ընկած ժամանակով և այդ ժամանակի պահանջներով:

Արոյանի մանկավարժական հայացքները հիմնականում ձևավորվեցին Դորպատում, այն ժամանակ, երբ ասպարեզ էին ևկել մանկավարժական նոր սխտեմներ ևս, երբ հրամայական պահանջ էր դրվում կրթութեան միջոցով կյանքի մարդիկ պատրաստելու մասին:

Ռուսսոյի մանկավարժական հայացքներն զգալի դեռ խաղացին իրենց ժամանակին: Ռուսսոն բազմաթիվ հետևողներ ունեցավ նաև հետագայում: Այդ հետևողներից մեկն էլ Խաչատուր Արոյանն էր: Սակայն Ռուսսոյի մանկավարժական հայացքներն իրենց սկզբնական դրութեամբ արդեն չէին կարող բավարարել 19-րդ դարի առաջին կիսի պահանջներին: Այդ հայացքները պետք էր զարգացնել նոր պայմաններում: Ռուսսոյի մանկավարժական հայացքների հանճարեղ զարգացնողն այդ շրջանում հանդիսացավ

խոշորագույն մանկավարժ Պետալոցցին, որը նույնպես խոշոր ազդեցութիւն է ունեցել Արուստայի մանկավարժական հայացքների զարգացման վրա: Զարգացնելով Ռուսսոյի մանկավարժական հայացքները՝ Պետալոցցին ավելի առաջ գնաց իր ուսուցչից և ստեղծեց ուրույն, մանկավարժական սխառեմ:

Յաշատուր Արուստայն իր մանկավարժական սնունդն ստանալով Ռուսսոյից և Պետալոցցուց, այնուամենայնիվ մեխանիկորեն չըմբռնեց նրանց մանկավարժութիւնն ոգին: Նա կարողացավ հիւրապական առաջավոր մանկավարժութիւնն պատվանդանի վրա կառուցել իր ինքնուրույն մանկավարժական սխառեմը, որը նույնքան խոր դեմոկրատիզմով է տողորկած որքան Ռուսսոյի և Պետալոցցու մանկավարժական սխառեմները:

Արդոճ Արուստայի մանկավարժական հայացքները նույն գերը խաղացին հայ իրականութիւն մեջ, ինչ որ Ռուսսոյի հայացքներն ամբողջ աշխարհում:

Ո՛չ, Արուստայի մանկավարժական հայացքներն այդ ճակատագիրը չունեցան: Այդ հայացքները չարժանացան լայն հասարակայնութիւնն ուղադրութիւնը, որովհետեւ Արուստայի մանկավարժական գրովածներն անհայտ մնացին հաջորդ սերունդներին, մինչև սովետական կարգերի հաստատումը:

Այսօր միայն սովետական ամեն մի քաղաքացի հնարավորութիւնն ունի կարդալ և ճանաչել ո՛չ միայն Արուստայն մեծ գրողին և լուսավորչին, այլև մեծ մանկավարժին:

Արուստայի մանկավարժական սխառեմը մի ամբողջ զարագլուխ է կադմուս և հանդիսանում է նոր շրջանի հայ մանկավարժութիւն հիմքը:

Արուստայի մանկավարժական հայացքներում կան շատ արժեքավոր մոմենտներ, որոնք ընդունելի և կիրառելի են նաև սովետական դպրոցում: Արժեքավոր են և ընդունելի Արուստայի ուսուցիչներն ընտանիքի դաստիարակչական գերի և դաստիարակութիւնն ձեռքի վերարերայալ, դասավանդման մեթոդներ, դիտողականութիւն և էքսկուրսիաների մասին, երեխաների անհատական առանձնահատկութիւնները հաշիւ առնելու, նրանց հոգեբանական փունկցիաները զարգացնելու, բազմակողմանիորեն զարգացած մտղղիկ պարարատելու, աշխատանքային և ֆիզիկական դաստիարակութիւն, ուսաց լեղվի տիրապետման, բարոյական դաստիարակութիւն մեթոդների, խրախուսանքի և տույժի, ուսուցչի գերի, նրա և ծնողների անձնական օրինակի հարցերի մասին և այլն:

Արտվյանի մանկավարժական հայացքներում նշված վերոհիշյալ մոմենտների ուսուսման տեսակետից կօգնի մեր ուսուցիչներին տվելի բարելավելու կրթության և դաստիարակության գործը սովորական դպրոցում:

Մակայն պակաս օգնություն ցույց չի տա նաև Արտվյանի մանկավարժական պրակտիկ գործունեության ուսուսման տեսակետից, որը չափազանց հարգւած է և մանկավարժական տեսակետից հետաքրքիր:

Զարմանալի նմանություն գոյություն ունի Արտվյանի և Պետտալոցցու միջև, որպես պրակտիկ տաղանդավոր մանկավարժների: Նրանք այնքան նման են իրար իրենց բնավորության գծերով, մանկավարժական կրթոսություններ և եռանդով, Նրանց կյանքի պայմաններն էլ գրեթե միևնույնն են եղել. նրանք երկուսն էլ ապրել են զրկանքների մեջ ու կրել են իրենց վրա դաժան միջավայրի ծանր հարվածները:

Եթե մոտացության շտանդ նաև նրանց մանկավարժական հայացքների մոտիկությունն ու մեծությունը, ապա իրավունք կունենանք ասելու, որ Արտվյանը մեր Պետալոցցին է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համառոտակի ամփոփելով խաչատուր Արտվյանի մանկավարժական հայացքները՝ մենք դալիս ենք հետևյալ եզրակացության.

1. Հայ ժողովրդի տառապանքների վերացման գլխավոր միջոցը Արտվյանը համարում է լուսավորությունը, որի համար անհրաժեշտ է լայն ծավալել մանուկների կրթության և դաստիարակության գործը:
2. Մանուկների կրթության և դաստիարակության գործը հաջողությամբ տանելու համար, Արտվյանը պահանջում է երեք հիմնական նախապայման.

ա) իրենց գործը սիրող վարպետ ուսուցիչներ.

բ) դպրոցների լայն ցանց, 7—14 տարեկան հասակը պարտադիր ուսման կիրառմամբ, պետության անմիջական հսկողության ներքո, հասարակության ակտիվ մասնակցությամբ.

գ) ուսուցման վարումն աշխարհաբար գրական լեզվով:

3. Արտվյանը, վանքերի և ազետ խալիֆաների ձեռքից մանուկներ

րին խելելու նպատակով, լայն պրոպագանդա է մղում հօգուտ
ընտանեկան դաստիարակութեան, որոշ չափով գերազնահա-
տելով վերջինիս դերը:

4. Արովյանը, հակառակ Լոկկի և Ռուսսոյի, երեխաներին որոշ
տարիքից հանձնում է բացառապես կրթութեան և դաստիա-
րակութեան գործով զբաղվող, կրթված և զարգացած մարդ-
կանց՝ ուսուցիչներին, որոնց գործունեությունն ընթանում
է զպրոցում, երեխաներն ստանում են կազմակերպված, սիս-
տեմատիկ կրթություն և դաստիարակություն:

5. Սուր պայքար տանելով սխոլաստիկական-խալֆայական
զպրոցի ամբողջ ոգու դեմ, Արովյանն առաջ է քաշել մարդու
բազմակողմանի զարգացման անհրաժեշտություն հարցը, որի
համար պետք է երեխաներին տալ մտավոր կրթություն,
բարոյական և ֆիզիկական դաստիարակություն:

6. Վճռականապես դեմ արտահայտվելով երեխաների միտքը
վերացական դադափարներով բռնազատելուն, Արովյանը
պահանջել է մտավոր կրթությունը հիմնել իրական գիտելիք-
ների վրա, ընդ որում պետք է ուսումնասիրվեն բնությունը,
մարդկանց փոխհարաբերությունները, և շրջապատող առար-
կաները:

7. Քաղաքանելով մայրենի լեզվի ուսուցման տառանդանների սիս-
տեմի անիմաստ գրվածքների մեխանիկորեն բերանացի անե-
լու փտած մեթոդները՝ Արովյանն առաջարկել է զբաճառու-
չության ուսուցումը տանել հնչական մեթոդով, քերականու-
թյան և լեզվի դասավանդումը կազմակերպել միասնաբար,
կենդանի և հետաքրքիր:

8. Արովյանը բացառիկ նշանակություն է տվել ուսուց լեզվի
ուսուցմանը, համարելով այն՝ ուսուց կուլտուրային հաղոր-
դակից լինելու և ուսու մեծ ժողովրդի հետ եղբայրական դա-
շինք կապելու ամենահզոր գեները: Այդ նպատակով նա զբե-
լ է հատուկ դասադիրք՝ շարադրելով ուսուց լեզվի ուսուցման
հեշտ միջոցները:

9. Ինչպես լեզուների, առավել ևս մյուս առարկաների ուսուց-
ման ժամանակ, Արովյանը պահանջել է կիրառել գործնական
մեթոդը, որն արտահայտվում է նախօրոք կատարվող էքզե-
կուսիաների, գրասանքների ու այլ միջոցներով բնության

երևույթներին, բույսերին, կենդանիներին, զանազան առարկաներին, պատմական հուշարձաններին ծանոթանալու, և հետ միայն զպրոցում նրանք մանրամասնորեն ուսումնասիրելու մեջ, ինքնըստինքյան հասկանալի է՝ թե ինչ նշանակություն է տվել Արովյանը գիտողականությանն ուսուցման մեջ:

10. Հետևելով մեծ մանկավարժներին՝ Արովյանը առաջ է քաշել և հաջողությամբ կիրառել է իր դործունեության ընթացքում մի շարք գիդակտիկական սկզբունքներ և պահանջներ, ինչպես՝ ուսուցման գիտողականության, սխտեմատիկության, աստիճանականության և հաջորդականության հարցերը, ուսուցման կառուցումը երեխայի ֆիզիկական և մտավոր զարգացման համապատասխան, ավելի հասարակ, պարզ և մատչելի նյութերից ավելի դժվարներին, ավելի մոտիկ և ծանոթ նյութերից ավելի հեռավոր և անծանոթ նյութերին անցնելը. երեխաների հոգեկան կարողությունների, զգայարանների, նրանց ինքնուրույնության և ինքնագործունեության զարգացումը և այլն և այլն:

11. Խոշոր նշանակություն տալով ամօճակամ փորձիմ, Արովյանը, հակառակ Ռուսսոյի, երեխայի ուսուցումն ամբողջովին չի կառուցել զուտ նրա անձնական փորձի վրա: Արովյանը զգալի նշանակություն է տվել նաև ուրիշների փորձին, հասարակական և պատմական փորձին: Այս տեսակետից Արովյանը երեխայի անձնական փորձի լայն օգտագործման անհրաժեշտության հետ միասին, պահանջվող սրությամբ զբեղ է համամարդկային գիտության ու կուլտուրայի նվաճումների ուսուցման հարցը:

12. Ելնելով վերոհիշյալից, Արովյանը խոշոր դեր է հատկացրել ուսուցչին, զասագրքերին, զրգերին և սոհասարակ զըպրոցական ուսուցմանը:

13. Բարոյական դաստիարակությունը սկսելով ամենավաղ հասակից, Արովյանը երեխաների մեջ զարգացնում է հումանիտական լայն հայացքներ և այլ դրական հատկանիշներ, լայն պայքար տանելով սնտոխապաշտության, խավարամտության, խաբեբայության, ուրիշի հաշվին ապրելու, մեծամտության և այլ երևույթների դեմ: Բարոյական դաստիարակության

ամենահիմնական միջոցն Արովյանի մոտ կենդանի և պատմական օրինակներն են, հատկապես ուսուցիչները և ծնողները անձնական օրինակները:

14. Զժխտելով կրոնը՝ Արովյանը սակայն կողմնակից է անկրոն դաստիարակության: Հավատից անկախ նա տեսնում է մարդկանց, որոնք ծնվել են այս աշխարհում ապրելու, սիրելու համար: Ահա այդ պատճառով Արովյանը համամարդկային սիրո քարոզիչ է: Մարդ հասկացողությունը նրա մոտ վեր է բոլոր հավատներից:

15. Վերոհիշյալ խնդրի հետ սերտորեն կապված է նաև Արովյանի ինտերնացիոնալիզմը: Արովյանի որոշ՝ արտաքինից նացիոնալիստական թվացող արտահայտությունները, ուղղված են ոչ թե ամբողջ ազգի այլ տվյալ ազգի միայն մի մասի դեմ, որ հափշտակել և հողմահար էր անում Արովյանի հայրենիքը: Ավելի ճիշտ կլինի ասել, որ Արովյանի այդ արտահայտությունների մեջ ոչ թե նացիոնալիզմ, այլ ազգային ազատագրական ձգտումներն են հանդես եկել: Իսկ Արովյանի ինտերնացիոնալիզմի բազմաթիվ փաստեր կան, որոնց մի մասը մենք ցույց տվեցինք յուր տեղում:

16. Լոկիկ և Ռուսսոյի օրինակով, Արովյանը երեխայի ֆիզիկական դաստիարակության ջերմ պաշտպանն է, համարելով այն բազմակողմանի զարգացած մարդու կարևորագույն հատկանիշներին մեկը: Արովյանը մանրամասն շարադրել է ֆիզ. դաստիարակության միջոցներն ու ձևերը:

17. Հետևելով Ռուսսոյին և Պեստալոցցուն՝ Արովյանը սուր կերպով դրել է աշխատանքային դաստիարակության հարցը բոլոր երեխաների համար՝ անկախ ծնողների ունեցվածքային տարբերությունից: Աշխատանքը Արովյանը դիտել է որպես մարդկանց երջանկության աղբյուր, և այդ պատճառով բոլորից պահանջել է աշխատել, խարազանելով ծուլերին և ուրիշների հաշվին ապրողներին: Աշխատանքի տեսակներից Արովյանը զերազանս է գյուղատնտեսականը՝ չժխտելով արհեստը և արվեստը:

18. Արովյանը կողմնակից է երկսեռ միատեղ կրթությանն ու դաստիարակությանը, այս հարցում ես մերժելով իր ուսուցչին — Ռուսսոյին:

19. Կարևոր նշանակութիւն տալով կարգապահությանն ուսուցման մեջ, աշխատանքում և կյանքում, Արուսյանը խիստ պայքար է տարել սխուստիկական դպրոցի դիւցիւլինայի բարրարոտական միջոցների դեմ, ժխտելով ծեծը և մարմնական ու այլ ստորացուցիչ պատիժները:

Արուսյանն առաջադրել է դիտակցական կարգապահության հարցը, դաստիարակների և դաստիարակվողների իրար փոխադարձաբար հասկանալու, հարգելու և սիրելու հարցերը:

Որպէս կարգապահական միջոցներ, Արուսյանը կիրառելի է համարել հանդիմանութիւններն ու նկատողութիւնները, որոշ բավականութիւններից զրկելը, իսկ որպէս վերջին միջոց՝ դպրոցից հեռացնելը:

Արուսյանը մեծ դեր է հատկացրել խրախուսանքներին ու պարգևատրմանը:

20. Արուսյանն իր մանկավարժական անունըն ստացել է եվրոպական մանկավարժութիւնից, հատկապէս այնպիսի խոշորագույն կլասիկ մանկավարժներից, որպիսիք են՝ Ռուսսոն, Պեստալոցցին և Լոկկը: Ընդունելով այդ մանկավարժների դրական ասույթները՝ Արուսյանը մերժել է նրանց սխալ և անընդունելի դրույթներում, հակադրելով իր տեսակետներն ու սկզբունքները:

21. Արուսյանը տվել է մանկավարժական մի ամբողջական սիստեմ, որի շատ դրույթները ընդունելի են և արժեքավոր նաև մեզ՝ սովետական մանկավարժներին համար:

22. Սակայն Արուսյանի մանկավարժական մեծութիւնը միայն նրա մանկավարժական սիստեմով չի վերջանում: Արուսյանը մեծ է հատկապէս նրանով, որ նա այդ մանկավարժական սկզբունքներն իր անձնական գործունեության ընթացքում հաջողությամբ գործադրել է և հայ իրականության մեջ իր հովասարը չունեցող վարպետ մանկավարժ է:

23. Արուսյանն ունեցել է իր հետևողներն ու աշակերտները (Պոռչյան, Աղայան, Մանդինյան և այլն), իսկ հիմա նրան աշակերտում են իր ազատագրված հայրենիքի հազարավոր ուսուցիչները, որոնց պատրաստման գործին այնքան սիրով նվիրվեց նա:

* *

Այսօր մեր դեմքը սևեռած զեպի զարավոր հեռուն, որի գրկում, անհայտության մեջ լուռ հանգչում է մեծ Արավյանի ըմբոստ ոգին, ասում ենք նրան.

«Այն ժողովուրդը, որի ազատագրման համար մաքառեցիր դու և հերոսաբար ընկար անհավասար կռիվում, երախտապարտ կերպով հիշում է քեզ և նշում քո անմահ գործերն ու վեհ անունը: Այն իդեալները, որոնց այնքան ջերմությամբ փափայում էիր դու, իրականացան միայն սովետական կարգերում: Դու ցանկանում էիր ժողովուրդը լուսավորելով փրկել նրան կործանումից և գերությունից, ժողովուրդը փրկեց իրեն, բաց անելով լուսավորության լայն ճանապարհը: Այժմ քո հայրենիքը, սիրելի Արավյան, ազատ է առնավետ: Այլևս սարսափելի չեն նրա համար օտարների սարքած դավերը: Դո ժողովուրդը՝ ռուս և մյուս եղբայրական ժողովուրդների հետ մի ամրակուռ ընտանիք է կազմել և համարձակորեն առաջ է գնում, որն այնքան ցանկանալի էր քեզ: Այժմ քո ժողովուրդը լուսավորված է, քո ցանկացած ուսուցիչները հազարներ են կազմում, քո սիրած մանուկները՝ տղա, թե աղջիկ ուրախ ու կայտառ դպրոց են գնում ու կանչում են քեզ. «եկ, մեր սիրելի և հալածված ուսուցիչ, մենք քեզ կլսենք, քեզ կտրամադրենք մեր լուսապայծառ դպրոցները, կսովորենք, կսիրվենք քեզանից ու մեր սերը կտանք քեզ»: Դու անմահ ես մեր սրտում»:

Ս. ԽՈՒԴՈՅԱՆ



ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐ



ՇՎԵՐԻ ԼԱՅԱՍՏԱՆԻ-Ի ԱՌԱՋԱՐԱՆԻՑ

(հատված)

Ոչ քսան — երեսուն տարուց ավելի ա՛յ իմ ազիզ հեր, իմ սիրելի ազգ, որ սիրտս կրակ ա ընկել, էրվում, փոթոթվում ա, գիշեր ցերեկ լացն ու սուք իմ աչքիցը, անն ու վանն իմ բերնիցը չի պակասում, այ իմ արյունակից բարեկամք, որ մեկ միտքս ու մուրազս ձեզ պատմելի ու հետո հողը մտնելի Ամեն օր զերեզմանս առաջիս տեսնում էի, ամեն սհաթ մահվան հրեղեն սուրը գլխիս պտտում էր. ամեն ըոպիկի ձեր սիրտն ու դարդը՝ հոգիս էրում մաշում էր, լսում էի ձեր քաղցր ձենը, տեսնում էի ձեր սիրուն երեսը, իմանում էի ազնիվ միտքն ու կամքը, վայելում էի ձեր ազիզ սերն ու բարեկամությունը, մտածում էի ձեր կսրցրած փառքն ու մեծությունը, մեր առաջին՝ է՛ն հիանալի Թաղավորաց, իշխանաց դորձքն ու կյանքը, մեր հայրենյաց, մեր սուրբ աշխարքի առաջվան սքանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի անմահ բնությունը ու արած քաջությունները, Մասիս առաջիս էր կանգնած միշտ, որ մատույլ ցույց էր տալիս՝ թե ի՞նչ աշխարքի ծնունդ եմ ես, դրախտը մտքումս էր կենդանի, որ ինձ երազում, թե լուրջ՝ միշտ մեր երկրի անունն ու պատվականությունն՝ իմ առաջս էր բերում, Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ՝ քնած տեղս էլ ինձ ասում էին՝ որ ես իրանց որդին եմ. Եվրոպա թե Ասիա ինձ անգաղար ձեն էին տալիս, թե Հայկա դավակն եմ ես, Նոյան Թոփը, էջմիածնա որդին, դրախտի բնակիչը, դաշտում թե ծամում, չուում, թե տան՝ էն քարերն էլ ուզում էին՝ որ սիրտս պոկեն, հանեն, ուր տեղ որ իմ ազգի ոտը կոխել ա, ու էս օր էլ կոխում ա, շատ անգամ մեկ հայ տեսնելիս, ուզում էի՝ էլած շունչս էլ հանեմ, նրան տամ. բայց ան՝ լեզուս փակ էր, աչքս բաց, բերանս բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կարճ. դանձ չունեի, որ գործով ցույց տալի ուզածս, անունս մեծ չէր՝ որ ասածս տեղ հաս-

նի, մեր զրօքերն էլ գրաքառ, մեր նոր լեզուն էլ ամպասիւլ, որ սրտիս հասրաթը խոսքով հայտնեի. հրամայել չէ՛ի կարող, խնդրեի, աղաչեի էլ՝ լեզուս մարդ չէր իմանալ, չունքի ես էլ էի ուզում որ ինձ վրա չծիծաղին, չասեն կռալիտ ա, հիմար ա, որ քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն չգիտի, ես էլ էի ուզում, որ ասեն «Օ՛հ, էմպես խորը, խրթին շարադրել գիտի, որ սատանան էլ միջիցը մեկ բան չի կարող իմանալ, հասկանալ. ես էլ էի ուզում, որ իմ գլուխս ցույց տամ, որ ինձ վրա զարմանան ու ինձ գովեն՝ թե թե հայերեն շատ խորը տեղյակ եմ: Ով մեկ լեզու գիտի, ես մեկ քանիսը գիտեմ, ինչ՞ գիրք ասես, որ չեմ սկսել թարգմանիլ ու կիսատ թողալ, ոտանավոր, շարադրություն հո՛ւ էնքան եմ գրաբառ գլխիցս դուրս՝ տվել՝ որ մեկ մեծ գիրք էլ՝ է՛ն կդառնա: Էս միջոցումը աստված ինձ մի քանի էրեխեք էլ հասցրեց, սր պետք է կարդացնեի: Սիրտս ուզում էր, պատռի, որ էս էրեխեքանց ձեռքն էլ՝ ինչ հայի գիրք տալիս էի չէին հասկանում: Ռուսի, նեմեցի, ֆրանցուզի լեզվումը ինչ բան որ կարդում էին, նրանց անմեղ հոգուն էլ էին՝ էնպես բաները գիր՝ գալիս: Ուզում էի շատ անգամ մազերս պոկեմ՝ որ էս օտար լեզուքը ավելի էին սիրում, քանց մերը: Բայց պատճառը շատ բնական էր. էն լեզվորներումը նրանք կարդում էին երեւի մարդկանց գործքերը, նրանց արածներն ու ասածները, նրանք կարդում էին է՛ն բաները՝ որ մարդի սիրտ կարող է զրավիլ, չունքի սրտի բաներ էին՝ ով չի սիրիլ՝ ով չի ուզիլ լսիլ՝ թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվը Խնչ զատ են, բայց մեր լեզվումը՝ թե էսպես բաներ ըլին, թող՝ աչքս հանեն: Էլ ընչով էրեխին քո լեզուն սիրիլ տաս: Գեղըցու վրա ջովահիր ծախիլ, հա, շատ լավ բան ա, ամա որ կարողություն չունի, մեկ կտոր ճաթի հետ էլ չի փոխիլ քո տված անգին քարը:

Է՛ս հո էս՝ Եվրոպիումն էլ որ չէի կարդում բազի զրօքերում, թե հայ ազգը պետք է՝ որ սիրտ չի ունեցած ըլի որ էնքան բաները զլխովն անց են կացել, մեկ մարդ էլա չի դուրս եկել, որ մեկ սրտի բան գրի, ինչ կա՝ եկեղեցու վրա յա, ասածու ու սրբերի, բայց հեթանոս Հոմերի, Հոբացի, Վիրգիլի, Սոֆոկլեսի, զրօքը՝ էրեխեքն էլ զլխատակներին ունեին, չունքի բոլոր աշխարհի բաներ են: Թե ասեի՝ բոլոր եվրոպացիք են անխելք, ան-

հավատ, որ աստծու բանը թողած, էսպես ծռախ մտախ բաների հետ էին ընկել, հիմարություն կրելու թե չէ մեր նարեկը թողած, ախր ինչպէս էին նրանք էն դրքերին հավանում։ Լալ գիտում էի, որ մեր ազգն էնպես չէ՛ր, ինչպես նրանք ասում էին, ամա լի՛նջ անես, անաղուն ջաղացի քարն՝ էլ չի պտիտ գալիս, ում ասես։ Միտք էի անում՝ որ թե կտրիչ մարդ ասես, մեր միջումը հազարաւորն են էլի ու էս օր էլ կան։ Թե խելոք խոսք ասես, մեր պառավներն էլ հազարը գիտեն։ Թե աղ ու հաց ասես, սեր, բարեկամություն, քաջություն, երեկի անձինք՝ ասես, մեր, գեղըցոնց սիրտը էլ ա լիքը էսպես մտքերով։ Առակ, մասալա, սուր-սուր խոսքեր՝ որ ուզենաս հո՛ էն հետին ուսմիկ մարդը՝ մեկի տեղակ հազարը կասի։ Ախր ինչ պետք էր արած որ մեր սիրտն էլ ուրիշ ազգեր իմանային, մեզ էլ գովեն, մեր լեզուն էլ սիրեն, մնացել էի տարակուսած։ Լալ գիտի, որ թե օսմանցովի, թե ղզլարշի երկրումը՝ ինչքան էնպես երեկի, խելոք, հունարով մարդ են էլել, ինչքան խանի՝ շահի, սուլթանի ղռներին սիրեկան աշրդ, լալ խաղ ասող, ոտանալոր շինող մարդ են էլել, շատը հայ ա էլի։ Ահնակ Քենշի Օղլին, Քյոս Օղլին բավական են, որ ասածս սուտ չի գուրս գա։ Թո՛ղ էս օր էլ մեկ մարդ Գրիգոր Թարխանովի հետ խոսա, նրա ասած խոսքերն, նրա էն ճարտար լեզուն, նրա էն հիանալի բոյն ու պատկերը, նրա հենց մեկ հունարը տեսնի, որ հարիւր տեսակ դանազան մարդի ու ազգի՝ լեզուն, շարժումնքը, նստիլ վեր կենալը էնպես ցույց կտա, որ քոռանամ թե Նվրոպիո էն ընտիր թեատրներումն էլ տեսած ըլիմ, ու վարժատան երես հո՛ իր օրումը՝ կարելի յա, էն ժամանակը ըլի տեսած՝ որ այրբենը մեր միջումը դարով էին բռնում, գյուլլով վեր քցում, էն ժամանակը կիմանա, թե հայոց միջումն ինչ հունար կա։

Էսպես բաները մտածելով, օրս ու ումբոս մաշվիլ էր։ Շատ անգամ ուզում էի իմ ղլուխս մահու տամ։ Ձէի իմանում թե սրա չարեն լի՛նջ կըլի։ Թո՛ղ լսողը չհավատա, ամա էս ցալն էնպես էր սիրտս տոկ, որ շատ անգամ դժվածի պես ընկում էի սար ու ձոր, ման գալիս, մտածում, էլ եղ սիրտս լիքը տուն գալիս։ Հենց է՛ս էր պատճառը՝ որ մեկ օր էլ ամառվան դաստուրի ժամանակին՝ աշակերտներս՝ որ առավոտը թողի, ճաշիցը եղ՝ ընկա էլի սարե-սար։ Ճարս կտրվեց, գնացի նեմեցի կոլոնիեն՝ մեկ նեմեց՝ բարեկամի մոտ, նրանք էլ ինձ վրա ցավելով՝ իրեք օր չթողին, դամ քա-

զնաքը: Բայց քաղաքումն՝ իմ սիրելի աշակերտները, ու ծանոթ բարեկամքը՝ իմ սուքս վաղուց էին արել: Հենց իմացել էին, թե Քուռն եմ ընկել, չուների ամեն առավոտ, բիզուռ դնում էի, լողանում, էլի իմ, իմ ազիւ, իմ սիրելի աշակերտներն էին ընկել եզեւվիցս՝ որ բալքի մեկ բան էլա իմանան: Մեկ առավոտ փանջարումը նստած՝ էլի մտքիս հետ էի ընկել, որ նրանք առաջովս անցկացան: Որ չտեսա նրանց, հոգիս տեղըհան էլավ: Իմ ու նրանց էն օրվան իրար տեսնիլը՝ ով կարա պատմիլ. ով սիրտ ունի, ինքը կիմանա: Բալքի թե զերեզմանումը էս ձեր սերը մտքիցս գնա, մայ իմ սիրելի, իմ ազիւ բարեկամք. թե չէ, որքան էս կապույտ երկինքը զլիսիւ ա, շուռչա բերանումս, ձեզ, ձեզ սուրբ պետք է համարիմ ինձ համար, ձեր արեւն մեռնիմ:

Բայց ան՝ Թրբա երկինքը մեկ կերպ մնացել՝ որ մարդի սիրտը մնա: Հենց մի փոքր մտքիս արեւը երեւաց թե չէ, էլի սե սե ամպերը զլիւնները բարձրացրին, էլի կայծակ ու որոտումն սրտումս մեյդան բաց արին: Զուրն ընկնիլ՝ էլի չէի կարող, չուների աստուծո ահը մտքումս, անմեղ քոսփիս ձենը ականջումս էր, սերն ու ծնողական գուլթը շիգարումս, ես գինջանայի, եթմին ձվ պահեր:

Բանը հենց էս էր՝ որ ասում էի մտքումս՝ թե նստիմ, ինչքան խելքս կրերի, մեր ազգին դովեմ, մեր երևելի մարդկանց քաջությունները պատմեմ, էլի մտածում էի, թե ում համար զրեմ, որ ազգը լեզուս չի հասկանալ: Թեկուզ ուսներին, նեմեցներին, յա ֆուանցուկերին զրած, թեկուզ գրաբառ՝ տասը կլի որ հասկանային, բայց, հարիւր հազարի համար, թեկուզ իմ գրածը, թեկուզ մեկ քամու ջաղաց: Ախր որ ազգը էն լեզվովը չի՝ խոսում, էն լեզուն չի հասկանում, սաքի հենց բերնիցդ էլ ոսկի վեր անիր, ձեմ պետք է ասես: Ամեն մարդ իր սրտի խարշ բան կուզի: Բո դարբու փլավն ինձ թնչ օգուտ, որ ես չեմ սիրում: Ում հետ էլ որ խոսում էի, էն էին թանխա տալիս՝ թե մեր ազգը ուսումնասեր չի, կարդալը նրա համար գին չունի, բայց ես տեսնում էի, որ էս մեր կարգալ չսիրող ազգը Ռոպենսոնի պատմությունը, Պոնտե քաղաքի հիմար գիրքը ձեռնե ձեռ էր ման անում: Էս էլ լավ գիտեի, որ ինչ երեւելի ազգեր կան, բոլորն էլ երկու լեզուն ունին, Հին ու Նոր: Ախր թե լուսավորյալ լեզուն լավ ա, ու քարերն էլ պետք է՝ տրաքին ու հասկանան, էլ տոնլուդ, նշան, պատիվ ուր են տալիս գիլամդին: Էն լեզվագետ իմաստունը՝ թոզ գնա, կանգնի, գոռա,

Չանը դուռս դա, լսողը թո՛ղ ինքը հասկանա, լուսավորյալ գլուխն ափսոս չի, որ ցավի:

(Շնորհր երկեր I. հատոր, 1939 թ. 6—9)

Աղասին հնազանդ որդի էր: Ղորդ ա մորը ճշինչ չասեց, լույս, բայց ասածը մեկ անկաշով մտավ, մյուսովը դուռ էլավ: Ոտի տակին կրակ էր վառվում. սիրտն ուղում էր բերնովը դուռ դա: Դեղումը մեծացած ռամիկ տղա՝ հազարից մեկ անգամ ժամի երես չէ՛ր տեսել, մեղի ձեն չէ՛ր լսել, կողքերն ու գլուխը չուղում, սարում հաստացրել: Մեկ զատկին, մեկ էլ ջրօրհնեքին՝ սասանի աչքը քոռ՝ զորդ ա, զանգակի ու պատարագի ձեն իմանում էր, բայց վա՛յ էն իմանալուն, ճշ սրտին էր քյար անում, ճշ ջանին: Նրա համար ժամն ու գիլի հարսանիքը մեկ էր. ճշ բառն էր իմանում, ճշ զորությունը, ծունը զնելիս, կամ չոքելիս էլ մեջքն ու ոտներն էին ցավում. ծալապատիկ նստում էր, բեղարում էր, ոտի վրա կանգնում էր, չէ՛ր կարում համբերի: Շատ անգամ ճարը կտրում էր, դուռն էր գալիս ժամի հայաթը, մեկ գերեզմանաքարի վրա նստում, մեկ կուշտ քնում, էլ ետ ներս մտնում: Շատ անգամ էն վախտին էր ժամ գնում, որ ամեն բանը կերել պրծել Օրհնյալ կղերուքն էին ասում: Ո՛չինչ. մեկ երկու խաչ էր հանում երեսին, ժամի դուռը պաշում, ետ դառնում: Սաքի մենք է՞նպես չենք անում, կոպիտ զեղըցու վրա թնչ ենք զարմանում, կամ ծիծաղում: Գրի սեն ու սպիտակը հո՛ էսպես տեղը տերտերներն էլ բռանց էին ջոկում, ավետարանն կարթալիս՝ հազար անգամ՝ յա չեշմակը (զյոզուկը) դդում, յա տիրացվի, մղզառու վրա բարկանում, յա զբաղալը զոշներին քաշում. յա գլուխ երես զրքի միջումը կորցնում, մեկ պատիկ մոմ էլ ձեռներն առնում, յա մոնթի գլխին խփում, որ մոմը գուզ բռնի: Շատ անգամ էլ որդիանց որդի մեկ փխ՝ անմարս, դժարատամ, գլուխը կոտրող բառ էլ որ չէր ռաստ գալիս, հենց գիտես՝ թե սատանի թամբը կորավ, շատ կռանալուցը, մոմը մոտ բռնելուցը, յա դիրքն էր էրվում, յա նրա միտուքը: Ամա էսպես բառեր վարավուրդ էին արել, մոտանալիս՝ կամ գլխովն էին պտտում, կամ մեկ գիրն ասում, մյուսը կուլ տալիս. յա թե չէ, ՍԲ-ը սուրբ ես կարգալու՝ տեղ՝ սոխ կամ սխտոր ասում, ՍՂ-ը սողմոս ասելու տեղ՝ դսրախ, ու ժամօրհնողն էլ՝ յա՛ չոռ էր ասում, յա՛ չէ լսում: Մեկ գիր պակաս ժամանակին հո՛ աստված հեռու տանի. ժամ ու ժողովուրդ, տերտեր, տիրացու իրար գլխով էին

դիպչում ամեն բերանից էնպես մեկ խոսք էր դուս գալիս, որ գուռնի փոխանակ՝ դափ էին ածում, մի տեղ ցխավելը՝ յա քնոցը կարդացողի ձեռք տալիս, տպողին օրհնում, կազմողին գովում, ու գեղարանից պրծնելիս՝ աստծուն էնքան իրանց հոգու համար շնորհակալություն չանում, որքան, զբքից, ավետարանից ազատվելու խաթեր, Թե մեկ վարդապետ էլ պատահում էր էնպես վախտը, աստված հեռու տանի, էշը մնում էր ցխումը խրված, կարդացողի ոտն ու ձեռք դող էր ընկնում, լեզուն կապվում։ Զէ՛ դարմանալու, ինչ անեն խեղճերը։ գեղերումը վարժատուն չունին, քաղաքներումը օրինավոր վարժապետ ու շատի փորում հինգ օր ման գաս, մեկ ալբի կտոր չես գտնիլ էն էլ շատ ա, որ իրանց ջուրը ջրամանիցը հանում են, իրանց բանը յուր տանում, ժամի կարգը կատարում։ Ամենա էլ լավ գիտենք՝ Թե մեկ մեխքն ա, ամա հիմիկ խոսալու վախտը չի, եղս կասեմ, ի՞նչ ասեմ իմացողն իմացավ ու ականջի տակն էլ բալքի քորեց։ բայց ականջի տակը քորելով՝ փոր չի կշտանա, լավ է մեկ օր առաջ իր բանը կարգին բռնիլ ու չըսիլ՝ «է՛քուց, էքուց» էքուց էլ էս օրվանից ա, ընչանք էքուց, էլ օր կը քցենք մեր բանը՝ գելը սուրուն կը տանի, ով անկաջ ունի, լսի՛ Թե չէ ոտը քարին կառնի։

(Ընտիր երկեր, I հատ, 1930 թ., (էջ 16—18)

...Փողն աղքատին պետք է տված։ Դեն քցես լավ ա, քանց էն մարդին տաս՝ որ քեզ մեկ շնորհակալություն էլա չասի։ Հազար օր նրանց տանդ պահի, պատիվ տո՛ւր, մեկ որ ոտդ մոտենեն ա ընկնում, մեկ սառը ջրի էլ լայաղ չեն տեսնում։ Էս հո աստված չի վերցնի։ Մեղանից առնում են, իրանց բարեկամներին շենացնում, հետո մեզ վրա էլ մեծ մեծ խոսում։ Ասենք՝ Թե ամեն բանի վրա լիս չենք ընկնում, մեր արուսը պահում ենք, որդի, երեխա իշի պես մենձանում են, նրանց հոգսը չեն քաշում, վարժատուն չեն բաց անում, չեն կարթացնում, հենց ուղում են՝ Թե մեր դատածը խլեն։ Մի գնա մեչիղը, ամեն մեկ մոլլա էն անհավատ տեղըներովը՝ քառսուն, հիսուն մեծ, պատիկ գլխին հավաքել, առավոտից մինչև մութը ուսումնա տալիս, իր մասաբի բանը սովորցնում։ մերոնք հենց իրանց քեֆն են արամիշ անում։ Ո՞րի արածն ասածուն դիր կդա, ձեզ եմ հարցնում. ասում էլ ես, աղաչանք անում, անկաջ-վեր են անում, մեր որդիքն էլ մեզ նման է՛լ ուտում, է՛շ մենձանում, չենք գիտում, Թե մենք սովորցնենք. գիտացողն էլ անկաջը

կալել ա, ձև մասնա թե սուտ եմ ասում ա՛յ ջամբհաթ՝ մատնե-
րըդ կոխեցե՛ք, աչքս հանեցե՛ք, թե չէ՝ ախր մեր ազգը, որ խեղճ
ա մնացել, թրի, կրակի հսիր, բոլորի պատճառն էս ա՛ որ մեզ
մեկ ասող չի ըլում թե մենք ով ենք, մեր հավատն թնչ ա, ինչի՞
համար ենք եկել աշխար. քոռ գալիս ենք, քոռ դնում չա լավ:
հաջի էլ ա օրը հարիր անգամ ջուր խմելիս, կամ կուտ ուտելիս
զլուխը ցածացնու՛մ, բարձրացնու՛մ, էստով ի՞նչ կդառնա: Ո՞վ
չի գիտի՝ թե երկնքումն աստված կա, մեզ համար դատաստան: Ամա
պետք է իմանանք էլ՝ թե երկրումը ի՞նչ պետք է անենք, որ էս
դատաստանի տակը չընկնինք՝ է՛: Ախպեր՝ էսպես չի՞, դուք ասե-
ցե՛ք. ես մեղա, զլուխ քարը: Տո եղին թուրքն էլ ախր Ղուռանի
շատ փայլ անգիր գիտի, ես մեկ չայր մեր չեմ գիտում, ախր թնչ
իմանամ թե հոգիս ձեր կերթա, մարմինս ո՞ւր. ախր իմ խեղճ երե-
խեքն ինձանից ի՞նչ պետք է սովորին: Շատ բան ասիլ չի՛ ըլում
Զի ըլի՛ որ մարդ՝ իր մատը իր աչքը կոխի, իր ձեռով՝ իր զլխին
յա երեսին թաղի. ամա ի՞նչ անեմ, սիրտս պատռումա, որ մեր ողոր-
մելու թյուրը միտքս եմ բերում: Թո՛ղ ինձ կարթացնեն, որդուս
ուսումն տան, մեզ ճամփա չհանց տան, ճամփից, հավատից չհա-
նեն, սատանի փայ ըլիմ, մեկ բուռ հոգի, մեկ դադ կտավի, մոմ,
պատարազի հասրաթ, թե աչքս ուղեն, չհանեմ՝ իրանց տամ, որ-
դիս ուղեն չմորթեմ, մատաղ անեմ:

(Ծրկեր, I հատոր, 1939 թ. (էջ 34—36))

Ելավ չի սկսած բանը թողալ ու էսպես քարոզ ասիլ, ես էլ
գիտեմ, ամա սիրտս չի գիմանում, թնչ անեմ: Ելի մեր դեղըցոնց
ասածն ա միտքս գալիս: Պալի մեղը չի՛, որ ճամփից դուրս են
էկել, իրար մոռացել, մեզ նման կարդացողի ոտները պետք է ծա-
ռիցը կապած, ամսով սոված պահած: Ախր թե շատ առնողիցը շատ
կպահանջեն, բա դատաստանի օրը ինչ ջուղար կտան ինձ նման
զրի սեն ու սպիտակն իմացողները, որ էլ ուրիշ բան չենք ֆիքր
անում, հենց ուղում ենք՝ լավ ուտենք, լավ խմենք, քյահլան ձիու
վրա նստենք չալ չալ մանիթները ջրներումս չխկչխկացնելով,
ձեռներս դողդողալով, խաղացնելով ման գանք, քեֆ ու մարաքյա
անենք: Շինած արագ կոնձիլը, Կախթու գինին անոշ անոշ խմելը,
կառնթով, դրոշկով՝ փառավոր, ուռած ուռած ման գալը, գառ,
դումաշ հաքնիլը, մաշիլը, նոքար բեքարի՝ ձեռին ջուր ածիլը,
երեսի հով տալը, տաք յորդանի տակին, փափուկ դոշակի միջում
չնթռին ու թավալ տալը, ոտ ու զլուխ դարդարելը՝ մեզ թե դը-

Ժողքը չտանին, զրախտը ըսկի չեն տանիլ՝ հարկիդ էդ երեխեքն էլ գիտեն, կասեո ինձ, բայց ինչ անես, բանը գիտենալը չի, բանն անին ա: Ես ինձ վրա եմ ասում, Թող ուրբշի սիրաը չնեղանա: Ընչանք փողը չեմ առնում, ո՛չ գիրք եմ տալիս, ոչ աշակերտ կարգացնում: Լազգին ու թուրքի մուլեքը էնպես չեն անում, անփող են իրանց աղդի երեխեքը կարգացնում, էլի աստված նրանց ողորդ հասցնում ա: Հենց մե՛ղ պտի սոված սպանի: Ամեն մեչըդի հայաթում գեղ տեղարեմքն էլ՝ մեկ մեծ վարժատուն կա, ուր տեղ երկու, երեք լեզու են սովորում, մեր եկեղեցեքանց հայաթներումը լազլագն էլ բուն չի գնիլ, բա ի՞նչ կլի՛ր՝ որ աղդի սիրտն էլ քիչ քիչ չի հովանալ: Ով թուր չի առել ձեռքը, թրի զազրն ի՞նչ կիմանա, ով թվանք չի՝ քցել իր օրումը, ֆորս ի՞նչպես կարա անել:

Գրդին հազար տարի ասա՛, թե հնդուհավի միսը, զարու փըլավը հիանալի կերակուր ա, տո՛՛ որ նա՛՛ իր օրումը նրանց համը չի առել, իր սոխն ու մածունը, թանն ու ճաթը կթողա քո ասածի՛ն ահանջ կանի, խելքդ ի՞նչ ա կարում: Ասենք ես չառեմ, սաքի դու չե՛ս գիտել, որ երեխի բնչաք ատամները դուս չի գան, կոշտ բան չի պետք է տված: Դու ուզում ես անհիմքը առն շինել, կըրակ չի՛ վառած՝ հաց թխիլ, մմի ձերը թողել ես, մարդ ես կրակին դեմ անում, առանց պատրուքի. ուզում ես ճրաքուն ինքն իրան քեզ լիս տա: Կացինը դնում ես ծառի քսքին, դու քնում, յա ձեռներդ խաշում, զրադին կանգնում, ծառն ինքն իրան քեզ ցալս կդառնա. խելքդ ուր ա: Խմորն առանց թխալմորի չի գալ, չի. նալս տեղը ոտներդ դետին մի՛ ձեծիւ: Անբանացնիլ թուրը կմանգոտի, նամ տեղի ցորենը կրորբոսի: Անվարիլ հողը թե ցանեցիր, դուրդ ու զուշը կուտի սերմդ: Առաջ մեկ վարի՛ր, հիմքը քցի՛ր, մեկ աղդի աչքը բաց արա՛. դուդ ճամփեն որն ա, էն ճամփովը տա՛ր. սաք ու ձոր մի քցի՛լ. դու նրան քա սերը ցույց տա՛ւր, տեսնիմ՝ թե նա քեզ չի սիրիլ: Ուրբշները մեղ բամբասում են, հերիք չի. մենք էլ ենք մեր ոտիցը մեղ ու մեղ ճուլակ ըլում, էստով հո բան չի դառնալ: Հայոց աղդի ջանի՛ն դուրբան՝ մեկ նրա երեխին ուռում տա՛ւր, նրա էն լուսաթաթախ հողին կրթի՛ր, կրթիլ եմ ասում, թուղթ խաղալ, ֆռանցուղեքեն խոսիլ, անդիր բերան անիլ, գլխիցը դուս տալ չեմ ասում ու շարական, փոխ յա շխալիավ ուտիլ սովորցընիլ, որ մեզ էս տեղն ա քցել, տեսնիմ՝ թե ջան կտա քեզ, թե չէ՛: Մինչև գարունըը չգա, ծառը չի՛ ծաղկիլ, առանց ամառի պտուղ չի

հասնի՛լ, դու ուզում ես, որ ձմեռվան էն սաստիկ ցուրտ, սառած ժամանակին վարդի հոտ առնիս քո բաղումը, հասած պտուղ քաղես քո բաղումը, էդ էլմծ բան ա կամ, կլի՛ բսկի: Պինդ ոսկոռն էլ՝ որ շատ ծալած մնում ա, թմբբում ա, ճում ա ընկնում: Երկու օր որ թեք ես ընկնում, քամակդ ցալում ա, ոտներդ ման գալիս բեղարում, տո ախր հազար տարի ա, էս բեռը մեզ վրա, էս բըխովը մեր ոտումն ա էլի, ախր որ ասում ես՝ վաղի՛ր, բաս ի՞նչ կանեմ, որ գլխիս վրա վեր չեմ ընկնիլ: Եարթով սոված մարդին մի՛ն կուտացնեն, ցուրտը տարած տեղը կրակի՛ր դեմ կանեն: Անձողի հոտը դիպած գլուխը ձնմե՛ք կգնեն, թե կրակումը: Խեղճ ազգի հոգին մինչև էսօր քաղել են, հազար տարվա յարա ունի սրտումը, որ դեռ չի սաղացել: Էնքան դառն արտասու՛նք ա կուլ տվել, որ ո՛չ աչքումը լիս կա, ո՛չ բերնումը համ, ո՛չ սրտումը եղ. դու հենց ուզում ես՝ որ էստո՛նք մեկ սահաթումը անց կենա, թնչպես կըլի: Տո որ մեկ գերեզմանատան համար, մեկ դարտակ ողորմի տալու խաթեր քո ազգի պատվական խշխա՛նքը՝ պարոն Զավրավմ, Խերեղիմովը, Դավիթ Թավամշովը, Մովսես տեր Դրիգորովը հազար մանեթներով կխարջեն, իրանք իրանց տեղ կրաշխեն, ժամ կշինեն, խալիս ինքն իրան կերթա, իրան հացով մշակություն կանի անփող, բաս խեղճ թնչ տեղ ա, էսպես ընտիր խշխա՛նքը, էսպես բարեսիրտ ազգը՝ վարժատուն շինելուց, մեկվմեկու օգնելուց կփախի՞ն, որ մեկ համե առնին: Զուրը դարիդուս չի՛ գնալ, սիրելի, չի՛ ճամպիկն գտիր, առուն սրբի՛ր, քար ու քոլ դեն ածա՛, տեսնիմ, թե ջուրն ինքն իրան կգւմ, թե չէ՛:»

(Նույն տեղը, էջ 74—76)

«Զեղ ես ասում՝ ձեզ՝ հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անումին մեռնիմ, ձեր արեխն դուրբան, տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք: Մեկ դատարկ լեզուն թնչ ա, որ մարդ չկարենա սովորիլ: Բաս չե՞ք ուզիլ, որ դուք էլ զբքեր զբք, ազգի միջումն անուն թողաք, ձեր զբքերն էլ օտար ազգի բարգմանեն, ձեր անունը հավիտյանս հավիտենից մնա անմահ: Ինչ կուզե ֆրանցուզերեն, նեմեցերեն գիտենանք, մենք չենք կարող էնպես բան զբիլ, որ նրանց միջումն անուն ունենա, չունքի նրանց միտքն, նրանց սիրտն ուրիշ ա, մերն ուրիշ. մեկ էլ որ նրանց միջումն էնքան զրոգ կան, որ ո՛չ թիվ կա, ոչ հետար: Ռուսաց լեզուն մեր տերությանն ա, պետք է ամենից առաջիկ համարինք՝

հետո մեր լեզուն ձեռք բերենք: Բայն անի սիրտը չի ուզիլ՝ որ դուք էլ ոտանավոր դրեք, անի միտքը անի խորհուրդը հայտնեք, որ այլ ազգք իմանան՝ թե մեր միջուկն էլ ա էլիլ երեւելի դրող ու մեր լեզուն դէս ավելի սիրեն: Աստված կյանք տա էն ծնողացը՝ որի որդիքն ինձ մոտ են: Նրանց առաջին խնդիրն միշտ էն ա էլիլ, որ նրանց որդիքը հայերեն լավ գիտենան: Գերեզմանն էլ որ մըտնիմ, նրանց էս սուրբ խոսքը մտքիցս չի դնալ:

(Նույն տեղը, էջ 81)

«Մարգս որ ծնվում ա, մեկ գունդ մտից ավելի՝ էլ ոչինչ չենք տեսնում: Խաբիք են անց կենում, որ քիչ-քիչ ստն ա ըլում, քիչ-քիչ լեզու, ուշ ու միտք գալիս, անոր բերանը տանիլը ու դարգակ հաց ուտելին էլ ա հաց դատիլը չեմ ասում, սովորում: Բայց վաճ էն էրեւելին, վաճ էն ազգին, որ աչքը էնպէս գոգում բաց կանի, որ լսի տեղ խափար կտանի: Աչքը բաց գուռ ճափեն կթողա, քաղեքար կընդնի: Վաճ էն ազգին՝ որ բնական օրենքը կթողա, անբնականին կհետի, որ էնպէս խրատ տալոյ չի ունենալ, որ նըրան հոգի տա և ոչ հոգին էլ հանի: Երբ որ լավ կարգացող էր էլիլ, երեւելեանց ջուկ, ժողովրդին ջուկ՝ դիշեր ցերեկ խրատ էր տալիլ, կարգացրել, լուսավորել էր, հիմիկ մեր ազգը է՞ս հալին կըլեր, է՞տեղ կընդներ: Սարի հայվանն էլ մեղանից լավ ապրում հարամուց, ֆորսկանից յա փախչում, յա վրա թռչում, կտրատում, գլուխը պահում: Ժախ բունն էլ որ քանդում ենք ջովմում, թեին դլխին անում:

Մենք ծախ դպար էլա չկանք, որ մեր բունը պահենք: Ի՞նչ օգուտ էն դիրքն ու ավետարանը, էն խաչն ու երկրպագութունը որ մենք չենք հասկանում: Գիտնի տակն էլ շատ գանձ կա, մեղ ինչ: Ա՛խ՝ մեր կարգացողներ, մեր կարգացողներ: Ինչ կլի՝ որ ինչքան ժամանակ քնի, քեֆի հետ են անց կացնում, ավելի փողի թամահ տնում, էսպէս բանի թամահ անեն, մեղ լուսավորեն, իրանք էլ թշնամուց, հարամուց ազատվին, մեղ էլ ազատեն: Մարգս մեկ անգամ է աշխարհք գալիս, էնպէս պետք է անի, որ գուռ գալիս, էս դիտումը անունը հիշվի, տոնվի, էն գինումը հոգին փառավորվի, լսի փայ ըլի: Բայց ինչ օգուտ՝ որ սասածս քարերն էն իմանումա:

(Նույն տեղը, էջ 199)



ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ

ՈՒՐ ՆԿԱՐԱԳՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ ՍՐԱՄԻՑ ՏՂԱՅԻ ՈՒՐՈՒՄՆ՝ ՁԵՎԱՑԵԼՈՅ
ԻՐԻԵՎ ՏԿԱՐԱՄԻՑ ՈՔ ԵՎ ԳԻԺ, Ի ԺԱՄ ՀԱՐՑԱՓՈՐՁԻ

(Հատված)
ԳԻԺՆ.

Ո՛ւր դուք գեղեցիկ մանկության օրեր՝
Ո՛ւր հեռացաք դուք մեզանից շուտով,
Էլ ոչ սար ոչ ձոր, ոչ ջուր, ոչ զաշտեր
Մեզ չկն մխիթարում իրանց ծաղկներով,
Աչքս բաց արի ինչպես երազում
Ամեն բան ինձի քաղցր էր երևում,
Բայց ինչքան մեր չափը հասնում ենք, առնում,
Էնքան օրեցօր ախուր ենք տրտում,
Ո՛ւր մեր էն սրտի ուրախությունը,
Գնացին, հեռացան էս աշխարհումը,
Էլ ո՞վ մեզ կտա էն ազատությունը
Ամեն բան անել՝ ինչ կա մեր սրտումը:

Թե մեր ինձ ճանաչեցի, թե երբ սկսա խոսիլ ինձ չի հայտնի
Նրբ խելքս դուլխս եկավ: աչքս բաց արի ինչ որ տեսա, հենց գի-
տում էի՝ թե աստված ինձ համար ա ստեղծել: Մեկ կողմս իմ օրորոցն
էր, մեկ կողմս իմ խաղալու բաները. աչքս նրանց առնելիս՝ էն-
պես էի իմանում՝ թե քանց ինձ էլ աշխարհումը բախտավոր՝ մեկն
էլա չկա: Էնպես էի իմանում՝ թե աշխարհի թագավորը հենց ես
եմ: Ո՛վ ասես՝ ինձ էր սիրում: Ո՛վ ասես՝ ինձ էր զրկում և ձեռն
առնում: Իմ մեկ դարդակ խոսքն էլ՝ ամենին գիր էր գալիս: Իմ
մեկ հիմար ծիծաղն էլ՝ ամենի սիրտը շահում և մխիթարում էր:
Իմն էր՝ իմ ծնողաց գիրկը: Հերս էր նեղանում, մորս էր տալիս:

մերս էր նեղանում հորս էր տալիս։ Վարդի պես հոտ էին առնում, խնձորի պես խաղացնում։ Մեկ տեղս ցավելիս՝ հազար անգամ խտտում և համբուրում էին ինձ՝ որ սիրտս առնեն։ Մեր տան իշխանը ես էի։ Ասածս ասած էր, ուզածս՝ ուզած, արածս արած։ Առավոտը լուսանում էր՝ թե իրիկունը մթնում, իմն էր խաղալը, կռիլը, դես ու դեն վաղիլը, շորերս պատռելը։ Փետե ձիս՝ իմ հողին էր։ Սաղ օրը նրա վրա քուշեքը չափում էի, ու՝ էլ ոչ հաց, էլ ոչ ջուր բնավ միաքս չէին գալիս։

Էնպես իմանում էի՝ թե է՛ն երկնքի գեղեցիկ աստղերը, է՛ն արեգակը և լուսինը, է՛ն դաշտերի ավաճն ավաճն ծաղիկները՝ հենց ինձ վրա են էնպես խնդում և ծիծաղում, Հենց ինձանով են՝ էնպես միտթարվում։ Էնպես էի կարծում՝ թե հենց է՛ս քեֆին կմնամ, է՛ս սիրտը կունենամ, է՛ս օրերը կքաշեմ։

Բայց ախ՝ անիրավ աշխարհ՝ որ ինձ էսպես խփեց։ Հենց փոքր մեծացա թե չէ՝ ամենն էլ իրանց ուժը ինձ վրա են փորձում։ Ամենն էլ իրանց կուժն ու կուլեն՝ հենց ինձ վրա են կոտորում։ Մեկ բան անելիս՝ խկույն որը գլխիս ա խփում, որը քամակիս։ Կատուն տեղիցը շարժում ա, ես եմ մեղավորը։ Ով մեկ բան ա անում, ինձ են մեղ դնում։ Պառաված ձիուն՝ ավր էլ մի վարի կըտա։ Էս հիմիկ իմ բանն ա դառել։ Հին ապրանքը գին չի ունենալ։ Ես հիմիկ հին ապրանք եմ դառել։ Վաճ... վաճ... ափսոս իմ օրերին։ Ափսոս իմ անցկացրած ժամանակին։ Ինչի՞ էղպես շուտով դնացիք։ Ընչի՞ էղպես թեզ՝ ինձ ձեր տեսությունիցը զրկեցիք։ Ախ՝ իմ անմեղ մանկություն, քո համը, քո քաղցրությունը էլ հավիտյան չեմ առնիլ։

Հիմիկ էլ զոռ են անում թէ պիտի կարթաս։ Հարամ ըլի է՛ն հացն էլ, է՛ն շորն էլ, է՛ն ապրուստն էլ, որ ինձ տալիս են։ Էլ ոչ աչքս ա քուն գալիս, ոչ սիրտս ա հանգստանում։ Գիրքս տեսնելիս՝ հենց իմանում եմ, իմ հոգիառս ա։ Վարժատան անունը լսելիս՝ միտս ջանումս հալչում ա։ Նրանի տասն օր նախիրը զրկեն, քանց կես սհաթ վարժատունը։ Ի՞նչ անեմ՝ մեկ հիվանդություն էլա չի պատահում սատանի աչքը քոռանա՝ որ մեկ քանի օր պարկիմ, ու իմ մուռտառ զրքի երեսը չտեսնիմ, թե ասում եմ, առավոտը տանիցը դուրս գամ, գնամ մեկ պատի տակի կուշ գամ, ու բիկունը գամ տուն, փորս ա դադեղեղատ անում։ Զէ՛՛ տեսնեք թե ջերս էլ հացով լցնում եմ՝ որ փորիս ջուղարը տամ, իմ անաստված վար-

ժապետն ա ետեիցս մարդ զրկում, էն ժամանակը վնյ իմ օրին վնյ իմ արևին: Մեկ մկան ծակն էլ, որ հազար թուճանով ուզենամ առնիմ, չկա: Դորդ աս՝ բազի անդամ ասում եմ՝ թե զլուխս, ցավում էր, յա մաշեք չուճենի, ու էստով զլուխս պրծացնում եմ, ամա էս էլ չի օգտում: Ամեն օր զլուխ չի ցավիլ, ես էլ լավ զիտեմ, ձեր մեա վարժապետս՝ որ հազար ինձ նման սատանի՝ աստմի՛ն ա խփել, ու ճամբու. զրելը — Այր, բեմ. զլխիդ զմբեմ, Գիմ, դա, չոխին հազիր ա: Ե՛յ, դա. հա՛ կաց, ու հազա՛: Է, եթ. խազս մնաց եզ: Թո, ժե. մեկ բան չամե: Ինի, լյուն. իծանա եկան տուն: Խե, ծա կարթացողն է՞ծ ա: Կեն, հո, եսիր չեմ հո: Ձա, դատ. մնացել եմ սախատ: Ծե, մեն. ամեն, քուսանա, ո՛վ ձեռք չի վերցնել մեղմեն: Հի. նու, շա, ո, չա, պե, ջե, ոա, սոված մեռա: Սե, վե՛վ, տյուն, բե. ծանր է: Յո, հյուն, փյուր, քե, իշի քուրք է: Օ, ֆե, ձվվե՛հ, զլուխըս տրաքեցավ: Մի քիչ տեղ արա՛, որ սիրտս հովանա: Էնքան ասել եմ է՛ս...է՛ս...է՛ս կորած մոլորած անուճնեբը՝ որ ասամենքս թուլացել են, զլուխս էլ դուդ չի մնացել:

Էս պրծար, հիմիկ ասում են՝ ա՛յ տղա, ասա՛ այր, ժե ճե՛ ոա, անպեր զոռ ա, մեռա: Ձեր զլխովը զիպչի ձեր այրեմնն էլ, ձեր այր ժե՛ ճե՛ ոան էլ, մեր հոգին հո չեք հանիլ: Ի՞նչ եք տվել՝ որ մեղանից էլ եղ չեք կարում ուզել: Ձեմկարթում, չեմ կարթում. հո զոռի բան չի — Կարթա՛, կարթա՛ լինչա: Տո, ձեր տունը չքանդվի ախր էս հիմար կարթալումը լինչ կա, որ էսպես մեր ջանը հանում են: Ծատ մարդ՝ որ մեկ այրի կտոր էլա փորումը չունի, անի, չէ՛, չէ՛ զլխումը կուզեի ասիլ, շշկեցա, չունքի էս դահրամար կարթալը փորի խարջ բան չի, ներեցեք ինձ՝ էս էլ կարթալու հարարաթն ա, որ էսպես լեզուս շաղվեցավ՝ օ՛հ, օ՛հ... բերանս ցավումա, թթու յա, կծու յա, աչքիս լիսը թռավ, այրն էլ ճհանդամը գնա՛, ֆեն էլ. էս սհաթս մեկ աման մածուն ըլեր, լավ կիսփշտեի, ու մեկ քոնձոտ այրի անունը տալիս, լեզուս կապվում ա: Էն էի ապում, շատ մարդ՝ որ այրի հոտն էլա չի առել (է՛լ լինչ բերնիցս թռավ, տո՛, այրն, ու հմա... կատուն հոտ ունի, այրը չունի. աստված մի՛ արասցէ՛ թե հոտ էլ ունենար, մարդի քյալեն կտաներ, բեինը կցովեր) լինչ էի ասում, էլի խոսքիս տուտը կորցրի...համբերի, համբերի, իշի նոխտեն ձեռս ընկավ, սատանի անկաջը խուլ, քիչ էր մնացել՝ որ էլած չէլած խելքս էլ այրի հետ

կուլ տայի։ Ուզում էի ասեմ՝ թե ով որ կարթալ չի գիտի, (երանի էնպիսի մարդին, մահի ձեռիցն էլ որ աղատվեր, էնքան բախտավոր չէ՛ր ըլի, որքան կարթալու ձեռիցն), պակաս պատիվ ունի, պակաս փառքի տեր ա։

Ո՛չ աչքդ մի բան ա տեսնում, ո՛չ բերանդ համ ա առնում։ Շոր չի՝ որ մեկ օր կարես, տուն չի՝ որ շուտով շինես. հար չի՝ որ խկուլն կուլ տաս. դեղ չի՝ որ աչքդ խփես՝ ու դիվեր քցես ինչ կըլի, ըլի, փորը սաղ ըլի։ Զ՛ի էլ կարելի՝ որ ինչքան զրեւ կան՝ մեկ անգամ կամ ծամես, կուլ տաս, կամ ջուր անես, խմես, կամ թե չէ՝ քերես, ջնջես, որ քոռանան և աչքիդ էլ չի երևին։ Հա՛, կաց, ու ստիդ, գլխիդ արս՝, որ դժոխքի պուճախն էլ գնաս, էլի քեզ հանում են ու միտդ բերանդ տալով՝ ասում են՝ պիտի կարթաս։ Ի՞նչ կուզես անիլ, աշխարհս բոլոր թարսվել ա։ Երկինքն էլ թռչես, էլի քեզ վեր են բերում, գիրքդ կոնատակիդ տալիս ու, ճամփու քցում. հը, աստված իրանց գլուխը ո՛չ գիտի։

Մեկ գիրքս կորցնում եմ, մյուսն են ձեռտ տալիս։ Մեկ դալամս կորցնում եմ, ձեծում, թակում, սպանում են՝ թե գնա՛ մյուսը բեր։ Փռք եդի եմ գալիս, վա՛յ իմ օրին։ Դասս չգիտեմ, լինելկեն հաղիր ա։ Զեռս չեմ դեմ անում, քամակիս են խփում. քամակս եմ քաշում, ոտիս ա զիպչում։ Ինչ անեմ, որ ջուրը ընկնեմ, հը, կորչեմ, որ էս դժոխքիցը աղատվեմ։ Սատանի փայ ըլի, աչքը դուս դա, գոռերդու ըլի՝ ով որ էս կարթալը սահմանել ա։ Ասում են կարթալով մեծ մարդ կդառնաս, հաց կճարես. տո տնաքանդներ՝ էս օր էլ քանի որ մեծանում եմ, էնքան աչքից ընկնում եմ։ Մեկ կտոր հաց են տալիս, քթիցս են հանում։ Էլ թ՛նչ կանեմ ձեր հացն ու մեծությունը, երբ օրս ու ումբոս կխավարի։ Երանի դշերին, որ էսպես ցավ չունեն, ու իրանց քեֆին թռչում, ման են գալիս։ Բոյս էլա շուտով երկաթանում չի, որ բալքի թե ամաչին, ու էլ վարժատունը չուզարկեն։ Բիկունն եմ գիրքս ձեռս առնում, քունըս ա տանում, առավոտն եմ ուզում դասս սերտեմ, էլ ժամանակ չկա։ Աչքս որ բաց եմ անում, հենց գիտեմ՝ իմ հոգեառ հրեշտակը բարձիս վերևը կանգնած ուզում ա, հոգիս առնի։ Ի՞նչ կլեր որ ամեն օր կիրակի էր էլի՝ որ հենց մեր քեֆին ման դայի՛նք։

Հիմիկ էլ էկել եք՝ սիրելի ծնողք՝ որ տեսնիք՝ թե թ՛նչ ենք սովորել։ Շատ բարի՝ տեսնեք և իմացնեք, բայց աստծու խաթեր

դուք էլա մեզ խեղճ էկեք և մեր չար ուստի պես չի օկրվիք, չի քարկանաք, թե ոչինչ չենք սովորել: Ինչ աստված ավելա—նրա—նով ուղի կացեք: Ասացի՝ որ կարթալը կանֆետ չի, որ բերադի բերանդ քցես և փորդ քաղցրացնես: Այն նրան՝ ով որ նրա համը կառնի, կարելի մինչև մահը էլ չի մոռանա:

(Ծրկեւ, I հատոր), 1939 թ., էջ 333—336),



A 12102

ՀԱՅԱՍՏԱՎԻԴ՝-Ի ԱՌԱՋԱԲԱՆԸ

ՆԱԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ*

ԲԱՆԸ ԿՏՐՎԵԼ Ա, ՆՍՏԵԼ Ա՝ ԴԱՏԱՐԿ, ԴԱՏԱՐԿ ԳԼԽԻՑ ԴՈՒՐՄ
ՏՎԵԼ, ԷՍԳԵՍ ՄԱՍԱԼԵՔԸ ՄԵՐ ՊԱՌԱՂՆԵՐՆ ԷԼ
ԳԻՏԵՆ ԵՎ ԱՅԼՆ

Այս գիրքը ձեռքն առնելիս այսպես կդատեն իմ դատաքննիչները, որոնց միտքը միշտ ծայրահեղությունների և բարձրունքների մեջ է սավառնում՝ անտեսելով այն, ինչ ընտել է բնական մտքի, և բնական հոգու համար սովորական, Երեխաների հետ մանկական լեզվով խոսելը, նորակիրթներին աստիճան առ աստիճան բարձրացնելը հատուկ է միայն նրանց, որոնց համար մանկական թոթովանքն ու անմեղ հոգին քաղցր է, որոնց հիշողության մեջ դեռ կենդանի է իրենց մանկական հասակի իդան ու ցանկությունը, դատողության եղանակը, նույնիսկ խաղը, որոնք փորձից են ծանոթացել երեխաների մատաղ հոգուն, երեխաների, որոնց հազարապատիկ ավելի ախորժելի է որևէ հասարակ պատմություն լսել սովորական իրողությունների մասին, քան իրենց միտքը ծանրաբեռնել ինչ որ խրթին հետադարձական հորինվածքով:

Հմուտ դաստիարակի ամբողջ ճիգ ու ջանքը պետք է այդ պատճառով էլ սկզբից ևեթ առաջադրի սովորողների միտքը բաց անել նրանց տրվող գիտելիքները և իմացություններն ըմբռնելու համար:

Բայց ի՞նչպես կարելի է այս իրադրոժել, երբ հայ լեզվի բոլոր դասադրքերը ոճի և խոսքի տեսակետից օտար են և խորթ՝ դեռահաս մանուկների սովորական լեզվին, հոգեկան կարողություններին և բնական ձգտումներին:

* Գրաբարից աշխարհաբարի վերածեց՝ Հակոբ Հարությունյանը:

Որքան ծանր և զգվելի պիտի երևա նորոգութիւն այն զիրքը, որի մեռած տառերը ոչնչով չեն զբաղեցնում նրա միտքն ու երևակայութիւնը ու ոչնչով չեն բաց անում և լուսավորում նրա հոգին: Երբ հարյուրամյա մի ակտը չլսված և անըմբռնելի խոսքերով նրան առաջագործ իր ցամաքած դանդի ծնունդը, նրա փափուկ սիրտը ոչ մի դուրեկան անունով չի գտնի և, նա այնպիսի զգվանքով այդ զրքին կնայի, ինչպես երեսնաները սովորաբար կնային խառաբարո մի ծերունու, որը բարկութեան դավազանը ձեռքը վերցնելով՝ ուզում է նրանց անմեղ խաղերից զրկել: Որքան բախտավոր կհամարեն նրանք իրենց, եթե այդպիսի բռնութիւնից ազատվին: Եթե նույնիսկ նրանց ծնողն էլ լիներ, նրանք ավելի կուզենային մահը տեսնել, քան այդպիսի խառաբարո փիլիսոփայի կերպարանքը:

Այս ազդեցութիւնն ունի նաև ամեն տեսակի ուսում, եթե այն համապատասխան չի երեսնաների ընական ձգտումներին:

Ամեն մի գիր ծակող փշի նման կվիրավորեր նրանց մատաղ հոգին:

Նկնց այս է պատճառը, որ նրանք երկար ժամանակ ուսումնով զբաղվելով հանդերձ դեռևս անկիրթ են մնում և մի արտակարգ քաջագործութիւն են համարում, երբ վարժ կարդում են, բայց թե ինչ է կարգացածը, նրանց հոգը չէ իմանալ: Դեռ հասունացածներն են ևս այն զիրքը հաճութեով կարդում, ինչ հասկանում են. հապա որքան անհրաժեշտ է այս ճանապարհը բռնել գեոսահասների համար, որոնց բոլոր հոգեկան ուժերը դեռևս կույր մթութեան մեջ են խարխափում, որոնց միտքը, գատողութիւնը, երկվակայութիւնը, հիշողութիւնը, ընդունակութիւնը պետք է ուսումնով պարզել և լուսավորել և ոչ թե օրըստօրե նսեմացնել և ավարտել, ինչպես որ սովորաբար մինչև այժմ տեղի է ունենում:

Որքան հարմար և իմաստալից դպրոց է բնութքումը, որը մեզ շրջապատում է. մարդու գործողութիւնները, որ ամեն բոլե մեր կողքին տեսնում ենք. սովորական առարկաները, որ շրջապատում են մեզ: Բնական մարդու համար էլ թիչ ուրիշ լավ ուսում կարելի է ցանկանալ, քան եթե իմանալ բոլոր իրերի անունները, ձևերը, դուլը, հատկութիւնը, նպատակը, բաղադրութիւնը և ազդեցութիւնը, ճանաչել և դատել այն ամենը, ինչ լսում և տեսնում ենք:

Այս բոլորի առաջնորդը լեզուն է, առանց որի ամեն ինչ մեզ համար մեռած է և որն է ներգործութիւն չունի:

Ում հայտնի չէ, թե որքան է զբաղւած լեզուն խորթացել սովորաբար զործածականից, և որքան տարիներ են պետք նրա կանոնները իմանալու համար։ Մինչ այդ խեղճ մանուկները պիտի տանջվեն. վարժարանը նրանց կթվա տանջարան, ուսումը՝ տանջանք և սոսկալի պատիժ։ Եվ այս բոլորի պատճառը լեզվի խրթին լինելն է։

Այս պատճառով է, — և ոչ թե վսեմ լեզվի կիրառությունը ամբողջովին վերացնելու հանդուգն ձգտումով, ինչպես բարեմիտ անձերից ոմանք բողոքել և բողոքում են իմ մասին միամիտների մոտ, — որ ես մեր համազգի երեխաներին բուռն եռանդով դուրժնտել օժանդակություն ցույց տալու համար գիտություն սովորելու առաջին քայլերն անելիս կարիք զգացի պատրաստելու այս դուրբուսույց ուղեցույցը, որպեսզի նրանք զբաղիտությունը հեշտ ձևով յուրացնեն։ Թող ինձ պարսավեն՝ ովքեր ուզում են, ամենայն սիրով պատրաստ եմ ընդունելու այդ՝ ես հաստատուն հույս ունեմ, թե որքան էլ իմ ձեռնարկությունը նորաձև և տարօրինակ թվա, այնուամենայնիվ այն սիրելի կլինի նրանց համար, որոնց համար պատրաստվել է։

Իմ ասածներին համոզվելու համար բարեխիղճ դաստիարակը երեխային սովորեցնելուց առաջ թող կարդա ինչ որ պատմություն կամ ոտանավոր, կամ սովորական զրօքերից՝ այսինքն ժամագրքից, սաղմոսից, կտակարանից և այլ մի հարգելիոր բան. կամ բացատրի խոսքի մասերը և քերականության կանոնները՝ նախ հին սովորական ձևով, ապա այն ձևով, ինչպես այստեղ է ավանդված. այն ժամանակ փորձից կլիմացվի, թե ո՞ր զիրքը երեխան ավելի սիրով կուզենա ունենալ իր համար։ Փորձը ամեն բանում անաչառ դատավոր է։

Այն ևս կարևոր եմ համարում ծանոթացնել, որ մեր դպրոցներում, որտեղ գիտության առարկաները այնքան շատացել են և շարաթական 4 ժամ հազիվ հատկացվի մեր լեզվի ուսուցմանը, անհնար է այդքան կարճ ժամանակամիջոցում մանրամասն տեղեկություններ տալ լեզվից. այդ պատճառով էլ ուսուցիչը կարող է ընթերցանությանը զուգընթաց դեռահաս երեխաներին անզամ համառոտ ծանոթություններ տալ լեզվի զլիսավոր կանոնների և նրա բաղադրիչ մասերի մասին՝ առանց ցույց տալու, թե նրանք ֆերկամուրթում են սովորում (մի մեծահայուն բառ լսելիքի

համար՝ առանց իր խնկական շահն ունենալու)։ Ծրեխաներին ծանոթացնելով մեր երկու լեզվի բառափոխությունների կանոններին, այսինքն հոլովմանը և խոնարհմանը ու այստեղ ազանդված ծանոթություններին, կարելի է այնուհետև բոլոր պատմությունները, ոտանավորները և նամակները, որ այնտեղ կան, թարգմանել գրաբար լեզվի։

Դրանով երեխաների միտքը հարստանում է և դուրսավարժություն է ձեռք բերում. նրանք արձակ համարձակ և հաճույքով իրենք կկատարելագործվին իրենց հայրենի բարբառի զխոսթյան մեջ։ Դրանից հետո պետք է երեխաների ձեռք տալ վսեմ գրվածքներ, ինչպես՝ Մահմ Աբելի, Տեղեմակ և այլն, և այնքան հաճախ պետք է երեխաներին կարդալ տալ, մինչև որ նրանք իրենք կարողանան նրանց օրինակով հեղինակել և շարադրել. այս մտքով սովորողները պիտի իրենց բոլոր դասերը բերանացի անեն, հաճախ կրկնեն և անդիր գրեն. իմ կարծիքով այստեղ ինչ որ ճարտասանություն հարկավոր չէ։

Այսպես են կրթվել հույների և հռոմեացիների աստենարանները, բանաստեղծները, հեռագրողները, որովհետև ոչ այնքան տեսակամոռեմ, սրբան գործմակամոռեմ սովորեցին իրենց լեզուն։ Այսպես, օրինակ, շատերը զիմանատներում հաճախ մի տաքի գրելով ավելի լավ են սովորում իրենց մտքերը հայտնել, քան զպրոցներում տասը տարի քերականության և ճարտասանության կանոններն արածելով։

ՆԱԽ ՔԱՆ ԶԴԱՄՆ ՎԱՐԺԱՊԵՏՆ ՍԿՍԱՆԻ ԽՕՍԻՒ ԸՆԴ

ՄԱՆԿԱՆՑ

Կարգալը և զրելը սիրելի երեխայք՝ ոչ այլ ինչ չեն, եթե ոչ գրավոր խոսակցություն։ Մարդն ամեն ժամանակ չի կարող լեզվով խոսիլ, զորօրինակ եթե հեռու լինի էն մարդը՝ որի հետ կամենում ենք խոսիլ, ուրիշ աշխարհ ըլի զնացած, չունքի էն ժամանակը մեր ձայնը նրան չի հասնիլ։ Կամ թե չէ՝ մարդ մեկ լավ բան ա տեսել, լսել ուզում ա որ բոլոր իմանան, նա չի կարող դռնե դուռն ընկնիլ, աշխարհե աշխարհ՝ ու ամենին բերանացի պատմել։ Դուք զիտեք որ հարյուր տարի չքաջած ամեն մարդ, որ այժմ կան, պետք է մեռանին և նրանց տեղը՝ իրանց որդիքն կզան։ Միթե էս ետի եկողքն չէ՞ին ուղեի՝ որ իմանան՝ թե ինչ

բան մեզ պատահեցաւ, Ո՛վ կարեւր նոցա պատմել, էս հարկավորութիւնը տեսնելով մարդիկ հնարեցին տառքը՝ կամ գրեւը՝ որ մարդոյ խոսացած բանը խակոյն գրեին: Թե ձրքան հնարք, որքան խելք հարկավոր էր սրա համար, չեմ կարող պատմել: Առաջվան մարդիկը մեկ անցկացած բանը պատկերի պես քաշում էին: Շատ ազգք դեռ խավարի միջուկն են որովհետեւ գիր չունին: Գրելիս ուրեմն էլի էն ենք գրում, ինչ լեզվով ուզում ենք ասել: Ուրեմն ինչպես խոսալիս, լավ պետք է ականջ դրած՝ որ խոսողի միտքը իմանանք՝ էնպես էլ գրելիս: Ձեզ համար սուրբ օրեմբ շինեցեք, մեկ բառ, մեկ խոսք չի կարդալ առանց միտք իմանալու, չեք գիտում, հարցրեք:

էս խրատովն կարեք իմանալ թե ամենայն ազգ իրան համար առանձին գիր ունի հնարած: Մեր լեզվի գրից հնարողը սուրբն Մեսրոպը էր՝ որո տնունն հավիտյան չի պետք է մոռանայք: Ո՛չ ինչ լեզու էնքան ճոխ և հարուստ չի գրով, ինչպես մեր լեզուն: Մեր գրերի թիվն 36 ա, որք ամենն էլ ջուկ ջուկ ձև ունին, բայց եթե լավ նկատեք՝ շատը էս եք խաղիցն են բռնած գալիս իւր իւր օրինակը և պատմութիւնը եթե զգուշությամբ գիտեք՝ ամեն գրի ձևը, անունը, ձայնը ֆանք անեք մտքում պահել՝ էն ժամանակը գրելը և կարգալը ձեզ համար խաղալիք կդառնա:

Աստ պարտ է վարժապետին նախ քան զամենայն ֆանք անել առանց շտապելոյ՝ կամ գրել 'ի վերայ տախտակի, կամ ցուցանել 'ի վերայ աղիւսակին ըստ օրինակի 1, թէ սրպէս 'ի միոյ գծէ ելանեն բազում գիրք, և հարցանել զգանազանութիւն խաղից և ընդ նմին ևս երեխային խակոյն գրել տալ: Խնդրեմ 'ի փառս Աստուծոյ 'ի բաց թողուլ գլխմար անուանակոչութիւն տառից, այլ բն, գիմ, ըթ և այլն. զամենայն տառս պարտ է ըստ բնական հնչմանն արտասանել, վասն որոյ եթէ բառդ մարդ՝ ըստ արդի սովորութեան վանկեցուք ապա պարտ է ընթեռնուլ մեծայրբէղաւ. և ոչ մարդ որպես ասեմք: Իսկ բառդ երեխայութիւն՝ ելքէն յետայլ յիվեհիմքիմիմիմիմու. ձրպես կարէ երեխայն այս անգին երկարութիւն 'ի միտս պահել. և բառդ երեխայութիւն դեռ չէ այնքան բազմափանկ: Վասնորոյ հետազոյն քան զամենայն է, զձայնաւոր տառսն այնպէս ասել՝ որպէս կան. զորօրինակ ա. ե. է. ը. ի. ո. օ. ու. իւ. եա. եօ. Իսկ զբազմայնսն՝ բը. գը. դը. թը. ժը. լը. խը. ծը. կը. հը. ձը. ղը. ճը, մը. յը. նը. շը. չը. պը. ջը.

ԱՐ. ՍՐ. ՎՐ. ՄՐ. ԲՐ. ԾՐ. ԼՐ. ՓՐ. ՔՐ. և այլն, Եթէ այսպիսի մտա-
ռութեամբ ուսանի երեխայն ճանաչելով զգանազանութիւն տառից
և ինքնին զրելով՝ ես խօստանամ յերկուս և յերիս ժամս ուսուցա-
նել մանկան զամենայն տառս, զոր և փորձով իսկ արարեալ է
իմ Յեռ այսպէս ճանաչելոյ նոցա զգիրս՝ վարժապետն ընթեռնու-
կամ 'ի վերայ աղիւսակին կամ 'ի վերայ տետրակին և կամ զրէ
զայս փոքր երեխայական պատմութիւն 'ի վերայ տախտակի ըստ
օրինակի 10:

Ապա պատմէ լեզուաւ, և հարցանէ երեխային թէ զի՞նչ պատ-
մեաց: Այնքան պարտ է հանդարտութեամբ վերակրկնել, մինչև երե-
խայն հասկասցի և ինքն պատմեացէ: 'ի զիտեկն նորա՝ զարձուցանէ
զերեխայն առ տախտակն և հարցանէ: Տեսնեմ թէ մի էր լավ
ուշիմ երեխայն՝ որ էն մեր կարգացած զրերիցն. այժմ նման անոտ
զտնի: Այսպէս զմիանման տառս 'ի բոլոր պատմութեան պարտին
երեխայք ճանաչել և անուանել այնքան, մինչև քաջ իմասցին:
Ապա սկսանել զվանկս. զորօրինակ. Ասեցե՛ք՝ ձեր է բառն մեկ. էլ
ի՞նչ տեղ կա մեկ: Գտիր, և այլն: Ո՞ւր է ձայնդ ե. բե. ում. քան. համ
բում. վրա. թէ. ան. զուտ. չիլ. բեմ. բի. եց. լի. ոած. սրեւիլ. չէր,
թռչել. խեղճ. ուրախ. շատ. անմեղ. եղբոր և այլն: Այսպէս բոլոր
վանկքը և բառքը պարտի երեխայն անխափան ճանաչել և ցուցա-
նել քանոնաւ կամ փայտիւ 'ի սկզբանէ մինչև ցվախճանն. 'ի մի-
ջոյ, 'ի վախճանէ ցտկիղըն և այլն: Յոյս ունիմ թէ միայն այս փոքր
պատմութեամբ երեխայն սկսանիցի ինքն ինքեան զամենայն զըր-
եալն ընթեռնուլ: Եվ ոչ միայն ուսեալ վարժապետ որ, այլ և ամե-
նայն համբակ և հայր կարէ այս օրինակ հեշտութեամբ ուսուցանել
զերեխայն. ըշտապիլ ամենևին չէ պարտք. մեծ գործն այն է՝ զի
երեխայն ուղիղ գիտասցէ, որպէս ասացի զանուանս տառից: Եթէ
ցայն վայր ուսավ երեխայն և զրել ապա ասել նման բանս, զի
զրեացէ. բայց այնպէս՝ ինչպէս խօսում ենք և ոչ բնաւ զրոց, զի
իմասցի նա զզօրութիւն տառից: Եթէ զեռ ոչ զրէ, բայց ճանաչէ
զգիրս՝ ապա կարէ վարժապետն պատմել. երեխայն ասէ զտառն
և վարժապետն զրէ. բազումք կարեն գիտալորութեամբ սխալ գիրք
զրել և նովաւ փորձել զմտառութիւն երեխային: Յայսպիսի պարապ-
ման վարժապետն կարէ շատ անգամ ցուլց տալ թէ հարկաւոր
տառք մոռացեալ է ինքն, զրել այլ գիր. և թողուլ երեխային, զի
նա ուղղեացէ զսխալն վարժապետին. թէ միքան զուարճանան և

խնդան նոքա ոչ կարեմ պատմել ե առեալ զմէն ինքեանք զրեն ծիծաղելով: Նիւթք կարեն սոքա լինել: Չորորինակ. երեխայն առաւելոյն թնչ ա անոււմ. երեկոյին թնչ. իրանց տանը, քաղաքումը թնչ ա տեսնում, վարժատանն թնչ և այլն:

Վասն ցուցանելոյ զգորութիւն վանկից, հարցանէ վարժապետն զորորինակ՝ բառդ մեկ քանի անգամ ա մարդու բերնից դուս գալիս: Իսկոյն լսէ թէ մեկ անգամ. փոքր՝ նմանապես մեկ. բայց երեխա՝ երեք անգամ: Չայս ամենայն հարկաւոր է պարզ արտասանել: Տես, սիրելի երեխա՝ էնպես բառ կա, որ մեկ անգամ ա մարդո բերնից դուս գալիս. էնպեսը կա երկու, երեք, չորս: Էսպես մեկ անգամ բերնից դուս էկած ձայնին վանկ են ասում. զորորինակ. հաց, ջուր, քար և այլն: Եվ բառքը մեկ վանկ ունենալիս՝ միավանկք են ասում. երկու՝ երկվանկ, երեք՝ եռավանկ. քառավանկ և այլն. առ որ պարտ է տալ զօրինակս:

Ինչպես տեսնում եք վանկքը զրից են բնամ գալիս: Մինչև հիմա որքան զիր կարգացիք՝ էն զրերը՝ որք բերնից էնպես են դուս գալիս, որ պոռչը, լեզուն չէ՝ շարժում՝ ձայնավոր են ասում, զորորինակ ա. ե. է. ք. ի: ո. օ. ու. յա. յու. յո՛ւ: Բայց մյուս մնացյալքն, որովհետև ասելիս՝ կամ պոռչն ա շարժում, կամ լեզուն, կամ բողազը՝ նրանց բաղաձայն են ասում: Չորորինակ բը. վը. պը. գը. կը. քը. դը. թը. տը. զը. սը. ժը. շը. լը. խը. զը. ծը. ձը. ցը. հը. լը. ճը. ջը. չը. մը. նը. սը. վը. ւ. և. ֆ:

Ասացեք էս զրոց մը զիրն ասելիս պոռչքն են շարժում. ձրն ասելիս՝ բողազը, լեզուն և այլն: Ո՞ր զըյանք են իրար նման ասվում. և այլն: Այսպես իրար նման զրոցը ինչպես բ. փ. պ և այլն նմանաձայն են ասում: Վասն Էրո Ամենայն ձայնավոր զիր կարե առանձին վանկ դառնալ, բայց բաղաձայնն երբեք. էստուր համար բառը կտրելիս՝ եթե մեկ բաղաձայն լինի միջուկն՝ երկրորդ վանկի հետ պետք է կապած, եթե երկու բաղաձայն՝ մեկն առաջին վանկի հետ, մյուսն երկրորդ՝ էնպես էլ եթե երկու ձայնավոր պատահի բառի մեջն: Այլ եթե շատ բաղաձայնք պատահին՝ բոլորն առաջի վանկի հետ. իսկ եթե մեկ բաղաձայնն՝ երկրորդի հետ քցած. զորորինակ զոր, ծե, ին. ե, բե, խա, յին. ու, լախ. գի, տուն. սի, բելի. ա, նոթ. կսկ, ծալ. տրտ, միլ. մրմն, ջալ. քստմ, նիլ. և այլն:

Այժմ պարտ է ցուցանել զանսխալ զործածութիւն տառից և դնմանաձայնութիւնն նոցա: Նմանաձայնք են:

բալփ, գկք, գթա, գս, ժշ, լ. խղ, ծձց, հյ, ճջչ, մ, ն. որ, վ ու ւ.
և, օ. ֆ:

Ամենայն տառք որպէս հնչին 'ի բառս՝ նայնպես և գրին,
զորս օրինակաւ կարելի է ցուցանել երեխային-այլ մեծ դժվա-
րութիւնք պատահին որպէս փորձով խել քանիցս տեսեալ եմ, զի
աշակերտք՝ որք ընթեռնուն զամս հինգ և ավելի ևս՝ ոչ գիտեն ըզ-
կիրառութիւն տառից ուղղակի 'ի ձայնաւորաց բաղադրեալ տա-
ռս՝ ու, եա, իւ, եօ: Երկարաբանութիւնն չէ՝ հարկաւոր ասա առ
'ի ապացուցանել թէ չորեքին այսոքիկ տառք առ 'ի չ'գոյէ յա-
տուկ նշանադժի որպէս յայլ լեզուս՝ մուծեալ են 'ի լեզու մեր և
'ի գործածին իրրեւ պարզ ձայն. վասն որոյ աշակերտին չէ՝ հար-
կաւոր ասել տալ եչայր՝ եա. ո հիւն՝ ու. ինի հիւն՝ իւ. այլ ուղ-
ղակի իրրեւ մի տառ ու, իւ, եա, եօ, որպէս Ռուսաց У, Ъ, Я. և
այլն՝ և տալ զօրինակս զի 'ի պատահին. միշտ ու, իւ և այլն
հնչմամբ 'ի կիր առցեն:

Մեծ դժուարութիւն պատճառէ ոչ միայն համբաւին, այլ և
հասունացեալ երիտասարդաց զանազանութիւն երից տառիցդ վ.
ու, ւ. Ես զառաջնոյն անուն՝ մեծ վը. երկրորդին՝ միջակ վը. եր-
րորդին՝ փոքր վը եղի, և ըստ այսմ անուանակոչութեան՝ ասեմ
մեծ վը՝ 'ի գործածի միշտ 'ի սկզբան՝ և զկնի ո տառին՝ 'ի վախ-
ճան բառից. զորօրինակ վանք, վարք, վեղար, գործով, զնալով և
այլն: Ի բաց առեալ զբարդ բառս՝ քաղաքավար, գորավար՝ որ
կլանէ 'ի վարել բայէն:

Միջակ վըն 'ի գործածի 'ի մէջ բառին յայնժամ՝ երբ յառա-
ջոյ ունի զբաղաձայն և զկնի իւր դձայնաւոր տառս. զորօրինակ
շինուած, հարուած, մաշուած, հատուած:

Փոքր վըն 'ի գործ զնի յետ ձայնաւորացս ա, ի, ե. զորօրի-
նակ լուսաւոր, խաւարեցաւ, բառիւ, անթիւ. այլ զհետ և ին միշտ
կապի այսպես՝ և, զորօրինակ աներեոյթ, արեւ և այլն:

Այսպիսի կիրառութեամբ հնճր եղև ինձ վեց և եօթնամեայ
երեխայից յետ ճանաչելոյ գտառս՝ տպաւորել 'ի նոսա 'ի քանի մի
աւուրս այնպէս՝ մինչև զինչ և բառ ես ասելի՝ նոքա ինքեանք
պատասխանէին թէ զձր զիր պնդութեւ ինձ գրել. և յուսանին յիւ-
րեանց զգրելն՝ իմ գերկար բանս ասել. և նոցա անսխալ գրել
Ջայս մի ինչ ևս խնդրեմ. զգրելն իսկոյն ընդ ընթերցման սկը-
սանել, եթե երեխայն հնդամեայ ևս իցէ: Դիւրին է ուսանիլ գրել
քաջ, քան ընթեռնուի:

Ան ծանօթութիւն միւս գրեւոր իմոց վասն ընթերցանութեան՝ չկայ ինձ յիշել բան ինչ, բայց եթէ խնդրել 'ի բարեմիտ ուսուցչաց պարզ, ծանր, և բնական ձայնիւ տալ ընթեռնուլ զայնս. և մի երգելով կամ լալ ևս ասել զողանջելով՝ որ ախտ և մինչև ցարբունս հասակի ոչ արմատախիլ լինի. և միշտ լեզուաւ պատմել տալ երեխային զընթերցեալսն, պատմել նոցա նմանակերպ իրս և պատմութիւնս. որոց շահն անպատմելի է ոչ միայն 'ի մասին կրթելոյ զլեզուէն՝ այլ և զմիտս, զդատողութիւնս և զանմեղ հոգիս մանկանց: Վարժել զնկատողական հոգիս երեխային առ ամենայն առարկայս՝ որք կան զնովաւ. ասիլ տալ զանուանս նոցա պարզ. զլատկութիւնս, զձեւ. զգոյնս, զնիւթս, զօգուտս, զշինողն, զտեղի շինելոյն, զգործիս՝ որք հարկաւոր եղեն առ այն և այլն զորօրինակ՝ մեկ տեղ որ կենում ենք՝ նրան լինչ են ասում. բնկարան կամ տուն: Ահալասիկ քեզ այս տուն: Ի՞նչ ձեռնի. բարձր է, ցած, լայն, ընդարձակ, բոլորակ, քառանկյունի, սպիտակ, պայծառ, հին, նոր, ունի երկու լուսամուտ, երկու դուռն, չորս անկյունս, չորս պատս. է քարաշէն, ծեփյալ, նկարյալ և այլն: Զլինչ հարկավոր է ուրեմն վասն շինության տան. կարփիջ (աղյուս), կիր, հող, քար, փայտ, ավազ, գերան և այլ ոչ ինչ. — Լավ մտածիր սիրելի երեխա, կարճիկ են էս նիւթքս ինքն իրան զոյանալ. չէ՞ պարտ ըշտապիլ. երեխայն մտածե. էս քարերը որ իրար վրա զնենք, կարճն տուն դառնալ: Ընչձվ պետք է հողն և գաջն այնպես պատրաստել՝ որ քարն էլ բռնի — ջճւր. բարի սիրելի իմ: Զայսպիսի մտածող երեխայն պարտ է գովել. զի առաւել ևս արիասցիւ Եթէ ջուրն և ամեն բանն պատրաստ ըլին, կարելի է տունն ինքն իրան զոյանա. ինչ հարկավոր է. — բանահ (որմնագիր) մշակք. նոքա ձեռով կարճն շինել. — ոչ հարկավոր է նոցա լար, մալա, չափ և այլն. փայտքն, քարինքն իրմնց իրմնց են գալիս: Ո՛չ, մաքդիկ գնան, հատանեն յանտառս, բերեն եղամբք, ծախեն, հանեն 'ի հողո (զքարն), հյուսք (խարատ) տաշեն, չափեն և այլն. տաշելիս լինչ զործիք են զործածում: — Կտրելիս ինչ, տախտակ քաշելիս լինչ, Մեկ տուն ունեցողին՝ տանուտեր են ասում: Վասն էր շինի տունն. լինչ հարկավոր է որ լինի պայծառ, լինչ՝ որ ամեն մարդ ներս չի գնա, և մեր բան չի զողանան, ընդէ՞ր շինի առաստաղն: Տան միջումն ինչ ենք անում. — լինչ ունինք: Վասն է՞ր են պահարանք, վասն է՞ր անկողինք, վասն էր բուխարին

(խարույկ), վասն Էր թոնիրն, պղիճ, կճւծ, սեղան, աման, խալիչմ, աթոռ կճւպղ (կճղպեք), բանալի, հայելի և այլն: Քանի կանգ (էտաժ) ունի մեր տունն. քանի սենյակս (օթախս). զի՞նչ կան անդ. վասն Էր խոհարանն (աշխանեն). վասն Էր զոմն, սրանն, պարթոպն: Զինչ տեսանես անդ 'ի սրահին, յայգւոյն. ձրպիսի ծառք են անդ. ինքամեք բուսան անդ: Երբ հասանին պտուղքն, ձվ է պահապան նոցա: Ընդ Էր 'ի ձմեռան հչ ծաղկին և պտղաբերեն և այլն: Եւ հանգերձք քո. վասն Էր հանգնեմք շորը. թնչ, բանից են շինում: Ո՞րպես շինեն: Շինողի անունն ինչ ա. զորօրինակ էս քո չուխեն ինչ գուշն ունի. ընչից ա շինած, բրդից. ինչպէս են շինել. — բուրդը պետք է առաջ խուղած ոչխարիցն, ապա հատակել, գզել, լվանալ, մանել, ներկել, գործել, ձևել, կարել և այլն. ձվ ներկե. ձվ մանե. ձվ ձևե. կմրե. զի՞նչ հարկավոր է վասն ներկելո. — ձևելոյն. կարելոյն. վասն Էր ձևեն. չէ՛ կարելի այնպես մեղ փաթութել, առանց շորի թնչ լինելու: Ի՞նչ ստիպեց մարդոյն հնարել զայն. կարիքն և մտածողություն: Այսպես մարդն մտածողությամբ ա ամենայն բանը հնարել և շինել: Մարդն որ չի մտածի՝ անասնի կարգի է, ուրեմն ջանք արեք էսպես ամեն բանի վերա մտածել: Եթէ ունի փոքր ինչ հողի՝ ապա կարէ ուսուցիչն այս օրինակ հարցմամբք այնպես պարապեցուցանել զերեխայս՝ մինչև ինքեանք բոլորովին մոռանան թէ են 'ի վարժատան. և այսու ոչ իբրև դերեք՝ որպէս այժմ, այլ իբրև որդիք ևս հօր ուրախութեամբ լսեն և պատասխանեն սիրելի վարժապետի իւրեանց. որպես բազմիցս պատահեալ է ինձ: Թէ ձրքան կրթի այսու լեզու և դատողութիւն մանկանց՝ հչ կամիմ կրկին բացահայտել: Յայտնի է զի 'ի սխալիլն՝ միշտ պարտ է ուղղել զլեզուն: Ի՞ գալն յայն տեղի՝ ուր են փոքր նախադասութիւնք՝ քարն է պինդ, ջուրն է թափանցիկ. և առհասարակ ամենայն քերականական կանոնք, յայնժամ պարտ է միշտ օրինակաւ տալ երեխային, զի նովին կերպիւ և ինքն կազմեսցե զխօսս: Օգտակար է յոյժ նմանապես ստիպել զերեխայն, զի պատմեսցէ զամենայն անցս, զորս տեսանէ կամ լսե. զորօրինակ հարսանիք, ծնունդ, եկեղեցական հանդէս ինչ. քաղաքական անցք ինչ. զորօրինակ մահ, թաղումն: Երբ վարժի 'ի գրութեան, կարելի է տալ նմա զրել զօրական անցս և տեսեալս. ապա զկնի ժամանակաց՝ համառօտաբար նշանակէ զայն ամենայն երևելի անցս՝ զորս լուեալ կամ տեսեալ իցէ նորա 'ի բոլոր շաբաթու:

ՀԱՅԱՍՏԱՎԻՂՅ-Ի ԱՌԹԻՎ ԱՌՈՎՅԱՆԻ ԳՐԱԾ
ԳԵՐՄԱՆԱԳԻՐ ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ

ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՆՈՐ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԳՐԲԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լեզուն անշուշտ ամենազնիւ զործիքն է, որի միջոցով մի մարդ իր ներքին հոգեվիճակն է արտահայտում այլ մարդկանց, առանց որի ոչ անհատը, ոչ էլ մանավանդ ժողովուրդը ի վիճակի չէ մըտքերն ու զգացմունքները հաղորդելու ուրիշներին, մանավանդ ավանդելու հաջորդ սերունդներին: Լեզվի մեջ, ինչպես մաքուր հայելու մեջ, ցոլանում է մի ազգի առանձնահատկութիւնը, նրա կուլտուրան, մինչև անգամ նրա քաղաքական վիճակը: Ինչպես առանձին անհատի մօտ տարիքի աճման զեպքում, այնպես էլ յուրաքանչյուր ժողովրդի մօտ նրա հոգևոր զարգացման աճման կամ նվազման հետ միասին լեզուն էլ բոլորովին այլ կերպարանք է ստանում: Ո՞վ կարող է ժխտել, որ մեր ամբողջ հոգեկան զարգացումը, ինչպես և մեր լեզուն զլիսավարակա կախած են այն պայմաններից, որոնք մեզ վրա քաղաքական ազդեցութիւն են ունեցել: Կրթական հիմնարկների և զրտական հետազոտութեան բացակայութիւնը, շփումն այլ ազգերի հետ, օտար լեզուների իմացութիւնից քաղած արտաքին օգուտը — այս բոլորն առանց այն էլ արդեն բավականաչափ ուժեղ հիմք են, որոնց պատճառով մենք կարող ենք մեր լեզուն հակամայիցս անտեսել: Եվ կթի մի ժողովուրդ քաղաքակրթված պետութիւնների մեջ ենթակա է այս ազդեցութեան, ինչպես ցույց են տալիս հին և նոր ժողովուրդների օրինակները, — շոթլանդացիները՝ անգլիացիների Խիւսպետութեան տակ, բոհեմներն ու հրեաները՝ գերմանացիների, սլաւոնացիների,

* Գերմաներենից հայերեն է թարգմանել Հակոբ Հարութիւնյանը:

Ֆրանսիացիներն ու անգլիացիները՝ հռոմեացիների և այլն, — ապա այդպես չէ բռնապետական երկրներում, որտեղ աշխատում են ամեն օտար և ազգային բան բռնությամբ ոչնչացնել, Եվ երբ մի ժողովուրդ զժրախառնություն է ունենում իր երկիրն ու ինքնութայնությունը կորցնելու և իրեն իր սեփական հայրենիքում որպես ստրուկ զգալու, — իսկ այս ավելին է ասում, քան այդ ամենը, — այլևս կարծիք է նա ի վիճակի լինել մտահոգվելու նրանով, որ զրադիկ գրականությամբ ու գիտությամբ, չէ՞ որ դրա համար անհրաժեշտ է, որպես հիմնական պայման արտաքին խաղաղություն, բարեկեցություն և անդուլ խնամք կառավարության կողմից:

Հայաստանի ճակատադիրը հայտնի է ամեն մի կրթված մարդու: Մոլի-բռնապետական պետութայնների ծանր լծի ճնշման տակ՝ Հայաստանի հայրենագուրի դավալները վաղուց են հեռացել իրենց երկրից և ապաստանել համարյա բոլոր աշխարհամասերում: Այս հանդամանքն է եղել պատճառը, և ոչ թե տուտարական ողին, ինչպես ոչ բոլորովին իրավացի կերպով կարծում են մի քանի եվրոպացիներ, — որ հայերը վտարվել են իրենց երկրից. իսկ երկրում մնացած իրենց եղբայրակիցները միայն գույքի և կյանքի զնով են կարողացել իրենց սուրբ հայրերի անունն ու իրենց կրոնը պատմության բեմի վրա պահպանել: Իսկ նրանց ազգային ինքնությունությունն ու լեզուն հազար մյակների առաջ կորել են ամեն ինչ խորտակող ուժեղ հեղաշրջումների հորձանքի մեջ, որի նմանը հազիվ թե մի այլ աշխարհամասում եղել է:

Որքան էլ հին հայերեն լեզուն իր արտակարգ հարստությամբ, իր կատարելությամբ և իր գրական արժեքի կողմից բարձր լինի, այնուամենայնիվ այդ լեզուն է միակ արդելակող պատճառը, որ խեղճ ժողովուրդը մինչև հիմա զուրկ է մնացել զարգացման միջոցներից:

Սակավաթիվ ընտանիքներ, որ բարեբառիկ կերպով հայրենիքից հեռացել են, փոխարինում են իրենց կենցաղն ու լեզուն այն ժողովրդի կենցաղով՝ ու լեզվով, որոնց մոտ ապրում են, նրանք բոլորովին մոռացել են իրենց մայրենի լեզուն, ինչպես այդ տեսնում ենք Հեհաստանում և Թյուրքիայում, անգամ այստեղ՝ Վրաստանում: Ժողովրդի մեծագույն մասը, որ մնացել է Հայաստանում, զարեւր շարունակ թյուրքական ժողովուրդների ազդեցությամբ տակ լինելու և արտաքին ճնշման տակ կռացած լինելու,

ուրեմն և ամենատարրական իմացություններից զրկված լինելու հետևանքով՝ կենցաղի և տարազի հետ միասին ընդունել է նաև նրանց լեզվի կառուցվածքը։ Այդպիսով, առաջ է եկել մի բոլորովին ուրիշ բարբառ, որ ինչպես իր կազմով, այնպես էլ իր ձևով բոլորովին տարբեր է հնից և ամեն բանում նման է Թաթարականին։ Սովորական խոսակցության ժամանակ ժողովրդի բերանից լսում են ոչ միայն Թուրքերեն բառեր, այլ ամբողջ նախադասություններ ու դարձվածքներ։ Մինչդեռ զրքի լեզուն մնացել է որպես սեփականություն հոգևորականության, որը—ինչպես նրա դասակիցները մյուս ազգերի մոտ—սկսեց այդ լեզուն էզոիստորեն դարձնել եզդիպական գաղտնիք, որպեսզի ժողովրդի աչքում ավելի դիրք ու ակնածություն ձեռք բերի։

Զափից շատ բարձր կարծիք ունենալով իրենց դասի առավելությունների մասին՝ հոգևորականները գրել և մշակել են այնպիսի բաներ, որ ոչ մի կապ չունի ժողովրդի և ժամանակի ոգու հետ։ Նրանց ամբողջ հոգևոր գործունեություն ուղն ու ծուծը կազմում են աստվածաբանական մտքերը։ Նույնիսկ պատմության գրքերում կամ այլ բովանդակության երկերում նրանք ամեն ինչ փորձում են վերածել աստվածաբանության։ Նվ եթե տեղ-տեղ առիթ չեն ունենում երիտասարդներին դաստիարակելու, ապա նրանք ամեն կերպ աշխատում են նրանց ճաշակը դրավել միայն հօգուտ իրենց շահերի։

Սակայն այս էլ երկար չտևեց։ Նվ այժմ, նույնիսկ, խոշոր քաղաքներում հաճախ են հանդիպում հոգևորականների, որոնք հին հայերենից ոչ մի գաղափար չունեն։ Մկեղեցական արարողությունը կատարվում է զրաբար լեզվով, աստվածաշունչն ու բոլոր եկեղեցական գրքերը կարդացվում են զրաբար. սակայն հարյուրից հազիվ մեկը կարող է այդ լեզուն հասկանալ, ուստի և բնական է, որ ժողովուրդն սկսեց սիրել այն լեզուն, որը նա լավ է հասկանում։ Զարգացած եվրոպացիները զարմանում են, որ հայ ժողովուրդը, որի ճակատագիրն ու բնակավայրը այդքան նպաստավոր է պոեզիայի համար, այնուամենայնիվ այժմ ոչ մի բանաստեղծ չի կարող ցույց տալ։ Սակայն ամբողջ գաղտնիքը հետևյալում է.—հոգևորականությունը ծաղրել է այն ամենը, ինչ բանաստեղծական իմաստ ու զգացմունք ունի, որպես իր դասի համար անվայել և գռեհիկ բան։ Ժողովրդի լեզուն մնացել է անմշակ։ Թուրքերենը

նույնիսկ կանայք և երեխաներն են հասկանում: Ուստի շատ բնական է, որ ժողովրդի մեջ ականաւոր և ի բնէ բանաստեղծական ձիրք ունեցող մարդիկ թաթարերին բանաստեղծ էին և արտասանում էին, Մի Բեշիշօղլի (Քահանայի տղա), մի Ալլահվերդի (Աստվածատուր) հանճարներ են կոչել, որ մի ժողովրդի զրական փառք ու պատիվ կրերին: Թաթարները հիանում են զրոնց բանաստեղծութունների և երգերի գեղեցիկութամբ: Մինչդեռ զրանք հայ են կոչել: Առանձնապէս առաջինը, որ մի քանի տարի առաջ մեռավ, կույր էր և, շնորհիվ իր արտակարգ բանաստեղծական ճաշակի, թուրքական արքունիքում մեծ հարգանք էր վայելում*:

Զի կարելի ժխտել, որ բարեկեցիկ ծնողներից ոմանց հաջողութւմ է իրենց երեխաներին սովորեցնել զրարարի զաղտնիքները. սակայն զրա համար անհրաժեշտ է 10—15 տարի, մինչև որ հնարավոր լինի որոշ անկատար գիտելիքներ ձեռք բերել: Իսկ զրարը զործ է անվում միմիայն զրքերում: Նույնիսկ հոգևորականները քարոզ տալիս խոսում են նոր հայերին:

Դրան ավելանում է նաև մի հանգամանք.— մեր զարոցներում ուսուցիչները սխտեմատիկ կրթութիւն չունեն, ուստի և ուսուցման մեթոդ էլ չունեն. աշակերտները հետ են մնում, և տարիներ են անցնում, մինչև որ նրանք կարողանում են մի բան հղովել կամ խոնարհել, սակայն չեն հասկանում, մանավանդ որ շատ ուրիշ առարկաներ էլ կան, որ նրանց արտաքին գոյութիւն համար շատ ավելի կարևոր են, քան այդ լեզուն: Հինց այդ հանգամանքն է պատճառը, որ նույնիսկ շատ բարեկեցիկ ընտանիքներ իրենց երեխաներին չեն տալիս զրարար սովորելու, այլ իրենց ժամանակն ու ջանքերը նվիրում են այլ՝ եվրոպական լեզուներ սովորելուն, որ ավելի օգտակար է և գործնական: Եվ խեղճ երիտասարդներն ինչպէս կարող են հաճույք ստանալ, երբ նրանց ձեռքը տալիս են այնպիսի գրքեր, ինչպէս սաղմոսը, և այլն, որոնք թե լեզվով և թե իմաստով անհամապատասխան են այդ երիտասարդների ըմբռնողութիւնն ու հասակին:

* Գրականութեան համար չափազանց արժեքավոր գանձ կլինե՞ր, եթէ մեկը ժամանակ և միջոցներ ունենար հասարակ ժողովրդի բազմազան երգերը, պատմութիւնները, անեկդոտներն ու առակները հաժախելու և Եվրոպայի հասարակութեանը ծանոթացնելու: Սակայն այդ գործը կարող է միայն նա կատարել, ով արտաքին հոգսերից բոլորովին ազատ է:

Նոր հայերենը զրաբարի հանդես ոչ միայն այն առավել-
լությունն ունի, որ նա կենդանի ապրում է ժողովրդի բերնում,
այլ և այն, որ նրա քերականությունը վերին աստիճանի հեշտ է,
նա ունի, չնչին բացառությամբ, միայն մի խոնարհում և մի հո-
լովում, մինչդեռ զրաբարը բազմաթիվ հոլովական ու խոնարհման
ձևեր ունի, ժողովուրդը թաթարական շատ խոսքեր ու զարմվածք-
ներ է ընդունել և այժմ գործ է ածում, հարելի է լեզուն մաքրել
զրանցից և լեզվին այնպիսի հաստատուն ձև տալ, որ զրաբարից
շատ չլեզվի, սակայն այնպես, որ հասարակ մարդու համար խի
հասկանալի մնա:

Հին և նոր լեզուների զլիսավոր տարբերությունը թեքման
և շարահյուսության մեջ է: Գրաբարում, ինչպես և բոլոր նոր
եվրոպական լեզուներում, որոշիչները, հատկացուցիչները, բացա-
հայտիչները զրվում են որոշյալներից, հատկացյալներից և բա-
ցահայտալներից հետո, իսկ նախդիրները՝ առաջ, մինչդեռ նոր
հայերնում — թաթարերենի նման — հակառակն է: Այսպես օրինակ,
հին զրաբարում կասեին. —

Առաջի տան իմոյ կայ ծառ մի: Առ պարտիդի զրացույն քոյ
հոսի աղբիւր մի: Ես սիրեմ զառաքինութիւն քո: Համեստու-
թիւն է զարդն երիտասարդութեան: Ոմանք յաշակերտաց ձերոց
են ջանասէր:

Նոր լեզվով ասում են. —

Իմ տան առաջ մի ծառ կա: Բո զրացու պարտիդի մոտ մի
աղբյուր է հոսում: Բո առաքինությունը սիրում եմ ես: Երիտա-
սարդության զարդը համեստությունն է: Զեր աշակերտներից
ոմանք ջանասեր են:

Այսպես է նաև թաթարերենում:

Նախքան Եվրոպա տեսած լինելը, զեռ երիտասարդ ժամանակ
իմ ջերմ ցանկությունն է եղել նվիրվելու հայրենի երիտասարդու-
թյան դաստիարակության գործին: Ամենաբարի նախախնամու-
թյունն իմ նպատակն այնպիսի զարմանալի ձևով է կատար ածեց,
և մարդասեր կառավարության ողորմածության շնորհիվ իմ կըր-
թության համար այնքան շատ-շատ չվաստակած բարեք վայելեցի:
Ուրիշ թնչպես պետք է ես իմ երախտապարտ շնորհակալությունն
իշխանավորների և հայրենիքիս հանդես պատահայտի, եթե ես
այս կարևոր հանգամանքը լռությամբ դանց առնեի: Ոչ թե նոր-

մուծության մուրթյունը, այլ իմ հայրենակիցների ընդհանուր բախտավորությունն է շահագրգռել ինձ դիմելու այս քայլին: Դեռ երիտասարդությունից եմ ես զնացել այս փշալից ճանապարհներիով, և այժմ իմ կոչումը շատ պարզ ապացույցներ է տալիս դրա համար: Որպես գլուխ մի դպրոցական հիմնարկի, որտեղ տարեկան 200-ից ավելի երեխաներ են վստահել զլիտավորապես իմ ղեկավարությանը, ամեն օր այն տխուր դիտողությունն եմ անում, թե այս ծանր դրությունից միայն մի կերպ կարելի է դուրս գալ.— մոր հայերեմ մտցնելով ածմյամ դպրոցակամ հիմնարկները:

Այս դժվարին կացությունը փոփոխել կարենալու համար անհրաժեշտ համարեցի փորձել նոր հայերենի մի տարրական դիրք կազմելու:

Այստեղ իմ նպատակն է՝ ուսուցիչներին, ինչպես և սովորողներին, տալ ուղեցույց առաջին տարրական պարապմունքների համար: Հաճախ եմ հանդիպել տերտերական կամ այլ դպրոցի աշակերտների, որոնք տարիներ շարունակ կարդալ են սովորել, բայց երբ ես նրանց մի դիրք եմ տվել կարդալու, այն զարմանալի պատասխանն եմ ստացել, թե նրանք սաղմոս կամ այլ դիրք են կարդացել, և ոչ թե այդ. իսկ գրել՝ ոչ մի տառ չէին կարող:

Այդպիսով, ես զլիտավոր ուշադրությունը դարձրի այն բանի վրա, որ հենց զբոյսի սկզբում, Նիմայերի և Ստեֆանիի սկզբունքներով ցուցում տամ կարդալու-գրելու մասին և հնչական մեթոդը ցույց տամ, որ նախ ես ինքս մի քանի մասնավոր աշակերտների վրա փորձել էի և լավագույն արդյունքի էի հասել, այնպես որ աշակերտները տառաձևերը ճանաչելուց հետո իսկույն կարողանում էին ամբողջ բառեր ու խոսքեր կազմել և մի քանի օրում սկսել հայերեն ու ռուսերեն կարդալ:

Երեխաների մտածելու և խոսելու ունակությունը դուրսին եղանակով զարգացնել կարողանալու նպատակով (որովհետեւ մեղանում, նույնիսկ բարձր դասերի մոտ, մինչև հիմա էլ երիտասարդության մեծ համեստությունն է համարվում, երբ երեխաները համր շարժումներով են արտահայտվում և ոչ թե խոսքերով), ես աշխատում էի ուսուցիչներին այնպիսի ցուցումներ տալ, որ կան Նիմայերի, Գամպելի և Կրաուզերի մանկավարժությունների մեջ:

Դրքի մնացած մասը պարունակում է ընթերցանության նյութեր, ինչպես՝ պարզ պատմվածքներ, ռոմանտիկներ, հետաքրքրա-

կան երևույթներ ֆիզիկայից, և բնապատմութիւնից, բարոյակերթական պատմութիւններ—մասամբ եվրոպական դասագրքերից, մասամբ իմ կողմից կազմված: Որպեսզի մինչև այժմ իշխող դասավանդման սովորութիւնը շատ դեմ չգնամ, գրքի վերջում գրել եմ գրաբար հատվածներ:

Որքան ինձ հայտնի է, ոչ մի հայերեն գիրք չկա իմիս նման՝ թե լեզվի և թե բովանդակութիւն կողմից. այդ ես պարտական եմ գերմաներեն լեզվի իմ իմացութիւնը:

Այժմ ես նյութեր եմ հավաքել իմ աշխարհաբարի քերականութիւն հրատարակութիւն համար, որով հին լեզուն էլ կարելի լինի սովորել ավելի դուրին և ըմբռնելի եղանակով: Այս էլ եմ ինքս փորձել փոքր երեխաների հետ, մյուս ուսուցիչների միջոցով կիրառել եմ ավել զրա հիմունքները և ինձ համար շատ շոյող լուրեր եմ ստացել բոլորից, թե փոքրահասակ մանուկներն անգամ մեծ ուրախութեամբ ու եռանդով են կանոնները յուրացնում և օրերում այնքան են առաջադիմութիւն ցույց տալիս, որ նրանք առաջ տարիներում չէին կարող անել: Եվ ի՞նչպես կարող էր անհաջողութիւն մասնվել մի գործ, որ վարվում է այսպիսի մարդկանց սկզբունքներով ու հայացքներով, ինչպիսիք են Նիմայիբը, Կրաուզեն և Կամպեն, որոնք մանկավարժական աշխարհի վառ փայլող աստղերն էին:

Իմ ձգտման նպատակը, ինչպես և հայ ժողովրդի ճակատագիրը, կախված է միայն բարեխնամ կառավարութիւն վճռից: Եթե ինձ բախտ վիճակվի իմ այս առաջին փորձը կենսագործել, ապա ես իմ բոլոր ուժերը կգործադրեմ ինչպես վերահիշյալ քերականութիւնը, այնպես և այլ օգտակար գրքեր կազմելու և թերևս զրանով Կովկասի ուրիշ ժողովուրդների համար էլ օգտակար լինելու: Մեր դպրոցի թաթար ուսուցիչ Միրզա Ֆաթալի Ախունդովը յուր հայրենակիցների համար արդեն սկսել է այս մեթոդով մի դասագիրք կազմել:

Հունիները, նման անհրաժեշտութիւն հետևանքով, թողել են իրենց գեղեցիկ հին լեզուն: Իտալացիք այդպիսի ուժ ունեցող լատիններենը փոխարինեցին իտալերենով: Այդքան շատ տարածված և դարեր շարունակ որպես կրթական լեզու գործածված սլավոններենը հարկադրված էր տեղի տալ ժամանակի ոգուն և պահանջին:

Միթե միայն հայերը պետք է մյուս ազգերից հետ մնան և

թողնվեն հոգեկան խաղաղի այդպիսի ստրկական կապանքների մեջ։
Սակայն սա մի առանձին անձի գործ է, այլ բարեհաճ, ընդհանուր
բարոյության մասին այնպես հայրաբար հոգացող իշխանության
գործն է։ Որքան էլ նախապաշարմունքներն ու անհավատություն-
ները առաջին փորձին որոշ չափով դեմ զնան, այնուամենայնիվ
ճշմարտությունը և այդպիսի բարձր նպատակների ձգտումը կհաղ-
թանակեն երջանիկ դավիթի համար։

(Ենախաղաղ, Երեսօրհաններ, 39—40 էջ)



ПРЕДИСЛОВИЕ

*К теоретическо-практической грамматике, составленной
на Русском и Армянском языках по руководству Таппе.*

Учителем Х. АБОВЬЯНОМ

ПРЕДИСЛОВИЕ

Цель изучения какого нибудь языка состоит не в том, что бы приобрести себе тем только временную пользу в общежитии, а более образовать ум и чувства наши чтением различных творений на оном, и подружиться с духом того народа, которого языку мы учимся.

И какой из Восточных, или из Западных языков может в этом отношении споспешествовать нашей нации более всех, как не Русский, которого польза и качества заставили и образованных народов нашего времени заниматься им, тем более Армян, которые видят всю необходимость изучения его, и чувствуют пользу, которую они могут извлекать из него как в отношении *Государственной* службы, так и в общежитии.

Армянский народ, веками наслаждаясь отцовским покровительством человеколюбивого Российского Правительства, ни в какое время не упускал из виду случая, оправдывать в себе дары милости, как верностию в службе, так и стремлением: усовершенствовать себя в этом языке, как это видно во всех учебных заведениях, учрежденных щедрым Правительством для образования их; а по природному своему остроумию и отличным способностям приобретает в короткое время основательное знание Русского языка, преимущественно же внутри Империи,

где многие из них владеют им как природные Русские; однако не смотря на все эти средства и благонамеренные старания местного Начальства, по сие время найдутся между здешними Армянами не многие, которые знали бы Русский язык с Армянским так, как бы они могли быть полезными в Гражданской службе как переводчики. Этот недостаток чувствителен в особенности у нас в Закавказском крае, где одним недостает необходимого знания Армянского языка, другие же при всем изучении Армянского языка чувствуют себя довольно слабыми в Русском. И это все зависит от неупотребления в здешних заведениях сравнительного преподавания обоих языков, как это делается внутри России и в других образованных государствах для многих языков. При этом сравнительном способе преподавания опытный наставник, сводя одинаковые правила и общие свойства обоих языков, облегчает вдвое труд ученикам своим и подвигает их скорыми шагами в изучении обоих языков. Этот благодетельный способ остается здесь в неупотреблении как от недостатка учебной книги, так и от затруднений, необходимо сопряженных с этим преподаванием. Чувствуя недостаток учебника, я принимался за составление его, в желании доставить тем пользу, как здешним учащимся, так и многим моим соотечественникам, обитающим в Турции, Персии и Индии, которые охотно бы пожелали познакомиться с этим языком имея в руках хорошее руководство.

Правда, по временам выходили книги отчасти похожие на подобное руководство, как то грамматика Архидиакона Авраама Вагаршпататского, напечатанная в Астрахане, грамматика отца Минаса Бжишкяна в Венеции, но оне не выполнили своих назначений. Первая, будучи только переводом Русской грамматки на армянский язык, содержит в себе только сухие определения правил без практических примеров, а вторая стара и при том Автор, выражая Русские слова Армянскими буквами, перековеркал их Италянским произношением. В доказательство чего могут служить

следующие примеры: напр., вместо того, чтобы передать чистыми Армянскими буквами слова: части речи — շատի բնի, господин Автор перелагает так: yastı gregi; (джасди преджи); слова: местоимение, причастие, наречие, предлог, полк, Генерал и т. д. заставляет произносить вот как: Mestholmenie, Phrritschasthie, narretschle, Prretlog; Pholk, Çeneral (ժեսթոլմենիէ փրիշիսթիէ, նարեշիէ, փրրետլոգ փոլք, շենեանլ). И целая грамматика его исполнена подобными ошибками, изуродывающими произношение молодых Армян, в устах которых теряется вся мягкость и благозвучие Русского языка, между тем, как Армянская азбука пред многими имеет те преимущества, что ею можно выразить даже самые трудные звуки иностранных языков. Кроме того на Русском языке вовсе нет этих букв: շ, ք, յ, չ, где нужно поставить буквы ш (т), к (к), ч (п), р (б), почтенный Автор во всех местах заменяет буквами: 7, 8, 9, и обратно, как что в его сочинении все Русские слова испорчены в чистом своем произношении.

а) Ни мало не имея намерения отнимать заслуги многим отличным трудам членов Армянского Венецианского Мхитаристского Общества, которые всегда имеют в виду образование своих соотечественников, живущих во всех частях света, общепользными книгами, осмеливаюсь только заметить им, что они при переводах своих во всех Европейских языках, позволяют себе коверкать непростительным образом все иностранные слова, как видно из словаря Французского-Армянского, составленного Доктором Авгером, и из других подобных сочинений.

Эти и подобные убедительные причины служили мне поводом к составлению этой книги для моих соотечественников. При составлении ее я руководствовался отличным сочинением известного Немецкого писателя Доктора Таппе, который получил признательность своих соотечественников за основательное, остроумное и легкое расположение правил Русского языка и различных практических задач для перевода с одного языка на другой. Кроме того книга его

содержит сокращенную историю и географию Российской Империи, нравоучительные Басни и Анекдоты с показанием ударений, свойственных всякому слову, при этих достоинствах сочинение его дожило до седьмого издания.

Однако ж не везде следовал я почтенному Автору. Имея в виду совсем другую публику, я почел необходимым переменить некоторые места, где убавить, что казалось мне не нужным, где прибавить, соображаясь со свойствами нашего языка. Так напр. казалось мне излишним вместиť все рассуждения Автора о буквах и правилах Славянского языка. Равным же образом почел я затруднительным передать слово в слово все его философические исследования и определения о частях речи, я постарался по возможности изъяснить их ясно, коротко и свойственно нашему языку. Зная также по опыту, что практические примеры склонений более понятны в особенности для малолетних, чем Таблицы, то я исключил сих последних и оставил только первые. При конце Российской Истории прибавил еще некоторые замечания, относящиеся к странам и народам Закавказского края.

В желании обратить внимание Филологов, исследующих происхождение народов от одного поколения по сходству языка, и на отечественный мой язык, я присовокупил еще особенную Таблицу слов одного значения и звука, находящихся на Русском, Армянском, Немецком и Французском языках.

И как Автор в друзьях своих Пургольде и Тиеме, нашел себе сотрудников, так и я имел ревностным сотрудником Г. Аркадия Араратова, учителя Армянского языка при Тифлисской Гимназии.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԻԳՐԱՆԻ ԿԱՄ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Պարոն Տիգրանին ով որ ճանաչում էր, շատ սիրում, պատիվ էր տալիս։ Նա ինքն էլ ամենի լավն էր կամենում, մեկին մեկ ծանր խոսք չէր ասում, մեկի սիրտը չէր կոտորում, ու հենց իմանում էր թե աշխարհն իրան են բախշել, երբ մեկ մարդի լավությունն էր անում։ Հարեանները կովելիս, գլխերներին խելք էր դնում, իրար հետ բարեշացնում, մեկ ջահել մարդ՝ որ ուզում էր տուն գնի, նրան խրատ էր տալիս, գլխի քցում։ մեկը հիվանդանալիս խկուլյն դնում էր տեսություն, հալը հարցնում, սիրտն առնում, գեղ, գեղապետ ուղտրկում։ Թե իմանում էր, թե մեկն աղքատ ա ու ապրուստ չունի, նրան քոմակ էր անում, մեկ բանի վրա կանգնացնում, որ ձեռը շահ դառնա։ Եսպես նրա սիրտն ու հոգին էնքան իր համար չէր հոգա քաշում, ինչքան ուրըղի համար։ Բաս ո՞վ չէր էսպես մարդին սիրիլ ու գլխիցն ալելի պատիվ տալ։

Առավոտը շատ շուտով վեր էր կենում, օրվան շատ փայլը իր բանի հետ ըլում, իրիկունը գալիս իր օղլուշաղի մեջը, որ մի քիչ սիրտը բացվի։ Տուն որ մտնում էր, խկուլյն կնիկը՝ անունը՝ Աննա, ուրախ, ուրախ գալիս էր առաջը իր երեխեքանցը՝ Վարդանին, Հովհաննեսին, Շղիսարեթին մօտը բերում ու իր գառնուկ ծծի քոփա մանուկին հոր ձեռը տալիս։ Մեծ էրեխեքը սկսում էին իրանց քաղցը հոր ճոռփն ընկնիլ, ձեռը համբուրիլ ու հացի կանչիլ, որ նրանց բարի մերը հաղիք էր արած ըլում։ Գերակրներն էլ, զորդ ա, քիչ էր ըլնում, բայց առողջ ու բարեհամ։ Հացը վեր քաղածին պես պետք էր որ նրանց սիրելի հերը նրանց պատմություն աներ։ Հենց նա սկսում էր թե չէ, էրեխեքը ուրախ, ուրախ հավաքվում էին մօտը, գլխերները դնում իրանց հոր ծնկան վրա ու սուս փուս

անկաջ զնուժ, մինչև աչքըները նղղում նրանց իմաց էր անուժ, թե հանգստանալու վախտն ա:

Մեկ օր էլ պարոն Տիգրանը նրանց իր պապերի պատմությունն արեց ու հետո քուն գրեց: Դեռ ինքը տեղը չը մտած, մեկ էլ աչքը քցեց էրեխեքանց էրեսին: Էնպես քաղցր քնած էին, ինչպես հրեշտակ, երեսները վռնել, վարդ էր դառել ու անմեղ շունչ էին քաշում: Իսկույն վազեց կնկա մոտ, դուռ կանչեց, որ դա տեսնի, թե էրեխեքն ինչպես են քնել: «Ախ սիրելի մայր, տես, թե քո սիրուն էրեխեքը ինչպես քաղցր քնած են, ինչպես զինջ, անմեղ են: Ախ, քանի քանի ողորմելի էրեխեք էս սհաթին տանջվում կըլին, որը ցավի ձեռիցը, որը անտերությունից, որի հերը կըլի մեռած, որի մերը եղին շունչն ընկած, ու քո էրեխեքն էսպես հանդիստ են ու մեր աչքի առաջին: Փառք տուր աստըծուն, որ նրա աչքը մեղ վրա էսպես քաղցր ա: Գոհ եմ քեզանից, արարիչ աստված, դու սրանց անմեղ օրը էսպես միշտ պահես ու մեղ էլ կարողություն տաս, որ քո ճամփիցը դուրս չի դանքա:

— Ե՛ս քո արգար աղսթքն ու բարի դործքն ա, որ սրանց պահում աք, ասաց Աննա: Ե՞րոնն ա, քոնն, սիրելի մայրք, պատասխանեց Տիգրանը:— Զեք օրը էսպես միշտ քաղցր ըլի, սիրելի էրեխեք, քաղցր քնիք, քաղցր վեր կենաք, մեր աչքի լիսք, ասացին երկուսն էլ ու զնացին:

Բայց ախ, դեռ աչքըները նոր էին կպցրել, որ հենց ըռնես, տունը գլխներին փուլ էկա՛վ ու լեղապատառ վեր թռան: Ե՛մեր աստված, դու չարը խափանես, բարին առաջնորդես, էս ի՞նչ խարար էրք, ասեց զողալով Աննա: Գը՛ռ, — մեկ էլ թոփը արաքեց ու տունը տակ ու վեր արեց: Դիշերվան էն սաքսափելի սհաթին էլ օ՛ւմ ջանումը սիրտ կմնար: Իսկույն զանգակներն էլ սկսեցին քաշիլ, դալմադալի ձենը, սուք ու չիվան երկինքն էր հասել: Ե՞րադաքը կրակ ա ընկելք, ձեն տվեց Տիգրան:

Ե՞րադաքը կրակ ա ընկելք, զոռաց Աննա, երկուսն էլ տեղըներիցը վեր թռան ու շորըները հաքան:

Աննա փանջարի փարդեն որ եղ չի քաշեց, տեսավ, որ իրանց տան մոտ մեկ տուն բոցի միջումը վառում ա:

Դլխին տվեց ու գոռաց: Ե՛մեր տունը քանդվեց, մեր օրը խավարեց, հիմիկ որդիորա, մեր տունը կկաշիք, ասեց ու իրանից զնաց: Տիգրանն էլ էր մնացել սառած, մոլորված:

Շուտով էլի խելքը գլուխը հավաքեց, կնկա ձեռը բռնեց ու ասեց. «Աննա, ինչ ասեմ, անկաջ կանե՞ս»:

Երեսիս վրա, գլխիս վրա, պատասխանեց. «Ճշմարիտ ա, մենք կորած ենք, թե որ մեր գլուխը ահին տանք, մեր խելքը կորցնենք: Ինչ որ անենք, էն ժամանակը բոլորը թաքս կգա ու հետո բոցի, կրակի բաժին կըլինք: Ամա թե որ մեր ուշ ու միտքը հավաքենք, մեր արածն իմանանք ու շտապինք ոչ, ամեն բանը լավ կգա: Կարելի է, թե շատ բան պրծացնենք, կարելի է, թե մեր ամեն բանն էլ անփաստ մնա: Կուզե՞ս որ էսպես անես ու գինջանաս»:

Երնչքան կարող եմ, կանեմ, ասեց Աննա:

Ե՛տա՛տ բարի, ասեց Տիգրան, հիմիկ միտք արա, թե քո զատերի միջին ինչն ա քո աչքի ուզածը»:

Ե՛մ էրեխեքը, իմ էրեխեքը», ասեց մերը լալով:

ԵՁու՛նքի էդպես ա, կրկնեց Տիգրան, ուրեմն զնա, նրանց վեր կացրու, ամա ուսուլով, ձեն չհանես, լաց չըլիս, թե չէ էրեխեքը կվախենան ու, աստված հեռու տանի, գլխըներին մեկ բան կգա»:

Աննա մի քիչ սիրտ առավ, շունչ քաշեց ու զնաց, կամաց էրեխեքանցը զարթեցրեց, որ վեր կենան, շորըներ հաքնին: Ե՛րա-ղաքը կրակ ա ընկել», ասեց, եու էնպես վախոթի, լալն էն ա, որ մարդ օյաղ ըլի, ավելի չքնի»:

Պարոն Տիգրանն էլ էս միջոցումը միտք արեց, թե մը բանն առաջ պրծացնելու ա, փողը հավաքեց ու մեկ տորբակի մեջ ածեց. հետո թղթերը վեր առավ, կապեց մեկ բոխչու՛մ: Հենց էս բանումն էր, որ տան ներքևիցը մեկ ձեն էկավ:

Ե՛ղ մի ա՛յ, դռնովը ձեն տվեց:—Ե՛ն մարդիքն են, որ դուք նրանց լավություն էք արել, էն ձեր գլուխը սիրող, քո աղ ու հացը իմացող մարդիքն էկել են, որ քո նեղ օրը քեզ պետքը դան: Ու-զում ենք, որ ջանըներս քեզ դուրբան տանք, քո տունը պրծաց-նենք», մեկ տղամարդ ասեց: Ե՛ձ հա՛, քեզ պրծացնենք, մեզ ինչ կլի, ըլի՛ս, ամենն էլ ձեն տվին:

ԵԱստված ձեր մեկ օրը հաղար անի, շատ շնորհակալ եմ, շատ, ընչանք չմեռնիմ, որ ձեր լավությունը վճարեմ, կրկնեց Տիգրան, ամա դեռ ինձ չպրծացրած, մեկ լավ միտք արեք, թե ինչ պետք է անեք: Խառնվելով բան չի դառնալ»:

«Պարոն Հովհան, առաջին օթախը դու վեր առ ու լավ թամու-
ղացրու, ամեն բանը դուս տար: Պարոն Կարապետ, երկրորդ օթա-
խի հոքսը դու քաշիր: Պարոն Գասպար, երրորդ օթախն էլ դու
վեր առ. ու իմ սանահերն էլ զատերի հետ թող գնա, որ չի կոր-
չի ու սալամաթ տեղ հասնի»:

Էրեխեքն էլ իրանց բաները հավաքեցին: Հովհաննեսը իր
խաղալիքն ու կոճին, Վարդանն իր զրքերն ու թղթերը, ու Նիդ-
սարեթը իր կարն ու կտորը:

Հենց զատը, մատը, հավաքել, կապել էին, մեկ կնիկ բեղափիլ
տուն ընկավ, ու առանց մեկ խոսք ասելու, կռնատակիցը մեկ սա-
լա հանեց ու զաղերը մեջը դրեց:

«Մեր զաղերը ձեր ես տանու՞մ, հարցրեց Աննա: Ե՛նտեղ,
ինչ տեղ որ մյուս զաղերն են», ասեց:

«Էս ինչ ասածու օրհնած հոգի յա, ասեց Աննա, զարմանալով,
որ մեղ էկել, քոմակ է անու՞մ»:

«Բո՛մակ, կրկնեց էն կնիկը, քոմակ, ես իմ պարտքն եմ ու-
ղում վճարեմ, քոմակըս որն ա: Դձևք չէիք, որ իրեք տարուց առաջ
ինձ մահիցն ազատեցիք: Դձևք չէիք իմ էրեխեքանցը հաց ու ջուր
տալիս: Դձևք չէիք իմ տեղի հախը վճարում: Քեզպես կինարմատի
համար պետք է կրակն ընկած, թնչ քոմակ: Էս խոսքն ասաց,
սալեն զլխին դրեց ու դուս գնաց:

Պարոն Տիգրանն էլ դուս գնաց, որ տեսնի, թե կրակը մո-
տացել ա, դա, իր սիրելիքը ազատի, քանի իր տունը կրակ չէր
ընկել:

Էս միջոցումս Աննա, էրեխեքը հետը՝ մնաց տանը: Ոտի տա-
կին կրակ էր վառվում, լեղին ջուր էր զտել: Էնպես էր կար-
ծում, թե էն վերջի օրն էր, որ իր էրեխեքանց հետ մեկտեղ
քնել էր, ու էնքան լավ լավ օրեր էր քաշել: Աչքը արասանքով
լցվեց, ուղում էր որ էրեխեքը չտեսնին, բայց չկարաց ծածկել:

Հազար բան էին հարցնում էրեխեքը: Որ մեր տունն էրվի,
ձեր պետք է կենանք: Կերակուրն թնչ տեղ կեփենք: Աղեն իր
ապրանքը թնչ [տեղ] կդասի:—Վերջ ամենայնի, բոլորն էլ սկսե-
ցին սաստիկ լալ: Հենց էս սհաթին Տիգրանն էկավ: Ե՛րարդ մի
անեք, ձեր չարը տանիմ, ասեց, մենք պրծել ենք, կրակը հանգց-
րինք, ասածուն փառք: Մեր տունը, աշխատեն, գոմը, բազն ու
բակը՝ բոլորն էլի մեր ձեռին կմնա: Բոլոր՞, ձեռն տվին էրեխեքը
ու վերըվեր թռան:

բոլոր, պատասխանեց հերբ: Ու զիտեք, թե ձվ ա մեր ազատության պատճառը, էս աստվածասեր մարդը, որ տեսնում եք: Էս որ ասեց, մեկ մարդի ցույց տվեց, որ ոտից մինչև գլուխը թրջվել, տմկվել էր ու ցրտի ձեռիցը փեղացել:

Էնս մեր պարոն ղիվանարեղի Մարտիրոսն ա, թե սա չէր էլել, մեր տունը վաղուց մոխիր կըլիը դառել ու ձվ ա խաբար, թե ձւր պետք է փախչինք: Ամա սա կրակի առաջին կանգնած՝ հրամայեց, որ կրակ ընկած տան մօտի տունը քանդեն ու ինքն էլ հետն էր չալիչ դալիս: Խալիսն բանագլխու դրեց, շուր բերիլ տվեց, փող, փեշքաշ խոստացալ, ի՞նչ ասես, որ չարեցա: Ե՛կա, խնդրում եմ, որ բանն էդպես չմեծացնես ասեց ղիվանարեղին, ի՞նչ եմ արել, որ էտքան դովում ես ինձ, ամեն աստվածասեր, բարի մարդը՝ էսպես նեղ վախտին՝ էլի իմ արածը կաներ: Ի՞նչ մեծ բան ա, մարդ մարդի կյանքը պրծացնի, էդ մեր առաջին պարտքն ա: Ե՛տա բարի, ես էլ ձենս կկտրեմ, ասեց պարոն Տիգրան, լայց Աննա, շուտ արա, աչքի լույս, դնա ցամաք շորեր դուս բեր, որ մեր բարեկամ սիրելին իրանը փոխի, թե չէ ցուրտը սրան փնաս կտա:

Աննա ուզեցալ տուն վաղի, ղիվանարեղին ձեռից բռնեց, եղ քաշեց: Ե՛հաց, կաց, ասեց, չեմ կարող շորերս փոխիլ:

Ե՛ինչ ես ասում, հարցրեց զարմանքով պարոն Տիգրան, էդ նամությունը հո ջանդ կըմանի, տենդ կդառնա, քեզ կսպանի, թե շորերդ չփոխես: Դիվանարեղին էս խոսքի վրա ծիծաղեց ու ասեց. Ե՛հաղար մարդ էս շորերումը տենդ էլ կճարեն, մահ էլ, ամա ինձ փնաս չկա: Ես իմ ջանի որպիսությունը ղիտեմ. ու ղիտեմ էլ, թե ինչքան կարող եմ համբերիլ: Էտուր դարդը մի քաշեք, ամա թե ձեզ նեղություն չի ըլիլ մի քիչ տաք շորվա, կամ մեկ թաս ղի-նի խնդրեմ ինձ տաք:

Նետի պես դնաց Աննա աշխանեն: Եղիտարեթ եղեվիցը վազեց: Դարավաշը պատրաստությունը տեսալ: Մի քիչ վախտ չքաշեց, բոցը օջաղումը քուլա-քուլա վովալով շորվեն հասցրեց: Դիվանարեղին կերավ, պրծավ, թե չէ, օրթում կերավ, թե էս շորվեն նրան ավելի համ տվեց, քանց հարուստ մարդքերանց՝ իրանց անոշ անոշ կերակրները:

Էս միջոցումը էրեխեքը նրա բուրբեշուրջը կանգնել՝ նրան ոտիցը բռնած մինչև գլուխը մօտիկ էին անում, վարդան էնքան

սիրտ արեց, որ նրա ձեռիցը բռնեց ու հարցրեց. «սպարոն աղա, ընչե՞ն ա, որ ձեզ նամ շորերը փռաս չին տալիս»:

Բժե կուգես, ասեմ, պատասխանեց նա, էրեխությունիցս սկսած սիրելի երեխա, ես իմ մարմինը պնդացրել եմ, պողպատ եմ շինել: Ինչ ժամանակ դեռ էզպես պստիկ մատղաշ էի, ինչպես դու, չէի գիտում, թե բմբլի բարձն ու յորդան դռնակն ի՞նչ գատ ա: Մեկ դարմանի ատրոսկ իմ դռնակն էր, յորդանս բրդով էր լիքը, ու թեթև Հերս ինձ միշտ գուռ էր տանում՝ անձրև գալիս էլ, ձիւն գալիս էլ, ցուրտ էր ըլում, թե արեգակ: Առավոտը ուրիշ էրեխեքը չայ էին կուլ տալիս, իմ կերածը մեկ կտոր սև հացն էր, իմ խմածը մեկ թաս կաթը: Տես, աչքի լույս, իմ մարմինս էստով է էսպես դայիմացել, քար դառել, որ ամեն նեղության համբերում եմ: Թե էսպես չէի արել, նամությունը ինձ կհիվանդացներ: Թուլ պահած, նազուք մարդը որ մարմնի ետեվիցն ա ընկնում, կես մարդ ա, նա չի կարող էսպես բանի համբերել:

Բարբի գիշեր ձեզ, սիրելիք, ասեց, մեծ ու պստիկ հանգիստ քնեցեք, ու ձեր ահիցը գինջացեք: Շնորհակալ եմ ձեր տաք շորվի համար: Պարոն Տիգրան շատ ուղեց, որ նրան իր տանը պահի, ու էնպես մութը գիշերը առն չթողի, չելալ, բարբի մարդն նրանց ձեռին հուփ ամեց ու գուռ գնաց:

Պարոն Տիգրան սկսեց չալիշ գալ, որ տարած բաները էլ եղբերեն, էրեխեքանցը քուն դրեց ու ինքն էլ գնաց, որ մի քիչ աչքը կպցնի:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

(Հատված)

Հենց առավոտը լուսացավ թե՛ չէ, Վարդան վազեց գնաց հոր մոտ ու ասեց՝ ԵՍիրելի հայր, մեկ խնդիր ունիմ քեզ մոտ, պետք է որ չկոտրես:

Հայրը.— Ի՞նչ ա քո խնդիրը անուամիդ մեռնիմ:

Վարդամ.— Ինձ համար մեկ դարմանի դռնակ շինիլ տուր, որ վրեն քնիմ:

Հայրը.— Ի՞նչ տեղից ես էդ բանը միտք արել:

Վարդամ.— Չեմ ուզում, որ կես մարդ ըլիմ, ուզում եմ, որ ինչպես մեր գիվանդեզին սաղ մարդ դառնամ:

Հայրը.—Ընչի՞ համար ես ուզում:

Վարդան.— Որ ես էլ մարդի քոմակ ըլիմ, փորձանքից ազատեմ, երբ ձեռս հասնի:

Հայրը.— Ձեռդ ինձ տուր, էրեսիդ մատաղ: Ո՞վ կուռնենա քեզ պես լավ տղա: Ձէ թե դարձանի դռակ, քեզ համար ուրիշ բաներ էլ կճարեմ, որ ջանդ դայիմացնես:

Վարդանն էս բանն իմացավ թե չէ, վազ-վազ անելով գնաց իր քիւր ու ախպոր մոտ ու ձեն տվեց: Քչովհաննես, Եղիսարեթ, նոր խաբար իմացել էք, հերս ուզում ա ինձ համար մեկ դարձանի դռակ շինիլ տա: Հազար որ մեռնիք, ձեզ չեմ տալ ու չեմ թողալ, որ վրեն քնիք:

Իսկույն նրանք էլ գնացին հոր մոտ ու աղաչանք արին, որ իրենց համար էլ շինիլ տա, նա էլ խոստացավ. էլ լիջ...— Կենց իմանում էին աշխարհ իրանցն է:

Էս ուրախությունը նրանց չմնաց: Մեկ քանի բան պատահեցավ, որ բոլորն էլ շատ նեղացան: Վարդանն ու Հովհաննեսը պետք է վարժատունը գնային, ու իրանց գդակը չէին դնում: Վերջապես գտան, երբ հերն ու մերը շատ ման էկան: Կես սհաթ անց էր կացել: Վարժատան վախտը ուշացել էր, գիշում էին, որ կնախատեն:

Պարոն Տիգրան էլ գնաց, իր թղթի պահարանը բաց արեց, որ իր բանը հոքա, ինչ ուզում էր, չկար, ինչ թղթի ջուղար, որ գրելու էր, կորել էր, գլում էլել: Ինչ գրքեր որ ունեւր ու հասարը գրում էր, չէր գտնում: Էս ու էն էկան, որ իրանց հետարը տեսնին, մնացին մոլորած: Աշխատելու, բանի վրա կենալու տեղը սաղ առավոտը ման էր եկել, շատ բան գտել, բայց մեկ բան չշինել:

Նրա բարի կնկա հալն էլ էսպես էր ու պակաս ոչ: Սա էլ իր ժամանակը ման գալով էր անց կացրել: Հացը քցելիս՝ ոչ ամանն էր երևում, ոչ գդալ, ոչ սուփրա, ոչ ազտման: Դեղձանգեղ դառն, բայց ինչ անես, որ էնքան պտրտել էին, որ հացի վախտիցը կես սհաթ էլ անց էր կացել:

Հենց որ ձեն տվին, ամենն էլ էկան, որ հաց ուտեն: Բայց էնպես ուրախ չէին, ինչպես ամեն օր: Էրեխեքը խռովել, քիթները կախ էին արել, մոր հրեսը սկացել, ամալ էր դառել. պարոն Տիգրան հո՛ էնպես էր նոթերը կիտել, գլուխը կաշ֊ գցել, ինչպես մեկ խաչի դուր: Ամեն օր հացի վրա խոսում, ասում, ծիծաղում էին,

էս օր հացն էլ վեր քաղեցին, մեկի բերնիցը մեկ խոսք էլա դուս չէկա՛ւ: Լուռ, տխուր նստեցին, հացըները կերան ու վեր կացան:

Վերջապես պարոն Տիգրան բերանը բաց արեց ու ասեց, որ էնպէս վատ օր իր կենաց միջումը չէր տեսել: Ինչ ուզում էի ձեռ բերեմ, իր տեղը չէր, բոլորը խառնիխուռը ընկած էին: Մեկ բան էի ուզում էս առավոտ շինեմ, էն էլ ման գալով կորցրի:

ԲՑե Էսպէս առավոտ շաթ պատահին, ասեց Աննա, սիրտս կպատռի, էլ չեմ կարող համբերի: Բեֆս էնպէս ա կտորվել, որ էլ աչքս մեկ բան չի գալիս: Ինչ ուզում էի, պետք է պտրտեի՜ս:

Նրեխեքն էլ էս ասեցին, Թե չէին իմանում իրանց զրօքերը, Թղթերն ու խաղալիքը ձեր մնացին:

Էսպէս նեղանալով, տրտնջալով ոչինչ չի դառնալ ասեց Տիգրան: Թե որ ուզում եք, որ էլի ուրախ մնաք, պետք է որ մեր զաղերը կարգ քցենք ու ամեն բան իր տեղը դնենք, որ ուղածին պէս՝ էլ ման չի գանք:

Ե՛ր միտքս էն ա, որ էս օր էլ ուրիշ բանի ձեռ չի տանք, մեր զաղերը տեղավորենք, որ անցկացած գիշերը էնպէս խառնվեցին:

ԵԱչքիս վրա, շատ բարի, ասեց Աննա, քանի որ տունս կարգ չի ընկել, հենց կիմանամ, Թե իմ արեգակը դեռ դուս չի էկել:

Հացը վեր քաղեցին Թե չէ, սկսեցին ամեն բանը կարգ քցիլ: Պարոն Տիգրան Վարդանին հետը վեր առաւ, որ իրան քոմակ անի: Մերը՝ աղջկանը, բայց Հովհաննես, չուռքի որ պատիկ էր, ձեռիցը բան չէր գալ, գնաց վարձատուր:

Աննա՛ դեռ մեկ բանի ձեռ չա՛յած՝ սկսեց աղջկանը մեկ կարճ իրատ ասիլ. Ե՛ր աչքի լույս Նդիսաբեթ, ասեց, դու էսօր քո աչքովդ տեսար, Թե անկարգությունը ինչ վատ բան ա էլել: Մարդի սիրտը սեանում, կտրվում ա: Մեկ բան ձեռիցը չի գալիս: Թե ուզում ա մեկ բան շինի, հինգ սհաթ բանի եղեվիցը պետք է ման գա ու ժամանակը կորցնի: Թե ուզում ես ուրեմն, որ սիրտդ միշտ ուրախ պահես, կարգ սովորի: Մեկ նոր բան ձեռդ էկածին պէս, միտք արա միշտ, Թե ինչտեղ պետք է դնես: Ինչ տեղից մեկ բան որ վեր առնիս, էլ եզ էնտեղ դիր, որ էլ ուրիշ վախա դես ու դեն չընկնիս: Էսպէս մոռթը վախտն էլ կարող ես ուղածդ գտնիլ: Հիմիկ նայիր, Թե ինչպէս պետք է՝ մեր զաղերը կարգ քցենք: Էս պահարանը որ տեսնում ես, սուփրի Թախումի համար է: Էս մյուսը՝

շորերի համար. էն մեկն էլ աման չամանի ու շանգալ-դանակի համար. էն մեկն էլ հացի ու խոտակի համար. Ամենի վրա մեկ թուղթ էլ կկայցնեմ, որ խմանա, թե թնչ պետք է դնես նրա մեջը. Ա՛յ թուղթը, անուեններն էլ դրած. սուփրի թախում, շորեր, խոտակ, աման չաման. Արի բարձր բանանք, ինչ որ հանես, էն պահարանի առաջին դիր, ինչ տեղ որ կպատկանի. Թե էնպես բան էլ ռաստ գա, որ էս պահարանների աթիլ բան չի, էս պուճախը դիրձ:

Էս որ պրծան, սկսեցին բարձր բանալ. Եղիսաբեթ ինչքան ուրախ էր, որ ամեն բանի տեղը իսկույն գտնում էր. Աննա էլ շատ ուրախացավ, որ իր զագերը էլ եղ կարգ ընկան:

Վերջը էլի մեկ բան լիս ընկավ, որ նրանց շատ նեղացրեց. Բարձի միջումը տառներկու հատ պատվական թաս էին փշրվել, չուռքի էն խառնված ժամանակին, պղնձե ամանի հետ էին զրել. ԵՏես, աչքի լույս, ասեց Աննա, Եթե անկարգությունը ինչքան վնասակար է: Էս թասերը մինչև մահս կուռնենայի, թե իրանց տեղն էին դրած էլել. Բայց չուռքի պղնձի հետ էն էլել, էսպես փչացել են. Դեռ քո խելքը չի կտրում, թե անկարգությունն ինչ փիս զագ է: Մարդի շորերը ապականվում են, փոխնորդը փշանում, չինիքը կտորատվում, թաս, շուշա փշրվում, հաց ու խոտակ մուռտատվում, ամեն բանը ձեռաց գնում ա, թե իրանց տեղը չեն դրած ըլում՝:

Իրիկվան սհաթի վեցին ամեն բանը կարգ, սարք ընկավ. Աննա ուրախությունիցը չէր գիտում, թե ինչ անի. Պարոն Տիգրան էլ իր զրելու սեղանն էր կարգ քցել:

ԴԼՈՒՆ ԵՐԸՈՐԴ

(Հատված)

Վարդանը, մյուս օրը ամենիցը շուտ վերկացավ ու սկսեց էն օթախը, որ հերն իրան էր տվել, ալելի կարգ քցել. Ինչ ուռներ, լավ նայեց, ու զրքերի համար ջոկ տեղ նշանակեց, թղթերի համար՝ ջոկ, պատկերների համար՝ ջոկ, շորերն էլ մեկ տեղ դրեց, խաղալու բաները՝ մեկ ուրիշ տեղ, ու մյուս մնացած բաներն էլ՝ այլ տեղ. Հետո սկսեց ամեն բանն իր տեղը դնիլ, օթախն ավելի թղթի կտորտանքը, աղպը դուռ ամիլ, խտակիլ, ու գնաց որ հորը կանչի, գա, իր օթախը տեսնի. Հենց տուն մտավ թե չէ, ճակատը մեկ թիզ եղ բացվեց, որ տեսավ, թե որդին ինչպես ա իր զագերը կարգ քցել:

Հերը Էրեխի ուսին խփեց ու ասեց. «Հիմիկ քո օթախը տաս-
նապատիկ լմի՛ չի, քանց առաջ, ու քեզ ավելի՛ չի դուր գալիս:
Էսպես ամեն վախտ քո զառերը կարգին պահիր, մեկ բան վեր
առածին պես, էլ եղ տեղը դիր: Սրանից ավելի դարդարանք քո
օթախին չես կարող տալ: Կարգն ու խտակությունն ավելի կը-
դարդարեն, քանց նաշխը, ներկը, խալիչեն, պատկերն ու սեղան,
աթոռ: Եղիսաբեթին էլ կանչեցին, նրան էլ շատ դուր էկավ էս
կարգը ու ինքն էլ սկսեց իր բաներն էնպես սարքիլ:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

(Հատված)

Հենց պ. Տիգրան ուզեց հացի նստի, մեկը դուռը ծեծեց: Ե՛նքս
էկե՛ք, ձեն տվեց: Էս որ ասեց, մեկ ջահել մարդ ամաչելով ներս
մտավ ու հարցրեց. «Իրեք հարյուր ոսկի հո չ՞՞ք կորցրել?»

Տիգրան.— Բա ինչ, չըլլ՞մ, դուք գտել եք:

Մարդ.— Փող գտել եմ, ամա ձերն ա, թե չէ, ինձ չի հայտնի,
կըլլ՞ որ ինձ ասեք, թե ձեր փողն ինչպես էր կապած:

Տիգրան.— Քաթանի միջի, վրեն էլ դրած Հ.Մ.Ս. Թավրեզ:

Մարդ.— Շատ ուրախ եմ, որ ձեր փողը հիմիկ ձեզ կտամ:
Էս խոսքումը մուշանքեն դրեց պ. Տիգրանի առաջին, որ իսկույն
ճանաչեց:

Տիգրան.— Շատ ուրախ եմ, որ իմ փողս գտա, ամա դհա
շատ ուրախ եմ, որ ձեզ նման հալալ մարդի հետ ծանոթացա:

Մարդ.— Էլ ինձանից մուստառ մարդ թվ կըլեր, թե ձեր փողը
պահել, կերել էի:

Տիգրան.— Ինչպե՞ս ձեր լավության տակիցը դուս գամ:

Մարդ.— Իմ վարձքն էն ա, որ գիտեմ, թե իմ պարտքի տա-
կիցը դուրս էկա:

Տիգրան.— Ծջմարիտ ես ասում, դուք ձեր վարձն առաք,
չունքի գիտեք, որ հալալ մարդ եք: Էս քեզ համար մեկ տուն ոս-
կուց տվելի յա: Էստուր համար էլ քեզ վարձ չի հասնիլ ինձանից,
ամա իմ պարտքն էլ ա, որ շնորհակալ ըլլիմ: Ձեր անունն ինչ ա:

Մարդ.— Իմ անունս Կարապետ Վահանյան:

Տիգրան.— Պարոն Կարապետ, թնչ գործի վրա ես ըլում:

Կարապետ.— Ոչինչ, ուզում եմ ուսումնի տամ:

Տիգրան.— Ո՞ր գիտությունն ես ավելի սովորել:

Կարապետ.— Բնաբանությունը, առավել բուսոց պատմությունը, երկրիս, ու ինչ որ աչքդ տեսնում աս, նրանց պատմությունը, աշխարհիս պատմությունը ու հայի, ռաի, թուրքի լեզուն:

Տիգրան.— Էրեխի դաս տվի՞ ես հեշ:

Կարապետ.— Ի՞նչպես չի, մինչև էս օր Ն. քաղաքումը էրեխեք էի կարդացնում:

Տիգրան.— Ի՞նչպես էր, նրանք սիրում էին ձեզ, թե չէ:

Կարապետ.— Թե ճշմարիտն ասեմ, էրեխեքը լաց էին ըլում, երբ նրանցից հեռացա, ու եկան մեկ խելիմ տեղ էլ ինձ ճամբա քցեցին:

Տիգրան.— Շատ բարի, բայց ի՞նչպես աս, որ տեղ չունիս:

Կարապետ.— Էս քաղաքումը շուտով տեղ չի ճարվում, դուսն էլ ես չեմ ուզում գնամ:

Տիգրան.— Պատճառն ի՞նչ աս:

Կարապետ.— Մեկ պառավ մեր ունիմ, որ իր բոլոր ունեցածը ինձ վրա ե խարջել, չեմ ուզում նրան թողամ ու նրա լավության տակին մնամ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(Հատված)

Պարոն Տիգրանը, էն առավոտը մի քիչ վաղ վեր կացավ, դնաց Վարդանի քնած տեղը ու ձեն տվեց: Վարդան, կուզե՞ս հետս պարոն գիվանքեզու մոտ գնանք:

Վարդան աչքերը արորեց ու հարցրեց: Ի՞նչ:

Տիգրան.— Ասում եմ, թե պարոն գիվանքեզու մոտ կգամ:

Վարդան.— Հենց էս սհաթին:

Տիգրան.— Հա, հենց էս բոպին:

Վարդան.— Շատ լավ, իսկույն շորերս կհաքնիմ, Եղիսաբեթն էլ պետք է գա:

Տիգրան.— Թե կուզի թող գա:

Հերը սրան թողեց, նրա մոտ գնաց: Եղիսաբեթի սիրտն էլ իրանը չէր:

Կես սհաթումը երկուսն էլ հազրվեցին, եկան փանջարի տակն ու իրար անկաջում փսփսացին:

Ե՛րեք մասլահաթ ունիք, էրեխեք, հարցրեց հերը, ինձ էլ կասե՞ք:

«Ընչի՞նչ է, ասեց Վարդան, մենք ձերիցն ենք խոսում, որ քղա-
լա-քուլա վեր ա թափում։ Ես չեմ վախենում հեշ, չուռքի ջանս
դհա կղայիմանա։ Ամա Եղիսարեթն ինչ պետք է անի։

«Ե՛ս, հլա սրան մտիկ արեք, էլի ուզում ա, իրան գովի,
ասեց Եղիսարեթ։ Ինչ Վարդան կարա, ես էլ կարամ։ Միտելի հայր,
ինձ հո հետդ կտանձնա։

Թե կուզես, արի, հերն ասեց, ամա...

Եղիսարեթ.— Ա՛մես որն ա։

Տիգրամ.— Ամա...

Եղիսարեթ.— Միտա հո պատուեց, թի՛նչ ամա, թի՛նչ։

Հայրը.— Ամա, ով ուզում ա իրան ջանը զայիմացնի, չի
պետք է լա սառը քամին քթովը դիպչելիս։

Եղիսարեթ.— Ինձանից լաց ըլող չի ըլի, սիրելի հայր, հա-
վատաց կաց։ Ես էլ եմ ուզում, որ ջանս պինդ ըլի։

Հոպես իրանց քաղցր մորը համբուրեցին ու ճամբա ընկան։
«Փահ, փահ, փահ, քեֆն էս ա, էս, ասեց Եղիսարեթ, ձնի
թեփը էրեսին դիպչելիս,— լաֆն էս ա, էս մեկ զվաթ կտա։ Քե-
ֆով դնացին։ Մեկ սնաթից կղը մեկ բարձր տեղ հասան, որ քա-
մին շատ դուռ էր անում։ Փամուռ հենց դեմն ու դեմն էին դնում,
որ էնպես էր աչք ու բերան ձնով լցնում, որ առաջները էլ չէին
տեսնում։

«Օ՛հ, օ՛հ, ինչ լավ ա, էսպեսով կգորանանք, ասացին։

«Բա, ասեց հերը, ով ուզում ա ջանը զայիմ, պինդ ըլի, պետք
է էսպես դառը հավին էլ դիմանա։

Հոպես ուրախ-ուրախ դնում էին, որ մեկ էլ էն տեսան, քա-
մին նստեց, ձինը եղ քաշվեց ու արեղակը դուռ էկավ, հավեն տա-
քացավ։

«Դիվանքեզու մոտ թի՛նչ պետք է անինք, հարցրեց Վարդան։

Հայրը.— Նրանից շնորհակալ ըլինք։

Վարդամ.— Իմ մտքումն էլ էդ էր, ամա ինչպես պետք է
շնորհակալ ըլինք։

Հայրը.— Առաջ ձեռը կրոնենք ու իրան կասենք, թե մենք
նրա լավությունը չենք մոռացել, հետո պետք է աչք ածենք, որ
մենք էլ նրան պետքը դանք։

Վարդամ.— Կուզե՞ս, որ ես էլ նրան ծառայություն անիմ,
սիրելի հայր, ինչպես էն էրեխեն։

Հայրը.— Եդ չի ըլիլ սիրելի զավակ, պարոն զիվանքեզին մեզանից հետու ա կենում: Թե ուզենաս նրան ծառայես, պետք է զնաս, նրա մոտ կենաս, ու էս չէ կարելի: Եդ իմ բանն ա, հալբաթ մեկ կերպ նրան պետքը կգանք, էն ժամանակը քեզ կասեմ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Հացիցը եզը զիվանքեզին իր տղին հրամայեց, որ իր փոքր զոնաղներին տանի բաղը, հառուղի մոտ ու ձկներին հաց քցի: Սրանք էլ ուրախ-ուրախ հետը գնացին:

Պարոն Տիգրանը մնաց զիվանքեզու մոտ:

Երախտավոր չէ՞ս, ասեց նրան, որ էսպես ազատ տեղը կենում, էս քաղցը հովը վայելում, ցանում, տնկում, շինում ես, ինչպես սիրող ուզում ա, էսքան կենդանիքը քեզ են մտիկ անում ու քեզանից էսպես գոհ են, որ իրանց պահում ես:

Դիվամբեզի.— Եղպես շուտով մի դադիր, աչքի լույս, ասեց, դու մենակ իմ ուրախությունն ես տեսնում, ամա...

Տիգրամ.— Ամա քո չարչարանքը չեմ տեսնում: Ղորդ ա, ամեն մարդ նեղություն ունի, աշխարքն էսպես ա:

Դիվամբեզի.— Ամա իմ նեղությունը ինձ հալում, մաշում ա:

Տիգրամ.— Կարելի է մեկ ճար անիլ:

Դիվամբեզի.— Կարելի ա, չի էլ կարելի: Զիանքս, կովերս, զշերս բոլոր քեզ դուր էկան, էղպես չի՞:

Տիգրամ.— Շատ, չափիցը դուս:

Դիվամբեզի.— Բայց որդի՞ս:

Տիգրամ.— Որդի՞դ:

Դիվամբեզի.— Հա, որդիս, իմ Ստեփանը, որ հետքներս հացի էր նստած:

Տիգրամ.— Նրան լավ չտեսա, թնչ ասեմ:

Դիվամբեզի.— Կըլի, որ չես ուզում իմ սիրտս ցավացնես: Ա՛խ, իմ որդին, իմ Ստեփանը, առաջ ինչպես լավ էր, խոնարհ, կամուկատար, լսող, արի, միր, խոտակ, կարգին ու հիմիկ... ախ, լեզուս չորանում ա, խելքս թռչում, թնչ ասեմ, դառել ա մեկ թամբալ, զիժ, անկարգ երեխա: Խաղից, քնից, անկարգությունից ավելի, էլ միտքը բան չի գալիս:

Տիգրամ.— Պատճառն թնչ ա, որ առաջ լավ էր ու հիմիկ էղպես բերադի փոխվել ա:

Դիվամբեգի.—Պատճառը՝ Ա՛խ, լեզուս բռնճւմ ա, որ ասեմ
(էս խոսքումը ընկալ պարոն Տիգրանի ճտովն ու լալով ասեց),
Ստեփանս իր մերը կորցրել ա:

Տիգրամ.— Իրավ, էս մեծ տարաբախտություն, մեծ կսկիծ ա
ձեզ համար: Ես լսել եմ, որ շատ պատվական ջան ա էլել:

Դիվամբեգի.— Ա՛խ, պատվական ջան, պատվական մեր, նրա
հօտը մեր կըլի: Նրան օր ունելի, ինձ համար դինջ իմ բանս էի
անում, հանգը գնում, գրերս գրում, իմ ապրանքի, տան հետ էի:
Ստեփանս նրա աչքի տակին էր ըլում: Տանը, որ չէի ըլում, չէ թե
մեհակ նրան էր մտիկ անում, թամուկացնում, կարգի էր պահում,
ձեռը բան էր տալիս, զլխին խրատ դնում, որ ինձ ու ամեն մար-
դի սիրեկան ըլի ու ուրախացնիլ—Տուն գալիս, ուրախ, ուրախ
տոաջս էր վազում, դպակ ու փեղս ձեռիցս առնում, դրադ դնում,
տանում մօր մօտ (էս որ ասաց, աչքերն արտասունքը կոխեցին,
էլ չկարաց լեզուն շարժիլ, մնաց լուռ կանգնած, ախ քաշեց ու
արտասունքը սրեց) անխ, բերանը բաց արեց, գեջտանգեջ, մօր
մօտ, տետրակը բերում, ու գրածը շհանց տալիս ու ասում, սիրե-
լի հայր, տես ես եմ գրել, լմով չի, հավանճւմ ես, թե չէ:

Հիմիկ, որ տանիցը գուս եմ գալիս, իմ բանին գնում, մնում
ա ինքնագլխու, անտեր, իր քեֆին վազվզում ու անկարգ, փիս
տղերքանց հետ շորերը պատառում, կոխ ա տալիս: Տուն որ գա-
լիս եմ, էլ աչքիս չի էրևում, դուխն առնում կորչում ա:

Տիգրամ.— Ափսոս, շատ ցավում եմ. մեծ դարդ է, ապոված
ինքը ճար անխ էս բանումը ես շատ բախտավոր եմ, փառք իրան:
Իմ էրեխեքանց ազիդ մերը դեռ կա: Մեկ պատվական, հալալ կաթ-
նակեր մարդ էլ գտել եմ, որ նրանց ուսումն ու կրթությունս տա:

Սրանք դեռ բանից խաբարություն չունին, ու էքուց շատ
կուրախանան, երբ նրան ինձ մօտ տեսնին:

Դիվամբեգի.— Ա՛խ, երանի քեզ, բարեկամ, որ էդ բախտի
տերն ես:

Տիգրամ.— Թե կուգես, քեզ հետ փայ կանեմ:

Դիվամբեգի.— Ի՞նչպես:

Տիգրամ.— Թե Ստեփանիդ ինձ կհանձնես, իմ կնիկը նրան
մեր կդառնա, ես նրան հեր, ու իմ վարժապետը նրան էլ իմ էրե-
խեքանց հետ ուսումն կտա:

Դիվամբեգի.— Ա՛խ, էդ բանը, որ անես, էլ լ՞նչ կուզեմ աշ-
խարքի երեսին:

Տիգրան.— Անբլ... հավատացնում եմ քեզ, որ ես հենց սրա համար եմ էկել, որ քեզ ռաջադրեմ, շունքի լսեցի, որ տղիդ համար շատ ես նեղանում:

Դիվանբեգի.— Թե որ ձեզ չարչարի ոչ:

Տիգրան.— Ի՞նչ չարչարանք, էդ թնշխոսք աւ Բաս չարչարանք չէ՞ր, որ իմ տունն ազատեցիր:

Դիվանբեգի.— Էդ մեկ սնաթ քաշեց:

Տիգրան.— Ամա հազար օր պետք ա չարչարել, հազար ցավ, կակիծ տար, նոր տուն պետք է շինելի, նոր սկսելի հացի տեր դառնալ:

Դիվանբեգի.— Բայց որդիս շատ տարի պետք է ձեր տունը մնա:

Տիգրան.— Էս փոքր նեղությունն թնշ պետք է ըլի էն նեղության առաջին, որ ինձ պրծացրիր: Կարճ, թե ինձ հավատում ես, որդիդ ինձ տուր, իմ որդեքերանց պես նրան կպահեմ, ու կտեսնիս թե թնշ տղա կդառնա:

Դիվանբեգին շատ խոսալուց ու միտք անելուցը եղը, խոսք տվեց, որ որդին նրան տա:

Էս բանումը Ստեփանն էլ տուն էկավ: Վարդանն ու Նդիսարեթը ուրախ-ուրախ պատմեցին, թե ինչպե՞ս ձկներին հաց էին քցել ու իրանք էլ մտիկ արել, ուրախացել:

ԵԱռաջ ես հացը քցեցի, ասեց Նդիսարեթ: Ե՛ւ որ տեսան, հարյուր ձուկը թռան ջրի երեսը, ասեց Վարդան, Ե՛ւ հացը փախցնում էին, ասեց Նդիսարեթ: Ե՞րեք էր մեզ համար, քեֆ, ասացին երկուսն էլ:

Ստեփան զնաց փանջարի մոտ ու ոչինչ չասեց:

ԵԿուզե՞ս էս սիրուն էրեխեքանց հետ քաղաքը զնամլ, հարցրեց հերը: Ստեփան մատը բերանը դրեց ու ոչինչ չասեց:

ԵՊատասխան տուր, թնշ ես լեզուդ փակել, Ստեփան ջան, աչքի լույս, մեր չունիս, որ քեզ պահի, սրանք ունին: Սրանց մերն ուզում ա քեզ մեր դառնա, ու քեզ էնպես պահի, ինչպես քու լուսահողի ազիդ մերը: Կուզես հետընթեր զնաս, ասած:

Ստեփան ունքերը կիտեց, գլուխը պտտեց:

ԵԶեմ դարձանում, Ստեփան ջան, որ դու քո ազիդ հորիցը չես ուզում հեռանա, ասեց պարոն Տիգրանը, բայց մեր տեղը հեռու չի, մի վախենար: Իրեք սնաթվա ճամփա է: Բաղի անդամ իրար մոտ նստած վախտըներս մեկ էլ էն կտեսնիս, որ ձիու ոտի ձենն ա գա-

լիս, թփ', թփ', թփ'... կվազես փանջարի մոտը ու կտեսնիս, թո՛ւնչ, Հերս
գալիս ա, հերս գալիս ա, ձեն կտաս, կվազես առաջը, ճտովը կընկ-
նիս, փահ, ուրախությունն էս ա... մեկ լավ միտք արա՛, թե ճշմա-
րիտ չեմ ասում։ Բազի վախտ էլ մենք հետընկերս կվերցնենք, դե,
դնանք... ձեր, քո հոր մոտ, էստեղ էլի ուրախությունն, էլի քեֆ:
Զեն ուզիլ էսպես անճա՛:

Ստեփանը նոթերը կիտած, էլի գլուխը պտտեց:

Եփեմես ինչ կա, Ստեփան ջան, ասեց Տիգրան, չուների նա
ուզում եմ մեզ մոտ կենաս, քնաս չունի, զնանք մեկ քանի օր կաց,
թե սիրտդ վեր չի գալ, էլի ձին հազիր, կնստիս, կգաս, քո ձեռն
նվ ա բռնում։ Է՞ս էլ չես անիլ:

Ստեփան էլի գլուխը թափ տվեց սեացած ամպի պես:

ԵԱՐԻ, արի, զնանք, քեզ հո չեն սպանում, ասեց Վարդան,
հերդ որ ուզում ա, դու ինչ խոսք ունիս, հորն ընդդիմություն
կանճն, յա խոսքը կկոտորի՞ն։ Իմ հերն էլ էսպես սիրում ա քեզ,
մենք էլ նմանապես, էլ թո՛ւնչ կուզես։ Մեր մերն էլ, որ տեսնիս, էլ
կշտիցը չես ուզիլ հեռանալ։ Գնանք: Էս որ ասեց, ձեռիցը բռնեց,
որ հետը տանի, բայց անի։ Ստեփան ոտը պատին դեմ արեց, ձեռը
դուռ քաշեց, կպավ փանջարիցն ու գոռաց. Եզվորն էկել էք, դենը
զնացեք, ինձանից թո՛ւնչ եք ուզում, չեմ գալիս, չեմ գալիս, զոռի
բան չի հո: Բայց չուների Վարդան ձեռը բաց չթողեց, վրա թռավ,
նրա ձեռն էլ մեկ լավ կծեց, չանդռեց ու արենլվա արեց:

Խեղճ Վարդանը, ճարը որ կտրեց, ձեռը բաց թողեց ու տխուր,
արտում հոր երեսին նայեց:

Խեղճ դիվանբեզին շատ ամաչեց, որ որդին էնպես անկարգ,
վատ էր, ու պարոն Տիգրանին ասեց. Եթողեք էս փիս էրեխին ինձ
մոտ մնա, ու աստված ձեզ հետ, սրան լավություն անիլն ավստո է:

Պարոն Տիգրանը մի քիչ էլ զրից տվեց ծածուկ ու երեխեքը
վեր առավ, բարով մնա ասեց ու բազը դնաց:

Աչքդ բարին տեսնի, մեկ սիրուն, երկու ձիով լծած կառեթ,
էստեղ հազիր կանգնած էր: Խնչի՞ համար է, հարցրեց: Քեզ էսքան
նեղություն տվինք, հերիք չէր:

Դիվանբեզի.— Էդ բերիլ եմ տվել, սիրելի բարեկամ, որ էրե-
խեքանցովդ նստիս տուն զնաս:

Տիգրան.— Կառեթով թո՛ւնչ հարկավոր է, ոտով կերթանք:

Դիվանբեզի.— Ընչի՞ ոտով:

Տիգրամ.— Որ մեր ջանը դայիմացնենք: Վարդան, ոտով կերթաս, թե կառեթով:

Վարդամ.— Ես իմ հորս խոսք եմ տվել, պարոն աղա, որ իմ ջանը, դայիմացնեմ, որ ժամանակավ ես էլ էնպես պիտանի մարդ դառնամ: Ինչպես դուք: Պետք է խոսքիս հաստատ մնամ:

Տիգրամ.— Դեռ ինչպես ես Եղիսարեթ:

Եղիսարեթի սիրտը, երևում էր, որ ուզում ա կառեթով գնա: Գլուխը մեկ դ՛ի վրա քաշ քցեց, ժպտաց, միտք արեց ու ասեց, ինչ որ Վարդանը կարա, ես էլ կարամ:

Տիգրամ.— Դու ինքդ լսում ես, աչքի լույս, էլ թ՛նչ ասեմ: Առաջ էրեխաքանցս օրինակ տվիր, որ իրանց ջանը դայիմացնեն, հիմիկ ուզում ես, որ էլի նրանց սիրտը խառնես:

Դիվամբեգի.— Աստված ոչ անի, գնացեք, աստված ձեզ հետ: Էս օրերումը կգամ ձեր տեսությունը:

Էնպես իրարից բաժանվեցին, ու պարոն Տիգրանը էրեխաքանց հետ ընկավ ոտով ճամփա ու գնաց տուն: Հավեն էլ էնպես սարդ չէր, քամին նստել էր, ձինը եղ քաշվել, մենակ ճամբեն էր մի քիչ ցիտոտ, ու էս մի քիչ նեղացնում էր նրանց:

Ժամանակը կարճացնելու համար, պատմեց նրանց հերը ճամփին, ինչ որ զիվանբեգու մոտ տեսել, լսել էին, ինչպես աշխատավոր մարդ էր, ինչպես տունը ամեն կարգով, սարքով լիքն էր, ինչպես ամենին քոմակ էր անում:

Դիվանբեգին որ էնպես լավ մարդ ա, ասեց Վարդան, բայց նրա տղեն ընչի՞ համար ա էնպես վատ:

Տիգրամ.— Դեռ չի սովորել, որ լավ ըլի:

Վարդամ.— Ախր պատճառն ինչ ա, որ չի սովորել:

Տիգրամ.— Ձունքի սովորցնող չունի, նրա մերը մեռել ա, հերը շատ զործ ունի, չի կարում նրան մտիկ տա, վարժապետ չունի տանը, ինչ պետք է արած: Ախր, իմ սիրելի որդիք, էրեխեն, որ բարի ծնողաց ու վարժապետի ձեռի տակի չմեծանա, աստված հեռու տանի, ինչ որ բան ասես կսովորի, ծույլ կըլի, մուռտատ, փիս, իրան առածի, քառանկալ:

Ես էլ շատ բան ունիմ, ու չեմ կարող ամեն սհաթի ձեզ վրա աչք ունենալ, ինչպես որ կուզեմ: Ախ՛ թ՛նչ լավ բան ա, որ աստված մեզ՝ ինձ էլ՝ ձեզ էլ խեղճ ա էկել ու էմպես քաղցր, բարի, սրտացավ մեր ութիք:

«Ու էդպէս աստվածասեր, արդար հեր...»:

Մեկ ձեն թփի ետեիցը ձեն տվեց, որ ճամբի վրա էր: Իսկույն ձեն տվողն էլ լիս ընկաւ, ու ընկաւ հոր ու որդուց վըզովը: Էս էն բարի մերն էր, որ ասեցինք, որ առաջներն էր էկել:

Ինչ նրանց սիրտն էր, աստված ամեն մարդի տա: Մերը տան անցկացած բաները պատմեց, էրեխեքը ղիվանքեղու մոտ տեսած, լսածը, ինչ վայելել էին, ինչ սիրտն բան առաջներն էր էկել: Էսպէս խոսալով էկան, տուն հասան, ուր որ հացը հազիր էր: Ծամփեն իշտահները բաց էր արել, հացը որ կերան, պարկեցին:

ԳԼՈՒԽ ՅՈՒՆԵՐՈՐԴ

Մյուս օրն էլ շատ խոսեցին էն բարի ղիվանքեղուցն ու նրա վատ որդուցը: Մտեփանին ուզում էի հետս բերեմ, ասեց Տիգրան, նրան ուսումն տամ, կրթեմ, ու էստով նրա հոր լավության տակիցը դուս գամ, բայց նա, չէր իմանում, թե իրան օգուտն եմ ասում: Դուք, սիրելի որդիք, հիմիկ լավ կիմանաք, թե բարի սնունդը ինչ լավ բան ա, ափսոս, որ զործս չի թողում ամեն օր ձեզ նայեմ:

«Մեր մերը հո մեր կշտին ա, լինչ ես դարդ անում, պատասխանեց Եղիսարեթ:

«Միշտ չէ: Ծառ վախտ էնպէս պատահում ա, որ ոչ ես եմ ձեզ մոտ ըլում, ոչ ձեր մերը: Էս շատ մեծ ցավ ա մեզ համար: Ծառ հեշտ բան ա՝ էնպէս վատ բնություն ստանալ, ինչպէս Ստեփանը: Կճւղեք, էնպէս ըլիք:

«Ա՛խ, չէ՛, չէ՛, աստված ոչ անի, երկուսն էլ ձեն տվին, մենք կուղենք որ բարի զավակ ու ձեր սրտովն ըլինք:

«Ես էլ էդ եմ ուզում հենց, էս պատճառով մեկ բարեկամի խնդրել եմ, որ դա, մեր տանը կենա, ձեզ վրա աչք ունենա, ուսումն տա, որ իմ բարի զավակ ըլիք, աստծո հաճելի, մարդի դուրեկանա:

«Մեկ բարեկամ որ մեզ դաս տա, մեզ վրա աչք ունենա, հարցրեց Վարդան: Ի՞նչ մարդ ա, ո՞վ ա:

«Ես էլ նրան կճանաչե՞մ, հարցրեց Եղիսարեթ:

Էս խոսքումը դուռը բաց էլաւ, ու մեկ ջահել մարդ նեքսե մտաւ: «Էս ա, էն բարեկամը, որ ձեզ իրան պետք է տամ, ասեց պարոն Տիգրան, ճանաչո՞ւմ եք:

«Ա՛խ, էս մեր ազիզ պարոն Կարապետն ա, ասեցին էրեխեքը, որ քո փողը դտաւ ու բերեց:

Տիգրան.—Քանքս էս էլ լավ պատճառ չեք ունենալ, որ ձեր շնորհակալությունը նրան ցույց տաք: Ամեն օր նրա մօտ կըլիք, ամեն օր կարող եք՝ ձեր հնազանդությունովը, ձեր նրա կամքը կատարելովը ձեր շնորհակալությունը նշանց տալ:

Վարդան.—Աչքիս վրա, սիրելի հայր, Քո կամքիցը չեմ դուռ դալ՝ սիրելի պարոն Կարապետ:

Նդիսաբեք.—Ծն էլ նմանապես:

Տիգրան.—Էն ոսկիքը, որ սա գտավ ու բերեց, դորդ ա, մեզ պետքն ա: Ամա սա որ ձեզ սնունդ ու ուսուսմն տա, էն իմ աչքին ամեն բանից ավելի ա:

ԵՏԵՆՈՒՄ ԵՔ, սիրելի էրեխեք, ասեց պարոն Կարապետը, որ ձեր պատվելի հերը, ինձանից շատ լավ կարծիք ունի: Բայց դուք էլ ճանաչեցեք, էն ժամանակը կտեսնեք, ձեր բարեկամն եմ, թե չէ: Թե որ տեսնեք, որ ես ձեր լավն եմ կամենում, ու ձեզ սիրում եմ, հույս ունիմ, թե դուք էլ ինձ սիրեք ու ասածս անեք: Գնանք վերի օթախը, որ ձեր հերը ինձ ա տվել, որ իրար հետ ճանաչվինք, իրար սիրտ իմանանք:

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Պարոն Կարապետի մեծ ջաֆեն էս էր, որ միշտ նրանց աչքը բանա, իրանց ձնողաց լավությունն իմանան ու շնորհակալ ըլին: Մեկ օր նրանց հետ սեյր դուրս դնալիս, Նդիսաբեթ մնաց եղ: ԵՆԴԻՍԱ, ուր մնացիր, ձեն տվեց վարժապետը: Իսկույն վազելով էկավ, շուռնը կտրած ու բուռը քաց արեց. մեջը լիքը մանիշակ էր: Ե՛ս իմ ազիզ մոր համար եմ քաղել, ասեց ուրախ-ուրախ: Շատ կուրախանա, որ հետս տանիմ, իրան տամ:

ԵՀԱՐԹ, որ կուրախանա, ասեց պարոն Կարապետը: Ա՛խ ես էլ, որ ձեզ պես երեխա էի, սիրելիք, իմ մեծ-մեծ ուրախությունն էն էր, որ մեկ բան գտնիմ, տանիմ հորնը մորս ու նրանք էլ ուրախանան: Էս պատճառով շատ սիրում էի իմ պատիկ բախչին: Սաղ զարուհն ու ամառը էնտեղ բանում էի, փորում, ցանում, տնկում, ջրում, քոլը քաշում, քախանում, պատրուում, քշտում: Բազի վախտ, որ սալեն լիքը սալաթ, կանաչի, լոբի չէի տանում մորս, բազի վախտ, որ փնջով ծաղիկը, անոշ ունեանք, վարդը, չէի դնում սեղանի վրա, որ հերս հոտ քաշի, մխիթարվի, փխ, չեմ կարող պատմել, թե ինչքան նրանք ուրախանում, ինձ սիրում,

օրհնում էին: Չուների, ինչ որ տանում էի, ես էի բառամիշ արած
ըլում, իմ աշխատանքն էր, իմ ձեռի պտուղը:

«Ո՞ւմնից ստացար քո բախչին, հարցրեց Վարդան:

«Իմ հորիցը, պատասխանեց Կարապետ:

«Իրտես թի՛չ կա Եղիսա, ես էլ բարեցըս կենդրեմ, որ ինձ էլ
մեկ պատիկ բախչա տա:

Եղիսաբեթ էլ խոսք տվեց, որ խնդրի Պարոն Կարապետն էլ
ասեց, որ բախչին շինելիս, նրանց քոմակ անի:

Էս էր, որ նրանք իմացան, մինչև վերջը է՛ն էին խոսում,
թե ինչպես պետք է բախչին շինեն, ի՞նչ պետք է տնկեն, ցա-
նեն: Ես խիար կցանեմ, չուների մերս շատ ա սիրում, բոխկ ու կա-
նաչի, չուների հերս շատ ա սիրում, ասեց Վարդան: Եղիսաբեթ
միտք էր անում, որ ծաղիկ ու ունհան ցանի, որ հորնըմոր համար
փուռնջ կապի:

«Շատ կուրախանամ ու շնորհակալ կըլիմ, ասեց մեկը
նրանց եղեվիցը:

Հենց էրեսները շուռ տվին... միս, ով էր, իրանց պատվա-
կան հերը: Վարդան աջու ձեռը, Եղիսաբեթ ձախու ձեռը բռնեցին
ու երկուսն էլ աղաչանք արին: «Բարի ջան, մեկ պատիկ բաղչա
բաշխիր մեզ, քո չարը տանինք:

Հայր.— Բախչին թի՛չ կանեք:

Վարդամ.— Ուղում եմ ցանեմ:

Հայր.— Ի՞նչ,

Վարդամ.— Ինչ որ ըլի, խիար, լոբի, կանաչի:

Հայր.— Ե՞րբ ես ուղում, խիարը ցանես:

Վարդամ.— Վաղը, վաղը:

Հայր.— Վաղը: Որ դուս դան, հո ցուրտը կտանի:

Վարդամ.— Ա՛խ, սիրելի հայր, դու ինձ ու Եղիսաբեթին
բաղչեն տուր: Մենք գիտենք, թե ինչպես կցանենք, կպահենք,
ինչ որ չենք գիտում, մեր սիրելի վարժապետը մեզ ցույց կտա:
Ինքն էլ ա մեզ խոսք տվել, որ բաղչեն քցելիս, մեզ քոմակ ըլի,
Պարոն Կարապետը հավատացրեց, որ ուրախությունով կա-
նի էս բանը:

«Շատ բարի, ասեց պարոն Տիգրանը, ձեզ բաղչա չի պակսի,
թե որ աշխատիք ու լավ պահեք: Հենց էս սահթին իմ բաղն եմ
դնում, թե կուզեք, մեկ տեղ ձեզ համար կնշանակեմ:

«Լանվ, լանվ, ձեն տվին էրեխեքը, քեֆ, քեֆ էն կըլի՝ Էսպես վեր-վեր թռչելով գնացին հոր հետ բաղը»

Բաղը, որ մտան, պարոն Տիգրանը մեկ քանի անգամ դես ու գին գնաց, հետո մեկ տեղ մնաց կանգնած ու ասեց. «սիրելի որդիք, մտիկ արեք, էստեղանց մինչև պատը ձերն ա, ինչպես կուզեք, էնպես արեք»:

«Շատ շնորհակալ ենք, սիրելի հայր, ասացին երկուսն էլ ու ձեռը համբուրեցին»:

Դհա շատ ուրախացան, երբ հերը ջիրիցը զանազան սերմո-րենք հանեց ու նրանց բռնեց:

«Էս սերմորենքանց ձրը պետք է առաջ ցանած, սիրելի պա-րոն Կարապետ, հարցրեց Վարդան: «Սալաթն ու կանաչին», պատասխանեց:

Իսկույն կանաչու սերմը վեր առավ ու ուղում էր, որ շաղ տա: «Էդպես շուտով չի ըլի, աչքի լույս, ասեց պարոն Կարա-պետ: Առաջ պետք է հողը փորած, կոշտերը փշրած, ու մարդ շի-նած: Եղիսարեթի համար դժվար կըլի Ես նրա տեղը կրանիմ, կուզե՞ս, որ քեզ համար էլ փորեմ»:

Վարդան պատասխան տալու տեղ, դուս պրծավ, երկու բահ ըրեց, որ պատնըդուս դրած էր, մեկը իր վարժապետին տվեց, մեկն էլ ինքն առավ ձեռը ու սկսեց փորել: Բայց չէր իմանում, թող բահի վրա դնի, թե բահը ոտի ու հենց քացի էր տալիս, ինքն էլ հետն էր կուռնդկի տալիս: Լերն ու վարժապետը ծիծաղու թուլացան: Վարժապետը վերջապես բահը ձեռիցն առավ ու նրան նշանց տվեց, թե ինչպես պետք է բահի, կամ բանացնի: Վարդան էնպես արեց, ինչպես տեսավ ու քիչ, քիչ բանը հեշտացավ: Հերը թամաշ էր անում: Շատ չքաշեց, մեկ թաքուջակ էլ նա առավ ձե-ռը, չուխեն հանեց, ու կոշտերը փշրեց, փորածը դեց:

Մեկ չարեք սհաթ չքաշեց, Վարդան բահը եզ դրեց ու մեջ-քըն ոլորեց ու ասեց. «Ա՛խ, ես չէի իմանում, թե զետին փորիլը էսպես դժվար կըլի: Ջանից ընկա, էլ չեմ կարող: Ոտ ու ձեռս կո-տըրվում են, բոլոր ջանս քրտնքում չխալչխալում ա ու հրես ձեռս էլ մրմնջում ա... էս թո՛չ ա, վա՛յ, արին ա դուս գալիս, ուռել ա, էս հո ինձ կսպանի»:

«Էդ ոչինչ ա, ասեց հերը, մի քիչ փշտել ա, թո՛չ բան ա: Էդ-պես ուռիցքը միշտ էն ձեռումն են դուս գալիս, որ դեռ բանելու

սովոր չի Զուռնքի կաշին կակող ա, թե որ մի քիչ բանի, պնդանա, էն ժամանակը, էգպես ուռիցք էլ չի դուս դալ:

էս օր բավական աշխատեցիր, սիրելի որդի, դնանք տուն, դինջացիր: Ամեն օր, որ բանիս, քիչ-քիչ կսովորիս, ու ամեն բանը կհեշտանա: Հետո դնա շատ զվաթ կուռնենա անոռւմդ ու ամեն բանի կդիմանաս: Մաքսւմդ ա, ինչ որ մեկ քանի օրից առաջ ուղոււմ էիր անիւ: Ասում էիր ջանդ պնդացնես, որ մարդի նեղ տեղը պետքը դաս: Սկսիր փորել, բանիւ, ու բազումը ինչ տեսակ բան կա, արա: Էդով շատ զորութիւն կհարես, որ մեկ օր ուրըշի էլ զժվար տեղը քոմակ անես: Ա՛խ, բազումը բանիւը շատ լավ բան ա, մարդի ջանը սաղ կպահէ, զվաթ կաւ, երանի թե ամեն երեխա բազումը բաներ: Ղորդ ա, ամենը չեն կարող, չուռքի շատը մեկ թղաչափ հող չունի, բաղին էլ ուրիշ պատճառ ունի: Ես էլ բաղ ունիմ, ամա էնքան ա դործա, որ չեմ կարող ձեզ էլ ա էս բանումը պետք դալ: Էն էրեխեքը, որ բաղ ունին, ինչպես դուք, ու էգպես լավ վերակացու, որ ձեզ ցույց կաւ, պետք է շատ դայրաթով բանին: Շատ ուրախ եմ, որ սրտով ուզում եք էդ բանը, ու ձեզանից էլ շատ շնորհակալ եմ, իմ սիրելի պարոն Կարապետ, որ կամենում ես որդոցս էգպես բանը սովորցնիլ:

Մյուս օրն էլ գնաց Վարդան բազը բանելու, ու հալատացրեց, որ մի քիչ հեշտացել էր: Գիշ միջոցումը ամեն բանը հեշտացավ ու Վարդան իրանց հարեան Ավետի որդուցը շատ զվաթով էր:

Բազը, որ փորեցին պրծան, պարոն Կարապետը մարդերը շինեց, ամեն մեկ էրեխին մեկ քանի մարդ տվեց ու նրանք էլ սկսեցին ցանիլ: Մյուս օրը հենց բազը մտան թե չէ, վազեցին իրանց մարդի մոտ, որ տեսնեն թե ցանածը դուրս ա էկել, թե չէ: Ոչինչ չկար: Էսպես ամեն օր դնում, նայում էին ու բան չէին տեսնում: Վերջը վերջը մեկ օր էլ անձրեւ էր էկել, հենց որ մտան էն տեղ, Նդիսարեթ ոտին, ձեռին արեց ու ձեն տվեց. «Վարդան, Վարդան, շուտ վազիր, էս տեղ արի, իմ սալաթս ծլել ա, տեսնում ես, ա՛խ, ա՛խ... Եիմն էլ ա ծլել, տեսց Վարդան: Վազելով դնացին տուն, չէին ուզում էն օրը ուրախութիւնից հաց ուտեն:

Էսպես, քանի սալաթը բարձրանում էր, էնքան նրանք ուրախանում, զլխով պալիտ էին տալիս, ջուր անում, բաղի անգամ ձեռը քսում վրեն, բաղի անգամ հետը խոսում: Հենց, որ լավ մեծացավ, տեսան, որ մեկ սալա կարող էին քաղիլ: Ծածուկ տարան

աշխատեն (կուխեն), տվին, որ շինեն, հազրեն ու հացի վրա դուս բերեն:

Էրեխեքը, հացը որ քցեցին, հազար անգամ դուս ու տուն արին, հացի վրա էլ դեմն ուտում, դեմն իրար աչքով էին անում, մպտում հորնը մոր էրեսին մտիկ տալիս: Պորովածն էկավ, սալաթն էլ հետը:

Շէս ինչ նոր բան, սմլաթ էլ ունինք: Երեխեքը չէին գիտում, ծիծաղին, թե ամաչին:

Որ տեսան էրեխեքանց ես հալը, իսկույն իմացան, որ նըրանց բանն ա: Ծնողքը, մինչև պատիկ Հովհաննեսն համն առան ու շատ գովեցին: Վարդան օրթում կերավ, որ իր օրումը մեկ սալաթ էլա էն համը չի տվել, ինչպես իր բհամ բերածը:

Հսպես նրանց բաղչեն սաղ ամառը նրանց ուրախությունն էր: Մեկ օր մեկ բան էր ծլում, մեկ օր մեկը հասնում, որ քաղում, տանում էին հացի վրա: Բաղի վախտ ծաղիկն էր հասնում, ու նրանք էլ հորնըմոր համար քաղում, փունջ էին անում, սրանք էլ ձեռններին տնում, ուրախանում, շնորհակալ էին ըլում, նըրանց օրհնում, նրանց վարժապետին գովում, պատվում, որ իրանց, էրեխեքանցը էնպես ազնիվ բան սովորցնում էր, որ համ իրանց, համ ալյոց ուրախացնում էին:

ԿԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Մեկ օր պարոն Կարապետը իր աշակերտների հետ դնաց որ խոտեր հավաքի: Ամեն օր էս բանն անում էին: Չէ թե մենակ հոտ քաշելու ու փունջ կապելու համար, չէ, ուզում էին, որ դանազան բուսոց անվանքն ու կերպը սովորին, որ իրարից ջոկեն: Էրեխեքը անչափ ուրախանում էին էս բանի վրա ու մեկ նոր ծաղիկ, կամ խոտ գտնելիս, ափելի էին ուրախանում, քանց էն քաղցըրակեր էրեխեքը, որ իրանց մորիցը, կամ տատիցը մեկ կտոր դաթա, կամ հալվա են ճարում:

Հսպես բույս հավաքելիս, բիրաղի անկաջները մեկ կառնթի ձեն ընկավ: Հանդիցը վազելով եկան ճամփի մոտ, որ տեսնին, թե կառնթումն ձվ կա նստած: Կառնթը քիչ քիչ մոտացավ: Վարդանն առեց, բալքի մեր բարի պարոն ղիվանբեգին ա էկողը:

Շնա յա, նա յա, Վարդան, ձեն տվեց Եղիսարեթ, արբ, արբ

պարոն Կարապետ, շուտ, վաղ՛ք, մեր ազիդ պարոն զիվանքեզին ա զալիս: Մեղ որ տեսնի, ինչ կասի, ախ... ախ...

Նդիսաբեթի ասածը զորթվեցավ: Դիվանքեզին ինքն էր, տեղին էլ հետը: Նրանց որ տեսավ, կառնթը կանգնացրեց, աչքը բաց արեց ու ձեն տվեց, բարոյով, բարոյով, էրեխեք ջան, էկեք, էկեք, կառնթումը նստինք, զնանք: Դեռ նա խոսքը բերանու մն ունեք, որ սրանք վազեցին, թուան կառնթի մեջը, ձեռը հուփ տվին ու մոտին նստեցին:

Ե՛ն ի՞նչ մարդ ա, որ ձեզ հետ էրձ, հարցրեց:

ԵՄեր սիրելի վարժապետ պարոն Կարապետըձ, պատասխանեցին:

Նրան էլ պետք է մեզ մոտ կանչենք, ասեց ու կառնթիցը դուռ թռավ ու չնքան մնաց, որ պարոն Կարապետը նի էլավ, նստեց: Դորդ ա, հինգ մարդի տեղ չկար, ամա հիվանքեզին Նդիսաբեթին զոգն առավ ու էսպես ամենն էլ տեղավորվեցին:

Ձիանքը ոտըները վեր կալան, ու շուտով նրանց տեղ հասցրին, տուն բերին: Տանըցիք, էկողները էնքան ուրախացան, որ էլ չեմ կարող ասիլ: Ստեփանն էլ էր բազի վախտ ունքերը եզ քաշում, ծպտում:

Բայց Նդիսաբեթ կապը կտրել, էնպես բարձր խոսում, պատմում էր, որ մեծերը իրար խոսքը չէին հասկանում: Զուների դիվանքեզին խոտի, ծաղկների անունը հարցրել ու նրան գովել էր, որ նրանց անունը գիտեք, էլ չէր զինջանում, ուզում էր իր բոլոր շնորքը նշանց տա, սանդխտիցը ներքև վազեց, զնաց իր բախչին, մեկ մեծ բուռը ծաղիկ քաղեց, բերեց ու իրանց զոնադին ցույց էր տալիս ու ասում:

ԵՍիրելի պարոն զիվանքեզի, սրա անունը մարգիդ ա, սրա անունը սմբուլ, էս մյուսի...:

Մերը բարկացավ, զրադ քաջեց նրան ու ասեց, բորդի, ուրախությանդ չափ դիր, էդպես չեն անիլ: Անչափ ուրախանալը հիմարություն ա: Էնպես ես բարձր-բարձր խոսում, որ մարդ բան չի լսում ու հերդ ու զիվանքեզին իրար չեն հասկանում: Ինչպես պարծենում, քեզ նշանց ես տալիս, որ ծաղկների անունը գիտես: Էդ ի՞նչ բան ա: Պարոն Կարապետն ա քեզ սովորցրել: Ազջիկ մկամ էդպես կպարծենամ: Ասենք Ստեփանն ըլի պարոն Կարապետիցը էդպես բաները սովորել, ու զա մեզ մոտ էդպես պարծենա, չիս

Նեղանալ, իմ Եղիսա խելոք ազնիկ ա, իմ Եղիսէն էդպէս բան չի պետք է անի: Շատ ուրախություն ա քեզ խաբել, դու չես մեղավոր, ուրեմն հանգարտացիր, երեսիդ մեռնիմա:

Մերն էլ եդ գնաց զոնադների մոտ, Եղիսարեթ էլ գնաց ու էլ էնպէս բարձր չէր խոսում: Ամա իր ուրախությունը չթողեց, չպակասցրեց: Պարոն գիվանքեկին պատմեց, որ նրանց համար մեկ պատկերի գիրք էր բերել հետը, ու կառնթումն էր: Հենց էս լսեց, էլի քամին վեր կացավ, էլի ծուլը ծուլ էլավ ու զոռաց: «Մեկ պատկերի գիրք: Մեզ համար: Վարդան ջան, լսում ես: Մեր բարի պարոն. գիվանքեկին մեզ համար մեկ պատկերի գիրք ա բերել հետը: Կթողմա, գնամ, բերեմա: Դեռ ջուղարը չլսած, ինքն իրան դուս թռավ: Հենց դուս գնաց, թե չէ, չըբխկ... մեկ թրխկոց էկավ մեծ տանը, հենց իմանաս տասներկու թաս կոտրվեցին:

Բոլորն էլ վախեցան: Աննա դուս գնաց, դուռը, որ բաց չարեց, աչքերը մնացին սառած, ութ չայի թասի տակ, չայդան, կաթնաման, չաքարաման, բոլոր գետնի վրա վեր էին թափած, մեկ գիրք էլ կաթնի ու չայի միջումը լղղում էր: Ղարավաշը զոզը ջանն առած՝ մնացել էր կանգնած, Եղիսարեթ կատվի պէս զոզում էր, ռանկ-մոռնկը թռած, սպրթնած, թե հիմիկ որդի որ ա, մերը դուս կգա, իրան բեարուռ կանի: Ե՛ն թնչ խաբար ա՛ն, հարցրեց մերը:

«Սիրելի մայր, ասեց Եղիսարեթ կիսաբերան, ձենը փորն ընկած, ու լալով, էլ թե անեմ, ինձ... ինձ...»:

«Ես ուզում եմ իմանամ, ասեց մերը, թե ինչ ա պատահել էստեղձ:

Եղիսարեթ լայիս էր, դարավաշը ջուղարը տվեց. էսպէս պատահեցավ, որ ես չայը բերում էի, ինչպէս հրամայել էիր, էսպէս դալիս էի, ուշքս վրաս չէր, Եղիսարեթ բիրադի էնպէս զիպավ ինձ, որ բոլորը ձեռիցս վեր ընկավ: Ինձ վրա չի պետք է Նեղանաք, ես մեղավոր չեմա:

Աննա թնչ արեց: Եղիսարեթին ծնծեց, կամ սիլլա խփեց, դարավաշին բեարուռ արեց: Քավ լիցի, ոչ էս, ոչ էն: Նա իրան սովորեցրել էր, իր բարկությունը նստացնի: Էնպէս հանգարտ գնաց, տոլարը (զանջինեն) բաց արեց, նոր չայի թասեր հանեց ու հրամայեց, որ շուտով չայը տուն բերի, հետո երեսը ետ դարձրեց Եղիսարեթի վրա: «Եղիսա, ես քեզ չասացի, թե քո ուրախութեանը

պետք է չափ դնես: Ով իր ուրախութեանը չափ դնիլ չի կարող, նա չի իմանալ, թե ինչ ա անում, ու շատ անգամ մեկ հիմարութուն մյուսի եղևիցը կգործի: Դու ինձ չլսեցիր, տեսնում ես, ինչ պատահեցաւ: Էս սնաթին էտ կտորտանքն հալաքիւր, կաթն ու չաշն էլ դաստամալով, կամ հին շորով սրբիւր: Ղարափաշն էնդուր համար չի էստեղ, որ...»: Միրելի մայր, քո չարը տանիմ: Ինձ բաշխիր էս մի անգամը, ասեց Եղիսարեթը, ես ինքս...»:

Աննա էլ մտիկ չարեց ու զնաց զոնադների մոտ: Եղիսարեթ մոր ասածն իոկույն ական թոթափիլ կատարեց: Եղիսարեթ մորիցը էլ մեկ պակաս խոսք չիմացաւ, ամա սաղ օրը նրա ուրախութունը փչացաւ: Բոլորն ուրախ էին, նա տխուր արտում, զուխը քաշ արած: Պատճառ էլ ունեւր: Շատ ժամանակ չկար, որ մտքումը զրել էր մորն շատ ուրախացնի, էսօր էնպես նեղացրել էր իր անչափ ուրախութունովը ու էնքան փռաս տվել, էլ նրա սիրտը բաց կըլնէր:

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Հացիցը հզը զնացին պարոն Տիգրանի բազը ման գալու: Ստեփան, որ մինչև հիմիկ էնպես լուռ, անսաս իր համար նստած կար, սկսեց բիրդանբիր բացվիլ ու Վարդանի հետ էն սիրուն բազի վրա ուրախանալ:

Հերը զրազ քաշեց նրան, ու հարցրեց, ինչպես ես տեսնում էստեղ Ստեփան, սիրտդ վեր դալիս ա:

Ստեփան.— Շատ լավ, հայր:

Հայր.— Կուզես էստեղ մնալ:

Ստեփան.— Ձէ, հայր:

Հայր.— Ձեք էլ ուզիլ, որ մեկ քանի օր էս սիրուն Վարդանի, նրա պատվական ծնողաց ու էն բարի պարոն Կարապետի մոտ մնամ: Թե սիրտդ վեր չի գա, էլի կտանիմ ինձ մոտ:

Ստեփան.— Էստեղ չեմ մնալ, չեմ...

Հայր.— Որ ես հրամայեմ:

Ստեփան.— Ձեմ մնալ, չեմ մնալ, ինչ կուզես, արա:

Էս բանումը պարոն Տիգրանը վրա հասաւ, հերը խոսքը կտրեց իսկույն, շուռքի ամաշում էր, որ որդին էնպես փիւս, անհնազանդ էր: Իրիզնադեմին կառեթը լծեցին, բերին տան դռան առաջին կանգնացրին: Ստեփան աչքը գցեց կառեթի ետևը, առա-

ջը, տեսավ, որ չամաղանը չկա, որ կառնթի ետեին կապած էր, շուր է չամաղանը, հարցրեց կառնթ քնդին:

«Չամաղանն էստեղ պետք է մնա, իմ ջահել պարոն, ասեց: Իսկույն իմացավ, որ հոր միտքն էն ա, որ իրան էնտեղ թողա: Ի՞նչ արեց: Իսկույն մտավ, կառնթումը ծանրագոգոթ նստեց: Հերը նրանց բարով մնա ասեց, շնորհակալություն արեց ու հարցրեց, Վտեփանս ձեր ա՛ն: Չունքի մեկն էլ չէր տեսել նրան, հենց իմացավ թե դուս ա գնացել, ասեց էս գնա լավ էլավ, բաժանվելիս էլ ոչ նա դարդ կանի, ոչ հա: Իմ կողմանե երեսին պաշ արա, ու ասա նրան, թե շուտով էլի կգամ, նրան կտեսնիմ: Էս խոսքումը մեկ էլ պարոն Տիգրանի ձեռին հուփ տվեց ու կառնթը վեր էլավ: Հենց դեռ ոտի մեկը կառնթումը, մեկը գետնի վրա էր, որ տեսավ, թե իր խելոք Ստեփանը գող կատվի պես մեկ զրազում կուչ էր էկել, տազ արել:

Նեղացած էլ եղ վեր էկավ ու ձեն տվեց, Վտեփանս էստեղ ա էլի, մենք չենք խաբար, ինչ պետք է արած:

«Ի՞նչ պետք է արած: Ինձ թող, ես դիտեմ, ինչ կանիմ: Մտավ կառնթի մեջը ու ասեց: Սիրելի Ստեփան, քո էն ազիդ հերը քեզ չի ասել, որ մեզ մոտ պետք է մնան:

«Ես չեմ ուզում, պատասխանեց Ստեփան:

«Չես ձգում, ասեց, քո ազիդ հորը չես ուզում հնազանդիս Շաաբարի, չունքի չես ուզում, պետք է անես: Էլ ոչ խոսաց, ոչ խոսք հարցրեց, երկու ձեռով կոնատակիցը վեր քաշեց, կառնթիցը հանեց ու դուզ, տուն տարավ: Ինչ Ստեփանն էր անում, աստված հեռու տանի: Էնպես էր զոռում, էնպես հարայ տալիս, բղավում, ճղավում, ոտները թափեթափ տալիս, որ բոլոր հարեանները զլխները փանջարեքանցիցը հանեցին, որ տեսնին, թե հո մարդ չեն սպանում, յա քերթում:

Բարեսիրտ դիվանբեզին կսկծու ուզում էր, որ գնա, որդուն հանգստացնի, պարոն Տիգրանը չթողեց: «Էսպես երեխի զլխին խրատ գնի չի կարելի, ասեց: Սրան ուրիշ ձևով պետք է ճամփա բերած: Պարոն Կարապետին թող, նա սրա տեղը կգտնի: Էսպես տխուր, սիրտը ցավով լիքը կառնթումը նստեց պարոն դիվանբեզին ու գնաց:

Պարոն Կարապետը Ստեփանին տարավ իր օթախը: Հենց բաց թողեց, թե չէ, կատաղած գազանի պես վրա վազեց, որ դուռը

բաց անի ու փախչի Ռայց պարոն Կարապետը էս վաղուց վարա-
վուրդ արել, զուռը փակել էր: Էս որ տեսավ, ձենը սաղ տունը
վեր կալավ: Պատերը զոդում էին՝ էնպես էր զոռում, ոտները
գետնին տալիս:

Մտեփան, հարցրեց պարոն Կարապետը, կուզե՞ս ինձ ան-
կաջ անիլ, թե չէ՞:

«Ձէ՛, չէ՛, պատասխանեց, չեմ ուզում, ուզում եմ մեր տունը,
իմ հոր մոտ գնալ, ասեց ու էլի ոտները քարեքար տվեց, զոռաց:

Շատ բարի, պատասխանեց պարոն Կարապետը, թե չես
ուզում անկաջ անիլ, ես էլ հետզ չեմ խոսալ, ինչ կուզես, արա՛,
ասեց ու մեկ աթոռի վրա նստեց, գիրքն առավ ձեռն ու սկսեց
կարդալ:

Ստեփան էս որ տեսավ, գլխիցն սկսեց իբ սուքը, քանի որ
զոռ ուներ, զոռաց, հարա՛յ տվեց, ոտները գետնին ձեծեց, էնպես
որ սաղ տունը տակն ու վեր էր ըլում: Պարոն Կարապետը ձեն
չի տվեց, անսաս իր գիրքն էր կարդում:

Պարոն Տիգրանը դռնիցը լսում էր Ստեփանի արածը, Վար-
դանին կանչեց, ձեռին հուփ տվեց ուսուլով ու ասեց. «Տեսա, որդյակ
իմ, բարկությունն ինչ փիս բան ա: Մարդիս զազան ա շինում,
խելքը գլխիցը հանում»:

Վերջապես Ստեփանը շատ զոռալուցը զորությունը հատավ,
ձենը փորն ընկավ, էլ չկարաց զոռալ ու երբ տեսավ, որ բար-
կությունը սչինչ օղուտ չուներ, մեկ աթոռի վրա նստեց ու քուշը
տարավ:

Պարոն Կարապետը երկու աթոռ էլ էս կողմն, էն կողմը դրեց,
որ վեր չընկնի: Քնկուլ վախտը, օր էկավ, շորերը հանեց անաս
ու տեղը դրեց: Ստեփան էնպես խոր քնած էր, որ ամենին,
չիմացավ ու անոշ քնեց:

Մյուս օրը, որ քնից վեր կացավ, պարոն Կարապետը տարավ
էլ եղ իր օթախը ու սկսեց հետը ծանր խոսալ: «Սիրելի Ստեփան,
ասեց, քո բարի հերը քեզ բերել ա մեզ մոտ, որ դու էստեղ սը-
նընդվիս, լավ, խելոք մարդ դառնաս, չուներ ինքը ժամանակ չունի,
որ քեզ մտիկ անի, սնունդ տա, որ դու չար, կոպիտ մարդ չըլիս
ժամանակին, ու անսնունդ չի մնաս, որ ամենն էլ քեզանից զգվին
երեսիդ մտիկ չանեն: Աւգես, չուզես պետք է էստեղ մնաս, քեզ
մտիկ չեն անիլ: Դու երեսա ես, քո հերը քո հերն ա: Էրեխեն հոր

ասածը պետք է անխ. էրեխեն, որ հորը չլսի, փիս էրեխա է: Փիս էրեխա ես դու էս անձնը կուզես ունենալ:

Ստեփանը աչքերը չոնց, որ էս խոսքը լսեց, չունքի փիս բառ դեռ չէր լսել, չէ...: «Ես փիս էրեխա ի՞նչպես կըլիմ: Էդպես խոսքը խնդրեմ, էլ չասես»:

«Ես էլ էդպես եմ կարծում, ասեց պարոն Կարապետը: Գիտեմ, որ լավ էրեխա ես, ու մեզ մոտ կմնաս, թե փիս Ստեփան չես, ասածս կանես: Վարդանի ու Նղիսարեթի հետ լավ կկառավարվիս, չես կոլի, չես գիժություն անիլ, ու կաշխատիս, որ քիչ քիչ բան սովորիս. էսպես ես քեզ աչքիս լսի պես կսիրեմ, քո բարեկամ կդառնամ, հավատացիր: Ինչ որ քո լավն ա, քեզ էն կասեմ, քո սիրտն ի՞նչպես կկոտրեմ, մկամ ես չմը մարդ եմ. շատ ուրախ կըլիմ, որ բազի վախտ խաթրդ առնիմ, սիրտդ բաց անեմ: Վարդանն ու Նղիսեն քեզ քեր ու ախպեր կդառնան, նրանց հերնըմերը քեզ հերնըմեր, քեզ իրանց որդու պես կսիրեն, կընդունին: Թե որ չես լսիլ, ընդդիմություն կանես, կկոլիս, չես խելոքանալ, էն ժամանակն էլ կտեսնիս, թե ի՞նչ կանենք քեզ հետ: Ընչանք հիմիկ նոքարի ու ձի պահողի հետ էիր քեֆիդ ման գալիս, ու ուղածդ անում, նրանց խփում, շընքներին նստում, ձիու պես դամշով քըռում, ամա ես ոչ ծառա եմ, ոչ ձի քըռող, ես վարժապետ եմ ու պարոն Տիգրանի որդոց սննդողը, ինձ հետ էսպես օյին չես կարող հանիլ»:

Էսպես թուեղ ձևով Ստեփանի հետ մեկն էլա չէր խոսացել մինչև հիմիկ: Սկսեց դառը լաց ըլիլ, ձեռը տվեց պարոն Կարապետին ու ասեց: «Շնորհեմ չբարկանաս, պարոն Կարապետ ջան, ես քո սիրտը էլ չեմ չարացնիլ, կաշխատիմ, որ լավ, խելոք տղա դառնամ»:

«Շոտքիդ հաստատ կաց, Ստեփան ջան», ասեց պարոն Կարապետ ու ճակատին պաշ արեց:

Էս որ ասեց, հրամայեց նրան, որ նա երեսն ու ձեռները լվանա, գլուխը սանդրի, բերանն ողողի, ինչպես որ լավ էրեխին կպատկանի, ու ինքը գնաց Վարդանի, Նղիսարեթի հետ մեկ ջուկ օթախ ու ասեց. «Սիրելի էրեխեք, դուք ինձ մեկ քանի օրից առաջ խոսք տվիք, որ ուզում եք պարոն գլխաբեզուն ձեր շնորհակալությունը ցույց տաք: Ասածներդ մտքներդ մի, թե չէ»:

Վարդան.— Լավ մտքիս ա:

Կարապետ.— Ընչի՞ համար եք ուզում շնորհակալ ըլիք, էն էլ գիտե՞ք:

Վարդամ.— Էնդուր համար, որ մեր տունը պրծացրեց:

Կարապետ.— Էս պետք է չմոռանաք, Բայց ընչով եք ուզում ձեր շնորհակալությունը նշանց տաք:

Վարդամ.— Մենք կուգինք, որ նրա սիրտը շահենք:

Կարապետ.— Ախր ինչով, ընչով:

Սդիսաբեր.— Սա ուզում եմ նրա համար մեկ ջուխտ գուլպա գործեմ:

Կարապետ.— Էդ շատ լավ բան է, նա շատ կուրախանա, ճշմարիտ ա, բայց նրան քիչ օգուտ կրերի: Մեկ ապաստով կամ հինգ շահով մեկ ջուխտ լավ գուլպա են տալիս: Էս ի՞նչ փող ա, էնպես ունեւոր մարդի համար: Բո գուլքեն գործիր, փասս չունի: Սդիսա՛ջան: Բո բարերարը կուրխանա, որ տեսնի: Բայց ես ձեզ մեկ ուրիշ գուռը նշանց կտամ, որ նրան մեծ, մեծ լավություն կանեք: Ի՞նչ բանն ա նրա սրտի սիրելին էս աշխարհումը: Սդիսաբեր՛ ջան, գիտե՞ս:

Սդիսաբեր.— Լավ: Իր որդի Ստեփանը:

Կարապետ.— Լավ իմացար: Ամեն բարի հոր համար որդին ամեն մալ ու գովաթից թանգ ա ու ազիզ: Էս պատճառով պարոն գիվանքեզին ոչինչ չի ուզում, եթե ոչ իր որդին խելոք, լավ մարդ դառնա: Էս պատճառով ա նրան մեզ մոտ թողել, չունքի իր գործը չի թողում, որ որդուն մտիկ անի, լավ սնունդ տա:

Թե որ Ստեփանը մեզ մոտ իր վատ սովորությունը թողա, խելոքանա, սրտաշահ, դայրաթով ըլի, հնազանդ մնա, պետք է, որ նրա հերը անչափ ուրախանա, էնպես չի՞:

Վարդամ.— Հայտնի բան է, ամա...

Կարապետ.— Ամես որն ա, ի՞նչ ես ուզում զրանով աօր:

Վարդամ.— Ամա ես չեմ կարծում, թե նա լավանա, չունքի վատ խափաթ ունի:

Կարապետ.— Ձեզանից ա կախ սիրելի էրեխեք: Նա իր վատ խափաթն էլ իր չարությունն էլ կթողա, թե դուք նրան սնունդ, մարիֆաթ սովորցնեք:

Վարդամ.— Մենք... մենք ինչ կարանք անիլ:

Կարապետ.— Հենց էս բոպինն ձեզ կասեմ: Դուք պետք է նրան բարի օրինակ տաք, էնպես պետք է նրա հետ վարվիք, ինչ-

պես կուղեք, որ Ստեփանը ձեզ հետ վարվի... ու նրա պակասութեանը երեսովը չտաք, համբերեք, տանեք: Միշտ բարի բանից հետը խոսաք, սիրտն առնիք: Կուղեք անիլ, թե չէ:

Երկուսն էլ.— Շատ բարի, սիրելի պարոն Կարապետ:

Կարապետ.— Ուրեմն զնացեք նրա մոտ և քաղցրությամբ բարի լին ասեցեք:

Երբ բարի լին, սիրելի Ստեփան: Էնպես չի, դու պետք է մեզ մոտ մնամ, մի, էս ինչ լավ բան ա: Որքան ուրախ կըլինք, իրար հետ կխաղանք, ման կգանք: Մենք քո սիրտը բաց կանենք, դու մերը՝ էս Վարդանն ասեց: Եղիսարեթն էլ իր կողմիցը նրա սիրտն առավ, ասեց, խոսք տվեց ու Ստեփանը էս որ տեսավ, իսկույն սիրով ձեռը նրանց տվեց: Եթե որ էդպես կանեք, ընչի՞ չի պետք է ձեզ մոտ մնամ: Մենակ իմ սիրտն էլ ա նեղանում:

Առավոտա նշարն արին, ուրախ, ուրախ ու զնացին դաս առնելու: Ստեփանն էլ նստեց հետընկերը ու անսաս անկաջ արեց:

ԳԼՈՒԽ ՎԵՑԱՍՄԱՆԵՐՈՐԴ

Ստեփան որ եղ դարձավ, Վարդան ու Եղիսա նրան տարան իրանց մարզերը ու իրանց ցանած, տնկած կանաչին ու պտղըները նշանց տվին: Վարդան մեկ մեծ աման լիքը սալաթ քաղեց, Եղիսա ռեհան ու սամիթ, չուների սրանց հոտը մերը շատ էր սիրում: Ծաղկները դեռ չէին հասել, որ քաղի:

Ստեփանի սիրտը զնաց, էս որ տեսավ, վաղեց, մեկ դանակ բերեց, որ մի քիչ էլ ինքը քաղի, հենց էն սնաթին միտքն ընկավ, որ ինքը հող չուներ, որտեղմնց պետք է քաղեր, ու ուրընչի բանին էլ ձեռը տալը, զիտեր որ մեղք ա: Խռոված, ջգրված, իր ընկերներիցը բաժանվեց, դանակը դին քցեց, զնաց մեկ զրազ ու սկսեց լալ:

Եղիսարեթ էս որ տեսավ, պարոն Կարապետին նշանց տվեց:

Ե՞նչդ ա պակաս, հարցրեց վարժապետը: Բայց Ստեփանը քամակը նրան արեց ու շուղար չի տվեց: Եղիսա ու Վարդան զնացին մոտը ու հարցրին նրան, բայց ոչինչ չիմացան: Սրանից դայրու, չուների Վարդան ձեռը նրա ճոռմը էր քցել, որ նրանից մեկ խոսք իմանա, Ստեփան էնպես ջգրված, բարկացած էր, որ նրան բրթեց, դին քցեց:

Կարապետ.—Թողեք, թողեք, սիրելիք, դրանից հետո կացեք, դա իր զոռն առաջում նշանց տա: Դրա մտքումը մեկ բան կա, չի դիտում, թե ինչպես ուզածը ձեռք բերի, լաց է ըլում, փնթփնթում, բրբռում, բրթում, ու ուզում ա, որ մենք իրան խնդրենք, որ իր ուզածը մեզ ասի: Բայց տա սխալվում ա: Էդպիսին որ զոռն ա ուզում բանը առաջ տանի, էնքան կանխմ, որ սրտի հերքը քոզա ու կալիքի:

Եղիսարեթ պարոն Կարապետի անկաջումը ասեց, թե նա էլ ա ուզում հող ունենա: Բայց պարոն Կարապետը մատը բարձրացրեց ու հրամայեց, որ սուս կենա:

Ե՛կ ինձանից բան ուզիլ կամենում ա, պետք է ինձ ասի ու խնդրի էն մասին: Զոռով ինձանից ոչոք բան չի ճարիլ: Էկեք, դնանք, թողեք էդ զոռ անողին: Գնանք տուն: Ինչ վախտ փոքր սովի, էն ժամանակը ինքը կդա մեր եղևիցը: Իրավ, որ փետը վերցրեց, որ դնա, Եղիսա էլ դնաց, ամա Վարդան մեկ էլ վազեց Ստեփանի մոտ, ու ասեց. Եսիրելի, խելքդ զլուխդ հավաքիր, դնա պարոն Կարապետի մոտ ու քո բերնովդ ասա, ինչ պակասություն ունիս: Ծշմարիտ նա հանաք չի անիլ, ու քեզ էստեղ կըթողա, թեկուզ իրեք օր էլ սոված մնաս:

Ստեփանը տեսավ, որ բանը պինդ ա, ու սրանց մոտ էնպես չի, ինչպես իր հոր տանը, որ մեկ բան ուզելիս տուն ու տեղը կրակ էր տալիս ու ասածն անում: Իսկույն աչքերը սրբեց, իր վերակացվի ետևիցը վազեց, ձեռը բռնեց ու ասեց. Եսիրելի պարոն Կարապետ, չի՞ ըլի, որ ինձ էլ մի կտոր հող տա, որ շինեմ:

Եհստուր համար էիր լալիս, ամոթ քեզ, ախր որ ուզածդ էդ էր, ընչի՞ չէիր հենց էն սհաթին ասում: Ուրեմն էս քեզ խրատ ըլի, Ստեփան ջան, որ մեկ բան ուզելիս, էլ զոռով չուզես: Զոռով մեր տանը ոչինչ չես ստանալ: Հիմիկ չունքի հերսդ վեր ես դրել ու խնդրում ես, կտեսնեմ, քո խնդիրը տեղ կհասցնեմ:

Էս ասեց ու սկսեց էրեխեքանց հետ բաղումը դես ու դեն ընկնիլ, ամեն տեղ աչքն ածիլ, որ տեսնի, թե ինչ տեղ կա էնպես հարմար հող, որ նրան տա: Տեղ չկար բնավ: Եհստուր բոլոր պարոն Տիգրանինն ա, որ առաջուց ինքը ցանել, տնկել ա: Էս տեղն էլ Վարդանինն ա, էն տեղը Եղիսարեթինը: Հենց էս մեկ կտոր տեղն ա մնացել զարգակ, որ քոլակալիլ, ու քարով, հողով լցվել ա: Հույս ունիմ, որ պարոն Տիգրանը էս տեղը քեզ կա, թե իրան խնդրես: Ամա լավ միտք արա, տես թե էնքան, սիրտ, համբերու-

թյուռն ունիս, որ էս քուլը, ախպը, ջանջալը սրբես, իստակես, որ մեկ քանի պետք գտնա:

Ստեփան անկաջի տակը քորեց ու քուցին անելով, ասեց, «էս շատ դժար ա ու շատ ջափա կուզի: Էն աղքատ կնկանը փող կըտամ, նա ինձ համար կսրբի, կշինի մեկ օրվա միջումը ու ինձ կտա»:

«Եղ կարող ես անիլ, ընչի՞ չի, պատասխանեց պարոն Կարապետը, ամա թնչպես ես կարծում, դու էլ քո մարզերի վրա էնպես կուրախանաս, ինչպես Վարդանը, որ ինքն իր ձեռովն ա շինելու»:

«Ելալիսթ, որ էնպես չեմ ուրախանալ, ասեց Ստեփանը: Ինչ պետք է արած. մարդ պետք է սիրտը պինդ բռնի, ես էլ կսկսեմ ձեռք տալ, ասեց ու մեկ պատիկ սել բերեց ու ախպը դուս տարավ, որ ուզած տեղի վրա էր: Վարդան էլ քոմակ արեց, ու կես սհաթ չքաշեց, տեսավ, որ էն տեղի շատ փայն իստակվեց, էլ ինչ, էնպես նա էր ուրախ, թագավորն էլ չէր:

Պարոն Կարապետը էս որ տեսավ, Ստեփանին մոտը կանչեց, ձեռը գլուխը քսեց ու ասեց. «Թե էսպես ջանիդ ջափա կտաս, ու բանիդ հաստատ կլինի, դու ինքդ կտեսնիս, որ քո դայրաթովը էսպես մեկ դադարիկ չու տեղը շուտով կշինվի, պտուղ կտա, դու էլ կուրախանաս, տեսնող, լսողն էլ»:

Ստեփանն էս խրատը անկաջումը պահեց, օրը կես սհաթ իր տեղի վրա աշխատեց ու տասն էրկու օրից եղը իրեք մարդ գլուխ էկավ, որ ցանեց էլ: Վերջի սխեռը հենց ցանեց, պրծավ, վրա թռավ, իր վարժապետի ճտովն ընկավ ու ասեց. «Շատ շնորհակալ եմ ձեր բարի խրատի համար: Հիմիկ տեսնում եմ, որ մարդ, եթե իր բանին հաստատ կեցա, ինչ դժվար բան էլ որ ըլի, գլուխ կտանի»:

ԳԼՈՒԽ ՈՒԹՆԵՎՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Մեկ օր էլ գետի զրադին, ուռի ծառերի տակին իրենց համար ման էին գալիս: Մեկ պատիկ աղջիկ անուշը Նանասի, որ մեկ քանի օրից առաջ նրան զրքեր էին բաշխել, ընկած նրանց առաջը, դնում էր: Հենց սրանց տեսավ, թե չէ, շնորհակալու աղջիկը վազեց ջրի ափը, ու ուզում էր, որ մեկ քանի ծաղիկ քաղի, նրանց թափազա անի: Սրանք էլ, որ տեսան նրան, շատ ուրախացան: Ամա... ողորմելի էրեխեն հենց մեկ փոքր ջրի վրա կուտ-

ցամ, ձեռք մեկնեց, որ մեկ լամ ծաղիկ քաղի, էլ իրան չի կարաց
բռնիլ, ու ջուրն ընկամ։ Բոլորն էլ ընկան ջրի փեր, որ նրան
ազատեն, չկարացին։ Կատաղած դեռ ողորմելուն քաշեց մեջը
ու գլորելով տարավ։ Սրանց ձեռքեր էլ ոչինչ չեկամ։ Գոռացին,
հարայ տվին։ Խնչքան զորություն ունեին։ ՇՕգնեցեք, ճար արեք,
հասեք, գնաց, մեռավ, հարայ, դատաւ, էս ձեռք, որ իմացան, շատ
մարդ համարվեց. ամա մեկն էլա սիրտ չարեց, որ էն ջրտար
աղջկանն ազատի։

Ստեփան տեսավ, որ մեկ գեղըցի ա գալիս, նետի պես գնաց
առաջը ու ձեն տվեց։— Ա՛յ աստվածասեր մարդ, Հասիք, քոմակ
արա, մեկ աղջիկ ջրումը... ընկել... երկու ոսկի կտամ... Ի՞նչ տեղ,
ինչ տեղ, կանչեց քաջասիրտ մարդը։ Տեղը նրան շհանց տվին։ Հենց
էն ըրպեին չուխեն դեն քցեց, չըբխւ, ընկավ ջրի մեջը, ու... երկու
վարկյան չը քաշեց, աղջկանը դուս քաշեց, փեր բերեց։ Բոլոր տես-
նողները ձեն տվին։ Աֆարիմ տղամարդ։ Ամա,— նրանց ուրախու-
թյունը ջուր դառավ, որ տեսան թե էն խեղճ աղջկա բերնումն
էլ շուռն չի կար, նրանց խնդությունը սուք դառավ, ու ամենն
էլ սկսեցին լալ։

Ելալով Բն չըբխ, ասեց պարոն Կարապետը, գեղըցու ձեռ-
քն էն մեռած աղջկանն առավ, մեկ մոտիկ տուն տարավ։ Վար-
դանին հեքիմի եղևիցն ուղարկեց և աղջկանը յորդան, դռակի
մեջ պառկացրեց։ Հեքիմն էլ էկավ ու մեկ չարեք սհաթ չքաշեց,
աղջիկը էլ եղ շուռն չէկավ ու ոտին կանգնեց։ Նրանց ուրախու-
թյունը ձվ կարա պատմիլ։ Աղջկա հերնըմբը, որ էս բանն իմա-
ցել էկել էին, արտասընքումը ողողվել էին, էնքան լաց էին էլիլ։
Պարոն Կարապետի աշակերտների աչքերիցը հո արին էր վեր թա-
փում։ Էրեխեն տվին հորնըմբը ու ուղում էին քաշվիլ, էս սհա-
թին գեղըցին պարոն Կարապետի աչքովն ընկավ։

ԵԳեղըցու երկու ոսկին տվիլ ես իրան, Ստեփան, հարցրեց։
ԵԱ՛խ, ի՜նչ բաշխիր, սիրելի պարոն Կարապետ, երկու ոսկին
ինձ ձվ ա տվել... կակծու, վախու...։

ԵԻ՞նչ որ չեք կարող անիլ, ասեց պարոն Կարապետը թե
դուռտոն ասես չի պետք է խոստանանք, ամա էս անգամ իրավունք
ունիս, չունքի մեկ երկիս մահից պրծացրիր, ու անպատճառ, երբ
ըլի, պետք է հետևիս, որ նրա երկու ոսկին տաս, որ խոստացար։

ԵԻ՞մ հերը... ասեց Ստեփան...

Բայց պարոն Կարապետը խոսքը բերնուժը կիսատ թողալ տը-
վեց, շիրիքը քիսեն հանեց, ու գեղըցու երկու ոսկին ինքը տվեց:
Նա էլ վեր առավ ու տսեց. «շատ շնորհակալ եմ, իմ բարի
տեր, հազար անգամ շնորհակալ եմ: Ես էս անձեղ աղջկա ազատ-
վելու վրա էնքան եմ ուրախ, որ եղ ոսկիքը ամեններն չէի վերց-
նիլ, ամա թնչ անեմ, իմ սիրելի պարոն, կնիկ, որդիք ունիմ, ինքս
էլ չքավոր, աղքատ: Սրանց ձեռքը էնքան խեղ չի գալիս, իմ
դատումն էլ հո էնքան չի, որ աչքըներս մի բան տեսնի»:

Կարապետ.— Է՞ս ինչ ա, որ սրա համար խոսում ես: Մեկ ո-
չինչ բան չի, առ: Քո արածը էնքան ա, որ քեզ դհա շատ վարձ
տալ պետք է, ամա թնչ գոչաղ լուղնորդ ես:

Գեղըցի.— Ի՞նչ ասիլ կուզի թե չէ ինչպես կարելի ջուրն
ընկնիլ ու էս էրեխին պրծացնիլ:

Կարապետ.— Շատ ուրախ եմ, որ քեզ պես կտրիչ, բարի
մարդին ուստ էկանք: Թե չէ մենք ոչինչ չէինք կարող անիլ, եթե
ոչ գոռալ, հարայ տալ, ու ինչքան մարդ էլ, որ էնտեղ կային, նը-
րանք էլ ոչինչ չէին կարող անիլ: Զէ թե մենակ նրանք, սաղ
քաղաքն էլ, որ հավաքվեր, հեց էն ա, սուք ու շիվան կաններն
ու ձեռքները իրար կկպցնեին: Դու, գու միայն կարեիր աղատիլ:
Ժշմարիտն ասած, բաս քո սիրտը քո արածի չի ուրախանում:

Գեղըցի.— Էլ ասիլ կուզի. Հենց գիտեմ, աշխարքն իմն ա:

Կարապետ.— Լող տալն թնչ տեղ ես սովորել:

Գեղըցի.— Իմ աղիդ աղա, ես ինքս Քանաքեռ եմ ծնվել: Երե-
խա ժամանակս քանաքեռցի էրեխեքանց հետ կերթայինք միշտ
Ջանդվի վրա, յա շաղացի գլուխը ու սաղ օրը օրդաքի պես ջրումը
պտիտ էինք տալիս: Նրանցից եմ էս լեղը սովորել:

Կարապետ.— Շատ, շատ լավ ես արել, լեղը սովորի մարդ
էսպես բանի համար: Անունդ թնչ ա:

Գեղըցի.— Ավետիք, քեզ ծառա:

Կարապետ.— Ո՞րտեղ ես կենում:

Գեղըցի.— Բաղադխանի մոտին, միջի թաղումը:

Կարապետ.— Գնա, աստված քեզ հետ, գնա, քո օղուշաղի
հետ մեկ լավ քեֆ արա:

Պարոն Կարապետը էրեխեքն առավ ու տուն գնաց:

Ամենն էլ շուտ-շուտ էին գնում էս օր, որ առաջ ինքը էս
խաբարը տանը պատմի: Դեռ պարոն Տիգրանի տանիցը մեկ քանի

սոր էնուռ էին, որ Ստեփանն թե առավ, լեղապատառ տուն ընկավ ու դռանը Աննին տեսավ կանգնած:

«Սիրելի մայր, սիրելի մայր», — ձեն տվեց...

«Ինչ ասելու ես, իմացել եմ, աչքի լույս, իմ աղիչ Ստեփան, ասաց ու էրեխին խախտն առավ, համբուրեց, սիրեց, ողջագուրեց, հիմիկ տասն էնքան ինձ քաղցր ես, սիրելի ես, որ էնքան զայրաթ ես արել, էն խեղճ աղջկանը աղատել: Աստված քեզ հաղար տեսակ դրա վարձը տա:

Բոլորն էլ գնացին սեղանատունը, ու հացն էլ պատրաստ էր: Հայտնի բան է, որ էս օր էլ ոչընչից չէին խոսալ, եթե ոչ էն փորձանքիցը, որ էնպես բախտավոր անց էր կացել:

«Ամեն բան լավ, — ամա պարոն Կարապետի երկու ոսկին ձվ պետք է վճարի, որ գեղըցուն տվեց», ասեց Նդիսարեթ:

Ստեփան.— Հորս կզրեմ ու նա անպատճառ կտա:

Նդիսարեթ.— Հավատում եմ, ամա ես էնպես եմ կարծում, թե լավ կլլի, որ մենք էլ փայ ունենանք էդ խեղումը: Վարդան, դու թնչ մտքի ես:

Վարդան.— Ես էլ հենց էդ մտքին եմ: Թե մեր խաղիներն մի քիչ հուփ տանք, բաղի վախտ էլ բերաններիցս մեկ զատ կտրենք, էդ փողն էլ շուտով կթամամի, մենք էլ փայ կունենանք:

«Ա՛խ, ինչպես ա սիրտս մխիթարվում, փառավորվում, իմ աղիչ պահած, իմ սիրելի էրեխեք, ասեց մերը, որ դուք էդպես զայրաթ եք անում, որ ուրբշին լավություն անեք: Ամա թե էնքան ժամանակը, որ պետք է երկու ոսկին մոտ անեք, մեկ ուրիշ աղքատ մարդ էլ զա մեր դուռը, ու ձեզանից ողորմություն խնդրի, էլ չեք կարող նրան օգնիլ, ու աղքատը պետք է ձեզանից սրտամնա գնա, ձեզ չօրհնի: Լավ կլլի, ուրեմն, որ էս մեկ անգամը ինձ թողար, ես էն երկու ոսկին վճարեմ, որ դուք մարդ պատահելիս, ու ձեզանից օգնություն խնդրելիս կարողանաք տալ: Էս ձեր երկու ոսկին, սիրելի պարոն Կարապետ, որ մսխել եք: Շատ շնորհակալ եմ, որ էդպես բանի համար նրանց ձեռն ես բռնիլ:

«Լավ ա, ինչ խելոք կնիկ ունիմ, ասեց պարոն Տիգրանը, էդ որ դու ուղում ես վարձք անիլ, ես չեմ ուզիլ: Անկարելի բան է: Էս էլ քեզ երկու ոսկի իմ կողմիցը, պարոն Կարապետ, խնդրեմ քո ձեռովը ուղարկես էն գեղըցուն, ու ասես, թե մեկ բարեկամ մարդ ա ուղարկել: Խնդրեմ անունս չտաս, թե ինձ կսիրես»:

Վարդամ.— Ա՛խ, ես էլ կուզեի լող տալ սովորիւ:

Ստեփան.— Բայ ես թնչպե՜ս կուզեի:

Կարապետ.— Ի՞նչ պատճառով:

Վարդամ.— Որ ջուր ընկած մարդի ազատեմ:

Կարապետ.— Էդ շատ լավ բան է, հենց ձեզ համար էլ շատ հարկավոր ա, սիրելի էրեխեք, որ աստված ոչ անի, թե ջուրն ընկնիք, կարողանաք ձեր գլուխը պրծացնիլ: Ամա... վայ էն էրեխին, որ ինքը մինակ դնա ջրի վրա: Սիրտս արնով լցվում ա, որ միտքս ա ընկնում անցյալ օրվա մեկ տասը տարեկան էրեխի խեղզվիլը: Նա էլ եղպես ուզեցել էր լող տա, մոտին մեծ մարդ չէր էլել, ընկնիլն ու ջրի տանիլը մեկ էր էլել: Ինչ նրա հորնըմոր հալն էր, աստված ոչ շհանց տա: Երեք սհաթից եղը, նրա լաշը հանեցին: Էն վարդի պես կարմիր էրեխեն կտա՞վ էր դառել, աչքերը բաց փացել, փորն ուռել, պոռչները կապտել: Տեսողի գլխին կրակ էր վեր թափում: Էն մեկ որդին ունեին նրա անճար, ողորմելի ծնողքը: Ախ, ինչ էին անում նրանք, քարերն էլ հեարները սուք էին անում: Թե էստուր համար կուզեք լողանալը, լաֆն էն ա, որ իսկի անունն էլ չտաք, ու ձեր ծնողաց սիրտը ամեն սհաթի ջրի վրա գնալիս կրակ քցեք:

Վարդամ.— Ա՛խ, էդ թնչ ասեցիք, միտս վրես սոսոռում ա, ջուրը մկամ էղպես կատաղած ա:

Կարապետ.— Մկամ ձեր աչքովը չտեսնեք էսօր:

Նդիսաբեք.— Ձէ՛, չէ՛, Վարդան ջան, որ եղպես ա, էլ ջրի չուզիս մոտենա, թե չէ առաջ ես ջուրը կընկնիմ, թե քո գլխիդ մի բան դա:

Կարապետ.— Սիրելիք, ամեն բան իր խերն էլ ունի, իր շառն էլ: Էլի շուտով մոռացաք, թե էն հասարակ գեղըցին հենց էս օր ձեր աչքի առաջին թնչ լավություն արեց: Հաղար մարդ ա՞վել էինք կանգնած, մեր մեկն էլա չկարաց ոտը ջուրը դնի, ու էն մարդը որ չէր էլել, հիմիկ ինչ կընենք մեր հալն էլ, էն աղջկա ծնողացն էլ: Բանը պետք է առաջ մարդ լավ միտք անի, եղո փոսա: Ես ձեզ էն պատմությունն էնդուր համար արի, որ ձեզ ու ձեզ չի դնաք ջրի մոտ, մինչև լավ լող տալ չսովորիք, չվարժվիք, չմեծանաք:

Վարդամ.— Հավ, որ ուղեհանք սովորիլ, մի կսովորցնի մեզ: Դուք գիտե՞ք լող տալ:

կարապետ.— Ա՛խ ափսոս՝ ես չեմ սովորել:

Վարդան.— Բայ էլ մի կսովորցնի մեզ, մեր հերն էլ չգիտի:

Կարապետ.— Թե հավես ունիք, որ սովորիք ու աղեն էլ հրաման կտա, էն ժամանակը ես ձեզ համար ուստա կճարեմ:

Տիգրան.— Ի՞նչ հրաման տալ կուզի: Իմ էրեխեքանց տերը դուք եք: Ղորդ ա, ես չեմ սովորել լող տալ, չունքի էրեխա վախտա մեկի շտեսա լողանալիս, բայց շատ սրտով կուզեի, որ գիտենայի, բայց չունքի իմ ժամանակն անց ա կացել, կուզեմ, որ էրեխեքա էլա լավ գիտենան, որ իրանց գլխին էլ պետքը զան, ուրըշին է:

Կարապետ.— Շատ բարի, էդ իմ վզիս, ուստեն էլ կճարեմ, սովորեցնիլ էլ կտամ:

Էս խոսքի վրա, ուսուլով վեր կացավ, քաշվեց ու մեկ խելիմ վախտից եղբ էլի էկավ ու խարարը բերեց, թե լողանալու վարպետն էկել ա:

Են իմացա, ասեց Ստեփան, թե մի է: Կուզե՞ս ասեմ:

ԵԱ՛խ, ես էլ իմացա, ձեն տվեց Վարդանը: Նրա անունը իրեք վանկ ա: Սաղ անունը կնշանակի բարի խարար տալ: Իմացմ, թե չէ, քո ջանին մեռնիմ, ապա ասա:

Էլ մի կրելի: Վարդանի ասածն էլ էր Ավետիքը, Ստեփանինն էլ:

Բայց պարոն Կարապետը ժպտեցավ ու ասեց, ճիմիկ հլա դասի վախտն ա, զնանք, մեր բանը տեսնինք, իրիկունը որ հասնի, էն ժամանակը ձեզ կասեմ, թե մեմ կալծիքն ա զորդ: Վեր կացեք, զնանք:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՎՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Իրավ, որ նրանց ասածն էր: Իրիկնապահին Ավետիքն էկավ, ու պարոն Կարապետը, Վարդանն ու Ստեփանը հետը զնացին մեկ տեղ, որ տեղ որ Ավետիքի ասության գյորյա փնաս չէր պատահիլ: Հենց էն ըտպեին ուզում էին էրեխեքը շորըները հանեն ու ջուրն ընկնին:

ԵՄի շտապիք, սիրելի էրեխեք, ասեց պարոն Կարապետը, էդպես շուտով չեմ թողալ ձեզ որ ջուրը մտնիք: Առաջ ես պետք է լող տալ սովորիմ, հետո դուք:

Ավետիքը պարոն Կարապետին առավ ձեռն, ջուրն ընկավ ու նրան նշանց տվեց, ամեն հունարը, որ լողանալիս հարկավոր է դործ անիլ:

Մյուս օրերն էլի էսպէս իրիկնապահին գալիս էր Ավետիք, ընչանք, որ պարոն Կարապետը նրա դասը լավ սովորեց, էնպէս որ ութ օրից եղբ օրինավոր լողանում էր:

Հիմիկ էլ սրեն (հերթը) Վարդանինն ու Ստեփանինն էր: Սրանք դէս հեշտ ու շուտով սովորեցին լող տալը, չուների պատիկ էին, Ջաեիլ ժամամակը շատ բամ կարելի ա դիտ ավելի հեշտ սովորիլ, քանց մեծ ժամամակը:

Մեկ քանի շաբաթից եղբ լող տալը էրեխեքանց համար հատուկ քեֆ էր: Օրդաքի պէս ջրի տակովն էին ըլում, մեկ վայրկյանիցը եղբ մեկ ուրիշ տեղ էին գլխըները հանում, մեկ քամակի վրա էին լող տալիս, մեկ կոխքի վրա, մեկ փորի վրա, մեկ նստած, մեկ տկոթ, մեկ էլ շրերը հաքըներին: Ել ամենևին ջրից չեմ վախենում, ասեց Վարդան: Թե ջուրն ընկնիմ էստուց զներ, լող տալով կարծնիմ: Հույս ունիմ, որ շատ անգամ էրեխա էլ հանեմ:

Շուտով իմացան սաղ քաղաքումը, թե պարոն Կարապետի աշակերտներն ինչպէս լավ լող տալ էին սովորել: Շատը ծիծաղում ու խեղճ վարժապետին բամբասում, անարգում էին, անխելք, գիծ, Թեթև օքմին էին կանչում, բայց ով որ փորձ առած, էփված մարդ էր, նրա արածը շատ գովում էր: Շուտով անթիվ էրեխեք հավաքվեցին դետի դրաղը, որ նրանց լող տալը տեսին, վազեցին, գնացին իրանց ծնողաց մոտ ու աղաչանք էին անում, որ իրանց էլ լողալ սովորեցնիլ տան: Շատ հեր իր որդու խնդիրը կատարեց ու Ավետիք դառավ նրանց ուստեն:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

(Հատված)

Պարոն Կարապետը պարոն Տիգրանիցը խնդրեց, որ իրան թող տա, մինչև մորը Թաղիլը իրանց տանը մնա, չուների դեռ շատ բան կար կարգ քցելու, զնաց Վարդանի ու Նդիսարեթի մոտ, նրանց խտիտն առավ, դռին կպցրեց ու առանց մեկ խոսք ասելու, դուս էլավ:

Էրեխեքը էս անգամ մնացին պարոն Տիգրանի ապով. ու սկսեցին ինչ դաս, որ վարժապետը տվի էր, գրիլ, սերտիլ:

Շատ էլ ուզեցին, որ Ավետըքի ասած հրաշքը նրան պատմեն, ամա վախտ չճարեցին: Սաղ առավոտը հերնըմբը իրանց բանին

էին, ճաշին էլ ուրիշ մարդիք եկան ու ընչանք տասը սնաթը մնացին: Էրեխեքն առանց իրանց պատմություններն անելու, տեղըները մտան, քնեցին:

Հենց ճրագը հանգցրին թե չէ, բերդանրիւ տանիցը դուս թռան, սանդուխտը ներքե վազեցին, լեղապատառ էնպես ընկան պարոն Տիգրանի քնելու օթախը, որ սա էլ մնաց սառած:

Հենց էն էր ուզում, որ քնի: Էս որ տեսավ, զարհուրեց ու հարցրեց, թե ի՞նչ խաբար ա:

ՇԱԽ, սիրելի հայր, ասեց Վարդան, մենք էլ չենք կարող մեր օթախումը քնիլ:

Տիգրամ.— Ախր ընչի՞ խաթեր:

Վարդամ.— Սատանեն, սատանեն էնտեղ ա մտել:

Տիգրամ.— Ի՞նչ սատանա, երազում չես հո:

Վարդամ.— Բո՛ղ զուխը գիտենա, երազում չեմ, Ստեփանն էլ տեսավ:

Տիգրամ.— Ախր ի՞նչ տեսավ:

Վարդամ.— Մեկ սատանա, պարոն Կարապետի մերը:

Տիգրամ.— Աստված նրա հոգին լուսավորի, նա էլ չի դառնալ: Էկեք, զնանք ձեր օթախը, տեսնինք ի՞նչ կա:

Վարդամ.— Ա՛խ, սիրելի հայր, քո շանին մեռնիմ, թեկուզ որ սպանեո ինձ, չեմ գալ:

ՇԵՍ էլ չեմ գալ, ասեց Ստեփանը:

ՇԱՆԿԱՐԵԼԻ ա, պետք է գաք, ասեց պարոն Տիգրան: Ինձանից դե, սատանա փախչում են, ես նրանց աչքի հանողն եմ, մի վախենաք, էկեք:

Դնացին հեալ, ամա սիրտըները ջուր էր դառել, ու տերևի պես դողում էին:

ՇԴՆ, էկեք, նշանց տվեք ինձ, ճւր է պարոն Կարապետի մերը, ասեց:

ՇՈ՛Վ ա խաբար, ճւր ա կորել, ասեց Ստեփան, ամա մենք էստեղ չենք կարող մնալ: Հենց դու դուս գնաս էլի կգա:

Պարոն Տիգրան էս խոսքի վրա ճրագը հանքցրեց. ու տունը խավարեց, մենակ լիսնիակի լիսը փանջարովն ընկած լիս էր տալիս:

Հանկարծ էրեխեքն վեր թռան ու դռնացին, հրեն, հրեն պուճախումը կանգնած է: Իրավ, որ էնտեղ մեկ սիպտակ բան էր երևում:

Պարոն Տիգրանը մոտ գնաց, ասեց, բարի իրիկուն, իմ քույր Սանդուխտ ու ձեռը տարավ ու Սանդուխտին զլխի ծերը հանեց։
«Էս էլ ձեր պարոն Կարապետի մերը, ասեց, ձեռքներդ բերեք, բռնեցեք»։

Վախժախելով ձեռքները մոտ տարան ու բռնեցին։ Պարոն Կարապետի մերը ոչ այլ ինչ էր, եթե ոչ մեկ շապիկ, որ պարոն Կարապետը դուռ գնալիս աթոռի վրա թողել էր։

«Ձեռ իմանում, թե ի՞նչ տեղից ա հանկարծ ձեր զլուխը մտել, որ սատանա եք տեսնում։ Վարդան ջան, առաջ հո էսպես բան չգիտեիր, էդ որդիմեց ա միտդ ընկել։ Իսկույն տեղըներդ մտեք, պարկեցեք։ Ե՛տա լավ, ասեց Ստեփան, թե որ դու էլ մեկ մոտ մնաս»։

«Աչքիս վրա», ասեց ու էնքան էնտեղ մնաց, մինչև նրանք քուն մտան։

Մյուս օրը մեր պատիկ սատանա տեսնողներին մոտը կանչեց պարոն Տիգրան, ու սկսեց հետքները իրիկվան պատահմունքի վրա խոսիլ։ «Էս ինչպես բան ա, որ Վարդան ջան, դու էդպես ահ ես քցել սիրտդ»։

«Ա՛խ, սիրելի հայր, պատասխանեց, Ավետիքը էնքան սատանի պատմություններ արեց մեզ, որ մութն ընկնելիս, էլ սիրտ չեմ անում, դռնիցը դուռ գամ»։ Էս որ ասեց, սկսեց Ավետիքի բոլոր ասած բաները հզ պատմիլ մի առ մի։

Տիգրան.— Բոլորին էլ հավատացե՛լ ես։

Վարդան.— Ընչի՞ չպետք էի հավատալ։ Վարձապետս նրա գովասանությունը շատ ա արել, որ շատ լավ, հալալ մարդ ա։

Ստեփան.— Էդպես ա, մեր նոքարն էլ լավ, հալալ մարդ էր, ու էդպես պատմություն շատ էր անում։

Տիգրան.— Դուք էլ շատ հալալ մարդ եք ու երեկ պատմեցիք ինձ, թե պարոն Կարապետի մորը տեսաք, ու առածներդ ճշմարիտ չէր։ Ուրեմն ի՞նչպես պետք է արած։

Ստեփան.— Մենք լավ չէինք տեսել։

Տիգրան.— Էնդուր համար լավ չէիք տեսել, չունքի վախում էիք։ Վախուկ մարդը ինչ տեղ որ ոչինչ էլ չկա, հենց իմանում ա, թե փորձաքով լիքն ա։

Վարդան.— Ավետիքը հո վախուկ չի, ինչպես ընկավ ջրի մեջը ու Նանասուն հանեց։

Տիգրան.— Համատուժ եմ, որ թշնամի պատահելիս էլ, նա ոչինչ բանից չի վախենում, բայց սատանից, զեկից միշտ վախում աս, էնտուր համար ասե՛րա աչքին էնպես բան երևում։ Ինչ որ ինձ պատմել եք, շատ բնական է։ Թե բայդուշը զոռացել աս, ոչինչ զարմանք չի։ Ազոսալն էլ աս զոռում, ու մյուս զշերն էլ։ Ընչի չի պետք է բայդուշն էլ զոռա։ Թե բայդուշը զոռալիս միշտ մարդ աս մեռնում, էդ էլ բնական է։ Տարին բոլոր մարդ աս մեռնում, հայտնի բան աս, որ բայդուշը զոռալիս էլ կպատահի, որ մարդ մեռնի։ Որ զնաս ման գալու, լավ վարավուրդ արա, թե սարեկն ինչպես աս ձեն հանում։ Թե տեսնիս մեկին խոսալիս, մտքումդ պահիր, մեկ քանի օրվան միջի տես, մարդ կմեռնի, թե չէ։ Բայց սարնով չի պետք է խարվիլ ու ասիլ, թե մարդ էնզուր համար մեռավ, չուճի սարեկը խոսաց։ Հավը չի կոկոռում, աքլորը չի խոսում, շունը չի հաչում։ Ամեն կենդանի պետք աս իր ձենը հանի, բերանը հո չի կարող փակիլ։

Վարդան.— Բաս են չար ֆորսկանի բանն ինչպես աս։

Տիգրան.— Նրա ձենն էլ կարես լսել, առավել աշխանը։ Սըրանք ոչ այլ չեն, եթե ոչ կոլունի զշերի դաստեն, կամ բաղերը, որ երկնքի երեսին ձեն տալով թռչում, զնում են։ Թե գիշերն աս պատահում, մարդ նրանց չի տեսնում, ամա նրանց ձենը շատ պարզ լսում աս, վախկոտ մարդիքը էնքան ձեն են բիրաղի լսում, ու ոչինչ չեն տեսում ու չեն իմանում, թե էսքան ձենը ի՞նչ տեղից աս գալիս, կարծում են թե սատանեքն են խոսում։

Վարդան.— Բաս էն թրքիկթրքիկոցը ու գմրգմրոցը, ի՞նչ դատ աս, որ գիշերը գերեզմանատան մոտ գալիս աս։

Տիգրան.— Դիշերը ինչ տեղ առես թրխկթրխկում էլ աս, զրըմր-զրըմրում էլ։ Թե ուզենա մարդ իմանալ, ի՞նչ տեղից աս գալիս էս ձենը, էն ժամանակը կարելի է իմանալ, թե էնտեղ մեկ կենդանի պետք է ըլի։ Կարելի է թե մուկը, յա կատու, յա մեկ ուրիշ շանավար մտած ըլի էնտեղ ու էնպես ձեն ըլի հանում։ Ու չուճի միշտ մեռնող աս ըլում, էլի կըլի, թեկուզ գերեզմանատանը ձեն գա, թե չէ։

Վարդան.— Կարող ես ինձ ասել, սիրելի հայր, թե էն անգլուխ ձիավորն ձվ աս։

Տիգրան.— Մեկ սաղ սալամաթ ձիավոր։ Կարելի աս էն զուշմանի մեկն ըլի էլած, ու շորերը փոխած, երես, գլուխ կալած, որ

տեսնողի սիրտը վախ ընկնի, ու էսպես ձորումը ման կըլեր գալիս, որ իմանա թե ինչ տեղից պետք է վրա տան, որ սրանք չիմանան: Տես, ինչ սատանի պատմութիւն որ անում են, էսպես մեկ բան կա միջումը: Թե որ մարդ լավ քննի ու իմանա, կտեսնի միշտ, որ շատ բնական բան էր տեսածը: Հավատացե՛ք ինձ, սիրելի էրեխեք, որ դե, սատանա, քաջ մեկ տեղ էլա, չկա: Էսպես վախլուկ, ռամիկ մարդիքն են էղպես բանը մտածում:

Վարդամ.— Բաս էն զուռնա, նաղարեն, էն պար գալն թնչ ա, որ բազի ձորում, էրում, տեսնվում, լավում ա:

Տիգրամ.— Ի՞նչ զուռնա, թնչ գատ: Բամին մտնում քարափների արանքը, ծառերի մեջը ու էսպես ձեն ա հանիլ տալիս: Բամի էլած վախտը չե՞ս լսում մեր փանջարեքը, դռները, ինչ ձեն են հանում, ինչպես են վզվզում, ծվում, հենց գիտես, թե իրավ որ նաղրախանա ըլին ածում: Մարդ գիշերն էլ վախենում ա, էս բաներն էլ որ իմանում ա, էն ժամանակն աչքին հաղար մեկ տեսակ բան ա երևում:

Ստեփան.— Բաս որ ասում են, լիս վեր էկավ, ամպիցը վիշապ էր կախ էլել, էն թնչ գատ ա:

Տիգրամ.— Սիրելի Ստեփան, ամեն առավոտ լիս ա վեր գալիս, ամեն օր արեգակը դուս գալիս չենք զարմանում: Գիշերը կըլի, որ կամ ամպ ա վեր գալիս կամ երկինքն ամպած ժամանակին լիսնիակի լիսը մեկ տեղից, ամպի միջիցը դուս ա գալիս, ընկնում մեկ տեղի վրա, մարդ տեսնելիս, հենց իմանում ա, թե լիս ա վեր գալիս:

Ամպիցն էլ, որ վիշապ ա երևում, հեշ զարմանք չի: Ամպն ու բուլը մեկ ա: Ինչպես բուլը բարձրանալիս կերպ կերպ ձև ա ստանում, յա ձգվում, յա ոլորվում, յա մարդի գլխին նման ա ըլում, յա ծառի, էնպես էլ ամպը: Բամին դես ու դեն տանելով ամպին, ինչ ձև ասես նրան փոխում ա: Բազի վախտ հենց իմանում ենք արջ կա երկնքումը, բազի վախտ ուղտ, բազի վախտ ծառ, տուն, քաղաք: Աշխարհումն էնպես տեղ կա, որ ամպին մտիկ անելիս, առաջիդ մեկ, սաղ քաղաք ա երևում: Տուն, եկեղեցիք, քուչիք, մարդիք էնպես են գալիս աչքիդ առաջը, որ էլ չես կարում իմանալ, թե էս քաղաք չի, ամպ ա: Սրա պատճառը լուսնն ու քամին ա: Ոչ քաղաքը տեղից ժամ կզա, ոչ ծառ ու ուղտ, ու երկնքումը՝ առաջինը քաղաք չինող, ծառ տնկողն ձվ ա, երկրորդ

էլ՝ նրանք ինչպես կարան էնպես բարձր տեղը մնալ, որ մեկ պատիկ քարն էլ չի մնում. իսկույն որ քցում ենք, էլ եղ վեր ա ընկնում:

Անկաջ արեք, ձեզ մեկ պատմություն ասեմ, Մեկ անգամ գեղըցիք մեկ տեղ վար ու ցանք անելիս տեսան, որ բիրադի թողը աշխարհ բռնեց:

Հենց խելիմ վախտ անցկացալ, տեսան, որ երկնքիցը հագար ալիւ գտակ վեր ընկաւ: Գեղըցոնց աչքերը մնաց սառած, Փառք ասածո, որ երկնքումը գերձիկ էլ կա, ասեցին գեղըցիք, հալրաթ մաշեկար, քուրքջի էլ կըլի, էլ թնչ դարդ ունինք: Մեռելի շորերը թող տերտերները տանին, էլի կարիւ կտանք: Ի՞նչ եք ծիծաղում, ձեզ որ պատահեր էդպես չէ՞ք կարծիլ:

Վարդամ, — Շատ լավ. ասենք թե երկնքումը փեշաքար չկա, ըստ էն գտակները թնչ տեղից էկան:

Տիգրամ, — Լսեցեք ասեմ, Գեղըցիք հենց իմացան թե իրանք սուրբ են, որ աստված նրանց էն ողորմությունն արեց ու էնպես կարծեցին, թե վար ու ցանք անիւ էլ պետք չի, չունքի ասածո աչքը էնպես քաղցր էր նրանց վրա: Գդակները մասունքի պես հավաքեցին, որը ծոցը դրեց, որը շերը, որը սելի միջին, որն էլ գլխին: Ու բահները ուսըներին դրած, վար ու ցանք թողին ու ուրախ ուրախ ճամփա ընկան, որ էս լավ խարարը գեղը տանին: Բայց քո դուշմանը՝ հենց սարի գլուխը նի էլան, տեսան, որ մեկ դասթա սալդաթ թվաքներն ուսըներին, գլխաբաց դալիս են: Էն թնչ վնաս ունի: Մեր գեղըցիքը իրանց ճամփեն բռնեցին, գնացին ու հենց մոտեցան թե չէ, տուր ու դմոցը վեր էլաւ: Սալդաթները իրենց գտակները տեսան ու եղ էին ուզում, գեղըցիք իրենց երկնքից եկած ողորմությունը չէին ուզում տան: Վերջը, վերջը մեկ լավ բարաթ քոթակ ուտելուց եղ իրանց տվին:

Վարդամ, — Ընչի՞, ես չէի տալ, նրանք հո խլիլ չէին: Ախ էն սալդաթի մեկը որ ձեռս ընկնի, հոգին կհանեմ:

Տիգրամ, — Միրելի որդի, ախր իրանց գդակն էր, ինչպես չէին տալ: Քամին էր գլխներիցը թոցրել ու երկինքը հանել: Թե չէ գդակն ով կտա երկնքումը: Էսպես էլ ամեն բանը պետք է իմանանք, ու չհավատանք առանց պատճառի:

Ստեփան, — Ինչ կուզես սա, գիշերը, որ մարդ գերեզմանատուն մտնի, սաղ չի դուրս գալ:

Տիգրամ, — Բաս որ էդպես ա, կացեք, ես ձեզ մեկ պատմություն էլ ասեմ:

Մեկ քանի մեծ մարդ, ձեզ նման պատիկ ոչ, մեկտեղ նստած գիշերը քեֆ էին անում ու զրից տալիս։ Ոոսքը ընկավ էսպես բանի վրա, ու ասեցին որ ինչ կտրիչ մարդ էլ ըլի, գիշերը գերեզմանատունը չի կարող մտնիլ։ Մեռելները սաղ սաղ կուտան նրան։

Ղոչաղ հայի մեկը մարջ էկավ, որ դնա։ (Տեսնեմք. քե մարդ ա, եդ կգա, ասացիմ երեխեք, հուճար գմալը չի, եդ գալմ ա)։ Էն գերեզմանատանը մեկ քանդված տուն կար գետնի տակին, էնտեղ պետք է դնար ու մեկ ցից էնտեղ ցցեր։ Հենց մեր ղոչաղ հայը ներս մտավ ու ուզում էր ցիցը ցցի, մեկ էլ էն տեսավ, որ մեկը քամակիցը թռավ ուսն ու զարչելի ձենով ասեց։ Դու ձուր ես եկել էստեղ։ (Ահա՛, ահա՛, իր հալսմ ա, ասացիմ երեխեք)։ Մեր ղոչաղ տղեն ցիցը վեր դրեց, անսաս վեր կացավ ու մեր մեռելին ոտի տակը քցեց։ Էնպես էր զրկեցնում, որ բոչկի ձեն էր հանում։ Մեռա՛, մեռա՛, աստված կսիրես ինձ մի սպանիլ, գոռաց մեր հրաշքը։ Մեր տղեն լավ որ բանը տեսավ, նրան էնտեղ վեր ընկած թողեց ու եդ դարձավ։ (Ամա սիրտ ա հա, ասացիմ)։ Ընկերները, որ տեսան նրան, խելքենբըրը դնաց, էնպես էր խեղճի ռանգ մոանգը թռել։ Չէին հավատում, որ նա իր տեսածը պատմեց։ Ծրագ վառեցին, գնացին էն տեղ, աչքդ բարին տեսնի։ Չէ թե մեռել էր ընկածը, հարժած սալգաթ էր, ճամփին մոլորվել, մտեր էր էնտեղ, որ քնի, գինու քեֆը գլխից դուրս գա։

Հիմիկ իմացաք, թե շատ բան ինչպես ա պատահում, ախր մեռելը թե կարենա վեր կենալ, յա մեկ բան անիլ, բաս ընչի չի մեր տանն էլ մեկ բան անում, որ էնքան լալիս, երկու իրեք օր էլ պահում ենք։ Կենդանուցը, որ չի վախենում մարդ, մեռելիցը ընչի՞ պետք է վախենա։

Ստեփան.— Հիմիկ իմացա ասածդ, ամա էնպես քար սիրտ ամեն մարդ չի ունենալ։

Տիգրան.— Հայտնի բան ա, էդ ա, որ շատ մարդ սիրտ չի անում բանի զորութունն իմանա, հենց իմանում ա հրաշք ա տեսնում, կամ քաջք։

Վարդան.— Դու ինչպես գիտես, սիրելի հայր, որ սատանա, քաջք չկա։

Տիգրան.— Լսիր ասեմ։ Ես ու էն մարդիքը, սր էգպես բանի չեն հավատում, ամենին չեն էլ տեսնում։ Ամա էն մարդիքը, որ վախկոտ են, ու շուտով ամեն բանի հավատալ գիտեն, նրանք

ամեն զրազու՛մ, պուճաթու՛մ էղպես բանը տեսնում են: Թե զու՛ք էլ, սիրելի էրեխեք, ձեր վախուկությունը չթողաք, զու՛ք էլ ամեն տեղ էղպես բաներ կտեսնիք: Ամեն մեկ դարդակ ծառի քոթուկ, ամեն մեկ սև կատու, ամեն մեկ դարիր մարդ, կամ մեկ ձին, թրբխոց, որ դիշերը տեսնիք, կամ լսեք, հենց կիմանաք թե սատանա է: Ամա թե խելք ունենաք, ու տեսած, լսած բաներդ լավ քննեք, կտեսնիք, որ ոչ սատանա կա, ոչ ոչինչ, Հենց ձեր միտքն էր ձեզ խարում:

Հենց պարոն Կարապետն էլ տուն եկավ, էլ էս բանի վրա սկսեց խոսալ, մինչև իր աշակերտների մտքիցը էսպես դարդակ բաները հանեց ու նրանց վախը ոչնչացրեց: Մութը որ ընկնում էր, մեկ սրան էր բանի զրկում, մեկ նրան, որ փորձվին ու սիրտըները պնդանա: Իրանք էլ տեսան, որ ոչինչ չկա, ու էնզուց զենք, ուր ասես, մեն մենակ զնում, զալիս էին:

ԳԼՈՒԽ ՔՄԱՆԵԼՄԻՆՐՈՐԴ

Պարոն Կարապետը հենց իր բարի մոր մահվան կսկիծը մի քիչ սրտիցը հանեց թե չէ, էլի իր զստն սկսեց ու իր աշակերտների հետ զնաց դաշտը, որ բույս հավաքի:

Մեկ մեծ դասթա խոտ, ծաղիկ հետըները տուն բերին ու սեղանի վրա դրին: Պարոն Կարապետը մեկ բույս հանեց, անունը իշակաքմուկ, սկսեց նրանց էն բույսի կաթի որպիսությունը, տերևների ձևը, ծաղկի դրությունը, ծաղկի միջի սերմի տեղը ու նրա պիտանավորությունը տեղը տեղին պատմել: Ամա էս անգամ ոչինչ ուրախություն չէլավ նրան: Էրեխեքը միշտ, ամեն բանի վրա համ շատ համոզարտ էին, համ շատ ուշ ու միտքը վրբմբը, էս անգամ հենց մեկ մյուսի անկաջումը փսփսում, մյուսին ըզըզում, աչքով անում, ոտով խփում ու ծիծաղում էր: Հենց որ ասեց, թե էն բույսի անունը իշակաքմուկ ա, մեկ մեկի երեսին մտիկ տվին ու ծիծաղեցին: Էս մեր հարեմանի իշի կաթն է, ասեց Մտեփան Վարդանին, էլ ինչ դարդ ունինք որ իշի կաթն էլ ա խոտերի միջին անուն ճարեր:

Ծղիսարեթ էս բանին չհամբերեց ու ձեն տվեց, «պարոն Կարապետ, աստված կվերցնի, որ սրանք էսպես չարություն են անում ու անկաջ չեն զնում»:

Եէրէխեք, ասեց պարոն Կարապետ, էս օր ձեր ուշ ու միտքը

քամուն եք տվել, Ձեզ հետ բան չի կարելի չինիլ Սնկով չեք դնում, էլ ի՞նչ կսովորեք, Ստեփան, էն բույսի անունն ի՞նչ էր, որ վրեն էդքան ծիծաղում եք:

Ստեփան.— Ի՞նչ ասեմ, մեր գոմումն էլ ունինք նրա անունը, ի՞նչ ասելու անուն ա, որ ասեմ:

Կարապետ.— Ես ուզում եմ, որ ասես:

Ստեփան.— Իշի կաքք, էլ ուրիշ բան կամ:

Կարապետ.— Դրուստ չես ասում: Լավ միտք արա:

Ստեփան.— Շատ լավ, կաց, միտք անեմ, հետո ասեմ, Շակաք էսպես չէ՞ր:

Կարապետ.— Միրելի, միտքդ հավաքիր, էդ բառի վրա, որ մեկն էլ դնես, հո շամ կաքը կդառնա, ընչի է եղպես անխելք խոսում: Եղիսարեթ դու ասա:

Եղիսարեթ.— Իշակաթմուկ: (էս ասելիս ախպորը ոտով խըփեց ու աչքով արեց):

Ստեփան.— Ամա անուն են գտել հմ, լսողի փորը ցավ կընկնի ծիծաղու:

Կարապետ.— Աչքի լույս, էս օր քո ուշ ու միտքը խաղումն ա, ասածս մեկ անկաջողդ մտնում, մյուսովը դուս ա դալիս, ի՞նչ պետք արած: Ձեր խաթրն եմ պահում, թե չէ շատ կնեղանայի: Էս որ ասեց, սկսեց էն խոտն ու ծաղիկները մեկ մեկ վեր առնիլ, կարգով մեկ երկար տախտակի վրա դասիլ ու նրանց անուններն վրեները գրիլ: Նա որ գլուխը քաշ արած էս չէր անում, էրեխեքը ծիծաղու տուտը բռնել, էլ չէին գինջանում:

Էս որ պրծավ, սկսեց էրեխեքանցը էն անունները հարցնիլ, ախր ի՞նչ կիմանային, որ չէին անկաջ գրել: Պարոն Կարապետ շատ նեղացավ, բոլորն էլ հավաքեց ու փանջարովը դուս ածեց, հետո նըրանց ասեց, որ մյուս օրը, ամենն էլ ինչ որ իշակաթմուկի վրա լսել էին, գրեին, բերեին, իրան ցույց տային: Ես էնպես եմ կարծում, որ ձեր գրածը բանի նման չի ըլիլ, չունքի ուշքներդ վրեներդ չէր էսօր:

Մյուս օրը գրածները բերին, ամա ինչպես որ պարոն Կարապետն ասել էր, էնպես էլավ: Եղիսարեթ ու Ստեփան ուրիշ անուն էին տվել, ու շատ սխալ էին գրել, թեև պարոն Կարապետը անունը տախտակի վրա գրել էլ էր, որ տեսնին: Վարդանի գրածը մի քիչ լավ էր, ամա էլի պակասություն շատ ուներ:

Պարոն Կարապետը գրածները եղ տվեց ու ասեց. « առաջ ինչպես էի ձեր գրածը տեսնում, ուրախանում էս օր էն ուրախութունը խաբար արիք ու սիրտս շատ կտորեցիք: Առաջ էնպես էիք ամեն բանը գրում, ինչպես ձեզ ասել էի, ու քիչ սխալ էր ըլում միջումը: Էս օր բոլորն էլ սխալ եք գրել: Չգիտեմ պատճառն ի՞նչ ա: Ուրիշ վախտ ի՞նչպես խելոք ամկաց էիք դնում, ու էլ ուրիշ բան չէիք անում, իմ ասածն էիք լսում: Բայց էրեկ ասածս քամին էր տանում, ձեր ուշ ու միտքն էլա հո, ձի ա խաբար, որ սարի ծերին էին ման դալիս: Թե էսպես կերթա, ոչինչ չեք սովորիլ: Հացի նրստեղիս մարդ պետք է բերանը բաց անի, որ իր փայ ուտեղիքը վայելի, թե ոչ սոված կմնա: Թեկուզ սաղ սեղանը կերակրով լիքն ըլի: Դասի ժամանակն էլ աշակերտը պետք է լավ վարավորդ անի, ինչ որ վարժապետն ասում ա: Թե ոչ, մարդ կմնա տղետ, անուսումն, բռի, թեկուզ որ վարժապետը հազար լավ բան էլ ասի:»

Էրեխեքը տեսան որ պարոն Կարապետի ասածը զրուստ ա, իրանց հավաքեցին, մտքըներումը դրին, որ մյուս անգամ զգուշ ըլին, հանդարտ մնան ու ասածին անկաշ դնեն: Ասածներին հաստատ էլ մնացին:

Հենց էն օրը, ճաշից եղը դաս առնելիս, երևաց, որ նրանք հաստատ կամենում էին վարժապետի ասածին անկաշ դնել: Պարոն Կարապետը Աֆրիկի տեղաթուղթը (կարտը) առաջներին դրեց, ամեն ծովերի անունը նրանց ասեց, ամեն գլխավոր գետերի, երկրների, որ էնտեղ կային: Էս որ պրծավ մեկ քանոն (լինեյկա) առավ ձեռն ու ինքը... նրանց անունների վրա էր դնում, էրեխեքըն ասում էին: Մեկ քանի անգամ որ էսպես կրկնեցին, հետո ասեց նրանց, շտիբելի էրեխեք, տեսնիմ, թե ձեզանից որդ եք լավ անկաշ արել, մեկ էլ տեղաթղթին նայեցեք, ու ինչ որ ասեմ, էն արեք:»

Նրանք էնպես արին:

Էջիմիկ տեսնիմ, էլի սկսեց իր խոսքը, թե ձի ինձ կասի կարգով էն բոլոր ծովերը, գետերն ու երկրները, ինչպես որ ես ցույց տվի:»

Են, ես, սիրելի պարոն Կարապետ, ես կասեմ, ձեն տվին ամենն էլ: Սս բոլորը գիտեմ:»

Առաջ Նդխաբեթը ասեց, հետո Վարդան ու նրանից եղը Ստեփան: Բոլորն էլ լավ ասեցին, մենակ Ստեփանը մի քիչ կրմ-

կըմուժ էր: Եճեսէք, սիրելիք, ասեց, բանին, որ լավ անկաջ դնեք, էսպէս լավ կըլի: Հիմիկ ինչ որ սովորեցիք, մեկ քանի անգամ էլ տանը կրկնեցէք ձեր մտքումը, էլ թե մոռանաք, ես ըլիմ պարտական:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՎԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Ե՛հա օր էլ ուրիշ բան սկսեց, ասեց պարոն Կարապետը: Կուգեմ, որ տեղաթուղթը շուռ տամ, կարճիկ եք էլի կարգով Ասիու ծովերի, գետերի, երկրների անունները ասիլ:

Էրեխէքը պատասխան տվին, որ կարող են: Վարդանն սկսեց ու շատ լավ ասեց:

Սրանից եղբ Եղիսարեթ սկսեց, սա էլ լավ գիտեր: Մինակ Կարմիր ծով ասելու տեղը, Պարսից ծովածոցի անունը տվեց: Ստեփանն էլ լավ պրծավ: Մեկ քանի տեղ, դորդ ա, սխալվեց, ամա պարոն Կարապետը սրանով էլ բավականացավ, չուռքի գիտեր, որ նա դեռ էնքան վարժվել չի: Ե՛րուք տեսում եք, իմ սիրելի Էրեխէք, թե ինչքան լավ բան ա անկաջ դնիլը: Մարդ իր տեսածն ու լսածն լավ հասկանում ա, իմանում ա ու երեակայությունն էլ իր միջումն պահում:

Երեակայությունն ի՞նչ զադ ա, հարցրեց Եղիսարեթ, մեր գըլխումն ա թե սրտումը:

Ե՛հա հոգու էն զորությունն ա, որ հիմիկ էդպէս վարժել, կըրթել եք: Սրանով ենք մեր իմացած բաները էլ եղ մտքըներս բերում: ԵԿարճիկ ես Ստեփան, հորդ միտքդ բերիլ:

Ե՛լալքաթ որ, ասեց Ստեփան: Նա էլ էնպէս մեծ ա, ինչպէս դուք, աչքերը կապույտ, քիթը կռացած, մազը դեղնազույն, ու չուսին մոխրառանգ է:

Ե՛տառ լավ նկարագրեցիր, շատ ապրիս: Հենց իմանում էիր, թե հերդ առաջիկ կանգնած ըլի, էսպէս չի՞: Էսպէս, ինչ ժամանակ լավ անկաջ դնեցք ամեն բանի, ինչ որ տեսնում, լսում ենք ու մեզ լավ վարժեցք, որ էս բաները էլի միտքըներս բերենք, էն ժամանակը շատ հեշտ կըլի, մեր տեսած, լսած բաներն, էլի ուրըշին եղ պատմենք: Որ իմանամ թե ուրախ կըլիք, մեկ անգամ ձեզ հետ կերթամ ճամփա, որ հետո կարողանաք գրեք մի առ մի ինչ որ տեսնիք:

ԵԱխ, էդ ի՞նչ լավ բան ասեցիր, սիրելի պարոն Կարապետ, երանի թե հենց էս օր գնայինք:

Նդիսաբեթ գլուխը կախ արեց ու հարցրեց, «ինձ էլ կտան՞ք, ինչ է՞նք»:

«Թե հերնըմերդ հրամայեն, ինչի՞նչ, ասեց պարոն Կարապետը:

Ծնողքն էլ հրաման տվին: Մյուս օրը ընկան ճամփա ու իրիկունը քեֆըները քոք, էլ եղ տուն էկան:

Մյուս օրը պարոն Կարապետն ասեց, որ էրեխեքը իրանց աչքի տեսած բաները գրեին: Վարդան էս ներքևի բանն էր գրել:

«Օգոստոսի մեկին, պարոն Կարապետը իմ քվոր ու մեր բարեկամ Ստեփանի հետ գնաց էջմիածին: Մեր շուն Սուլթանն էլ էր մեզ հետ: Հենց հանդը հասանք մեր շունը մեկ ալապստրակ տեսավ ու ետեվիցն ընկավ որ բռնի: Պարոն Կարապետը շվացրեց, ամա Սուլթանը անկաջ չարեց: Նդ եկած վախտը պարոն Կարապետը փետով մեկ քանի անգամ խփեց նրան: Նդիսաբեթ ճամփին մեկ խոտ գտավ, անունը Կամեփ: Սրա վրա շատ ուրախացանք, չունքի դեռ չէինք տեսել: Փարա՛քար գեղի մոտ մեկ թուղթ տանող ռաստ էկավ, պողը փչեց ու էս խաղը կանչեց: Ուրախացեք, ձեր կյանքը վայելեցեք: Էս ձենը շատ դուրեկան էր: Մենք նրան բարի լիս ասեցինք: Փարա՛քարի միջովը մեկ պստիկ ջուր ա գընում, մեջը կարմրախեթ ձկնով լիքը: Գեղի չորս կողմը մեկ հին բերդ կա շինած: Շատ բաղ, բաղաթ էլ կա: Միջինըումը ինչ տեսակ ծառ ասես, կա: Տները բոլոր ցիփեց են շինված, կտրները տափակ, պատերը ցած, հայաթներն առաջներին: Եկեղեցու գլխին մեկ պստիկ խաչ կա, աստվածածնի անունոցն ա շինած: Երեսուն տուն կան գեղումը: Բոլորն էլ հայ են ու շատ աշխատավոր մարդ են: Ինչ պտուղ ասես, գինի, բրինձ, բամբակ, միջիցը դուս ա գալիս:»

«Գեղի դռանը մեկ կատու կար նստած, Սուլթանը գնաց, որ բռնի: Կատուն եղի ոտների վրա կանգնեց ու էնպես չանգռեց Սուլթանի դունչը, որ պոչը փորի տակը քաշեց, վնգաց ու փախավ: Մեկ դարմանատան տակին Ստեփանը մեկ խոտ գտավ, տերևը բոզ, ծաղիկը մուգ գեղին: Պարոն Կարապետը անունը մեզ ասեց, եղեջմակ էր: Գեղումը կալերը կասում էին: Վագեցինք, գնացինք կամի վրա նստեցինք ու եզները քշեցինք: Գեղըցի էրեխեք տկլոր, տկլոր, շատի ձեռին հաց հեռըվանց կանգնել մեզ մըտիկ էին տալիս: Որն էլ ուզում էր, մեզ չարացնի, մատով աչքերը հա էր ճոթոտւմ, մեզ քո՛ կանչում:

Հենց մոտանում էինք, զորդի պես փախչում, գյոււմ էին ըլում։ Կաթն ու մածուն բերիլ տալ տվինք, կերանք։ Խիստ շատ համով էր։ Խնջքան արինք, փող չի վեր առան։ Էնպես լավ խալի էին։ Պատերին հենց դիտես, գյուլով խփել ըլին, էնքան աթար էր կպցրած։ Օրը շատ շոք էր անում, զնացինք, մեկ հով տեղ նստեցինք, դինջացանք և այլն։

Պարոն Կարապետը Վարդանի գրածին խիստ շատ հավանեց ու ասեց, որ նրա երեակայությունը շատ լավ կարգով ու խստակ ա, ամեն բանը նրա միտքը բերել, ինչ որ տեսել իմացել էր։

Ստեփանն ու Եղիսաբեթ քիչ բան էին վարավուրդ արել, ու էն էլ կարգին չէին պատմել։ Եղիսաբեթ շան ու կատվի կոխը մեկ ուրիշ տեղ էր նշանակել։ Ստեփանն էլ պատմել էր, թե Փարաքար շատ ձիավոր էր տեսել, որ ճշմարիտ չէր։

Ե՛րնչ որ էստեղ գրել ես, ճշմարիտ չէ, ասեց վարժապետը։ Ինչ որ տեսնիք, կամ լսեք, լավ վարավուրդ արեք, որ էլ եղ կարգին միտքընեդ բերեք։ Թե չէ քիչ, քիչ կդառնաք ստախոս, որ կամենաք էլ ոչ։ Ինչ որ պատմելու ըլի մարդ, էնպես պետք է պատմի, ինչպես որ իր աչքով տեսել ա, էն էլ կարգին։ Մեկ բանն առաջ չի պետք է քցի, մեկ բանը եղը՝

Էս որ պրծան, պարոն Կարապետը սէսեց էլի տեղաթղթի վրա Ասիու ծովերի, գետերի, երկրների անունները հարցնիլ։ Ոչինչ չիմացան։ Հենց իրենց երեսիցն էլ մաշուր էր, որ չէին գիտում, չունքի շատ տխուր էին։

Պարոն Կարապետը մեկ քիչ վախտ լուռ նստեց, հետո զնաց մեկ մաղ բերեց ու Եղիսաբեթին ասեց, որ տանի ջուր լցնի։

ԵՄձիը ջուր լցնեմ, ասեց զարմանալով Եղիսաբեթ։ Ի՞նչպես կարող եմ, հազար տարի էլ, որ մեջը ջուր լցնեմ, էլի բոլոր վեր կթափի, կերթա՞ւ։

Ե՛կ էլ էնպես ա, ինչպես ինձ համար ձեր գլուխը։ Մեկ քանի օրից առաջ որքան անուն սովորցրի ձեզ, ամա էնքան ա մնացել ձեր գլխին, որքան Եղիսաբեթի ջուրը էս մաղումը։ Ինչ որ ուզում եք դասի ժամանակը միտքընեքումդ պահեք, պետք է բերան անեք, շատ ասեք, էլ եղ կրկնենք։ Էստով ձեր հիշողությունն էնպես կկրթեք, որ վերջ ժամանակը էլ դժվարություն չեք ունենա բան սերտելու՞մը։

Էս պատճառով բոլոր Ասիուցը ասած անունները գրիլ տվեց, որ բերան անեն ու մյուս օրն ասեն։ Էսպես էլ մյուս օրն անիլ տվեց

ու օրեցօր շատացրեց: Սկիզբը դժվարանում էին, քիչ քիչ էնպես հեշտացավ, որ նրանց խաղ դառավ: Սրանից եղբ թե որ սովորածները գիտում, էին շատ ուրախանում էին ու իրանց իրանց ասում էին՝ փառք տառնու, հիմիկ էլ մաղ չի մեր գլուխը: Եղիսարեթ էլ էր լավ վարավուրդ անում, բազի վախ՛տ Ստեփանիցն էլ էր լավ, թեև մեկ քանի ժամանակից սկսած, դասի ժամանակը գյուլպա էր գործում: Պարոն Կարապետը՝ վարավուրդ արեց, որ գյուլպա գործելումը մեկ բան պետք է ըլի՝ շէնչի՛ հա էս մեկ քանի օրը էդպես դայրաթով գյուլպա գործում: Եղիսարեթ ծիծաղեց ու գլուխը քաշ քցեց:

Կարապետ.— Ձի՛ կարելի իմանալ:

Եղիսարեթ.— Ձե՛մ ուզում ասիլ:

Կարապետ.— Պատճառը չե՛մ հասկանում, թե ինչի՛ չես ասում: Հերդ կամ մերդ դադադմ են արել, որ ինձ չասես:

Եղիսարեթ.— Ձէ, ձեղ կասե՛մ, ամա էս տղերքը չպետք է իմանան: Պարոն Կարապետին զրաղ քաշեց ու անկաշումը փսփաց: Ե՛թմ հոր համար եմ գործում, էկող շարաթ նրա ծննդյան օրն ա՛մ:

Կարապետ.— Շատ լավ ես անու՛մ, ամա թի՛չ պատճառով չպետք է սրանց էլ ասած:

Եղիսարեթ.— Դրանց բերնումը լորի չի թրջվիլ, էլ եղ կասես:

Կարապետ.— Վարդան, Ստեփան, Եղիսարեթն ասում ա, թե դուք փակ բերան չունիք:

Վարդամ.— Ինձանից սատանեն էլ բան չի իմանալ:

Կարապետ.— Հավատում եմ: Չունքի թե խորհուրդ չպահեք, շատ վատ էրեխեք կըլիք: Թե որ էս սհաթս Ստեփանին կամ Վարդանին պահ տայի, ու նրանք էլ հիմարությամը ձեռնե ձեռք քցեին ու կորցնեին, են ժամանակը ամեն մարդ գիտի, որ շատ վատ բան կլի: Էնպես էլ շատ վատ բան ա, որ թե մեկ մարդ ինձ իր խորհուրդն ասի, ես բերան բերան քցեմ: Էնպես մարդը արժան չի, որ բարով էլ տան: Լսած խորհուրդն ու տված խոսքը մարդ էնպես պետք է պահի, ինչպես իր մարմինն ու արինը: Հավատում ես, թե չէ, Վարդան:

Վարդամ.— Շատ լավ հավատում եմ:

Կարապետ.— Ուրեմն թե մեկ մարդ քեզ հավատա ու ծածուկ մեկ խորհուրդ ասի, թե էս բանն արել եմ, կամ ուզում եմ անիլ,

պետք է խոսքը սրտումդ պահե՞ս, թե զնաս փողոցի միջումը կանգնիս ասես:

Վարդամ.— Աստված մի արասցի, միսս որ կտրեն չեմ ասիլ:

Կարապետ.— Ընչի՞:

Վարդամ.— Ձուներ ինչ հավատում աս, որ ասում աս, ես ինչպես պետք է նրան ֆեսս տամ:

Կարապետ.— Բայց թե որ մեկն ասի քեզ, թե ուզում աս քո հարեվանին ֆեսս տա, էն ժամանակն էլ պետք է լուռ կենա՞ս:

Վարդամ.— Աստված ոչ անի, իմ հարեվանի ֆեսսն իմն աս, ես որ նրան չպահեմ, քոմակ չանեմ, նա էլ ինչ քոմակ չի անիլ: Ընկեր ընկերին էնպես պետք է պահի ու թասիրը քաշի, ինչպես իր գլխի, իր ջանի:

Կարապետ.— Ուրեմն, թե որ մեկ մարդ մեկ մեկ խորհուրդ ասի, թե ուզում աս, ուրբշին ֆեսս տա, էլ չի պետք է լուռ կենանք, պետք է հայտնենք: Ամա թե խորհուրդը բարի աս, պետք է սուրբ պահենք: Հիմիկ բանն էնդուր վրա աս, թե Եղիսարեթի խորհուրդը բարի՞ աս, թե չէ: Ուրբշին հո ֆեսս չի գալ: Ինչ կասես Եղիսարեթ ջան:

Եղիսարեթ.— Դու լավ գիտես, որ իմ խորհուրդը մեկին էլ աս ֆեսս չի տալ, էլ ո՞ւր ես հարցնում:

Կարապետ.— Ուրեմն ես էնպես եմ կարծում, որ լավ կըլի քո խորհուրդն էս տղերքանցն ասես:

Ինչ ժամանակ Վարդանն ու Ստեփան խոսք տվին, որ Եղիսարեթի ասածը իրանց սրտումը պահեն, ուրբշի չասեն, նա էլ իր խորհուրդը նրանց ասեց:

Էս որ լսեցին, նրանք էլ ուղեցին իրանց բարի հորը մեկ զատ փեշքաշ անեն. պարոն Կարապետին ասեցին, սա էլ հավանեց: Հլա դեռ չէին գիտում, թե ինչ պետք է բաշխեն: Վերջ ամենայնի Վարդանը մտքում դրեց որ մեկ թութունաման բաշխի, Ստեփան էլ ուղեց, որ մեկ սնաթի զնջիլ փեշքաշ անի:

Շատ բարի ասաց պարոն Կարապետը, ամա ինչ որ տալու էք, դո՞ւք էք շինել:

Ինչ ժամանակ, որ ուսին, գլխին արին, ու ասացին, որ պետք է ծախու առնին, էն ժամանակը պարոն Կարապետը գլուխը պըտտեց ու ասեց, «թե դուք չեք շինել ձեր աալու բաները, լավ է, որ չտաք: Ի՞նչ ուրախություն ձեր հոր համար, որ էսպես մանր բա-

ներն էլ առնիք, Նա էնքան փող ունի, որ ինքն էլ կարա առնիլ, թե որ դուք շինած ըլիք, էդ ուրիշ բան է, հասով կիմանա նա, որ դուք մեկ բան եք սովորել, Ձուների էրեխեքը ոչինչ բանով իրանց ծնողաց սիրտը չեն կարող շահիլ, թե ոչ նրանով, որ զայրաթով սովորին ու իրանց բանին մուգաթ ըլին՝

էրեխեքը շատ տխրեցին ու Վարդան շատ որ նեղացավ, ասեց էլ՝ «ուրեմն մեր ազիդ հորը մենք չենք կարող մեկ բան էլս փեշքաշ անել, չուների ոչինչ չենք սովորել»:

«Ի՞նչ, Ոչինչ չէ՞ք սովորել, ասեց պարոն Կարապետը, ոչի՞նչ, Ես էի ձեր վարժապետը, ու դուք ոչինչ չեք սովորել ինձ մոտ: Էլ ուր եմ մնում ձեր տանը, լա՞վն էն ա, որ ձեզանից հեռանամ»:

«Ես հո էզպես չէի ասում: Մենք չենք սովորել, որ մեկ բան շինենք, ու մեր հորը տանք, ասեց Վարդան»:

«Ես հո չասեցի, թե էրեխեքը հենց էն ժամանակը իրանց ծնողաց սիրտը կուրախացնեն, երբ որ նրանց բան բաշխեն: Ես ասացի, թե որ նրանց ցույց տամ, թե օրեցօր լավանում, օրեցօր բան են սովորում: Ուրեմն, թե իրավ ինձ մոտ բան եք սովորել, ձեր հորը իր ծննդյան օրը ցույց տվեք»:

«Ի՞նչպես անենք, հարցրեց Ստեփան»:

«Ես ձեզ կասեմ, պատասխանեց պարոն Կարապետը»:

ԳԼՈՒԽ ԲՕԱՆԵՎԵՐՆԵՐՈՐԴ

Նա էլ իրավ որ ասեց, ու էրեխեքը սկսեցին զայրաթ անիլ որ բարի հորը ուրախացնեն, որ նրանց էնպէս լավ վարժապետ էր բռնել ու վերակացու:

Ծննդյան օրը հասավ, ու ուրախ սրտով կատարեցին, առանց մեծ խարջ անելու: Հէնց հերը իր քնելու օթախիցը դուս էկավ թե չէ, Աննա չայը բերեց ու հետը Եղիաթի, Վարդանի ու Ստեփանի զրած գիրը: Պարոն Տիգրանը բաց արեց, կարդաց ու աչքերիցը արտասուներն սկսեցին թափիլ: Ստեփանի գիրը էս էր.

Սիրելի հայր:

Ճշմարիտ, դու իմ հերն ես: Դու ես կրթիլ տալիս: Ես առաջ ինչպես գաղան, չար երեխա էի, ու ոչինչ չէի սովորել: Դու ինձ հետ ինչպես քո որդու հետ ես վարվում, ինձ ուսումն, մարիֆաթ տալ տալիս: Շատ բան գիտեմ հիմիկ, որ առաջ չէի գիտում, ու

էլ էնպես չար չեմ, ինչպես առաջ, Սիրելի հայր՝ ես կուզեմ, որ միշտ լավանամ ու շատ բան սովորիմ, որ ուրախանաս: Մնաս բարով: Ապրիս երկար ու ուրախ: Թե իննը սհաթը խփի, արի պարոն Կարապետի օթախը ու տես, թե թնչ ենք սովորել: Սա եմ քո շնորհապարտ որդի Ստեփանն:

Ինն սհաթի իրեք չարեքը որ անցկացալ, պարոն Տիգրանը հազրվեց, որ կնկա հետ պարոն Կարապետի օթախը գնաւ: Հենց ուզեցան, որ դուս գնան, հանկարծ մեկ զոնաղ էկալ: Էս էկողը Ստեփանի հերն էր: Պարոն Տիգրանին, որ զրկեց, համբուրեց, տոնը շնորհավորեց, պրծալ, իսկույն հարցրեց: «Տղես ո՞ւր է?»

«Կտեսնիս, համբերիր», ասեց պարոն Տիգրանը ու ձեռիցը բռնեց, պարոն Կարապետի օթախը տարալ: Իրեք էրեխեքն էլ մեկ սեղանի վրա նստած էին: Պարոն Կարապետը գնաց պարոն Տիգրանի առաջը, որ նրան մեկ բան ասի, հենց բերանը բաց արեց թե չէ, ձենը մնաց փորոււմ: Զուգքի Ստեփանի աչքը հենց հորն առաւ թե չէ, նետի պես թռաւ առաջը, ընկաւ ճտով, լաց էլալ ու ասեց, «իմ ազիզ, իմ ազիզ, սիրելի հայր»:

Մեկ քանի վախտից հետո սկսեց պարոն Կարապետը, ուղածըն ասիլ: Պարոն Տիգրանի ձեռը հուփ տվեց ու ասեց, «բարի հայր, քո սիրելի որդիքը երկար միտք էին անոււմ, թե քո ծննդլան օրը, ինչ պետք է փնջքաշ անեին քեզ, որ դու էլ ուրախանաս, նրանց օրհնես, սիրես: Վերջ ամենայնի միտք արին, որ իրանց բարի հերը ոչինչ բանի վրա էնքան չի ուրախանալ, թե ոչ, որ տեսնի թե որդիքը բան են սովորել: Խնդրում եմ, ուրեմն, որ ինձ հրաման տաս, որ քո աչքի առաջին, սրանց հետ մեկ փոքր հարցափորձություն անեմ, որ տեսնիս, ինչ են սովորել»:

«Շատ կուրախանամ, ասեց պարոն Տիգրանը, ու շնորհակալ կըլիմ»:

Էստուց եղբ խնդրեց պարոն Տիգրանիցը, որ մեկ անվանի կենդանու անուռն ասի, որ էն կողմերը գտնվում էին: Նա էլ լազլազի անուռնը տվեց:

Նշխարեթին ասեց վարժապետը, որ էս զշի ամեն նշանները, որպիսությունը, ոտից բռնած մինչև կտուցը պատմի: Ստեփանն էլ պետք է լազլազին ու օձին համեմատեի ու ասեր, թե ինչով են էս երկու կենդանիքը իրար նման ու ինչո՞վ զանազան: Վարդանն էլ պետք է ասեր, թե նրա ուտելիքը թնչ ա, ինչպես ա ապրում ու մարդի թնչ օգուտ ա բերում:

Պարոն Տիգրանի կնիկն էլ կարմրախեթ ձկան, ու պարոն գիվանքեզին պախրի անուաները տվին, որ էսպէս պատմեն: Ինչ ժամանակ էս հարցմունքը պրծան, Ստեփան զնաց, մեկ մեծ դասթաբույս բերեց, որ մեկ օր առաջ հալածեւ էին: Պարոն Կարապետը մեկը մեկի քամակիցը էն բույսը բարձրացրեց ու էրեխեքը պետք է նրանց անուաներն ասեին, ու բազի անգամ էն նշաններն էլ գտնեին, ընչով որ նրանք իրար հման էին կամ, զանազան:

Սրանից եղն էլ տեղաթուղթը բերին Ամերիկու. Վարդան երեսը շուռ տվեց ու էն երկրների անունը տվեց, որ էստեղ կան, Նդիսարեթ հրեկելի գետերին ասեց, կարգով, ու Ստեփան բոլոր մայրաքաղաքներինը:

Նրանք պատմեցին էլ, թե ինչ կենդանիք կան էնտեղ, ի՞նչ բույսը, որ էնտեղ բուսածնում են, ի՞նչ հանքայինք կան, որ էն երկրումը գտնվում են, ու երկրի բնակիչքն ի՞նչ են շինում, ի՞նչ փեշաղի տեր են:

Սրանից եղը սկսեցին թվարանությունիցը բան ասիլ ու զբրելու տեսարակը մատ բերին. էրեխեքանց ծնողքը շատ ուրախացան, որ տեսան, թե նրանք ինչպէս զայրաթով է էլել ու էնքան բան էին սովորել:

Պարոն Տիգրանը հենց իմացավ, թե քննությունը (էզգամին) պրծան, բայց պարոն Կարապետը խնդրեց, որ իրան էրեխեքանցն էլ հրամայի, որ բան հարցնեն: Դեռ էս խոսքը չէր պրծել, որ Նդիսարեթ գուռ պրծավ դռնով ու իր փոքր ախպեր Հովհաննեսին հետը բերեց: Դե, սիրելի Հովհաննես, նշանց տուր մեր հորը, ինչ սովորել ես: Իսկույն կռնատակիցը մեկ այրեհնարան հանեց ու կարդաց:

Պատիկ էրեխեն թե որ շատ խաղա,
Կամ գլուխը կկտորի, կամ ոտը կկաղա,
Որ նոտինք, ասինք աղա եմ աղա,
Մեր հացն ո՞վ կտանի ջաղացն ու կաղա:
Տանձը ինքն իրան բերանդ չի ընկնիլ,
Որ տակին նստիս, տեղիցդ չես շարժիլ:
Ո՞վ զայրաթ չանի կմնա սոված,
Վերջ ժամանակին դռնե դուռ ընկած:

Մնողքը զարմացան ու հարցրին. շնորհաբանս, ո՞վ ա քեզ կարգաւ սովորեցրել: ՄԵԱ, իմ քերը, սա էր իմ վարժապետը:

Իրավ, որ նա էր նրան կարգալը սովորցրել, պարոն Կարապետի ձեռի տակին:

Հենց էս դասը հարցրին, Վարդանը ձեռիցը բռնեց ու տարավ մեկ սեղանի մոտ, որ վրեն քառասուն տեսակ ավելի գանազան բույսեր կային: Վարդանը մեկ մեկ բարձրացրեց ու Հովհաննեսը անուանեցրեւ ասեց: Հետո Վարդանը անուանեցին ասեց ու նա բույսերը գտավ ու հանեց:

Ե՛րուք ձեր մարիֆաթովը ու ձեր ուսմունքովը անշափ ուրախացրի՛ք ինձ իմ ծննդյան օրը, սիրելի էրեխեք, ասեց պարոն Տիգրանը: Լավ հոր համար քանց էս էլ մեծ ուրախություն չի ըլիլ, որ որդիքը խելոք ըլին, ու իրանց ուսմանը մուգայիթ, Ու ումից եմ շնորհակալ, Աւմն եմ պարտական սրա համար, Ձեզ, սիրելի, աչքի լույս, պարոն Կարապետ, ասեց ու նրան գրկեց:

Ե՛րաւ Բա, ասեց պարոն դիվանբեդին, բա Բա... բառ չեմ գտնում որ իմ շնորհակալությունը սրտիցս հանեմ, ասեմ: Դուք իմ որդիս էնպես ստացաք, որ ջանավարի նման մեկ դադ էր, հիմար, տղետ, անտաշ, ու ձեռքի տակին այժմ մարդ ա դառել, լավացել, ժրացել ա: Հովիտյան իմ կյանքս ձեզ պարտական է, իմ աղիդ պարոն Կարապետ:

Ե՛ջեր գովելովը շատ եք ամաչացնում ինձ, ասեց պարոն Կարապետը: Դուք երկուսդ էլ ձեր աչքերի լիսը ինձ տվիք, բառ ես ինչպե՛ս չպտեի ինձ պահ տված անգին քարը պահպանիլ, թե որ լավ մարդ էի ուզում ըլիլ: Էս խոսքն ասեց ու հեռացավ:

Էրեխեքն էլ էին ուզում հետը դուս գնան, պարոն դիվանբեդին նրանց բռնեց ու ասեց. Ե՛րիտեք, սիրելի էրեխեք, թե Աւմն եք պարտական, որ էս մեկ կես տարվա միջումը էսքան բան եք սովորել:

Ե՛սիրելի պարոն Կարապետին, ասացին բոլորն էլ:

Ե՛մոռանաք ուրեմն, սիրելի էրեխեք, ասեց, իմ չ որ Թա ձեզ համար ամուսն ա, դուք ոչիմն բանով չեք կարող վեցարիլ: Աշխատեցեք, ջանք արեք, որ նրան հնազանդ ըլիք, սիրտն առնեք, ձեր բանին մուգայիթ ըլիք, որ նա ավելի նեղություն չքաշի:

Արեգակը գեռ չէր հասել երկնքի մեջտեղը, որ նրանք յաժաշ, յաժաշ սկսեցին էլ եզ տուռ գնալ: Ծանապարհին էնպես բան պատահեցավ, որ նրանց բոլորին էլ թաքրար նեղացրեց: Պարոն Կարապետը Վարդանի ու Նզիսարեթի հետ առաջ էր ընկել, զնացել: Ստեփանը մնացել էր եզ, որ մեկ ճիճու կար, էն տեսներու Հանկարծ պարոն Կարապետը լսեց, որ կռիվ ա ընկել ու հենց էս էր իմանում, որ ասում էին—հիմար, գիժ, դու շատ հիմար ես:

Երեսը որ շուռ տվեց, տեսավ որ Ստեփան երկու քուշի տղերքանց հետ կռիվ ա բաց արել: Ի՞նչ խարար ա, ձեն տվեց, էն տղերքը խելույն փախան: Ստեփան վաղելով էկավ պարոն Կարապետի մոտ, երեսը բարկությունիցը կրակի պես վառվել էր:

Ե՛րեւ յա պատահելա, հարցրեց պարոն Կարապետը:

Ստեփան.— Ի՞նչ պետք է պատահի: Էնտեղ ինձ համար անսաս կանգնած էի, երկու հայվարա տղա էկան ու ինձ հիմար կանչեցին:

Կարապետ.— Դու ի՞նչ արիր:

Ստեփան.— Ես էլ նրանց ուշուռց տվի:

Կարապետ.— Լնդ: Ուրեմն էն տղերքը լավ արին, որ քեզ պակաս խոսք ասեցին:

Ստեփան.— Էլ ի՞նչ ասի կուզի Քանց էն էլ վատ բան կըլեր:

Կարապետ.— Դու պակաս խոսք ասեցիր, ուրեմն քու արածն էլ վատ ա:

Ստեփան.— Բաս ձենս կտրեի, չէ՞, առաջ նրանք ասեցին, ես ի՞նչպես պետք է համբերեի:

Էս խոսքումը Ստեփանի հերն էկավ, վրա հասավ: Պարոն Կարապետը Ստեփանին հրամայեց, ձենը կտրի ու հոր հետ սկսեց խոսալ: Ե՞րբոն աղա, ասեց, գիտեմ, որ շատ մարդիք, ձեր ձեռի տակին ըլողներիցը կռիվ են քցում ու հետո ձեր մոտ գալիս, որ դուք նրանց դատաստանն անեք: Ես էլ եմ ուզում ձեզ էնպես մի մեկ կռիվ հայտնեմ, խնդրում եմ, որ իմ դատաստանն անես: Մեկ էրեխա գնաց ման գալու, երկու էրեխա նրան պատահեցան ու ասեցին, դու հիմար տղա ես: Ի՞նչպես էրեխեք պետք է էլած ըլին նրանք: Ե՛րբոն էն էրեխին, որ պակաս խոսք լսեց, պատասխանեց դիվանբեղին, բայց էն երկու երեխի երեսին հեշ մոխի անելու չի, որ նրան անկարգ խոսք են ասել: Իմ կարծիքն էս ա, ու ամեն

խելոք մարդ էլ, էս կասի: Մեկ մարդ, որ ինքը էնքան տխմար ըլի, որ ուրըշին պակաս խոսք ասի, կնշանակի իրանն ա էն խոսքըն ասոււմ, իրանն ա անպատիվ անոււմ, չուճքի ինքն իրան նշանց ա տալիս, որ շատ բռի, կոպիտ, անանունդ մարդ պետք է ըլիլ: Մյուսին էնպես պակաս խոսքը բնավ չի կպչիլ: Նա էլի էն կմնա, ինչ որ էր: Ես, ինչպես որ տեսնոււմ ես, դուդ բոյ ունիմ, թե որ ինձ ասող ըլի, անդամալուշծ, վրեն կծիծաղիմ: Հազար անգամ էլ ինձ անդամալուշծ կանչեն, չէ՞ էլի դուդ կմնամ: Թե մեկ էրեխա խելոք ըլի, ինքը ի՞նչ փնաս ունի, որ նրան հայվարա մարդի մեկը հիմար կանչի՞:

«Բայց թե որ էն էրեխեն, որին որ պակաս խոսք ասեն, ինքն էլ եղ դառնա, մյուսին ասի, էն ժամանակը ինչ պետք է արած էլ եղ հարցրեց պաճոն Կարապետը:

«Ենպես էրեխեն դհա վատ ա, ասեց զիվանդիկն: Իմ դատաստանը միշտ էսպես եմ կտրոււմ: Ինչ գեղըցի, որ մեկի պակաս խոսք ա ասոււմ, պատժոււմ եմ նրան, բայց թե մյուսն էլ ա խոսքը եղ զարձրած ըլոււմ, էն վախտը երկուսին էլ պատժոււմ եմ: Անցկացած շաբաթը հենց էդպես մեկ բան պատահեցաւ: Մեկ գեղըցի գանգատ արեց, թե իր հարեանը նրան հարամգաղա յա ասել: Կանչիլ տվի, իմացա, որ սա էլ նրան ա ասել: Երկուսին էլ պատժեցի: Գանգատողն դորդ ա, ասոււմ էր, թե նա առաջ է իրան պակաս խոսք ասել, ու ի՞նչպես համբերել, որ ինքը հալալ մարդ ըլելով, էնպես խոսքը լսեր ու լուռ կենար: Ինչ ասեց, չի մտիկ արի, էլի պատժեցի, ու ասեցի: Թե դու հալալ մարդ ես, դրանով քեզ ի՞նչ կպակասի, թե մեկը քեզ վատ խոսք ասի: Դու սպիտակ ես, էդպես չի՞: Ես որ քեզ սե կանչեմ, իմ ասությունովը կսեանամ: Ասոււմ ես, թե չէի կարող համբերել, շատ բարի: Կգայիր ինձ մոտ, գանգատ կանիիր, ես ձեր գատաստանը կկտրեի: Դրանով ի՞նչ իրավունք կճարես, որ դու էլ պակաս խոսք ասես: Թե որ ուրիշ մարդիք կարծեին թե դու հարամգաղա մարդ ես, չուճքի քո հարեանը քեզ էնպես ա ասել, բաս ի՞նչ կասեն հիմիկ, որ իմանան, թե դու էլ նրան ես պակաս խոսք ասել: Երկուսիդ էլ հարամգաղա կասեն էն ժամանակը՞:

Մտեիտանը էս լսելիս գլուխը կախ էր գցել, ձենը կտրել: Պաճոն Կարապետը չուղեցաւ, որ նրա հոր սիրտը կտորի, ոչինչ չասեց ինչ որ անց էր կացել, ու խոսքը ծեց, ուրիշ բանի վրա քցեց:

Հենց տուէն հասան թե չէ, հացը հագիր էր: Բողբաշը որ կերան, պրծան գիվանքեւու ծառան էկավ, ասեց, թե ձիանը հագիր են, Մեկ քանի թիքա էլ կերավ, տեղիցը վեր կացավ, ու կուզեր նրանց բարով մնա ասի ու գնա: Ամենն էլ խնդրեցին, որ մեկ կես սհաթ էլա մնա: Ե՛րկար չեմ կարող մնալ, շատ հարկավոր գործ ունիմ, ասեց: Եկե՛ս սհաթը մեկ շատ ժամանակ չի, թիշ բան ա, որ չես ուղում էստով մեր խաթրն առնիս, ասաց պարոն Տիգրանի կնիկը:

Նա ժպտեցավ ու ասեց, թիրավ, կուզե՞ք, որ նոքարս կես սհաթ, արեգակի տակին էրվի, ու ձիանս բղեղի ձեռին տանջվին, չարչարվին որ ես մի քիչ ժամանակ էլ ձեզ պես սիրելիաց հետ նստիմ, քեֆ անեմ: Նոքարս մկամ մարդ չի, մարմին չունի, ու թիշ իրավունք ա, որ իմ ձիանս տարին առաներկու ամիս ինձ համար տանջվին ու ես նրանց արեւումը կանգնացնեմ նշախ տեղը նեղացնիմ ու իմ քեֆիս նայիմ: Ես որ իմ նոքարի ու հայվանի զաղըը չիմանամ, նրանք էլ ինձ չեն էնպես պետքը գալ: Իմ ապրուստս նրանցով է, նրանց թիշպես կթողամ, որ նեղանան:

Եհնա, գնա, աստված ձեզ հետ, ինչպես կուզեմ, որ ձեզ զլխից հանեմ, ձեր նոքարին ու ձիանոնցը նեղացնես:

Դիվանարեգին ամենի էլ ճտովն ընկավ, բարովից և զնաց:

Էրեխեքը շատ սրտով կուզեին, որ մեկ քանի օր էլ մնացել էր իրանց մոտ ու շատ տխրեցան, երբ որ գնաց: Ստեփանը ամենիցը տխուր էր: Ախր թիշպես չի տխրեր: Մեկ երեխա, որ իր հորը սիրի, սիրտը թիշպես կտանի, երբ որ նրանից հեռանա:

Պարոն Կարապետը վարվարուղ արեց, ԵՃեսունւմ եմ, որ շատ տխուր եք, սիրելի էրեխեք, գնանք ինձ մոտ, օթախս, ձեզ մեկ պատմություն կասեմ, ձեր սիրտը կբացվի:

Ինչպես ասեց, նրանք էլ վեր կացան, հետը գնացին, ու նա էլ էս պատմությունն ասեց:—

Եթանաքեռ գեղումը մեկ քահանա կար, անունը տեր Հարություն: Շատ արգար, բարի ու զայրաթով մարդ էր ու զեղըցոնցը ամեն կիրազի օրը լավ լավ բաներ էր ասում, նրանք էլ էս պատճառով շատ սիրում էին նրան: Նրա գլալուրը էնքան քիչ էր, որ անջախ էր իր օղլուշաղի ուտիլ, խմիլն ու հաքուստը ձեռք բերում: Բայց նա մեկ օր չէր տրտնջում: Սաղ օրը իր բանին էր կենում ու իրեկունը երբ որ գալիս էր իր օղլուշաղի մեջը, էնպես էր

ուրախ, որ նրա քեֆը էն մարդիքն էլ չուներին, որ միշտ խորո-
ված ու փլավ էին ուտում, վրեն էլ գինի խմում էս ուրախու-
թյունն էլ չմնաց նրան: Նրա ազիզ կողակիցը (կնիկը) մնալ ու
երկու մանր էրեխեք թողեց, որ հմիկ ինքը պետք էր նրանց դար-
դը քաշիլ: Նրանց մէկի անունը Վահան էր, մյուսինը Հովսեփ:
Սրա վրա շատ դարդ արեց ու իրեք ամիս չքաշեց, ինքն էլ հիվան-
դացալ ու մեռալ: Միտնելուցը մեկ քանի սահթ առաջ էրեխեքանցը
մտաւ բերիլ տվեց ու ասեց լալով. «Իմ սիրելի որդիք, տեսնում եք,
որ ես մեռնում եմ, էլ ոչ մեր կուներնաք, ոչ հեր. ձեր տերը այ-
սուհետեւ աստված պետք է ըլի ու բարի մարդիք: Ձեզ համար
մալ, դուլաթ չկարացի եղ քցիլ. ամա իմ վերջին խնդիրքն այժմ
էս ա, ձեր բամբ միշտ ուղիղ կացե՛ք, ու ձեզ մեախ. տեղը մեղաց-
մի, տաքե՛ք համբարությամբ, էսպեսով ձեր օրը լալ ամց կկնմա: Վահան ու Հովսեփ մնացին անհեր, անմեր, մեկ մարդ էլ չկար,
որ նրանց ապրուստ տա:

Հենց խեղճ հոր մարմինը գերեզման դրին, աչքները կալան
ու սուք անելով եղ դառան տուն:

«Ի՞նչ պետք է անենք, ասեց Վահան. թնչ, սիրելի եղբայր,
էլ ոչ հեր ունինք, ոչ մեր, աշխարհը մեզ համար քանդվեց, գնաց:»
«Ա՛խ, թե որ մեծ էլա ըլեինք, մի դարդ կաներ, մենք մեր
զլուխը կարող էինք պահիլ, ասեց Հովսեփ: Ա՛խ լիս դառնաք, այ
հերներմեր, թնչ կըլեր, որ մեզ չէ՛ք բերել:»

Էս խոսքումը տան դուռը սաստիկ ծեծեցին, «ներս էկե՛քս,
ով եք, ասեց Հովսեփը:

Դուռը բաց էլալ... «Իմ Վահան, իմ Հովսեփ, դռնովը ձեն
տվին ու խակույն երկու մարդ նեքսե էկան, էրեխեքանցը խտտեցին,
համարուրեցին, ու հետըները էնպես էին լալիս, որ մարդի սիրտ
էրվում, փոթոթվում էր:

Էս էկողները նրանց հոր ախպերքն էին: Էրեխեքը, որ էն-
պես հեկեկում չէին ու ասում, թե հերներմերը չունինք, մեկը մեկ
էրեխին ասեց, մյուսը մյուսին, որ խտտել էին, «ես քեզ հեր կըլիմ,
իմ կնիկը քեզ մեր, դարդ մի անիւր, երեսիդ մեռնիմ:»

Մեկ քանի օր էլ էնտեղ մնացին, որ ամեն բանը կարգ քցեն,
ինչ որ մնացել էր, ու նրանց էլ հետըները վեր առան, տուն գնա-
ցին: Վահան մնաց մեկ հորախըրը մոտ, Հովսեփը՝ մյուս:

Մեկ քանի օր էլ, օր տանը մնացին, նրանց վարժատունը

Չէ թե մեկ անգամ, շատ անգամ էս բանը պատահեցավ, Աշակերտքը Վահանի վրա շատ էին չարացել, որ նրա խաթեր պատիժ ստացան, ու շատ նեղացնում էին նրան: Սա էլ իր գլուխը պահելու խաթեր, ուշուց էր տալիս, խփում էր ու շատ անգամ քար էր քցում նրանց վրա: Էսպես մեկ օր չէր անցկենում, որ կռիվ չզցեն ու նրան չծեծեն: Վարժապետները շատ անգամ էին բնարուռ անում նրան ու սաստիկ պատժում, իսպառ աչքից քցել էին, որ էնպես կոպարար ու անբարիշտ էր:

Հովսեփի ուրիշ տեսակ էր վարվում: Նրա կակաղելու վրա որ ծիծաղում էին, դորդ ա շատ էր նեղանում, ու բաղի անգամ արտասունքն էլ էր գալիս աչքը, որ աղուխով ծածկում էր, որ մարդ չտեսնի: Երբ որ տուն էր գալիս, էն ժամանակն էր մեկ պուճախումը նստում ու լաց ըլում:

Ե՛լնչի՛ր ես լալիս, Հովսեփի ջան, ասեց մեկ անգամ նրա հորախալոր որդին: Հովսեփի պատմեց նրան, ինչ որ անց էր կացել: Ես քեզ մեկ խրատ կտամ, որ չէ թե էն անկարգ աշակերտքը վրեժ ծիծաղին, այլ թե նրանց անկարգությունը քեզ օգուտ բերի: Լավ անկաջ դիր: Նրանք քո կակաղելու վրա են ծաղր անում, էնպես չի՛ր: Զանք արա, էդ կակաղիլը թարգ անես:

Հովսեփ.— Ի՞նչպես կարամ էդ անիլ:

Հորախալեր.— Շատ լավ կարող ես, թե որ ջանիդ ջաֆա տաս: Ես կակաղում եմ, բայց քո վախտին էնպես էի կակաղում, որ լեզուս ու ատամներս իրար էին կաշում:

Հովսեփ.— Կակաղելը, որ թարգ անիմ, էլ վրես հո չմն ծիծաղիլ աշակերտքը:

Հորախալեր.— Էդ չեմ կարող ասիլ: Կարելի է, թե ուրիշ պակասություն որ ունենաս, նրա վրեն ծիծաղին: Դու էլ պետք է աշխատիս, որ էնպես պակասությունից ձեռք վերցնես, թե չէ ամենևին այնումդ մի քցիր:

Հովսեփ.— Բաս որ ինձ պակաս խոսք ասե՛ն:

Հորախալեր.— Էնպես դիր մտքումդ, թե նրանք իրանց են պակաս խոսք ասում. ու դու էլի էն ես որ կաս: Սրանից էլ լավ խրատ քեզ չեմ կարող տալ, սիրելի Հովսեփ: Ի՞նչպես պետք է անես որ քեզ պետքը դա:

Հովսեփ.— Պետք է կատարեմ:

Հորախալեր.— Էդպես, սիրելի, լավ խրատը էնպես պետք է

պահած, ինչպես զեղը՝ Ով ուզում ա, որ զեղն իրան քոմակ անի, պետք է խմի, խրատն էլ պետք է կատարես, թե օգուտն ուզում ես:

Հովսեփ հորախաղորդող ասած խրատը պահեց: Օրը կես սնաթ մեկ գրքից նրա առաջին պարզ, ծանր կարգում էր: Շատ քիչ էր խոսում, էն էլ մտածելով ու խտակ: Ի՞նչ էլավ: Չորս շաբաթումը կակազելը թարգարեց ու անչափ ուրախ էր էստուր վրա:

Իր ընկերների վրա էլ էնպես չէր նեղանում: Թե իմ կակազալու վրա չէին ինձ մասխարա քցել, ինքն իրան ասում էր, մինչև էսօր էլ կակազ կմնայի: Չունքի ինքը մեկի էլա չէր վիրավորում, ամենի հետ էլ լավ էր կառավարվում, նրանք էլ սրան չէին նեղացնում: Ղորդ ա, նրանք իրանց մասխարությունիցը ձեռք չէին վերցնում: Էս էրեխեքանց շատը մասխարա քցին, կովին ու պակաս խոսք ասին էնպես էին իրանց սովորություն արել, որ չէին կարում էնպես շուռ թողալ:

Գանի որ նրանք Հովսեփին չարացնում էին, նա ջանք էր անում, իր սրտի հերոք նստացնի: Էնպես մեկ օր իր մոտ նստած ընկերի թանաքամանը բեղափիլ շուռ տվեց: Աչքերն արինը կոխած ձեն տվեց՝ շողո խող... էս ի՞նչ արիրս:

Երեղափիլ պատահեցավ, ասեց Հովսեփ, թուղթ բերեց, թանաքը սրեց, թանաքամանը էլ եղ թանաքով լցրեց ու խնդրեց, որ չնեղանա:

Ե՛րու պառավ խող հա, կրկին ասաց նա:

Հովսեփ թաքրար հավատացրեց նրան, որ հանկարծ էր պատահել:

Չար երեխեն էլի ասեց շողո քաձ խող հա, ու քացով խրիեց նրան:

Է՛ս ի՞նչ խարար ա էլի, ասեց մեծը:

Իսկույն չար աշակերտը տեղիցը վեր թռավ ու ասեց, շտեռեք Հովսեփին ինչ խող ա, որ թանաքը շուռ տվեց ու բոլոր սեղանն ապականեցս:

Աշակերտի մեկը, անունը Հովհան, որ վարժապետի զեմ ու զեմը նստած էր, չկարաց համբերիլ: Ե՛թարոն, ասեց, կուզե՞ք ամենն էլ իմանալ, ես ձեզ կասեմ: Ղորդ ա, Հովսեփ թանաքամանը շուռ տվեց, ամա բեղափիլ պատահեցավ, նա չէր ուզում ու ինքն էլ թողություն խնդրեց, թանաքը սրեց, թանաքամանը թանաքով

լցրեց ու սա միշտ նրան պառաւ խոզ է կանչում ու ոտը կոխում։
«Հիմիկ ասա, Ստեփան, որ մեծ ըլեր, Աւ Խելոք կ'ամարեր։
«Հայտնի բան է, Հովսեփին, պատասխանեց։

«Էլա՛վ միտք արա, ուրեմն, բարեկամ, ասեց պարոն Կարապետը, ու քեզ վրա արթուն կաց, որ բարկությունը քեզ չխափի, անխելք բան չընես ու Խելոք մարդկերանց աչքիցը չընկնիս։

Էրեխեքը իրանց մաքումը Հովսեփին շատ սիրեցին, որ էնպես յուրաքանչիւր գիտեր, ու Ոսկանի վրա շատ էին նեղացած։ Ամենն էլ ուզում էին, որ իրանց գովեն, ինչպես Հովսեփին, էս էր պատճառը, որ մեկ քանի շաբաթ նրանց միջին էլ վեհ, կոխ չպատահեցաւ, չունքի ամենն էլ զգուշանում էին, որ մեկգմեկի չնեղացնեն։ Խաղալիս, զորդ ա, բազի վախտ էնպես բան էր պատահում, որ կոխ կարող էր նրանից դուռ դար, թե որ մեկն ու մեկը բարկացել, պակաս խոսք ասել, կամ հաթաթա ըլեր ավել, էսպես մեկ անգամ Վարդանը Եղիսարեթի ոտը էնպես սաստիկ կոխեց, որ կակոռ կծիկ, կծիկ էլաւ։ Ստեփանը (թոփ, բուրդի) խաղալիս, էն պես սաստիկ խփեց Վարդանի աչքին, որ քանի օր կապած ուներ։ Բայց մեկն էլա կոխ չեցեց։ Վարդան Եղիսարեթիցը թողություն խնդրեց, Ստեփան՝ Վարդանիցը ու մեկն էլա մեկ պակաս խոսք չասեց։ Էնպես էլ դայրաթով, մուղայիթ, կարգին էին, որ պարոն Տիգրանը մաքումը դրեց, նրանց հրաման տա, մեկ փոքր գնան ճամփա, թե որ միջոց պատահեր։ Շուտով միջոցն էլ պատահեցաւ

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՎԻՆՆԵՐՈՐԴ

(Հատված)

Ստեփանը գոռով, գլուշով աչքը բաց արեց ու մի քիչ զգաստացաւ։

«Ստեփան ջան, գնա դռնիցը մի կտոր փեղ բեր, ուզում եմ, որ մեկ ատամքչիորիկ շինեմ։

«Ատամքչիորիկն ի՞նչ ա, ասեց Ստեփան քնահարած, աչքերը արորելով, ամոմբալով, ինչ ատամքչիորիկ, ինչ գատ, ուզում ես որ քունս փախցնես, էրեխա չեմ, որ չիմանամ, ասեց ու գլուխը քորելով դուռ գնաց։

Մեկ երկու բուլիից եղը էլ եղ տուն վազեց շունչը կտրված ունդ մօանդը թռած ու գոռաց, «գոգ, գոգ կա դռանը։

«Միրելի ջան, ասեց պարոն Տիգրանը, երազում ես, ով ասվել գողը»:

«Հավատացե՛ք ինձ, երազում չեմ, պատասխանեց: Որ փետանոցը մտա, փետի ման գալու, մեկ մարդի ձեռ գիպավ ինձ, հարցրի ով ես, սկսեց մըթմըթալ, ու ես չհասկացա»:

Պարոն Տիգրանն ու պարոն Կարապետը իրար երեսի մտիկ տվին ու էս եղինն ասեց, շարանում մեկ բան կա, կերթամ, կըտեսնիմ թնշ խաբար է՛: «Ես ել կգամ», ասեց պարոն Տիգրանը: «Ես էլ, ես էլ», ձեն տվին էրեխեքը: «Դուք չէ, ասաց պարոն Տիգրանը, ձեր բանը չի, դուք էստեղ կացե՛ք, նոքարին հետս վեր կառնիմ»:

Նոքարին կանչեցին, հետըները ֆանառ վերցրին ու ամեն մեկը մեկ փետ էլ ձեռն առավ ու էս թաղարեքովը զնացին ցախատունը:

Շուտով ետ դարձան ու ասած գողը հետըները բերին: Մեկ ձիգ, ձիգ մարդ էր, բիխերը հասա, թիկունքը լնն, որ տեսնողի զարգանդը գալիս էր:

«Ի՞նչ ես ուզում էս վախտին», հարցրեց պարոն Տիգրանը նրան:

— Փախած մարդ եմ:

Տիգրան.— Լավ բան չի քո արածը, հալալ մարդը ընչի՞ կըփախչի:

— Ես հալալ մարդ եմ, էնդուր եմ փախել Կոնի վի գնացել, շատ էլ մարդ կոտորեցի: Իմ աղեն շատ փխ մարդ է: Սատանեն ինքն ա: Ինձ ուշուց ա տալիս, բեարուռ անում: Շան հալին եմ նրա ձեռին: Երկու պատիկ լակոտ ունի, ինչ ասես զլուխս են բերում, ծեծում, հայհոյում, թուք ու մուր ածում գլխիս, ես հոշուն չեմ, հեռը հարկիցը, որ ինձ էս հանքին են պահում: Սպանեն էլ, նրանց մոտ չեմ գնալ:

Տիգրան.— Միրելի, ախր որ աղեղ ճանկի, խո քեզ կսպանի:

— Թող մեկ օր սպանի, ու ինձ անպատիվ չանի: Ես էլ մարդ եմ, հայվան չեմ, որ ինձ ծեծեն, յա անկարգ խոսք ասեն:

Պարոն Տիգրանի սիրտը ցավեց, հրամայեց, որ նրան հաց տան ու տանին, ցախատանը քնացնեն:

Էս բանի վրա ամենի քունն էլ փախավ, ու էնքան սկսեցին խոսալ էս բանի վրա, որ մեկ սհաթից էլ եղը զնացին քնելու:

«Են չեմ դարձանում բնավ, որ էս խեղճ մարդը էլ իր աղի մոտ, իր աշխարհը չի ուզում գնա, ասեց պարոն Կարապետը: Ի՞նչ մարդի սիրտ կտանի, որ անմեղ տեղը, մեկ բան չարած, ծեծ ուտի, յա անպատիվ խոսք լսի, էն էլ շատը էրեխից»:

«Ո՞վ գիտի, թե զորդ է ասում, ասեց Վարդանը: Ես չեմ հավատում, որ մեկ մարդ էնքան չար ըլի, էնքան անաստված, որ իր նմանին, իր ընկերին էսպես ծեծի, անպատիվ անի, ինչպես աս ասում է»:

«Օ՛ր, սիրելի, ասեց պարոն Կարապետը: Էդպես չար, անողորմ մարդիկ շատ կան աշխարհիս երեսին, ափսոս: Ես էլ մեկ տուն էի: Էրեխեքն էնպես չար, փիս էին մեծացած, որ շատ անգամ իրանց քեֆի խաթեր թասով ջուրը վերցնում, իրանց ճորտերի երեստիլն էին խփում: Կամ քար, գանակ էին քցում վրեները՝ մեկ բան ուղելիս: Փիս խոսքին հո էլ տուտ չուներ»:

«Ես էլ մեկ տան պատահեցա, ասեց պարոն Տիգրանի կնիկը, որ էրեխեքը, ասան էլած նոքարներին, որ ճորտ էլ չէին, էտպես բաներ էին անում: Ի՛շի գլուխ, տավար, գուռնաչի, զոգուղ, հաստազլուկ էին կանչում ու ինչ ասես, անում էին, մեկ խոսք ասող չէր ըլում: Ախր թի՛չ կասեին, շատ մեր էս հաղաղին էլ, իր ծծկեր էրեխին առաջ ուշուռց ա սովորցնում ու ուրախանում: Էրեխեն, ինչ տեսնի, էն կսովորի: Ուշուռցը, փիս խոսքը նրանց բերնումը շաքարի համ ա տալիս, նրանց անկաջին սաղ ու քամանչի ձեն ա, բաս ինչ կանեն, որ չեն ուշուռց տալ: Էրեխեն թի՛չ մեղք ունի էստում: Լավ տեսներ, լավ կսովորեր: Քուչով անցկենալիս հո, աստված ազատի, լավ կըլի որ մարդ անկաջը փակի, թե չէ էն խոսք ու ջուղարն ա մեծի, պատկի բերնիցը դուս գալիս, որ քարերն էլ լսելիս, գողում են: Մեր խալին էլ հո էտպես բանի համար, իսկի ախուռն էլ չեն քցում: Մարդազլուկս, որ տարներ իրեք մանեթ փող տա, հինգ վարժատուն կպահվի: Էրեխեքը քուչեքումը ման գալու ու փիս բան սովորելու փխը, կերթան էտտեղ կնտսին, համ մարիֆաթ կսովորին, որ մեկ կտոր հացի տեր գառնան, համ էլ էդպես բաները բնավ ոչ կլսեն, ոչ կտեսնին: Միրտըներն էլ թամուզ կմնա, անկաջներն էլ, բերաններն էլ: Ամա ով ա զրա դարդը քաշում, ամեն մարդ իր գլխին ա մտիկ տալիս: Ամա էլ էն չեն մտածում, որ աշխարհն էսպիսով է քանդվել: Էսպիսով էլ կքանդվի: Մեկ երկրում քանի մարդիք աշխատավոր

ըլին, իրանց համար հաց ունենան, էնքան ամենքին էլ խեր ա։
Քանի էսպես հայվարա մարդիքը շատանան, էնքան խեր ու բա-
րաքայաթ կպակսի՜ն։

Շնորհար ըլի, թե ճորտ, աղքատ ըլի, թե դարիր, պակասու-
թյուն ունենա՜ Քոռ ըլի, կամ քաջալ, կամ չուխ, ինչ ըլի, ըլի
ասեց պարոն Տիգրանը, ով նրանց մեկ պակաս խոսք ասի, իմա-
ցիր, որ նրանում ոչ մարդություն կա, ոչ հողի, ոչ հավատ։ Կով
մարդը հայվանին էլ պետք է չնեղացնի, ձեր մնաց նոքարին, որ
մեկ էնքան պետքն ա դալիս։ Ինչքան ծանր դուլլուդ կա, նրա վրեն։
Մեր շորերը, տունն ու դուռը, մեր մաշիկն ու ամանները, ով
կթամուկացնի, որ նրանք չըլին։ Ձե՛ մենք պետք է մեր հացը
թխենք, մեր կերակրներն եփենք, մեր բանն անենք, մեր փե-
տը կտրենք, մեր շորը վանայինք, շուրը բերենք, ու հազար
բան անենք։ Էստոնք բոլոր նրանք են անում, քանի մեր Վանոն
մաշիքներս սրբում բերում, է՛պես թամիզ առաջ ա դնում, քաղ-
ցըր աչքով մտիկ եմ անում երեսին ու մոքումս նրան օրհնում,
չնորհակալ ըլում։ Ուրեմն ինչ էրեխա, որ նոքարի, յա դարավաշի
վատ խոսք ասի, ու նեղացնի, իմացիր, որ անսնունդ ա մեծացել,
լավ օրինակ չի տեսիլ։

Պարոն Կարապետը աչքով արեց իր էրեխեքանցը, որ վեր
կենան, հետը գնան քնին։ Սանդուխտի վրա իրանց Վանոն ուստ
էկավ, որ նրանց մաշկները սրած, բերեց, կառավարի առաջը
դրեց։ Բարի գիշեր, սիրելի Վանո, ասեց Վարդան, բարի գիշեր,
Վանո ջան, ասեց Ստեփան։ Ամեն օր բարի գիշեր ասում էին
նրան, ամա սիրելի ու ջան բառը էսօր առաջ նրանց բերնիցը
դուռ էկավ։ Պարոն Կարապետի աշակերտքը մեկ օր էլա նոքար-
ներին չէին նեղացրել, ամա էս օրվանից սկսած, քանի կենում
էին, հետքները լավ էին վարվում, միշտ քաղցը էին խոսում, քաղ-
ցըր շուղար տալիս։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ

Հենց մյուս օրը Ստեփան տեղիցը վեր կացավ, ձեն տվեց,
«Վարդան, մեր տունն էկած մարդն ի՞նչ պետք է անի էսօր»։

Ե՛մ էլ եմ ուզում իմանամ, ասեց Վարդան, արի գնանք ներքե,
իրան հարցենք։

Բայց պարոն Կարապետը չթողաց ու ասեց։ «Հլա ժամանակ

կա էստուր համար. առաջ երեսներդ վացեք, զլիւըներդ սանդղեցեք, հետո՛ւ ձենց էս էլ, որ պրծան, էլ էնքան դինջացան ոչ, մինչև նրանց հրաման տվեց: Ինքն էլ հետըները զնաց:

Սանդուխտի վրա տեսավ, որ իրար անկաշուժ փսփսում են, խնդրեց որ իրան էլ ասեն, ինչ են կամենում: Ստեփանը դուռստն ասեց, որ կամենում էին իրանից խնդրեն, նրանց հրաման տա, որ էն դարիւր էկողի համար մեկ թաս արագ առնին:

Շատ լավ, զնա առ, ասեց, ամա մեկ թասից ավելի չառնիս, իմացմը՝:

Կայծակի պես թռավ Ստեփան դուքանը ու մեկ թաս արագ ձեռին եղ էկավ: Վարդան էլ էս միջոցումը աշխանեն էր մտել ու մեկ մեծ կտոր հաց ձեռին դուռ էկավ: Էս նհարը ձեռըներին մտան իրանց դռնադի մոտ, որ աչքերը ճմռելով նոր էր քնատեղից վեր կենում:

Եհարի լույս, ախպեր ջան, ասեց Ստեփան, արագ կուզե՞ս:

Ա՛խ, արմղ, ասեց, լմիջ է, թե չէ: Ստեփանը արագը տվեց նրան, Վարդանը հացը:

Ա՛խ, աստված ձեզ արեւով կշտացնի, այ էրեխեք, աչքս նորեն լիս էկավ: Էսպես արագ իմ օրումս չէի խմել: Աղիս տանը արագի տեղ, զահր էին տալիս:

Արագը որ խմեց, սկսեց հացը իշտահով անոշ անիլ, էրեխեքը թամաշ էին անում ու հետը խնդում, որ էնպես իշտահով ուտում էր: Հացը որ կերավ, պրծավ, պարոն Կարապետիցը հարցրեց. «Ազա, ասեց, անելու բան ճշեք, թե չէ, ես պարապություն չեմ օրիլ, մեկ բան տվեք, որ անեմ»:

Շան տերը ես չեմ, ասեց պարոն Կարապետը, ամա կերթամ, կհարցնիմ: Ասեց ու էրեխեքանցն առավ տուն մտավ, պարոն Տիգրանի մոտ:

Մեր դռնադի մօտն էիք, հարցրեց պարոն Տիգրան:

Ասեցեք ինձ աչքի լույս, թնչ անիմ էս մարդի հետ: Ղորդ ա, դարիւր ա, մեր բարեկամ չի, ճանաչ չի, ազգական չի, հայ էլ չի, օտար ազգ է:

Շո մարդ, իսանորդի ա, խոսքն առավ պարոն Կարապետը:

Սա էլ էդ կուզեի ասիլ, պատասխանեց պարոն Տիգրանը, էն էլ նեղության մեջը, ոչ թե մենակ մարդ: Էսպեսին չի պետք է գուռը հեռ անիլ: Նա մեր տունն ա ապավինել, էկել, ով ըլի, ինչ ազգ էլ որ

ըլի, նրա դարդին պետք է հասնիմ, էդ իմ պարտքն է։ Սա էլ, որ մեկ դարեր տեղ ընկնենի, լեզու չգիտենայի մարդ չճանաչենի, ձեռքս էլ փող չըլեր, մեկ մարդի տուն որ մտնենի, թնչ կուզենի, որ նա ինձ աներ, Վարդան ջան, դու ասա՛ս։

«Որ քեզ տիրություն աներ, տեղ տար, դարդիդ հասներ, որ նեղություն չքաշելիր սիրելի հայր՝, ասեց։

«Եսպես էլ ես պետք է մեր, դոնադի հետ վարվիմ։ Իրավունք չի, որ ես ուրընիցը էն բանը պահանջիմ, ինչ որ ինքս չեմ անիւր Պետք է, որ նրա դարդը քաշեմ։ Ամա թնչ անեմ։ Չեմ գիտում։ Հենց ուտացնիլ, խմացնիլ դարդակ, էդ էլ մեկ բան չի։ Կսկսի քիչ քիչ թամբալանալ։ Պետք է ձեռք դործ տված, ամա նրա աթիլ գործ չունիմ։ Էնպես ա երեսում, որ նրա ձեռիցը էլ ուրիշ բան չի դուռ դալ, թե ոչ փորել, վարել, փետ կոտրել, ու էսպես բաներ։ Էսպես բաների համար էլ մարդ շատ ունիմ բռնած։

«Գիտես թնչ կա, պարոն Տիգրան, ասեց Ստեփան, արի սրան հորս մոտ ուղարկենք։ Նրան էսպես մարդիք շատ են հարկավոր, որ բաղը, հանդը չիենն։ Հերս սրան շատ ուրախությունով կվերցնի։

Էս միտքը ամենին էլ դուր էկավ ու նրան նեքսե կանչեցին։ Շատ խոնարհ գլուխ տվեց ամենին ու ուզում էր պարոն Տիգրանի ձեռք պաշի։

«Կուզե՞ս որ աշխատիս, մեկ բանի վրա ըլիս, հարցրեց նրան։
— Բան անթլ, ուզթլ, գլխիս վրա։

Տիգրան.— Որ էդպես ա, ուզում եմք, որ քեզ մեկ մարդի մոտ ուղարկենք, որ շատ բան ունի անելու։

— Շատ բարի, թող շատ ըլի, շատ նրա բանը։

Ստեփան էլ հրաման խնդրեց, որ նրան տանի իրանց տունը։ Վարդանն էլ ուզեց, որ հետընները գնա ու պարոն Կարապետն էլ ասեց, որ թե պարոն Տիգրանը հրաման կտա, ինքը նրանց կտանի։

Պարոն Տիգրանը հրաման տվեց, ամա ասեց, որ մեկ քանի օր մնան, հետո գնան։

«Ընչի՞ չեք թողում, որ էս օր գնանք, ասեց Ստեփան։

Տիգրան.— Էսպես, չեմ ուզում։

Ստեփան.— Ախր, պատճառն թնչ ա։

Տիգրան.— Քեզ հարկ չի, որ իմանաս։ Էրեխեն պետք է մեծին հնազանդի, չունքի մեծ ա ու խելոք։ Մեծի ասածը պետք է անի, չունքի ինքը չի գիտի, թե թնչ մտքով են իրան ասում։

Ստեփան.— Ախ, թողեք էսօր զնանք: Շատ սրտով ուզում եմ հորս տեսնիմ:

Պարոն Տիգրանը երեսը շուռ տվեց առանց մեկ խոսք ասելու ու սկսեց մեկ խելիմ վախտ էլ էն մարդին հետ քաղցր զրից տալ: Էս բանումը կնիկը նեքսե մտավ ու անկաջումը թազուն բան ասեց:

Բիրզանրիւր ունքերը կիտեց, երեսի քաղցրությունը փոխվեց ու էնպես սառը սկսեց էն մարդին ասիլ, զնա էլ եղ ցախատունը: Նա որ զնաց, շուռ էկավ կնկա վրա ու ասեց, անկարելի է, չեմ հավատում:

Ամնա.— Բեզ բան եմ ասում: Էրեկ իրիկուն մեր զարավաշը շորերը տարել ա, ցախատանը փռել, որ չորանան: Էս անխափը ներքսե ա մտել, ու էս օր շորերը չկան: Ո՞վ պետք է զոդացած ըլի սրանից դայրու: Մեկ մարդ էլա չի մտել:

Տիգրան.— Ղորդ ա, բանն էդպես ա մալում անում, ամա ասած է, երեսալը մարդի կիսարի: Կարծիքով չէ կարելի մեկ մարդի աշխի համիլ:

Էլ տարակուսություն չկա, ասեց, զարավաշը, որ էս սհաթին ներս մտավ, ես եմ իմ ձեռովս երեկ իրիկուն տարել, շորերը կախ տըվել: Էս մարդի հախն է, որ տանիցը դուս անես:

«Ո՞ւմ շորերն էին», հարցրեց պարոն Տիգրանը:

«Մեր նոքարին, ասեց:

Պարոն Տիգրանը հրամայեց, որ նոքարին ներս կանչեն ու հարցրեց, թե իրավ, նրա շորերը զոդացել են: Նա ծիծաղեց ու ասեց. «Ինձանից մեկ բան էլա չեն զոդացել: Որ լսեցի, թե ցախատանը դարիւր մարդ կա, մտա շորերս դուս բերի, որ ձեռք չեցի ու հետը տանի»:

«Դե, հիմիկ ասա, կրկնեց պարոն Տիգրանը, չունքի մեր նոքարը իր շորերը հանել, տարել ա, պետք էր էն խեղճ դարիւր մարդին տանից դուս անի»:

Ղարավաշը կարմրատակեց պնդութու ու հեռացավ:

«Էս պատահումները միտքըներումդ պահեցեք, սիրելի էրեխեք: Շատ անգամ մեկ անմեղ մարդի վրա կարծիք են տանում, թե նավատ բան ա բռնել: Շատ պետք է զգուշ կենալ, որ էնպեսին շուտով մեղավոր չհանենք, թե չէ սրանից անիրավություն դուս կգա: Էսպես մեկ բան էլ ինձ ա պատահել: Էրեխա ժամանակս մեկ բա-

բեկամ ունեի, անուշը Տաւոս: Ինչպես ակաբեր էնպես էինք իրար սիրում, ու ամեն օր իրար հետ էինք: Բիրադի ոտն ինձանից կըտրեց ու էլ ինձ չէր սիրում: Ես էի գնում մօտը, ասում էր, Թե չի կարող ընդունիլ: Միտոս ուզում էր պատռի: Մեկ օր էլ ինձ ոտստ էկավ, ձեռք՝ վրա Թոա, բռնեցի ու ասեցի լացակերկնած. «Տաւո ջան, ի՞նչն ա, որ ինձ էլ չես սիրում, ակաբ ի՞նչ եմ արել քեզ, մեկ ասես էլա, որ սրտումս դարդ չի մնա: Բայց նա զոռով ձեռք քաշեց, երեսը շուռ տվեց, ու ասեց, գնա կորի, քեզ պես վատ մարդին չեմ կարող սիրիլ:»

«Ե՛ս եմ վատ մարդ, ասեցի, ինչո՞ւ կարաս իսպաթ անիլ: Բայց նա ջուղար չտվեց ու հեռացավ:

Միտոս կրակ էր ընկել, ինձ էրում: Զորս շարաթ էսպես քաշեց ու մեկ օր բարեկամս հանկարծ ներս մտավ, սկսեց լալով ճշտովս ընկնիլ ու ասեց, մեղա, մեղա, Թողություն արա, ես շատ անիրավ եմ քո առաջին: Ես քեզ վրա մեկ փիս կարծիք էի տարել, էս էր պատճառը: Հերս ինձ համար մեկ լավ քիսա էր առել: Դու էկար ինձ մօտ ու հենց դուս գնացիր Թե չէ, քիսես էլ քո հետ կորավ: Մյուս օրն էկա քո մօտ ու սեղանի վրա մեկ քիսա տեսա ընկած, որ հենց իմի նման էր: Էս որ տեսա, հենց իմացա, Թե դու ես քիսես վերցրել: Էս օր տունն ուզում էին լվանան, պահարանը (չկաֆ) մի քիչ որ դրադ քաշեցին, տեսա, որ քիսես էնտեղ ա ընկած, աչքիս լսին ցավ տվեց:

Էս օրվանից սկսած շատ զգուշ եմ, որ էլ մարդի վրա կարծիք չտանիմ: Մեկից որ մեկ բան եմ լսում, առաջ լավ ամեն բանը քննում, տեղեկանում եմ, հետո եմ կարծիքս հաստատում: Էս խրատը անկաջնեքումդ պահեցեք, որ ձեզ էլ պատահելիս զգուշ ըլիք:»

Պարոն Տիգրանը էս խոսքը որ սլոծավ, պարոն Կարապետը էրեխեքանցը հավաքեց ու տարավ դաս տալու:



ՆԱՄԱԿՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹՂԹԵՐ

ՆԱՄԱԿ ՍՏ. ՆԱԶԱՐԹԱՆՅԻՆ

1843 թվի հուլիսի 30-ին, Տփլիս

Իմ հոգեզույգ բարեկամ

Քառասպատկվելով և տասնապատկվելով անցան տարիները տարիների հետևից, իսկ մեր բերանը լուռ մնաց ժամանակների այսպես իրար վրա բարդվելու ընթացքում և մեր իրար հանդեպ ունեցած բարեկամական սիրո արտհայտությունների պարտավորությունը կուտակվեց, որից մեր զրկված լինելու պատճառը ևս եղաւ ինձ կպատկաներ այդ ծանր պարտավորության կապանքները խզել, այնինչ քո ավետարեր աղամբին (նամակը) հենց սկզբից իմ հայրենիք ոտք կոխելու օրերը կանխեց, հասավ ինձ, տալով ինձ դալար և պարարտ ոստեր (նորանոր թարմ լուրեր) սիրելիիդ բնակավայրից։ Մոռացության տուր իմ այս անհերքի զանցառությունը, բայց մոռացության մի սարք քեզ մշտապես հոգով նվիրված բարեկամիդ։ Վիճակիս տարբերությունը, հանգամանքների և դիտավորությունների փոխակերպություններն առան, խլեցին ձեռքիցս բոլոր միջոցները գտնելու ոչ միայն մի ազատ ժամ, այլև նույնիսկ մի խնդրության ժամ զրուցելու բարեկամիդ հետ, ինչպես որ իմ հոգին փափագում է և ձգտում։ Ես նույնն եմ ինչպես միշտ եղել եմ և քեզ բարեկամ պիտի մնամ մինչև զերեզմանիս գուռը։ Տարիների և ժամանակների այսպիսի երկար ժամանակամիջոցում անցան և իմ զլխով հազարավոր փոփոխությունները— Յոթ տարի մնացի կապված, կաշկանդված Տփլիսում հուսալով այնտեղ, որտեղ հայ մանուկների այդքան բազմություն կա, առաջ տանել իմ նպատակը, բայց իզուր, ի դերե ելան իմ բոլոր ճիգն ու աշխատանքը, ի դերե ելան բոլոր նպատակներս և ակնկալության հույսը։ Հաշադկոտ ամբարիշտ մարդկանց նախանձը և դժկամու-

թշուհը վերելմամբ տապալեցին նորահիմն շինվածքը և ինձ վերջ-
խիբը մնաց միայն կյանքի այդ վերջին ճանապարհը՝ վերադառ-
նալ հայրենիք, Հայաստան և այնտեղ քչով բավականանալով, դոնե,
հոգալ աղգակից մանուկների կրթության գործը։ Լինթացիկ տա-
րուս օգոստոսի 10-ին պատրաստվել եմ դուրս գալ այստեղից, ստա-
ցած լինելով Երեւանի նահանգական վարժարանի վերակայովի
(տեսչի) պաշտոնը, բայց թե ուղքեր պիտի լինեն իմ պաշտոնակից-
ները, հայտնի չէ ինձ, այնինչ այստեղ մինչև իսկ համրակները
նշանակվում են կրոնադիտության և զժրախա հայոց լեզվի դա-
ստառու, ստանալով տարին 200 մանեթ արծաթ, որոնք չեն տալիս
աշակերտներին, դոնե, այնքան ուսում, որ արժենալ հարյուր
կոպեկ։ Սակայն ես ուղում եմ, եթե տերը հաջողի, Երեւանի վար-
ժատունը բարձրացնել բարեփայլության աստիճանին և ճիշդ թա-
փել այնպիսի կատարելագործության հասցնել այն, որ հավասարվի
ամեն մի բարեկարգ ուսումնարանի, բայց ինչձով, եթե իմ պաշտո-
նակիցները լինեն շորթի բհրքձ, ինչպես ասում են մեր ռամիկ-
ները։

Բավական է և քեզ պանդուխտ մնալ. բավական ես քո վի-
ճակից փառք ասածո, այդ ցանկանում եմ քեզ բոլոր սրտով։ Հա-
յաստանը, անձկալիք իմ, մնում է դուրկ։ Եթե 200 մանեթ ոռճիկը
և պաշտոնակցելն ինձ հայրենիքում, եթե հայ մանուկների լուսա-
փորության գործը ցանկալի է քեզ (քաղցր է), ապա մի հապաղիր
ուրախացնելու բարեկամիդ, զրիբ Երեւան, և եթե դու այդտեղից
դուրս գալու ծախքի միջոց չունես, այդ իմ պարտքը թող լինի,
100 մանեթ բավական կլինի ճանապարհի համար մինչև այստեղ,
և ես կուղարկեմ քեզ ուրախությամբ քեզ հետ մյուս անգամ միա-
նալու համար և միաբան աշխատելու քեզ հետ հայրենիքի տանը
աղգակիցներիս օգտին։

Մեր սիրելի պարոն Արարատյանը, որ նույն պաշտոնում և
վիճակի մեջ է, աճած, բազմացած երկու որդով և երեք աղջիկնե-
րով սիրով ողջունում է քեզ։ Շահխաթունյան Հովհաննես արքե-
պիսկոպոսն այժմ այստեղ է, ուղարկված լինելով նվիրակության
գործով՝ Աթոռի կողմից։ Ես էլ ունեմ երկու որդի, քո ծառաները
մեկը արու, Վարդան անունով, մյուսը աղջիկ, դեռ անանուն,
որովհետև դեռ տակավին նորածին է, վեցօրյա։

Անծանոթաբար ողջույն տալով քո բոլոր սիրասուն ընտանիքիդ և Յնալով կարոտ քո անձկալի տեսության,

Իմ ամգին բարեկամիդ

Անձնագոհ ծառա

Տիտուլյարմիյ Սովետնիկ՝ ԽԱԶ. ԱՐՈՎՅԱՆՑ

(«Դիվան Խաչատուր Աբովյանի», էջ 79—80)։

ԳԵՂԱՄՈՎԻՆ ԵՎ ՇԱՀՆԱԶԱՐՈՎԻՆ

Առ Գեղամյան

Հոգուս զուգակիցներ․

Երեք ժամից հետո կրացվի աշխարհի փրկության առավոտը, փրկչի ծննդյան առավոտը, եթե ոչ մեր, զոհե, մյուս բոլոր քրիստոնյաների դավանությամբ։ Գերմանացիք այս երեկո զարդարված ծառով են շնորհավորում փրկչի ծնունդը և պարզևատրում են միմյանց իրենց ձեռքի քրտինքով վաստակածից։ Այսօր ես էլ պատրաստվում եմ դնալ, թեև դուրսը սաստիկ ձմեռ է, Ջանգիի ափը մի ճյուղ բերելու և ավետարանելու իմ որդիներին կենարարի (կյանք պարզևողի) հայտնությունը։ Բայց ձեզ, հեռացած որդիներիդ, օտարության մեջ գտնված զավակներիդ թիվ ուղարկեմ, թիվ պարզևեմ— Օրհնության արտասուքս սուրբ ծառի մոտ, որ ես պետք է զարդարեմ առանց ձեզ, գոհության արցունքներս փրկության ճրագալուսին, որին իմ երկնալիք (երկնքով լցված) սիրտն այժմ իսկ վեր է ընծայում ձեզ։ Թող իմ սույն ուխտն այս սուրբ երեկոյին այս լինի արարչին, նախ, տեսնել ձեզ բախտավոր, ձեզ հետ միասին և իմ միևնույն Վարդանին։ Ամենաքաղցր արարիչը թող այն ժամանակ տա ինձ փակել աչքերս, երբ տեսնեմ ձեզ իմ զրկում զարդարված ուսումով, զարդարված բարերարությունով, պսակված փառքով և պատվով և իմ Վարդանը, որ այն ժամանակ, զուցե—որբացած լինի, թող ձեզանով լինի աշխարհիս բոլոր փառքերից, բայց ոչ բարձրալի խնամքից, զրկված հոր արժանաժառանգ որդի, բարձրալի, որ օրհնում է, զորացնում է ձեզ՝ իմ որդիներիդ, իմ ուրախության և ձեր բարետոհմ ազգի և տան պայծառության համար։

Եթե իմ և ձեր անդին բարեկամ ի վան Ստեփանիչը բաշխած լինեիր ինձ ամբողջ Տփլիսը, դրանով ոչ այնքան բախտավորեցրած կլինեիր ինձ, որքան (յուր հաղորդած) բարեկուր համբավով ձեր ուսման մեջ արած հառաջադիմության և ձեր դաստիարակների ձեր վրա քաղցր աչքով նայելու մասին: Դուք նշանակված եք գիմնազիանի դասարաններում ցեմզար, որի մասին ես դեռ ոչինչ չգիտեմ: Իմ անողորմ որդիներ, դուք չգիտեք, որ և ձեր քնած միջոցին իմ աչքը ամեն ժամանակ անքուն պահպանում է և հսկում է ձեր վրա, Բնչպես դուք թաղցրիք այդ ինձանից մինչև այժմ այդ ձեր առաջին աստիճանի բախտավորությունը: Մեթե չգիտեք, որ և հեռվից իմ հոգին, ինչպես ստվեր շրջում է ձեզ հետ բոլոր քայլերի և շարժումների մեջ, Դուք մասնակից արիք ինձ ձեր նոր բարեփայլության, որ ձեր բարերարոյության և արդար քրտինքի արդասիքն է: Երևանի նահանգական ուսումնարանի խղճուկ աշակերտներն իշխում են Տփլիսի մեծամեծների և գիմնազիոնի հարյուրավոր մանուկների վրա, և դուք չեք ուրախանում և ինձ էլ չեք ուրախացնում: Անսիրտ զավակներ, այդպես եք ճանաչում իմ սիրտը, այդպես եք ուզում ինձ շահել: Չափից զուրս ուրախ եմ, բայց շատ վշտացած եմ ձեր խստաբրտության վրա: Բավական է որքան ցավեցրի ձեր սիրտը: Օրհնյալ լինի ձեր ծնունդը և հոգին, որ ինձ բարձր ի գլուխ պահեցիք բոլոր մարդկանց առաջ: համեստությունը չի թույլ տալիս ձեզ ձեր արդար բերանով զովարանել ձեր անձը, համեստությունը և պարկեշտությունը թող այսուհետև միշտ լինի ձեզ համար պսակ կենաց և թագ պարծանաց, թող լինի անվերսթյան շուք, անկողոպտելի դանձ, անգին, անհատ և անհամեմատ սիրելիներու:

Ժորժ— Զան, Դեղամովը աստուծով շուտ կհասնի յուր նպատակին, քո ճանապարհը միայն երկար է ու քիչ և այդ՝ քո մանուկ հասակիդ պատճառով: Դու գիտես, որ պահանջել են քեզ ուղարկեն Մոսկվա, և ես գիշեր ցերեկ հոգս եմ անում շուտով կրկին բերել տալ քեզ այստեղ պատրաստելու և ուղարկելու քեզ հետև աշխարհ, բայց քո հառաջադիմության այս բարձր համբավը կապում է իմ ձեռքս ու ոտքս: Երեք շաբաթ է, որ ամեն փոստի այրվելով սպասում եմ, թե Բնչպես վերջացավ քո վիճակը, իմ անգին բարեկամ: Եթե և կնյաղի սիրտը չգթաց քո նախնյաց վհուկության և քո ներկա որբության, ես քեզ կրկին բարեկամ և հայր,

որդյակ, այլևս իզուր մի աշխատիր, իզուր չկորցնես ջո ժամանակը և լեզուդ. ես ցամաք հացով կապրեմ, և դու կմնաս Տփլիսում փառքով և պատվով, ինչպես ես տանում քո մենակ մնացած մոր դառն արցունքները, իմա դեռ չեմ հիշում. հաց, մնա այդտեղ Թիֆլիսում, թե ոչ ես կդամ մյուս անգամ միանալու քեզ հետ. դու ամեն ամսու կդաս և կփարատես քո խղճալի մոր և հեռացած (մեռած) հոր փափաղը: Միայն որ այս տեսակ բարի համբավ ինձ տուր լսել քո մասին, և մեծամեծների որդիքը չեն ունենալ այն վայելչությունը, որ դու կարող ես ունենալ: Գնա, շնորհակալ եղիր Իվան Ստեպանիչից, որ պատճառ եղավ քո ներկա նոր բախտավորությունը:

Մի շարաթ հիվանդ էի. մի գիշեր քիչ մնաց, որ մեռնեի, ինչպես փափաղում էի ձեր տեսություն, երազումս ձեզ տեսա և օրհնեցի: Շատերն են այժմ մեռնում Նրեանում ցրտերից. Յազորի հայր Հովհաննեսը ևս մեռավ...

Խ. ԱՐՈՎՅԱՆՑ

1847 թ. դեկտ. 24, Նրեան

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ՝ ԳՐՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԿ

Խ. ՖՐԵՆԻՆ

(Հատված)

1838 թ. 19 մայիսի, Թիֆլիս

Ա՛խ, ճրճան հաճախ մարդս ինքն իրեն պիտի հանդիմանե իր փոքրոգություն համար: Ամենազեղտն աստուծո առաջնորդությունը ոչ ոքի չի թողնիլ այն վիճակում, որ մենք սարսափելի ենք համարում: Իմ այժմյան պաշտոնս արդեն ինձ անսահման մխիթարություն է պատճառում, թեև դա որոշ դժվարությունների հետ է կապված, բայց դա ինձանից անբաժան լինելով, թանգազին է դարձել: Նրկու հարյուրի չափ աշակերտ ամեն օր շրջապատում են ինձ. սրանց սերը, սրանց համակրությունը բարձրացնում է ինձ ամեն երկրայինից վեր: Մանկական աշխարհը վաղուց ի վեր բոլոր երկրային սրտահաճ բախտավորությունից ինձ համար ամենաբարձրն է եղել: Մանուկների կրթելն աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար և դեռ ավելի, քանի որ սրանց մեծագույն մասն իմ ազգակիցներից են, իսկ մյուսները, վրացի ու թաթար իմ երկրացիները:

Սակայն ինչ որ ինձ ամենից ավելի է խանդարում այս հա-
նույքը վայելելու, այդ այն անկատարելութունն է, որ կա ինչ-
պես իմ մեջ, այնպես և պաշտոնակիցներիս մեջ, և ավելի ևս այն
զրավոր կարգադրութունների մեջ, որ մեր ձեռքն է արվում: Եթե
այս բաները ժամանակին մի կողմ թողնվեն, ևս այն ժամանակ է՛լ
ավելի հմտությամբ ու փորձառությամբ գործի կկաշեմ, թերևս կա-
րողանամ շատ բան փոփոխել: այսպես ևս կկարողանամ իմ գա-
վառական դպրոցով մրցել Եվրոպայի լավագույն դպրոցների հետ:
Ծարդ մեզ ուղարկվել են այնպիսի հրահանգներ, որոնք Պետեր-
բուրգի հանգամանքներից ելնելով են զրվել և ոչ այստեղի, որ
մենաբնականը կլիներ:

Սակայն հերիք է այս մասին, դուք ևս չափազանց շատ եմ
ասում: Խնդրում եմ ձեզանից մի բարիք անեք և Պարրոզի մասին
մի բան հաղորդեք ինձ: Նրա լուրթյունն ինձ զարմացնում է: Ըն-
դունեցեք իմ սրտազին հարգանքը ձեր թանգաղին ընտանիքին և
մի մոռանաք ձեր ջերմազինն օրհնողին:

Խ. ԱՐՈՎՅԱՆ

(Եղիվան և Արովյանի, էջ 110—111):

Ձերդ գերագնացություն,

Ամենավողորմած տեր.

1839 թ. 23 փետրվարի, Քիֆի

Ես ընդ ավտի դիմեմ իմ նեղության միջոցին, եթե ոչ նրան,
որ այնքան հաճախ ե՛մ սիրալիք ինձ խնամել է, և՛ այն ժամանակ
իր հայրական բարությամբ բարյացակամության հավաստիքներ է
տվել ինձ: Բայց և այնպես ևս բնավ երբեք չէի համարձակվի ձերդ
գերագնացության այսպիսի հաճախակի դանդաղտնեցում և խնդիր-
ներով ձանձրացնել եթե իմ հանգամանքները զեթ սակավ տանելի
լինեին, և ևս միանգամայն անպաշտպան մնացած չլինեի: Իմ վի-
ճակն արդեն իմ առաջիկա դրածներեցս հայտնի է: Պետք է որ ևս
կրկին արտահայտեմ այն միտքը, որ իմ ճանապարհորդութունը
Եվրոպա, եթե միայն աշխարհումս չֆնասեց իմ կյանքին, բայց օ-
գուտ էլ չբերեց: Ամեն մի երկիր ունի իր կարիքները, և, եթե մարդս
այդ կարիքները լրացնելու միջոցները ձեռք բերեց, և նա ըստ

այնժամ այնպես բախտավոր է եղել, որ կարողացել է իր սեփական հոգսերը որքան կարելի է շուտ գլուխը ցած անել, ապա ուրեմն նա ամենալավ դերն է խաղացել: Եթե ոչ, ինչպես կարող է լինել, որ իմ դասընկերներն, այո, մինչև անգամ իմ աշակերտները, որովհետև դրանք այստեղ են մնացել, այժմ կարողութուն, հմայք և մի որոշ կշիռ ձեռք բերած լինեն իրանց քաղաքացիների մեջ, իսկ ես տակավին ոչինչ չունենամ: Իրրև հոգևորական, ես խալաթ փաշայի իմ վիճակը և ընդմիջաթշնամացրի ժողովրդի մեծ մասը. որովհետև իմ ձգտումն ինձ ավելի բարձր բան էր երևում, իսկ հիշյալ կոչումը կամենում էր ինձ այդ բանից հետ կանգնեցնել, իմ ժողովրդին, իրրև դաստիարակ, ամենակարևոր ծառայություն մատուցելու զգացմունքով և միանգամայն ոգեվորված իմ իղբալուով՝ ես վերադարձա իմ հայրենիքը, սակայն արգելքները, ձեզ հայտնի են, Վերջապես ես որոշեցի մի պաշտոն ստանալ, որով զեթ հոգսերից ազատ պիտի լինեի, և ես ժամանակի ընթացքում բոլորովին ընտելացա և գոհ էի իմ վիճակից, երբ հանկարծ ամբողջ երկիրն սկսեց որոտալ և շանթեր արձակել մեր գլխին: Մեր զարոցի վերատեսուչ պ. Հեսսենմյուլլերի վիճակը Ձեզ ուրիշների միջոցով արդեն հայտնի կլինի: Սրա հանցանքը զահի գեմ, իհարկե, աններելի է, բայց ես սրանով կորցրի իմ միակ նեցուկս և, անշուշտ, սրատեղն այժմ կրճնի մի մարդ, որը հայերին ռուսերիմ թշնամի է, որին ես մեր հարաբերությունների միջոցով ճանաչում եմ, որովհետև նա ցարդ տեղիս վարժարանի վերատեսչի օգնական էր և ազգանունը Դեմենտիևով: Սա ինձ բավականաչափ վիրավորանքներ է պատճառել, որ, բնականաբար, մեր հարաբերության մեջ կարող էին տեղի ունենալ: Մեր բոլոր աշակերտները նրա ձեռքի տակ պիտի տանջվեն, բայց գլխավորապես՝ հայերը և առանձնապես ես, ինչպես որ բոլոր նշաններից ես նկատում եմ:

Վրաստանի համար մի նոր արև կծագեր, եթե մի ուրիշ հմուտ մանկավարժ այստեղ գալու լիներ, բայց սրան արդեն ներկայացրել են այդ տեղի համար, ուրեմն ես կորած եմ: Ես բնավ չեմ կարող սրա խնայանքը տանել: Կարողութուն ես չունեմ, աստիճան՝ նույնպես: Դորպատի իմ բարեկամներն այնպես էին կարծում, որ ես այստեղ, իրրև հոգևորական, կարող եմ ավելի զործ կատարել, մինչդեռ ինձանից փախչում են, իրրև հերձվածուից:

Բարի և թանգազին պ. իսկական պետական խորհրդական,

կարծիք է արեւոյք Պետերբուրգում մի անկյուն գտնել, որտեղ ես կարողանամ իմ հացը հայթայթել, կամ եթե դուք կարծում եք ինձ այլ ձևով օգնած լինել, ապա արդեն զրա ժամանակը հասել է Պ. Խուդարայանը ինչպես լսում եմ, կուրացել է. կարելի չէ, որ դրա պաշտոնն ինձ տրվի Վերջինս, գտնե, արտասովախառն խնդրում եմ, չմերժեք իմ մասին բարեխոս հանդիսանալու նախարարի մոտ: Անհամբեր կսպասեմ Ձեր պատասխանին, և մնամ խորին հարգանքով Ձեր:

Խոնարհ ծառա՝

Խ. ԱՐՈՎՅԱՆՑ

Ձերդ գերագանցություն,
ողորմած տեր.

Ստաց., 11 հունվ., 1948 թ.

Ձեմ կարող երբեք ազատել ինձ Ձերդ գերագանցության կշտամբանքներից, որ այսքան երկար ժամանակ չեմ գրել Ձեզ: Սակայն կարող եք հավատացած լինել, որ ես չեմ պատկանում այն մարդկանց թվին, որոնք մոռանում են երախտիքը և կարեկցությունը: Ո՛չ, Ձերդ գերագանցություն, այս վայրկյանին իսկ, ինչպես և առաջ, ինչպես և միշտ, իմ սիրտը լի է երախտագիտությանը և օրհնությանը, երբ մտաբերում եմ Ձեզ. իսկ հիշում եմ Ձեզ գրեթե միշտ: Իմ ամաչկոտությանը միայն պետք է վերագրել, որ ես այսքան ժամանակ լուռ եմ: Դուք, երևի, արդեն գիտեք, որ ես չորս տարի է, ինչ Նրեվանումն եմ, Նախանձը և բազմատեսակ հալածանքները պաշտոնակիցներիս կողմից հորեկադրեցին ինձ թողնելու ընդմիշտ Թիֆլիսը և իմ սիրելի հիմնարկությունը, որ ես բաց էի արել իրրև նախապատրաստական՝ ապագա ժողովրդական ուսուցիչները համար: Ա՛խ, եթե պր. նախարարն իմանար, թե ինչ վիճակի մեջ են այստեղ զպրոցները: Պետությունն անօգուտ ծախսում է իր զրամները, և պատանեկությունը զուր վատնում իր ժամանակը: Աստված իմ, ուզում են միայն ուսուցիչների ոռճիկն ավելացնել, բայց թե ինչ է արվում ուսման համար, այդ ապացուցում են սաները, որոնք ամեն տարի Թիֆլիսի գիմնադիոնից ուղարկվում են Պետերբուրգ և որոնք, սակայն, մեծ մասամբ անպետք են: Եթե այդ մասին բարձր խոսես, հալածանքի կենթարկվես, իբրև հերե-

տիկոս, իսկ, եթե ձայն չհանես, չէ՞ որ այդ խայտառակություն է ականատես լինել, թե ինչպես տարեցտարի ոտնատակ են տալիս պետության և սեփական հայրենիքի շահերը: Ոչ թե ոռճիկներ ավելացնելով կարելի է այս դժբախտության առաջն առնել, այլ պատշաճ կարգադրություններով, գործի գլուխ դնելով հմուտ մարդկանց, և զերազասելով նրանց, որոնք պարագույն են մասնագիտությամբ սիրով ու եռանդով:

Ես հանգուցյալ Պարոտին, իմ անմոռանալի դաստիարակին ու բարերարին, ամենասուրբ երգումն էի տվել, որ երբեք չեմ թողնելու իմ ուսուցչական գործը, եթե անգամ բաց լինի իմ առաջ ամենապատվավոր ասպարեզը: Սակայն այժմ ես գրեթե հարկադրված եմ այդ քայլն անելու, որովհետև 11 տարի է՝ իմ շուրջը տեսնում եմ հնավանդ սովորություններ և ոչինչ չեմ կարող անել: Ես կզերազասեի մենակ ունենալ 500 աշակերտ, քան 50 աշակերտ կրթել 5 ուսուցչի հետ, որոնք անպետք են: Նման արտահայտություններ, այսպես ասած, անհաճելի են, սակայն ուրիշ ինչի՞ մասին պիտի խոսեմ, եթե ոչ իմ մասնագիտության, որ ընտրել է իմ սիրտը: Ես Ձերդ զերազանցության սուր-սուր հայտարարություններ չեմ անում ոչ էլ անձնական տեսակետից. երանք թե այդպես չլիներ:

Երկու տարի առաջ էջմիածնում պատահամբ ծանոթացա Պանիկովի* հետ: Նա խոսեց Ձեր մասին և Ձեր անունից նկատողություն արեց ինձ, որ շեռ այն ժամանակ եմ գրում Ձեզ, երբ որևէ բանի կարիք ունեմ: Այդ հանդիմանությունը, ի հարկե, ճիշտ է, սակայն ես վախենում եմ, որ կձանձրացնեմ Ձեզ, եթե խիստ հաճախ զրելու լինեմ, իմ մեծ սերը կրթական գործի հանդեպ արգելում էր ինձ զբաղվել ուրիշ բանով, նաև զբաղան գործունեությամբ: Այժմ ես սկսել եմ զբաղվել նման հոգվածներով (?): Առայժմ ունեմ Վանոյ նկարազրութիւնք-ը, սակայն, դժբախտաբար, ռուսերեն, որովհետև մասամբ տպագրելու եմ Թիֆլիսի թերթերում: Կարգացել էք արդո՞ք մեր՝ Արարատ բարձրանալու նկարագրությունը: Անցյալ տարի կոմս Բենիկենգորֆի խնդիրքով պատրաստել էի իմ մի ավելի ընդարձակ հոգվածք հղիղիների ու քրդերի մասին: Մինչև այժմ

* Հայտնի արևելագետ Նիկոլայ Վազիմիրովիչ Պանիկովն է, որն իր կյանքը նվիրել է Կովկասի ու Արևելքի ուսումնասիրությանը (ծանոթությունը ըստ Ծ. Շահազիզի):

չգիտեմ, թե ինչ եղավ այդ հողվածքը: Մերդ աշխատում է այդպես առանց հաջողության, իսկ այդ տեսակ աշխատությունների համար հարկավոր է բավական ժամանակ և ծախս: Ես, սակայն, վերստին ներդրելու եմ տալիս Ձեզ անօգուտ երկարաբանություններով: Մենք ամենքս, «փառք ասածո», երեխաներով ու ընտանիքով լավ ենք, ցանկանում ենք սրտանց նույնը բոլոր Ձերայնոց:

Խորիմ հարգմունք՝

Մնամ Ձերդ գերագնացության խնամքի ծառա

Խ. ԱՐՈՎՅԱՆՑ

(Եղիվան Խ. Աբովյանի, էջ 121—122)

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ՄԱՍՆԱԼՈՐ ԳԱՆՍԻՈՆԻ ԱՇԽԱԿԵՐՏՆԵՐԻ
ՇՆՈՂՆԵՐԻ ԿԼՔԱՆ ԳԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԱՐՈՎՅԱՆԻ ՀԵՏ՝ ԻՐԵՆՑ
ՈՐԴԻՆԵՐԻՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԵՎ ՄԵՆՈՑԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հազար ութ հարյուր երեսուն և ութ թվի հոկտեմբեր ամսի առաջին օրը մենք ստորագրող՝ Տփլիսի բնակիչներս այս պայմանագրով կապվեցանք Ձեզ պարոն Խաչատուր Աբովյանիդ, Տփլիսի նահանգական ուսումնարանի վերատեսչիդ հետ այն մասին, որ տալով մեր որդիներին Ձեզ առանձին ուսման, մեր և Ձեր միամտությամբ համար, նշանակեցինք սրա մեջ, թե դուք ինչ էք պարտական սովորեցնել և ինչ եղանակով պիտի պահեք նրանց և սնուցանեք, իսկ մենք մեր կողմից ինչ պետք է հատուցանենք Ձեզ տարին և ինչ պարտականություն է դրված մեզ վրա:

Մեր որդիքը մնալու են Ձեզ մոտ երկու տարի ժամանակով. Ձեր ուսումը պետք է լինի երեք լեզվով— հայերեն, ռուսերեն և զաղդիերեն, և ուսանելիք գիտությունները պիտի լինեն. — 1. կրոնագիտություն, 2. բնաբանություն, 3. աշխարհագրություն, 4. պատմություն, 5. թվաբանություն, 6. Բերականություն երեք լեզուների, 7. նկարչություն և վաշելագրություն: Մեր որդիքը զալով Ձեզ մոտ առավոտը, պիտի վերադառնան մեզ մոտ երեկոյան. նրանց ուսման ժամերը պիտի լինեն օրվա մեջ յոթ ժամ՝ չորսն առավոտյան և երեքը՝ ճաշից հետո: Ձեզանից զատ, դուք պետք է ունենաք այլևս երեք օրինավոր ուսյալ ուսուցիչներ, — մեկը հայերենի, երկրորդը ռուսերենի և երրորդը զաղդիերենի: Մանուկների ճաշը պիտի լինի մե-

զանից, Կայսերական և եկեղեցական հանդիսավոր տոներին, մյուս ուսումնարանների սովորութեամբ, պիտի տոն պահվի Իբրև վարձատրութիւն Ձեր աշխատանքի, մեզանից յուրաքանչյուրն ամեն մի հոգու համար հատուցանելու է հարյուր մանեթ արծաթ՝ կեսը այս նշանակված թվին և մյուս կեսը վեց ամսից հետո:

Ուսումնական բոլոր պիտույքները, ինչպես զրգերը, թուղթ, թանաք, զրիչ, քանոն և այլ այսպիսիները հոգացվելու են Ձեր ծախքով: Եթե մեկին որևէ հիվանդութիւն պատահի, մենք նույն օրը պիտի խմաց տանք և երբ առողջանա, պիտի ուղարկենք ուսման, առանց ուշացնելու: Եթե մեկը մեզանից, նախ քան մեկ ամիս լրանալը հանի յուր որդուն որևէ պատճառով, պարտկան է վճարել տարեկան վարձն ամբողջովին, և եթե դուք մի որևէ պատճառով սահմանված ժամանակից առաջ հանեք մեկին, նույնպես վերադարձնելու եք լիովին մի տարվա վարձը, որ ստացել եք:

Ձեր և վարժապետների բոլոր փութքը և հոգացողութիւնը պետք է լինի, նախ, աշակերտների մօքի բարեկարգումը և երկրորդ, նրանց հրահանգելը լավագույն քաղաքականութեան ուղիով: Նրանց հասակի և մատաղ բարքի համեմատ:

Պետք է յուրաքանչյուր ծնողի կամքին թողնվի ամառային ուսման ազատութեան ժամանակ թողնել որդուն Ձեզ մօտ, թե ոչ:

Այս պայմանագիրը, որ գրված է միւր բերանից, մենք տվինք Ձեզ, ուստի և ստորագրում ենք:

(Եփեմե Խ Արաբյանի, էջ 101—102), 1838 թ.

ԻՎԱՆ ՎԱՍԻԼԵՎԻՉ*

Ապրել և մեռնել հայրենիքի համար—ահա խնդիրը, որ իբրև նպատակ, ես ընտրել եմ ինձ համար իմ մանկութեան օրերից:

Դեռ ճնշված լինելով, ինչպես բռնակալութեան, նույնպես և տգիտութեան բեռների ներքո, դեռ ոչ մի գաղափար չունենալով եվրոպական կրթութեան մասին, ոչ մի նեցուկ և մինչև իսկ ոչ մի միջոց չունենալով հասնելու առաջադրած նպատակիս, ես հոգուս մեջ արգեն տածում էի միայն և միայն այդ մտածութիւնը:

* Անդրկովկասյան գաղութների տեսուչ, ուկրաինական բանաստեղծ՝ Ի. Վ. Բոկովչենկոն է:

և միայն այդ ցանկությամբ այրվում, իմ հայրենակիցների թշվառ բախտը, որոնք ճնշված էին բարբարոսության լծի տակ, վշտալի հիշողություններու երբեմն փայլած, բայց իմ օրերով հանգած իմ թանկագին հայրենիքի մեծության և փառքի մասին — ահա իմ առաջին ապավորությունները, առաջին ծանր զգացմունքներու, որոնք հուզում, վրդովում էին խղճուկ թափոյալիս և որբացյալիս։ Աչքիս առաջ բերելով այդպիսի կենդանի եղանակով իմ հայրենիքի խղճուկ վիճակը, առաջին երգումը, որ ես տվել եմ մեր սուրբ հայրերի սեղանի առաջ, դառն արցունքները, որ ես թափել եմ նրանց դերեզմանի վրա, ի խորոց սրտի հառաչանքները, որ ես նվիրել եմ նրանց աճյուններին, եղել են այն, որ դրանք լինեն իմ պահապան հրեշտակները և բաց անեն իմ առաջ հօգուտ նրանց որբ թողած մանուկներին զոհվելու ուղին։

Տաս տարին անցավ ինձ համար, ինչպես տաս դար։ Ամենալավ ակնկալությունները ես առչելն էի համարում, ձգտելով դանելու մի պատեհ դեպք, որ իմ մեջ եղացող այդ խուլ զգացմունքներու մեկնեմ, պարզեմ, որով կարողանայի հասնել այդ նպատակիս։ Առանց նախապես լուսավորվելու, այսպես էր խոսում իմ մեջ ներքին ձայնը, անկարելի պիտի լինի ինձ պիտանի լինել մի որևէ դործի։ Այդ նպատակով քանի-քանի անգամ թողել եմ իմ հայրական տունը, փախչելով, ինքս էլ չիմանալով, թե ուր, Հանցափորձությունները, դժվարությունները, որոնք պատահում էին ինձ այս ապարդյուն որոնումների ժամանակ, չքավորությունը և մինչև իսկ վտանգները — ոչ մի, ոչ մի բան չկարողացան հանգցնել իմ մեջ այդ հոգեկան բոցը։ Բայց ամենաբարձրալը, որին միայն հայտնի են մեր սրտերի ներքին շարժումները, չթողեց ինձ վաղաժամ զոր դառնալու դառն խորհուրդների և հրաշալիքներն ցույց տվեց ինձ իմ ապագա կոչման ճանապարհը։

Իմ հայրենիքի ազատագրության օրերով, երբ նա վերակենդանացավ մեր հրեշտակ—փրկչի, մեր ռուս ժողովուրդի ղենքով, ո՛ւմ հողին այնքան խանդավառված կարող է լինել այդպիսի բախտավորության հրճվանքով, եթե ոչ իմը։ Ծվ ես մինչև օրս էլ պահում եմ իմ մեջ, իբրև սրբություն, իմ այն ժամանակվա մանկական զգացմունքների թոթովանքը։ Բայց ով որ այն ժամանակ իմ ընկերներից, աշխարհական թե հոգևորական ուզում էր ձեռք բերել իր համար մի որևէ արտաքին արտոնություն, ես միայն մի

խորհուրդ ունեի, մի ազդեց—խնդրել և ստանալ միապետի ողորմածությունը կրթվելու համար հօգուտ իմ հայրենիքի պատանկության, որին, վերջապես, արժանացա բարեխոսությամբ իմ անմոռաց բարերար պրոֆեսոր Պարրոտի:

Իմ կյանքիս 23 տարեկան հասակում, այդ մարդկության կյանքի կարևոր շրջանում, երբ մտավոր ընդունակությունները զազարում են իշխել վառ երևակայության և թեթև հիշողության երջանիկ ուժերի վրա, որի մեջ մարդս արդեն սկսում է օգտագործել իր պատանկության ժամանակվա աշխատանքով ձեռք բերած գանձը, ես նոր միայն ձեռնարկեցի ձեռք բերելու այն, թողնելով հոգևոր կարգս, հայրենիքս, ծառայությունս, ոչ անկարևոր, որ խոսատնում էր ինձ ապագայում փայլուն ասպարեզ իմ հոգևվոր կոչման մեջ, որպեսզի իմ մեջ արմատացած ասիական հոգին լուսավորեմ եվրոպական կրթության բարերար ճառագայթներով: Իմ համառության դեմ ջարդուփշուր եղան այն բոլոր միջոցները, որ գործադրում էին էջմիածնի Սյունհոգոսը և պատրիարքը, որոնք այն ժամանակ իմ իշխանավորներն էին և ցանկանում էին հետ պահել ինձ այդ քայլն անելուց: Ոչ սպառնալիքը, ոչ ամենազրավիչ խոստումները, ոչ ծնողների արտասուքը, որոնք ընտել չէին այդպիսի հեռավոր և երկարամյա անջատման իրենց զավակներից, հետագայում, զուցե մշտադար իմ հեռանալու պաճառով, գերեզման մտած, չկարողացան կասեցնել ինձ: Ահ, ես այժմ սրտի ցավոք զգում եմ, թե ինչ եմ կորցրել աշխարհիս երեսին, բայց կորցրածը չի վերադառնալ և ուշացած զղումը կքավի միայն դագաղը:

Թողնելով մի կողմ բոլոր զժվարությունները, որոնց դեմ ես պետք է մաքառեի օտար երկրում, որովհետև ամեն բան ինձ համար նոր էր՝ և՛ լեզուն, և՛ մտածման եղանակը, իսկ գիտությունների մասին խոսելն էլ արդեն ավելորդ է, ես հարկ եմ համարում հիշել միայն այն, որ միջոցներն այն ժամանակ տրամադրված առատաձեռն պետության կողմից և խնդրած ու ստացված իմ բարերար Պարրոտի բարեխոսությամբ, միայն և եթ այն նպատակի համար են եղել, որի մասին այստեղ խոսք է լինում, Հենց այդ հանգամանքին էլ, և ոչ անձնական արժանավորություններին եմ վերագրում ես այն, որ այնպիսի անկանավոր անձինք, ինչպիսիք նորի՛ն պայծառափայլություն Վարշավի կոմսը, կոմսեր Բենկենդորֆը և Կենկրոդը, Ստրոգանովը, Նախարարներ Լիվինը, Բլուգովը և ուրիշ

շատերը և հասարակութեան համարյա ամբողջ զիտական մասը
ցույց են տվել կենդանի մասնակցութիւն և բարեհաճ վերաբեր-
մունք, որտեղ էլ որ ես գտնվել եմ, կամեցած լինելով նպաստած
լինել ինձ իրենց կողմից այդ դործւում, Բայց ես ընտրելով ինձ
համար ամենահամեստ, միևնույն ժամանակ և շատ ցանկալի աս-
պարեզը, իմ ներկա կոչման մեջ, ավելորդ եմ համարել մինչև օրս
նեղութիւն պատճառել իմ քարյացակմներից մեկն ու մեկին:

Նվ այսպես, ես, կամենալով ունենալ մասնավոր աշակերտներ,
որպիսզի ծառայութիւնիցս ազատ ժամանակը դործադրեմ նրանց
օգտին, որի դեմ մինչև օրս ոչ մի արդեւք չի հարուցել կառավա-
րութիւնը, եղել է առաջին սկզբնավորութիւնն իմ նախագծած
նպատակի իրագործման, և ոչ թէ զաղբալի շահամուլութիւնը, որ
առիթ է ավել ոմանց կասկածել իմ այդ անմեղ նպատակիս վե-
րաբերմամբ: Երկար ժամանակ ես պահել եմ այդ աշակերտներին
իմ մօտ անվճար. նրանց ծնողներն իրենք վշտանալով այդ բա-
նից, որ ես մտադրել եմ իմ ծառայութիւնը մատուցանել ձրիաբար,
առաջարկել են ինձ օգտակար հանդիսանալ իրենց շրջանում, կա-
րող է ուրեմն զրան արգելք լինել բարյացակամ կառավարութիւնը:
Մի՞թե այդպիսի մօքերը պետք է ողբալի վիճակ պատրաստեն
այդպիսի մօքեր ունեցողի կամ տածողի համար, իմ հույսը ձեր
վրա է: Միայն, զուցե, զազազը կարող լինի խեղդել այդ զգաց-
մունքները, որոնք աւելցված են երկյուղածությամբ, երախտագի-
տությամբ այն դործակցութեան համար, որ ձեզանից միայն,
սկնկալելի է ինձ համար:

Ոմանք սակավ ինչ զրամական օգնութիւն են մատակարարել
ինձ իրենց զավակների սննդի և իմ մշուս աշխատակիցներին պա-
հելու համար, բայց և այնպես և՛ այժմ շատերն օգտվում են իմ
տված ուսումից ձրիաբար: Ինչո՞ւ, ահ, ինչո՞ւ բախտը զրկել
է ինձ կարողութիւնից, որ ես ի վիճակի լինեի պահել և դաս-
տիարակել իմ սեփական միջոցներով ոչ թե քսան, այլ 100 և աս-
վելի մանուկներ ամենաչքավոր դասից, որ սերմանեի նրանց հո-
գու մեջ մարդկային պարտականութիւնները,— կրկնում եմ ես
հաճախ դառն հառաչանքով:

Հայերը, որոնք ի բնե օծոված են այնքան գերեզանց ընդու-
նակութիւններով, կարող էին այն ժամանակ դառնալ ռուս զորեղ
կայսրութեան ընտիր ուղղութեան տեր և շատ լավ քաղաքացիներ:

Իմ լեզուս շատ թուլլ է արտահայտելու այն զգացմունքը, որով ես նայում եմ այդ իմ սրտին սիրելի սաներիս վրա: Եթե իմ հույսն իրագործվի իմ ցանկացած հաջողությամբ, ես հաստատ համոզված եմ, որ իմ աշխատանքները չեն մնալ անպտուղ և մահիցս հետո: Գիտություններ ամեն տեղ կարելի է ձեռք բերել, բայց ոչ ամեն տեղ կհաջողվի ինքն իրեն հարմարեցնել իր ապագա կոչման, իր-րև հասարակության օգտավետ անդամ և իրրև մի անհատ, որ ստեղծված է միայն իր մերձավորների բարիքի համար:

Ի վաճառք, ես իմ սուրբ պարտականությունն եմ համարում ծանոթացնել ձեզ իմ բախտին և նպատակին, ես վստահում եմ ենթարկել ձեր բարի զատողության իմ ամենախոնարհ խնդիրը՝ ձեր իշխանական ուշադրությունը դարձնելու այդ հանգամանքի վրա: Վեհ հոգիներին միայն և եթ հատուկ է զննատեսելու այդպիսի ձգտումները: Ձեզ ինձ պաշտպան ունենալուց հետո, ես այժմ ավելորդ եմ համարում, ինչպես և առաջ, նեղություն պատճառել այլևս մի ուրիշին իմ բարյացակամներից, և հույս ունեմ, որ իմ նպատակը, որ արժանացել է և միապետի ողորմածության, և որ այնքան ականավոր անձերի ուշադրության առարկա է եղել, չի կարող և ոչ մեկի համար չարամտության առարկա լինել: Ձեր բարյացակամ դիտավորությունը հօգուտ այս երկրի պատանեկության և նրանց ճշմարիտ հոգևոր կրթության ներշնչում է ինձ ամենահաստատուն վստահությունը: Ձեր խնամքի տակ ես ավելի, քան երբևիցե, ամենահաջող եղանակով կհառաջագրվեմ իմ այս նպատակի իրագործման մեջ, որ տածել եմ իմ մանկության օրերից: Եզեք իմ երկրորդ բարեբարը, ինչպես երբեմն ինձ համար եղել է անմահ Պարրոտը. ինձ արդեն աշխարհիս երեսին ոչ մի բան չի կարող հրապուրել, բայց միակ այդ զբաղմունքը, որ ամփոփում է իր մեջ իմ բարոյական կյանքը, պահպանում է և իմ ֆիզիկական կարողությունը, որի ոչնչացմամբ կյանքն ինձ համար կյանք չի լինիլ, այլ ծանր բեռ: Միակ Ձեր ազնիվ հոգին կարող է զատակշռել թե ինչու համար ես այրվում եմ:

Հայրենիքի, ազգի անունը սուրբ է ոչ ամենքի համար, տերտմությունը և հրճվանքը դրանց անունը հիշելու ժամանակ ամենքին էլ հասկանալի չէ և միայն անարժանիս և փանաթիիս, բայց բնությունն ինքը տվել է ինձ այդ զգացմունքը: Փառքի չէ՛, որ ես ձգտում եմ, որ զինած լինեմ իմ դեմ նախանձը, իմ կացությունն

ամենաազգայնական է, իմ ցանկությունն ամենասահմանափակը—մի-
թե ձգտումներս*։

(«Դիվան Ռ. Աբովյանի», էջ 213—216)։ 1841.

Պ. ՎԵՐԱՏԵՍՉԻՆ

1844թ. . մարտի 3.

Յանկանալով մի փոքրիկ պարտեզ տնկել զպրոցիս տան մոտ,
որ մի կողմից դարձաբեր զպրոցը, մյուս կողմից էլ օգտակար լիներ
աշակերտների համար, ես խնդրել եմ տեղիս իշխանությանը՝ իմ
տրամադրության տակ դնել այն հողամասը, որ 400 քառակուսի
սամեն տարածություն ունի և գտնվում է զպրոցի ցանկապատի
հետևը, հարավային կողմից, և, որպեսզի ծանրաբեռնած չլինեմ
իշխանությանս, հրավիրել եմ տեղական հայ հասարակությանը
մասնակից լինելու այդ հանրօգուտ ձեռնարկության և նյութա-
կանապես աջակցելու ինձ այն ի կատար ածելու, որի համար
ստացել եմ թե՛ առաջինի և թե՛ վերջինի համաձայնությունը։

Բայց որովհետև զրա համար անհրաժեշտ է քանդել ցանկա-
պատը զպրոցի բակի մեջտեղից դուռ բանալու համար, որ, նախ՝
զրա միջոցով վաճված լինի հողամասի արտաքին մուտքը, և երկ-
րորդ՝ հարմար հաղորդակցություն ստեղծվի զպրոցի բակի և հի-
շալ պարտեզի միջև, ես սրանով վստահում եմ հարգանքը ղեկու-
ցանել Ձերդ բարձր բարեծննդության և խոնարհաբար խնդրել՝
հաճել թույլ տալ ինձ ձեռնարկելու այդ պարտեզը տնկելու գործին։

Պարտք եմ համարում սրան ավելացնել և այն, որ այդպիսի
ձեռնարկությունն այսպիսի տաք և այսքան արգավանդ երկրում
կունենա շատ բարերար հետևանք, և պատանեկության առողջու-
թյունը տեղիս խորշակալից մահաբեր կլիմայի ազդեցությունից
պահպանելու տեսակետից, և երեխաներին նրանց մանկական հա-
սակից զեղեցիկ և ամեն կոչման համար այնքան շահեկան զբաղ-
մունքի ընտելացնելու տեսակետից, այսինքն՝ պարտիզպանության
և ընդհանրապես գյուղատնտեսության։

(«Դիվան Ռ. Աբովյանի», էջ 131—132)։

* Աբովյանի արիթմում պահվող այս թուղթը կիսատ է. ինչպես նկա-
տում է ընթերցողը, միտքը չի վերջանում։

Նորին գերազանցութիւնը, Վրաստանի և Իմերեթի քաղաքացիական մասի նահանգապետը, Երեմանից դուրս գալիս, ամսիս 9-ին, ինձ իր հետ տարաւ ս. Էջմիածին վանքը, մի օրով, և այդ ժամանակվա համար ես հանձնարարեցի ուսուցիչ պ. Վեթիլովին իմ փոխարին հսկել աշակերտների վրա: Հաջորդ օրը, մինչև իմ վերադառնալը, ուսուցիչ պ. Իվանովը, երրորդ դասարանում, երկրաչափության դասին, պահանջում է մի աշակերտից պատասխանել դասը, որ, սակայն, դժվարանում է կատարել աշակերտը, բացատրելով, թե ինքը չի հասկացել դասը: Իվանովը փոխանակ վերստին, երկրորդ անգամ բացատրելու դասը, ինչպես այդ պահանջվում է անել ամեն անգամ, աշակերտի տված պատասխանը համարում է համառութիւն, և, նախ՝ չոքեցնում է նրան և հետո, զրանով էլ չբավականանալով, պատժում է նրան քանոնի 16 հարվածով: Եվ երբ աշակերտը հարցնում է, թե ինչ է իր հանցանքը, ուսուցիչը է՛լ ավելի զայրանալով, դուրս է վռնդում նրան դասարանից, և ուշադրութիւն չդարձնելով մյուս ուսուցիչների հորդորանքին՝ սպասել իմ գալուն, վերցնում է մի կապ դալար ճիպտներ և պ. ուսուցչապետ Արիխի զազախի և յուր մարդու ձեռքով, որովհետև դպրոցի պահապան ծառան ինձանից պատվեր ստացած լինելով առանց իմ հրամանի ոչ ոքի չգանահարել, չի հնազանդվում նրան, բռնել է տալիս խեղճ աշակերտին, որը երկյուղից ապաստանել էր իմ բնակարանը և պաշտպանութիւն որոնել այդտեղ, նույնիսկ տեղում, դպրոցի բակում, բոլոր աշակերտների ներկայութեամբ, ինչպես պահապանին, այնպես էլ աշակերտին անխնա գանահարել է տալիս անպատշաճ եղանակով:

Ես, ճանաչելով այդ աշակերտին տարի ու կես ժամանակից ի վեր, իրրեւ ամենախոնարհ, հեղ և աշխատասեր մեկին, Էջմիածնից վերադառնալուց հետո, տեղեկանալով այդ մասին, կանչում եմ Իվանովին նույն դասարանը, որ իմանամ այդպիսի անազորույն ծեծի պատճառը, և ասում եմ նրան, որ նա, առանց իմ գիտութեան, այլևս չհամարձակվի այդպիսի միջոցների դիմել: Նա վերափորվելով, թողնում է դասարանները և չի ուզում այլևս շարունակել պարապել աշակերտների հետ:

Սրան պարտք եմ համարում ավելացնել և այն, որ ես քանիցս նկատելով պ. Իվանովի բնավորութեան մեջ նմանօրինակ ուսանողական վատ հատկութիւն և նրա կոչմանն անհամապատասխան վատ հակումների նշաններ նրա վարքի մեջ—անհոգութիւն իր պարտականութիւնների վերաբերմամբ—բարեկամաբար հորդորել եմ ձեռք վերցնել այդպիսի ընթացքից, որի հետևանքը, սակայն, եղել է այդ տեսակ անհնազանդութիւն և անվայել գործողութիւն:

Այս բոլորը ներկայացնելով Ձերդ բարեծննդյան, խոնարհաբար խնդրում եմ ձեռք առնել օրինական միջոցներ նրա այդպիսի ընթացքի առաջն առնելու համար, որ խանգարում է ծառայութեան բոլոր կանոնները և հետզհետե վարակում զարդոցիս և մյուս աստիճանավորներին:

(Եղիվան Ս. Արովյանի, էջ 141—142):

ԵՐԵՎԱՆԻ ԴԱՎԱՌԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 1844 ԹՎԻ ՈՒՍՈՒՄՆ. ՄԱՍԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐԸ 1845 Թ. ՀՈՒՆՎ. 12

ԸՅԳԽԱՅՈՒՐ ՂԻՍՏՈՂՈՒՅՈՒՆՆԵՐ

Ահա Զ-րդ տարին է, որ ես ծառայում եմ Անդրկովկասի զբաղ-րոցական գործին, ոչ այն նպատակով, որ միայն լրացնեմ ծառայութեան ժամանակը, ստանամ ոտնիկ ու աստիճան և դրա միջոցով ապագայում թեմակոխեմ կյանքի մի այլ ասպարեզ: Վաղուց արդեն հայտնի է լուսավորչալ աշխարհին, կարծում եմ, և մեր մերձավոր իշխանութեան, թե ինչու համար ես արժանացել եմ միապետի ողորմածութեան—արքունի հաշվով կրթվելու Եվրոպայում—և ինչու համար վերադարձել եմ հայրենիք: Իմ յոթնամյա ծառայութեանը Թիֆլիսում, իշխանութեան աչքի առաջ, շնայելով անընդհատ հարձակումներին և մի քանի ծառայակիցներիս անբարյացակամ վերաբերմունքին, որոնք զինվել էին իմ դեմ իրենց բոլոր գործութեամբ՝ անձնական հաշիվներից դրդված, և իմ անշահասեր աշխատանքներն ու իմ եռանդազին ցանկութեանը՝ օգտավետ լինել, զոհե, իմ հայրենակիցներին հայտկույս Կովկասի, անբասիր են կացուցել ինձ, ինչպես մերձավոր նույնպես և բարձր իշխանութեան առաջ: Իսկ իմ կարողութեանը և զասատովութեան եղանակը շատ ժամանակ չէ, որ ընծայել են ինձ նոր և ավելի փայլուն հույակ

մինչև իսկ գիտական աշխարհում Այն զրքերը, որ ես կազմիչ եմ ազգիս պատանեկության համար, որոնք արժանացել են ուշադրության և խրախուսանքի, մինչև իսկ գիտությունների ակադեմիայի կողմից, հաջողություն չեն գտել միայն Թիֆլիսում: Ինչո՞ւ, թող աստված դատավոր լինի: Եվ այսուամենայնիւ ես ոչ մի անգամ, մինչև իսկ իմ մերձավոր իշխանության բանավոր գոհունակության չեմ արժանացել, որպեսզի հավաստիանամ, որ նա իսկապես ուշադիր և բարեհաճ է դեպի ինձ: Միթե ես պ. Վալտերի հետ միասին չեմ աշխատել Թիֆլիսի գալատական դպրոցում Ֆրանսերենի դասատվության վրա, այդ լեզվի դպրոցում գաստվանդիոզ առարկաների արժեք պաշտոնապես դասվելուց դեռ երկու տարի առաջ — նա արժանացել է աստիճանի, իսկ ես մինչև-իսկ բանավոր շնորհակալություն էլ չեմ ստացել:

Վերջապես, ես իմ այդ բոլոր աշխատանքների և աշխատասիրության փոխարեն, ստիպված եղա հեռանալ Թիֆլիսից, որ, զոհն հոգեկան հանգիստ գտնեմ: Այժմ ապրում եմ մի այնպիսի տեղ, որտեղ ընտանիքս հիվանդութունից և անօգնականութունից և մենք երկուսս միասին ձանձրոյթից և մեր ընտանեկան կյանքի քայքայումից չենք իմանում, թե արդյոք պիտի կարողանանք այստեղից դուրս գալ մի որևէ կերպ:

Այսպիսի հանգամանքները, իհարկե, կարող են ամեն մարդու մեջ սպանել ամեն մի լավ ձգտում, սրտից բղխած ամեն մի ցանկութուն, բայց ես սուրբ երդումով պարտականություն եմ ստանձնել հավատարմությամբ ծառայել կայսեր և հայրենիքիս, դեռ այն ժամանակ, երբ տգիտության խավարը տակավին սքողում էր հոգիս ու սիրտս, միայն որ իշխանությանս հայտնի լինեին իմ այդպիսի ցանկություններն ու գործողությունները, որով ես ներկայումս ձգտում եմ արգարացնել նրա բարերար գիտավորությունները հօգուտ իմ խնամքին հանձնված մատաղ սերնդի և այս երկրի:

(Երիվան Ն. Աբովյանի, էջ 144—145):

Երևանի գավառական դպրոցի կացութեամբ, կազմի և
գործունեութեամբ մասին

1845 թ. հոկտեմբերի 24.

Այլևորդ չեմ համարում, պարոններ, այս հանդիսին համառոտ
հաշիվ ներկայացնել դպրոցին կազմի, վիճակի և գործունեութեան
մասին, հուսալով, որ սրանով կկարողանամ ընդհանրապես տեղիս
հասարակության ուշադրութիւնը դարձնել ուսումնարանական
գործի վրա Երևանում:

14 տարի է, որ գոյութիւն ունի տեղիս գավառական դպրոցը:
Դրա հիմնարկութեան նպատակը, ինչպես և Անդրկովկասի բոլոր
գավառական դպրոցների, հայտնի է շատերին: Այդ այն է, որ ընդի-
նների մեջ տարածենք օգտավետ և անհրաժեշտ գիտութիւնը և
նամանավանդ ողւս լեզվի գիտութիւնը, և զրանով հետզհետե տե-
ղիս ազգերին բարձրացնենք բարոյապես և մտավորապես: Մի շատ
բարի նպատակ:

Այդ բարձր նպատակն իրագործելու համար, բարձր իշխանու-
թեան տնօրինութեամբ, Անդրկովկասի մյուս դպրոցների նման, և
տեղիս դպրոցը բաժանված է երեք դասարանի, որոնց մեջ դասա-
վանդում են հետևյալ առարկաները—կրօն, ողւս լեզու, թվարա-
նութիւն, աշխարհագրութիւն, ընդհանուր և ողւսաց պատմու-
թիւն, երկրաչափութիւն, գեղագրութիւն, նկարչութիւն և
գծագրութիւն: Վերջին երեք առարկաները, այն է՝ երկրաչափու-
թիւնը, նկարչութիւնը և գծագրութիւնը մեզանում սկսված են
նոր միայն:

Անդրկովկասի ուսումնական մասը կառավարում է գլխավոր
կառավարութեան խորհրդի անդամ պ. զենեռալ-մայոր Անդրեյ Ա.
Շրամ 2-րդը: Անդրկովկասի դպրոցների վերատեսուչն է արքունի
խորհրդական պ. Ի. Գ. Կուլժինսկին:

Տեղիս գավառական դպրոցի պատվավոր տեսուչն է գավառա-
պետ պ. Կոլլեժսկի ասսեսոր Ն. Վ. Բլավատցկին:

Վերոհիշյալ առարկաները դասավանդում են՝ ողւս լեզուն,
աշխարհագրութիւնը և պատմութիւնը—տեսչի պաշտոնակատար
և ուսուցիչ Ք. Արուստեանը, թվարանութիւնը, երկրաչափութիւնը,
գեղագրութիւնը, գծագրութիւնը և նկարչութիւնը—ուսուցիչ

Բանդուրովսկին, գրեկարգալը ուսանողներն լեզվով և թվարանության 4 գործողություններն առաջին դասարանում—Վեքիլովը, հայոց լեզուն և կրոնը—սարկավազ Տեր-Հովանիսյանը, որի տեղը, նրա հիվանդության և քաղաքիցս հեռացած լինելու պատճառով, բռնել է արեղա Ղազար Տեր-Ղևոնդյանը, և թուրք լեզուն ու մուսուլման կրոնը—Միրզա Թադի Մուլա Ահմետ-օղլին։ Այս ընթացիկ տարվանից, Անդրկովկասի փոխարքայի կամքով, մտցված է նաև ծաղկի պատվաստի արվեստի դասատվությունը, որը դասավանդելու պարտականությունը դրված է գավառական բժշկի վրա։

Աշակերտների թիվը տեղիս գավառական դպրոցում անցյալ ուսումնական տարում եղել է 109 հոգի, որոնցից՝ ազնվական—9, ավագ սպաների որդիք—2, խաների և բեգերի որդիք—4, քաղաքացիներ և մյուս ազատ դասակարգերի գավակներ—92 և զիվանատան ծառայողների որդիք—2։ Դրանցից՝ ուսու—3, հայ—99, մահմեդական—7։

Բարձր իշխանության տնօրինությամբ փոխադրված է այս տարի Նախիջևանի գավառական դպրոցից մեր դպրոցը Բանդուրովսկին, նախկին ուսուցիչ հանգուցյալ Միխայիլ Կոստանտինովիչ Իվանովի տեղը։

Ահա 14 տարի է, ինչպես վերևում հիշեցի, գոյություն ունի տեղիս գավառական դպրոցը, իսկ այն օրից, երբ այս երկիրը մտել է ուսու պետության հզոր պաշտպանության ներքո, անցել է արդեն 18 տարի... Հիմք դնելով այստեղ քաղաքումս ընդհանուր խաղաղություն հաստատելու հետ միասին և ժողովրդի կրթության ու դաստիարակության գործին։ Առանց դրան բնիկները պիտի խորթ մնային այն սրբազան կապակցության, որ միակն է, որ կարող է մոտեցնել, միացնել այս բազմացեղ ազգերի զանգվածը և դարձնել մի անդրզվելի բարեկամական սիրով կապված ընտանիք... Այդ մի միատեսակ և ընդհանուր լուսավորության կապ է, որ գործում է մեր կիսաազնի կեսը բռնող պետության մեջ, նրա մի ծայրից մինչև մյուսը միևնույն գորությամբ և միջոցներով, միևնույն հոգով ու լեզվով։

Այստեղ, սակայն, խնդիր է առաջ գալիս, թե կարճ է արդյոք պետության այդպիսի բարերար և եռանդուն գործունեության հանգամանքներում ժողովրդի գիտության և կրթության գործն ընդհանրապես ասեն տեղ էլ նույն առաջադիմությունն ունենալու

Ամեն մի, մինչև իսկ հասարակ, բայց առողջ դատող մարդ, այդ հարցմունքին պետք է բացասական պատասխան տաւ Ռ՞ըքան աշխատանք, ճիշդեր և հմտություն են պահանջում բարեբար մուսաները մարդու տկար մտքից, որ բաց անհն նրանց առաջ իրենց խորհրդավոր զաղտնիքների դուռը։ Այստեղ դարերն անցնում են իրրև շուտանցուկ բուպեններ, մինչև որ, վերջապես, մի որևէ ազգ հասնի իր նպատակին—բոլոր ազգերի պատմությունը դրա ամենահավատարիմ վկան է, բայց թնչ ասեմ փոքրների մասին, որտեղ դուք ապրում եք ինչպես մանկության օրերում, որտեղ ժողովուրդը, փոխանակ որ օր-օրի վրա առաջ ընթանա իր հոգեկան զարգացման դործում, ընդհակառակը, շատ ու շատ բան կորցրել է իր նախկին մշակութից, որտեղ երկրի իշխանավորների բարբարոսությունը և բռնակալությունն սպառել են այն ամենը, ինչ որ միայն պահած է եղել իր մեջ լուսավորության նմանությունն ու հետքերը։ Նայեցեք այս անօգուտ, կիսակործան, ամեն տեղ քայքայվող հուշարձաններին, դրանք ավելի պերճասոս, քան բոլոր պատմաբանները և հեռտորները, կարող են պատմել ձեզ, թե ինչպես երբեմն բարձր է եղել այդ դժբախտ երկիրը և որպիսի մտավոր ընդարմացման անդունդն է զլորվել այժմ։

Սակայն հանգիստ թողնենք հնությունը և ուշադրության առնենք բնիկների ներկա վիճակը մտավոր և բարոյական տեսակետից։ Հին սերնդի մասին չարժե խոսել, որովհետև դրան շատ լավ է ճանաչում նա, ով որ մի քանի ժամանակ ապրել է և ապրում է այստեղ։ Մենք պետք է մտածենք գլխավորապես այս երկրի մատաղ սերնդի մասին։ Ամեն մի մարդու առաջին հայացքը, որ սիրով դիտում է բնիկների ընտանեկան և հասարակական կյանքը, կարող է նրան զազափար տալ այն բանի մասին, թե ինչ անհաղթելի դժվարությունների դեմ պիտի մաքառի նա, որ իր ցանկության կամ իր ստանձնած պաշտոնի հետևանքով աշխատանք է հանձն առել դաստիարակ հանդիսանալու տեղիս պատանեկության։ Նա պետք է վերաստեղծի, փոխի նրան, եթե միայն ցանկանում է, որ իր աշխատանքը բաղձալի արդյունքն ունենա։ Անհողդող հսկողություն, հսկողություն իր խնամքին հանձնված պատանիների բարոյականության վրա, արթուն հետևողություն նրա ամեն մի քայլին, ամեն մի արարքին, հմտություն ու անմուշ հոգացողություն իր պարտականությունները կատարելու գործում, դաստիա-

բակչության սեր, համբերություն և հայրական ներողամտություն պետք է քերմացնեն նրա հոգին, կենդանացնեն նրա զործողությունները, եթե նա միտք ունի շահավետությամբ և արժանավորությամբ կատարել իր բարձր նպատակը՝ Հայրական տունը և երեխայի ամեն մի շփումն իր բոլոր նախկին ընկերների հետ պետք է արգելված, հեռացված լինի նրանից, այն ժամանակ միայն, գուցե, հնարավոր լինի բարեբար ազդեցություն ունենալ նրա վրա՝ բառիս բուն մտքով։

Իսկ դպրոցը կարող է արդյոք այդ բոլոր պայմանները կատարել։ Ի՞նչ պատկեր ունի մեծավ մասամբ այն պատանին, չեմ ասում մանուկը, որ բերում են ծնողները ձեզ մոտ ուսման համար—ազտոտ, հաճախ ապականված և պատառոտված, արտաքուստ վայրենի, ներքուստ վատ վերաբերմունքի ու վարքի տեր, մտավորապես անդարդացած, սրտով հազարավոր հոռի տպավորություններ ներշնչած, արդեն Հափահաս, բայց միանգամայն անընդունակ մտավոր պարապմունքի. նա ուսել է իր հարազատ լեզուն և այլ ֆիզիկական զործողություններ համարյա թե բնազդմամբ, միայն Հարությունները և աղմկալից կյանքն է մինչև այդ ժամանակ եղել նրա տարրը և սարապմունքը, և հանկարծ, ի՞նչ հակադրություն. մանկւով դպրոց, նա տեսնում և լսում է ամեն ինչ, որ խորթ ու անհամապատասխան է իր հասկացողության և կյանքի եղանակին։

Այն մանուկը, որ ծնվել է կրթված շրջանում, որ վայելել է հմուտ դաստիարակի հսկողություն, որ որոշ չափով սիրտեմատիկաբար ուսել և զիտե իր հարազատ լեզուն, քիչ նեղություն կճաշի օտար լեզուներ սովորելու և այլ դպրոցական առարկաներ հասկանալու զործում, իսկ այստեղ բնիկ պատանին զրկված լինելով երկուսից էլ, սկսում է սովորել իրեն միանգամայն անծանոթ լեզվով, և եթե անփորձ ուսուցիչ էլ պատահի, որ ստիպելու լինի նրան ամեն բան բերան անելու մեքենայաբար և չազդելով նրա մտքի վրա բնական ճանապարհով, այդ զեպքում առաջ կգա միայն և միայն խառնաշփոթություն, քան թե ուսում, ես արդեն չեմ խոսում կրթության մասին, որ պահանջում է այլ պայմաններ։ Արդյոք այդպես չե՞ն վարվում շատ բարիպտուղ դաստիարակներու Գրքերը և մեռյալ տառերը միայն ծանրաբեղնում են ուսանողների հիշողությունը, իսկ միտքը երևակայությունն ու խելքը սակավ զեպքերումն են միայն մասնակցում։ Ի՞նչպես պետք է վարվել, ուրեմն,

այդպիսի հանգամանքներում, Այդ մասին երկար պետք է խոսել և գրել, որ այստեղ միանգամայն անկարելի է, և պետք էլ չէ, որովհետև դրա համար շատ զրքեր կան, որոնցով միշտ կարող է դեկավավել բարեխիղճ դաստիարակը:

Բայց այս դեռ ամենը չէ, ինչ արգելք է հանդիսանում երկրիս կրթության գործին, և այսպիսի անհաջող հանգամանքներում հմուտ և եռանդուն ուսուցիչը կարող էր հնարավորություն և միջոցներ գտնել իր գործն ավելի հաջողությամբ առաջ տանելու համար: Գլխավոր դժվարությունն այն է, որ տեղիս ուսանողների մեծ մասն ամբողջ տարվա ընթացքում ընդամենը մի ամիս է հաճախում դպրոց, և այս նախադանցությունն չէ — մերթ ուխտադնացությունը և սրբազան տեղերը երթևեկելը մի քանի օրերով, մինչև իսկ շաբաթներով, մերթ աշակերտի կամ նրա տնայիններից մեկի հիվանդությունը, մերթ էլ տնային կամ այգու աշխատանքը հաճախ պահում են տանը մի քանի ամիս: Պատիվ պահանջել, որ այդ ամենը չլինի, հավասար կլինե՞ր դպրոցը փակելուն, որովհետև բացառությունները շատ քիչ են: Սրան պետք է ավելացնել և տոն օրերն ու արձակուրդները, և այն ժամանակ հասկանալի կլինի, թե ինչու տեղիս աշակերտներն այդքան քիչ են առաջադիմում մի որևէ բանում:

Բացի սրանից, ուրիշ տեղերում դպրոցը զբաղվում է հասարակությունն իր օրենքներով և արտոնություններով, որ տալիս է քաղաքացիական կյանքում: Այնտեղ հավաստյալ և նախօրոք հայտնի է, թե ինչ պայծառ ապագա է սպասում նրան, ով որ ձեռք է բերել գիտություն և ունի ընդունակություն: Այդ տեղերում կրթությունը, կարծես, դարձել է հասարակաց կյանքի երկրորդ հոգին, որից զրկված մնալ չի կարող ժողովրդի և ոչ մի դասակարգ:

Այստեղ էլ բնիկների համար կան արդյոք այդպիսի զբաղիչ և զրդիչ պատճառներ ու հանգամանքներ: Ի՞նչպես դժվար է ներկայումս գտնել պաշտոնական աստիճաններում գեթ մի որևէ հասարակ զբաղրի պաշտոն: Սրան պետք է վերադրել այն, որ ծնողներից շատերն իրենց զավակների ապագայի ապահովություն համար մի որևէ հույս չունենալով, ձգտում են օր առաջ հանել իրենց զավակներին դպրոցից, որտեղ նրանց կրթությունը պահանջում է երկար ժամանակ, որպեսզի նրանց իրենց հարազատ լեզվով հարկա-

վոր շափով կարգաւ-դրել սովորեցնել տալուց հետո նրանց սովորեցնեն և մի արհեստ:

Նախկին ժամանակները կային դեռ պատճառներ, որոնցով հնարավոր էր պահպանել ժողովրդի ոգին և զրաժել նրան զեպի գպրոցը: Ներկա Երևանի գավառը, որ առաջ նահանգ էր, բնականաբար, կարոտ էր ծառայողների մի մեծ թվի. այստեղ կարող էր սա կամ նա, ով ստացել էր միջակ կրթութուն, իր համար պաշտոն և մի կտոր հաց գտնել, իսկ այժմ այդպիսիներն ուրախ կլինեին ունենալ և զրազրի պաշտոն, եթե գտնեին: Բացի սրանից, առաջ այստեղից աշակերտներ էին ուղարկվում պետական բարձրագույն դպրոցները, իսկ այժմ այդ արտոնութունը տրվում է միայն ազնվականներին, որոնցից ամբողջ Երևանի գավառում հայերի մեջ հազիվ մի երկու-երեք ընտանիք լինեն, իսկ թուրքերն այստեղ էլ չեն ուղում սովորել: Եթե այստեղ էլ այնքան շատ ազնվականներ լինեին, ինչպես Անդրկովկասի մյուս գավառներում, տեղիս բնակիչներն էլ անհրաժեշտ կհամարեին դիմելու դպրոցի տրված բարենպաստ ուսման, ապա թե ոչ՝ մարդ չգիտե, թե ի՞նչ միջոցի դիմի և ինչից սկսի, որ կարողանա նրանց մեջ ձգտում առաջ բերել զեպի կրթութուն և ուսում:

Որքան շահավետ կլինեիր դպրոցիս և երկրիս համար, եթե հնարավոր լինեիր ամեն տարի գոնե մի քանի աշակերտ ուղարկել դպրոցից առևտրական, տեխնիկական կամ երկրագործական դրպրոցները, որով հնարավոր կլինեիր տալահովիլ աշակերտի ապագան և ժամանակի ընթացքում բարձրացնել և երկրի արդյունաբերութունը, որ ներկայումս նահապետական վիճակի մեջ է: Երկրի նորութունը, տեղական հանգամանքները, հասարակաց կրթության պակասութունը, անշուշտ, պահանջում են այդպիսի միջոցների գործադրութուն, եթե մենք կամենում ենք, որ կրթության նպատակն իրագործված լինի:

Դեռ շատ ու շատ պատճառներ կան, որոնք արգելք են հանդիսանում այս երկրի լուսավորության գործի հաջող ընթացքին, որոնց մասին ես լուր ևմ, խոնարհագույն խնդրով դիմելով պատվելի հասարակության, որ քննության ենթարկի այստեղ բերված վերոհիշյալ բոլոր հանգամանքները և հետո արդեն այդպես խիստ և անպայման քննադատի դպրոցիս գործունեութունը, որ հաճախ ուսապատության երկյուղով մարդ լսում է մինչև իսկ կրթված

անձերից, Ով որ ցանկություն ունի ստուգելու, թե ինչպես են պարապում ուսուցիչները, այդպիսիների համար միշտ բաց է դպրոցի դուռը. թող հաճեն դալ, երբ ցանկանան, և ականատես լինեն, թե ինչ է կատարվում դպրոցում: Այդպիսի ուշադրությունը նամանավանդ տեղիս կրթված բարձրաստիճան անձերի կողմից, կարող էր ոչ պակաս բարերար ազդեցություն ունենալ և՛ բնիկների և՛ աշակերտների վրա, մի բան, որ մինչև այսօր տակավին ոչ ոք չի արել:

Պատվելի համաքաղաքացիներ, Ռուս անունը պետք է մեզ համար լինի սուրբ, ինչպես և նրա արյունը, որով մենք ազատվել ենք ընդմիշտ, նույնպես սուրբ պետք է լինի և նրա կամքը, որի ներքո մենք ապրում ենք, կատարելապես պաշպանված լինելով մեր հավատքի և հայրենիքի բոլոր թշնամիներից: Աշխատենք, ըստ մեր կարողության և հնարավորության, ձեռք բերել օգտավետ դիտություններ, կրթել մեր միտքն ու սիրտը, ձեռք բերել ուսույնգլխի գիտություն և բարի քաղաքացիներ լինել: Սըրանով, հենց միակ սրանով, քան մի ուրիշ բանով, մենք կարող կլինենք միանալ ուսույն մեծ ազգի հետ, որի միայն անունը ներշնչում է ամենքին, մինչև իսկ օտարին, սեր և անձնվիրություն. լինենք դաստիարակված, այդ մի իսկական բախտավորություն է ամեն մարդու համար, իսկ մեր հոգացող կառավարությունը, որի ձեռքից ամեն բան կգա, երբեք չի մոռանալ իսկական քանքարը և ընդունակությունը և չի թողնիլ առանց պատշաճ ուշադրության ու վարձատրության կեցցե՝ Ռուսաստանը... և այլն:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԴԳՐՈՑՆԵՐԻ Գ. ՎԵՐԱՏԵՍՉԻՆ

1845 թ. Նոյեմբերի 3.

Դպրոցս որքան որ ուզում է մահմեդական դավանության մասնակիներին գրավել զգալի ինքը, այնուամենայնիվ այդ ցանկությունները մինչև այսօր անհաջողության են հանդիպել, նրանց՝ դաստիարակության մի որևէ ուրիշ եղանակի, բացի իրենց ունեցածից, ընտելացած չլինելու պատճառով, մի հանգամանք, որ ոչ մի տեղ այնքան աչքի չի ընկնում, որքան այստեղ:

Այն ժամանակ, երբ մզկիթներն ու խանութները լիքն են աշակերտների բազմությամբ, մեր դպրոցում նրանց թիվը հասնում է ընդամենը հինգ հոգու, և թուրք լեզվի խեղճ ուսուցչին, նամա-

նազանդ դատաժամերի նոր բաժանմամբ, պիտի վիճակված լինի ավելի շատ հորանջել, քան պարապել ու սովորեցնել դասարաններում:

Այս պատճառով ես պարտք եմ համարում խոնարհ խնդրով դիմել Զերդ բարեծննդության՝ խրատ տալ ինձ, թե այդպիսի զբժվար և անհաջող հանդամանքներում ես թնչպես վարվեմ, նամանավանդ որ այստեղ ոչ ոք կարիք չի զգում հոգալու այն բանի մասին, որ դպրոցը հետզհետե հասնելու իր բարձրության, այնինչ զանձարանն ամեն տարի ուժալետա կորցնում է իր շահը, պահելով թուրք լեզվի ուսուցիչ՝ առանց աշակերտների:

(Եղիվան Խ. Աբովյանի, էջ 160—161):

**ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇԻՎ ԵՐԵՎԱՆԻ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ԵՎ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՄԵՐՅԱԼ
1845 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

1846 թ. հունվարի 5.

Դպրոցս ամեն միջոցներով ձգտելով հասնել բարձր իշխանության մի անգամ ընդմիշտ նախագծած նպատակին, երբեք բարձիթողի չի արել կառավարության բարի գիտավորությունները մատաղ սերնդի կրթության ընդհանուր օգտի վերաբերմամբ, բայց դանդաղելով այնպիսի ազգերի մեջ, որոնք դեռ բավականաչափ չեն ըմբռնում մարդկային ընդունակության այդպիսի զարգացման արժեքը, որ ընձեռում է նրանց ժողովրդական կրթությունը, չունենալով նրան նպաստող ոչ մի կարելիություն, որ կարող էր ազդել բնիկների վրա, զրկված լինելով վերջապես, ամեն միջոցներից և տեղական իշխանության անկցությունից, որ ավելի հնարավորություն ունի զրավելու տեղիս ազգերին դեպի կրթությունը և զրա հետ միասին առաջ բերելու և մերձեցումն կառավարող ազգի հետ, ցավոք սրտի տեսնում է, որ իր գործ գրած աշխատանքը բոլորովին կորած է:

Տեղիս ազգերը, որոնք սովորել են դարերից ի վեր հլու հնազանդ լինել միայն աշխարհական իշխանության, որոնք ամեն բանի մեջ որոնում են միայն իրենց նյութական շահը, այլ կերպ չեն նայում դպրոցիս աստիճանավորների վրա, քան իրենց սովորական տիրացուների և մուլաների վրա, որոնք կյանքի մի ուրիշ

եղանակի անընդունակ լինելով, այդ պաշտոնների միջոցով են միմիայն հայթայթում իրենց օրվա պարենը: Նրանք ամեն օր տեսնելով տեղական իշխանության անբարեխիղճ վերաբերմունքը դեպի դպրոցը և ընդհանրապես դեպի աշակերտներն ու ուսուցիչները, օրըստօրե հեռանում են դպրոցից և մոտենում են իրենց սովորական դպրոցներին: Եվ մինչև որ պարտականություն չգրվի տեղական իշխանության վրա անհրաժեշտորեն ավելի ուշադիր լինելու դպրոցի նկատմամբ, ամեն միջոցներով աջակցել նրան, հենց դո՛ւն, առերես ցույց տա եռանդ ու ցանկություն խրախուսելու աշակերտներին, դպրոցիս վիճակված կլինի մնալ իբրև մի արհամարհված բան ընդհանրի աչքում:

Հատկապես պետք է հետզհետե կարճել թուրք մուլաների իրավունքը աշակերտներ պահելու առանց իշխանության թույլատվության, որ դպրոցս ինքնուրույնաբար չի կարող անել, առանց ուստիկանության աջակցության, չենթարկելով իրեն լուրջ անախորժությունների: Պետք է միայն հիշել այն, թե կառավարությունն ինչ աշխատանք է գործադրել, ինչ ծախսեր արել և այժմ էլ անում է, որ կարողանա բնիկներին ցանկություն ներշնչել ուսանելու մինչև իսկ Թիֆլիսում, և այն էլ քրիստոնյաներին, իսկ այստեղ բնակիչների մեծ մասը մուսուլմաններ են:

Մահմեդական մասնավոր դպրոցներն անհրաժեշտորեն պետք է ենթարկել դպրոցիս հսկողության և մինչև իսկ, եթե հնարավոր է և՛ նրանց մեջ մտցնել ուսւ լեզվի զսասվանդումը: Պետք է ստիպել նրանց բարձր հոգևորականության՝ ներշնչել ժողովրդին, հայերի օրինակով, պետական լեզվի գիտության անհրաժեշտությունը: Մատաղ սերունդն այդ միջոցով մանկությունից արդեն ստանալով ուրիշ հասկացողություն և զգացմունք, հետագայում ևս տեսնելով դրա էական օգուտը, ունենալով մտքի ու սրտի համար լավագույն սնունդ հայրենի զրականությունից՝ իրենց մեռյալ խորհրդանշանների փոխարեն, անկասկած, իրենք կաշխատեն թողնել իրենց մեջ արմատացած մոլեռանդությունը, կաշխատեն մոտենալ իրենց համար բարերար հանդիսացող ազգին և կհասկանան, որ կրթության էական նպատակն է, որ մարդս լինի պարկեշտ քաղաքացի և հասարակության օգտավետ անդամ:

1847 թ. 25 ապրիլ, № 25

Ի պատասխան ձերդ բարեծննդության անցյալ 1846 թվի դեկտեմբերի 23-ին № 104 գրության՝ պատիվ ունեմ ձեզ հայտնելու, հարգելի պարոն, որ զավառական դպրոցը բացվել է Նրեվանում 1831 թվից, սաների թիվը այդ ժամանակից սկսած հասնում է մինչև 550 հոգու, ուսման լրիվ դասընթացը վերջացրել են 10 մարդ, աշակերտների թիվն այժմ 114 է, իսկ ուսուցիչներինը՝ 5. դպրոցում առանձին կարիներ չկա, իսկ գրադարանում որպես ուսումնական ձեռնարկներ կան Լոյդ-քարտեզներ, երկրագունդ և ուսեսերեն այլ գրքեր՝ բաղկացած մեծ մասամբ լուսավորության մինիստրության պարբերական հրատարակություններից, նույն մինիստրության դպրոցներում գործածվող գրքերից և բնագիտության վերաբերյալ խիստ հետաքրքիր երեք առարկաներից է՝ 1) մի կտոր օբսիդիանից, 2) մի կտոր սպիտակ մարմարից, 3) մի փոքր արկղ ծծումբից, որը բերված է Արագած լեռից և որի ստանալու համար դպրոցը պարտական է Նրեանի գավառապետ Գ. Բլավացիու հոգատարության:

Հաջվի առնելով դպրոցի գոյության այդքան երկար ժամանակամիջոցը, Նրեան քաղաքի գավառի ազգաբնակչության քանակը և աշակերտների ու դասընթացն ավարտածների այդքան սահմանափակ թիվը, ստացվում է, իհարկե, խիստ աննպաստ հետևյալք, որով և յուրաքանչյուրը, անծանոթ լինելով տեղական հանգամանքներին, կարող է այդ անհաշողությունը վերագրել դպրոցի անփութության ու անգործունեության. մինչդեռ այստեղ կան ուսուցման ընթացքը կանգնեցնող այլ պատճառներ, որոնց վերացնելը դպրոցի համար միանգամայն հնարավոր չէ: Որ այդքան տարիների ընթացքում լրիվ դասընթացը վերջացրել են շատ քչերը, դրա պատճառը 3 դասարանի ուշ բացվելն է, որը տեղի է ունեցել 1844 թվին, իսկ ուսուցման անբարեհաջող ընթացքի գլխավոր պատճառները հետևյալն են.—

* Նրեանի գավառի գատավոր

1) Ազնվական ծագում ունեցող մարդկանց սակավութիւնը այստեղի բնակիչների մեջ. մի բան, որ իրավունք է տալիս սովորողներին ապագայում ծառայութեան մտնել, որի պատճառով այլ տեղերում կարգալ ցանկացողների թիվը անհամեմատ ավելի մեծ է, քան այստեղ:

2) Առևտրական հարաբերութիւնների մեջ ռուսերենի փոքր պահանջը, որովհետև տեղացիները իրենց փոքրաթիվ զրազրութիւնները վարում են միշտ իրենց լեզուներով:

3) Պետական դպրոցներում տեղական լեզուների ուսուցման համար նշանակված խիստ սահմանափակ ժամանակը. և միջին դասի (դաս, որին պատկանում են բացառապէս այստեղի բնակիչները) երեխաներից պահանջվող ժամանակի օհազին կորուստը, որ զործ է զբւոյս դպրոցներում ավանդվող գիտութիւնների ամբողջ դասընթացը վերջացնելու համար. տեղական լեզուները ավանդող ուսուցիչների մեթոդ չիմանալը, ինչպէս և նրանց ռուսերեն լեզու չիմանալը, այլապէս նրանք կարող կլինեն համեմատական ձևով անցնել իրենց առարկաները աշակերտների հետ և նրանցից պատրաստել լավ թարգմաններու Այդ պատճառով է, որ բնակիչների մեծ մասը սովորեցնում է իր երեխաներին մայրենի լեզու կամ տանը, կամ որևէ ուրիշի մօտ, որպէսզի ժամանակ չկորցնի նրանց սովորեցնելու այդ լեզուն և մի արհեստ, որով նրանք պիտի ապրեն ապագայում:

4) Աշակերտների անընդհատ բացակայութիւնը դասարանից ընտանեկան դործերի պատճառով (գործերի, որ կատարում են այստեղ տեղացիների երեխաները), մանավանդ ազգիների աշխատանքների ժամանակ. ծնողների միանգամայն անհոգ վերաբերմունքը զեպի երեխաների դաստիարակութիւնը, ընտանեկան անբավարար հսկողութիւնը և այլն, այնպէս որ ցուցակներում նշանակված աշակերտների մեծ մասը բոլորովին չի հաճախում զբարոց և դուրս է դալիս այնտեղից, երբ կամենում է:

5) Եթե այս ամենին ավելացնենք շատ ուսուցիչների անհոգութիւնը և մեթոդից ու ցանկութիւնից զուրկ լինելը, նաև տեղական իշխանութեան անբավարար ուշադրութիւնն ու աջակցութիւնը, այն ժամանակ, իհարկէ, շատ բնական է, որ դպրոցը զեռ երկար ժամանակ չի կարող հասնել իր նպատակին: Իմ կարծիքով, որպէսզի կարելի լինի աստիճանաբար հեռացնել ուսման ըն-

թացքը կանգնեցնող այս բոլոր արգելքները և դպրոցը դնել որոշ բարձրության վրա, անպատճառ հարկավոր է այստեղ էլ մտցնել շատ լուսավոր պետությունների մեջ գոյություն ունեցող որոշունքները.

ա) Ոստիկանական իշխանության միջոցով պարտավորական դարձնել յուրաքանչյուր ծնողի համար իր երեխաներին 7 կամ 8 տարեկանից դպրոց տալ և մինչև 14 տարեկան հասակը ոչ մի դեպքում նրանց դուրս չհանել:

բ) Տեղական լեզուների համար ուսուցիչներ կարգել փորձված մարդկանցից, որոնք հիմնավոր կերպով իմանային ուսուսաց լեզուն, ինչ դասակարգի էլ նրանք պատկանելիս լինեն, որովհետև մինչև այժմ նշանակված հոգևորական անձները՝ ուսուսաց լեզուն չիմանալու պատճառով՝ բոլորովին անպետք են: Ուստի այդ առարկաները ավանդելու համար պետք է նշանակել այնքան ժամանակ, որքան պահանջվում է ուսուսաց լեզվի համար ինչպես մի լեզվից մյուսը թարգմանելու, այնպես էլ երկու լեզուները հիմնովին իմանալու համար:

գ) Դասավանդել քաղաքացիական դասին պատկանող երեխաներին և 2 դասարաններում ուսուսաց լեզուն գործնականապես, իսկ մյուս բոլոր առարկաները, կրճատ ձևով, իսկ 3 դասարան թույլ տալ մտնելու միմիայն աստիճանավորների երեխաներին և անցնել նրանց հետ բոլոր առարկաները ավելի ընդարձակ կերպով:

դ) Ինչպես այդ կատարվում է ուրիշ տեղերում, այստեղից ևս ամեն տարի կայսրության բարձրագույն հաստատություններն ուղարկել լավ սովորողներին, անկախ նրանց ծագումից, որպեսզի դրանով իսկ մյուսներն էլ շահագրգռվեն գիտություններ հաշող ուսուցիչներին:

ե) Նշանակել դպրոցում հատուկ ուսուցիչ երկրագործական գործնական պարապմունքների համար և ընդհանրապես գործնական տնտեսագիտության մեջ փորձված մի մարդ, — մի առարկա, որ այնքան կարևոր է այս կողմերում:

զ) Ունենալ խիստ հսկողություն բոլոր, ինչպես քրիստոնյաների, այնպես էլ մահմեդականների, մասնավոր ուսուցիչների վրա, որ նրանք առանց հարկավոր թույլտվության (որը վերապահված

է միմիայն ուսումնարանական վարչութիւն), չհամարձակվին
պահել իրենց մոտ մինչև անգամ մեկ աշակերտ:

Ահա առաջիկային նախնական միջոցները, որոնցով կարելի
է նպաստել դպրոցական հաստատութիւնների առաջագիմու-
թիւնը, հույս ունենալով, որ նրանք ապագայում օգուտ կբերեն
երկրին:

Ընդունեցե՛ք հարգանացս հա՛վատիքը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմողի կողմից	V—VI
Խ. Արդյանի մանկավարժական գործունեությանը և մանկավարժական հայացքները	VII—LXX
Հուսավորության և կրթության հարցերին նվիրված համաժամներ	
1. Հատվածներ «Վերջ Հայաստանի» վեպից	
ա) Առաջարանից	3 — 7
բ) Առաջին գլխից	7 — 9
գ) Երկրորդ գլխից	9 — 12
դ) Երրորդ գլխից	13
2. «Խաղարկության մանկանց»-ից	13 — 17
3. Հատվածներ «Նախաշավիղ»-ից	
ա) Նախազգեստություն	18 — 21
բ) Նախ քան զգասն վարժապետն սկսանի խոսիլ ընդ մանկանց	21 — 27
գ) Դիտողություններ	28 — 35
4. Предисловие к теоритическо-практической грамматике	36 — 39
5. Համաժամներ «Պատմություն Տիգրանի» վեպից	40 — 111
6. Նամակներ և պաշտոնական թղթեր	112 — 142

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Էջ	Եզր	Ելաված է	Այնտեղ է լինի
	24	Իրական	Իրավական
1	2	Հարցներում	Հարցերին
6	83	Ինչու	Ինչու
28	16	Նրա	Նախ
10	19	մարդ ես	մարդ ես
28	3	դիտողությունները	դիտողություններ
31	3	արտասանում էին	արտասանելին
84	4	գրել եմ	գրել եմ
85	3	բարոյություն	բարոյություն
80	16	մարդ	մարդ
93	4	գայրաթով	գայրաթով
116	8	տանում	տանում
119	1	գտնել	գտնվել

ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ



FL0014036

ЦЕНА

11
12102